



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Առյևն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենը և տպածել նույն ցուցացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առևտնական նորոգ ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material




1834  
1835  
1836

Պ-յումա Ա.

Երեք իրացունակիրք

ՀԱ Ա-Պ-



Զ յուռնիա  
1871

Q 011





# ԵՐԵՎԱՆ ՀՐԱՄԱՆԱԿԻՐՔ



2003 4



8005

84  
- 60

ԿՐ

Ա. ՏԻՒՄԱ

# ԵՐԵՔ ՀՐԱՅԱՆԱԿԻՐՔ



Թ. Ա. ՏԻՒՄԱՆԻՆ

Մ. ՄԱՄՈՒԻՐԵԱՆ

Տիգ եւ Հրայանակը

ՏԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ


---

ԶՐԻՒԹՆՈՅ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԱՆ

1871

1000



869-549

50902 - 4 - h.

ԵՐԵՎ

# Հ ՊԱՅԱՆԱԿԻՐՔ

Ա.

Պ. ՏԵՐԵԴԱՆԵԼՆ ՀՕՐ ԵՐԵՎ ՊԵՐԳԵՏՆԵՐԸ

1625 ապրիլ ամսեան առաջին երկուշաբթի օրը՝ Մէօն աւանն՝ ուր ծնած է Վահրամ Շեղինակը, մեծ շփոթոթեան մը տեսարանը կ'ընծայեր, այնպէս որ կարծես թէ հէ-բնելը (բողոքական) երկրորդ անշամ ոսկը ելնելով Բօշէլի կոիւը սկսելու կ'միտէին։ Ծատ մը բնիկներ՝ աեսնելով որ կանայք կրանտ - թիւի կողմը կ'դիմն, մանկութին գրներու սեմին վրայ կ'պոռան՝ զրահ հագնելու կ'շտապէին և իիենց փոքր ինչ վեհերուա կերպարանին արիութեան հով մը տալու համար՝ հրացան կամ գեղարդ առած՝ ֆրան - Մէօնիէի օթևանը կ'ձեզին, որու առջեւ վայրիկենէ վայրիկեան ստուարանակով կ'խուժէր խիստ, աղմկալի և հետազնին ամրոխ մը։

Այս ատենները պահական սարսափիներ ստեղծ կ'պատահէին, և օր չէր անցներ որ այս կամ այն քաղաքն այս տեսակ գեղք մ'իր գիւանին մէջ չ'արձանապրէր: Աւատական իշխաններ կային որ իրարու հետ կ'մաքառէին, թաղաւորը կար որ կարտինալին դէմ կ'մաքառէր, սպանիացին կար որ թագաւորին դէմ կ'մաքառէր: Իւարձեալ այս խուլ կամ հասարակային, յայտնի կամ անյայտ պայքարներէն զատ՝ զողեր, մուրացկաններ, հիւկնօներ, զայլեր և սպասառորներ կային որ ամենուն դէմ կ'մաքառէին: Ուստանիկներ կ'զինէին միշտ զողերու դէմ, զայլերու դէմ, սպասառորներու դէմ, — շատ անգամ իշխաններու և հիւկնօներու դէմ, — երբեմն թագաւորին դէմ, — բայց ոչ երբէք կարտինալին և սպանիացին դէմ: Ուստի այս հին սովորութեան արդիւնքը սա եղաւ որ՝ վերոյիշեալ 1625 ապրիլ ամսեան առաջին երկու շաբթին՝ բնիկները՝ աղմակ լսելով՝ ոչ զեղին կամ կարմիր դրօշը, և ոչ բիշլեկ օ դքսին պահազզեստ պայիկները տեսան և ֆրան-Եւոնիէի պահպակին կողմը վազեցին:

Այս տեղ համելով ամէն մարդ այս ժխորին պատճառը տեսան և իմացան:

Երիտասարդ մը . . . — մէկ դրչի հարուածով իր նկարագիրը գծենք. — երևակայէ տասն և ութ տարեկան տօն Քիշօդ մը, անզրահ, անրարձպան տօն Քիշօդ մը, տօն Քիշօդ մ'որ ասուի կրկնոց մը հաղեր էր, որուն կապոյտ զոյնն այլայլեր, և զինեմըորի և երկնի զոյնի զարկեր էր: Դէմքն էր երկար ու թուխ, այտերուն ուռիկները (pommette) ցից, այս է նենդութեան նըշան, ծնօտին ջիլերը խիստ զօրեղ, այս է կատօն մը հանչելու անմը! այ նշան, առանց դտակի կամ թաղչարի (bérger) իսկ, թէ և մը երիտասարդը տեսակ մը վեստորով զարդարուն զտակ հազեր էր. աչքը բաց և ուշիմ, քիթը կոր՝ այլ նրբազիծ թէ և խիստ մմծ էր պատանի մը համար, խիստ փոքր՝ արբուն հասակի համար, իսկ անվարժ աչք մ'այս պատանին տեսնելով պիտի կարծէր թէ աղարակաօրմնի մ'ուղեար որդին էր, եթէ կաշի կամարէն կախուած թուք մը չունենար, որ իր ազգքները կ'աշ-

Նէր երբ հետի էր, և իր ձիուն տնկուած մազերը՝ երբ հեծեալ։ Ասոն զի մեր երիտասարդը հեծանելի մ'ունէր, և այս հեծանելին այնքան նշանաւոր էր որ ամենուն ուշադրութիւնը կը գրաւէր. Պէտք էր երիվարիկ մ'էր, տասն երկու կամ տասն չորս տարեկան, դեղնապոյն պոչն անբաշ էր թէ և սրունգներն իրենց այսում ունէին, և մինչդեռ զըսիսը ծնկերէն վար կախած կը քալէր, որով զիսի փոկի պէտք չկար, դարձեալ օրն ութ մղոն կ'առնուր: Գմբազդօրէն այս ձիուն յատկութիւններն՝ իր այլանդակ կաշիէն և անշահ գնացքին պատճառաւ: անտես մնալով՝ այնպիսի ատեն մ'որ ամէն մարդ ձիէ կ'հասկնար, անոր երեցթը՝ ԱԷօն աւանին մէջ ուր զրեթէ քառորդ մ'առաջ մներ էր Պօժանսիի գռնէն՝ մեծ տարածայնութիւն հանեց և ձիառորին անուան ևս արաւա բերաւ:

Եւ այս տարածայնութիւնն այնքան ծանր եկեր էր նորատի տ'Արդանեանին (այսպէս կ'կոչուէր այս երկրորդ Ռօսինանտի տօնքիչը). որ՝ թէ քաջ ձիառոր իր ձիուն ծազբելի կողմը կը ճանչէր. տոտի քանից հառաշեր էր իրը պարզ և մ'իր հօրը ձեռքէն առնլու ատեն: Քաջ զիսէր որ այն կենդանին շատ շատ քսան սկուզ կ'արժէր, իրաւ է որ նոյն պարզեին առթիւ հօրն արտասանած խօսքերը զին շունէին:

— Ո'րդեակ իմ — ըսեր էր կապօն ազնուականը, Պէտք արնեան զոտ ոճով, ոճ մ'որմէ Հանրի Դ. չէր կրցեր երբէք ազատիլ, — որդեակ իմ, այս ձին հօրդ տունը ծնած է շուրջ տասն երեք տարի առաջ, և այն տանենէն վեր այն տեղ մնացեր է, և այսպէս պարաւոր ևս զայն սիրել: Երբէք մի ծախեր զայն, թող որ հանդարս և պատուով ծերտթենէն մեռնի, և եթէ անոր հետ մարտի երթան՝ ծեր սպասաւորի պէս զայն ինամէ: Ազբոնիքը — շարունակեց Պ. տ'Արդանեան — եթէ երբէք պատիւ ունենաս այն տեղ երթալու, թէ և այս պատոյն իրաւոնք ունիս քու հինորեայ աղնուականութեամբդ, արժանապէս պահէ աղնուականի անունդ, զոր քու նախնիքդ՝ հինդ հարիւր տարիէ աւելի կրեցին արժանապէս թէ քեզի և թէ քոյիններուդ համար:

Քայիններդ բաելով՝ կ'իմանամ ծնողք ու բարեկամներգ : Մի-  
նակ Պ . կարտինալին և թագաւորին առջե հըլու եղիր : Այսօր-  
ուան օրս առհմիկ պատանի մ'իր արիտթեամբը , մտիկ կ'ընեն ,  
իր արիութեամբը միայն կրնայ իր բաղդը շինել : Ավ որ բոազէ  
մը կ'ողղղողայ՝ թերեւ նոյն բոազին իսկ բաղդին մատոցած շը-  
նորհը ձեռքէ կ'հանէ : Նորատի ես , և երկու պատճառաւ քաջ  
արէ ար է լինիս , առաջինը սա է որ կապօն ես , երկրորդը սա  
է որ իմ սրդիս ես . Պարագաներէն մի երկնչիր և դիստաճներ  
փնտուէ : Սուր դործածել սորվեցոցի քեզ , երկամէ ծնդեր , և  
սորդումատէ դաստակ մ'ոնիս . ամէն առթիւ մենամարտէ . մենա-  
մարտէ , նա մանաւանդ՝ մենամարտութիւններն արդիլուած են ,  
և հետևապէս մենամարտիկը կրկնապատիկ արիութիւն կ'ցուցնէ  
կուելովք : Որդեակ , միայն տասն հինգ սկուդ (րիալ) , ձիս և  
լսած խրատներդ ունիմ քեզի տալու : Մայրդ պիտի միացնէ ա-  
սանց սպեղանի շինելու համար զեզազիր մը զօր զնշտհիէ մը  
սորդած է , և այս զեղը հրաշալի յատկաթիւն մ'ոնիս , կրնայ  
բուժել ամէն մէրբ որ սրտի հասած չէ : Ամէն բանէ օգուտ քա-  
ղելու նայէ . և երջանիկ ու երկար ատեն ապրէ : Խօսք մ'ես  
ունիմ առելցնելու , և օրինակ մը պիտի առաջ բերեմ , չէ թէ  
իմ օրինակս , վասն զի ես ընաւ արքունիքն երկցած շեմ և իրը  
կամաւոր զինուոր կրօնի համար պատերազմի զայցիր եմ միայն ,  
այլ կ'ողեմ յիշել Պ . ար Դրէ վիլը , որ երբեմն իմ դրացիս էր  
և փոքրիկ արզոյ Եղած ատեն պատիւ ունեցաւ մեր Լորի ԺԳ-  
թաղաւորին չետ խաղուլ , որուն Աստուած երկար կեանք պար-  
դեէ : Երբեմն խաղերը պայքար կ'զառնացին , և այս պայքարնե-  
րու մէջ թագուարը վիշտ զօրաւոր չէ ր ելներ : Իր ընդունած  
հարուածներուն համար մեծ համարում և բարեկամութիւն զդաց  
Պ . ար Դրէ վիլի մասին : Աներջէն Պ . ար Դրէ վիլ ուրիշներու  
դէմ մենամարտ ըրաւ առաջին ողեւորութեան առեն 'ի Բարիկ՝  
հինգ անգամ . հանդուցեալ թաշւաւորին մահէն մինչեւ նորին շա-  
փահատթեան ժամանակ՝ եօթն անգամ" առանց հաշուի առնլու  
պատերազմներն ու պաշարութեամբ . իսկ այս չափահատթեան

մինչև այսօր՝ կարելի է հարիւր անդամ՝ ասպարեզ իջաւ կռուելու համար։ Հետեւապէ՞ս՝ հրավարտակ, հրամանագիր, վճիռ առ ոչ ինչ որելով ահա այսօր հրացանակիրներու հրամանատար մ'է, այսինքն Անսարներու լէ զէսինի մը զլուխը՝ որ թագառորին աչքին մեծ արժեք ունի և որմէ ու. կարախնալն ևս կը վախնայ, այն որ ուրիշ բանեւ չվախնար, ինչպէս որ ամենուն յայտնի է։ Ասելից զատ՝ ու. ար Դրէվիլ տարին տաս հազար սկոդ կ'շահի, հետեւապէս շատ զօրաւոր իշխան մ'է։ Այն ալ քեզի պէս ըսկու, զնաւ այս նամակով զինքը տես, և անոր վրայ դիր վըստահոթիւնգ, որպէս զի՞զու ալ անոր պէս զործես։

Այս ըսելով՝ ու. ա՛Արդանեան հայրն իր յատուկ տուրն անոր մէ ջքէն կապեց, անոր երկու երեսներէն զորավագին համբուրեց և իր օրհնութիւնը տուաւ։

Հայրական մենեկէն դուրս ելնելու տաեն՝ երիտասարդն իր մայրը զտաւ, որ իրեն կ'սպասէր նշանաւոր զեղովը, դեղ մը զոր ստէպ զործածելու պէտքը պիտի զղար իր առած իրաւուներուն վրայ։ Աւելի երկար և սրտաշարժ եղան մօրը հետ հրաժարական բարեները քան թէ հօրը հետ, առավ ըսել չէ թէ ու. ա՛Արդանեան իր օրդին չէր սիրեր, քանի որ իր միածին զառակն էր, այլ անոր համար որ ու. ա՛Արդանեան մարդ էր, և մարդու անվայել բան մը կ'համարէր այլայլութիւն ցոյց տալ. մինչդեռ տիկին ա՛Արդանեան կին էր, և միանգամայն մայր։ Ուսի շատ լացաւ, և ներսի մեզ ըսել ՚ի զովեսա ու. ա՛Արդանեանի որդուոյն որ՝ թէն այս ալ ամէն ձիգ թափեց անստան մնալու՝ ինչպէս որ անկ էր տարազայ հրացանակիր մը, սակայն բնութիւնը յաղթանակը տարաւ և երիտասարդը շատ արտառք թափեց և հացի կարող եղաւ կէսը պահելու։

Մի և նոյն օրը պատանին համբայ ելաւ՝ հօրենական երեք պարզեներն առնլով՝ որոնք, ինչպէս որ արդէն ըսինք, տասն հինգ սկոդ, ձի մը և ու. ար Դրէվիլի ուղղեալ նամակն էին, ինչպէս որ դիրին է ըմբռնել, խրաններն ալ ձրիտապէս արուած էին։

Այս առ ձեռն պաշտպով (vade tecum) ա՛Արդանեան բարոյապէս և նիւթապէս Սէրվանդէսի գիւցադնին (տօն Քիշօդ) յար և նման պատկերը զարձաւ, ինչպէս որ՝ իրը պատմաբան՝ պարս համարեցինք անոր հետ բազգատելու նկարադիրը գծելու ժամանակ։ Տօն Քիշօդ հավաշարժ աղօրիները հսկաներու և ոչխարժները բանակներու տեղ կ'առ նոր, ա՛Արդանիան ամէն ժաղիս նախատինք սեպեց և ամէն ակնարկ վէճի զրգիւ մը։ Հետևապէս՝ Թարպէն մինչեւ Մէօն դալը միշտ կուռփը դոց և կազմ պահած էր, և վրայէ վրայ հաշոելով՝ օրը տաս անդամ ձեռքը սուրին երախակալին վրայ տարաւ. թէ և կուռփը ծնօտի մը վրայ չիջաւ և ոչ սուրը պատենէն ելաւ։ Սայդ է որ անձոռնի գեղին երիվարկին աեսքն անցորդներուն ծիծաղը կ'զրդուէր, բայց որովհետեւ երիվարկին վրայ բաւական մեծ կակ սուր մը կ'հնչէր, և նոյն սուրին վերեը վայրադ քան վէս աչք մը կ'փայլէր, անցորդներն իրենց զուարթութիւնը կ'զսպէին, կամ եթէ զուարթութիւնը խոհեմութեան յազթէր՝ զէթ կ'ջանային մեկուսի ծիծաղիլ հնօրեայ դիմակներուն պէս։ Ուստի ա՛Արդանեան մինչեւ այն Մէօնի հէք աւանը համնիլն՝ իր զիւրազրդութեան մէջ՝ անստան և անսրամ մնաց։

Բայց այն տեղ՝ ա՛Արդանեան՝ Ֆրան-Մէնէէ զրան առջեւ վար իջնելու ատեն՝ թէ և ոչ պանդոկապէտ, ոչ մանչ կամ ձիապան մը կ'երեւէր պատուանդանին վրայ ձիուն երասաննեն բռնելու, զետնայարկ սենեկի մը կիսբաց պատուհանն ազնուատոհմ մարդ մը ռեսաւ՝ որ աղուր հասակ, վէս կերպարան ունէր, թէ և փոքր ինչ դէմքը խոժոս էր, և երկու հօգիի հետ կ'խօսէր, որոնք կարծես թէ յարդանօք անոր միտ կ'զնէին։ Տ'Արդանեան իր սովորութեան համեմատ՝ կարծեց բնտկանապէս թէ այն խօսակցութեան առարկան ինքն է և մտիկ ըրաւ։ Այս անդամ ա՛Արդանիան կիսովին սխալ կ'զատէր, վասն զի խօսքն իր վրայ չէր, այլ ձիուն վրայ։ Կ'երեւէր թէ այն մարդն անոր յատկութիւններն իր ունկնդիրներուն կ'նկարադրէր, և որովհետեւ ինչպէս ըստ, ունկնդիրները պատմողին մեծ ակնածոթիւն կ'յայտնէին։

ամեն վայրին ան քահանակ գույնոցին : Առաջ՝ որովհետեւ կը ս ժը-  
պիտ մը բառական է, թ պատանին բարկութիւնը գրգուել, զիւըին  
է երեակայել թէ այն բարձրաձայն ծիծաղներն ինչ առաջ որու-  
թիւն ունեցան իր վրայ :

Սակայն ա՛Արդանեան նախ ուղեց լաւ մը դիտել իր վրայ ծի-  
ծաղող ժպիրչ մարդուն կերպարանը : Իր վէս ակնարկն օտա-  
րականին վրայ սկսուեց և տեսաւ որ ստր ու սե աշերով, արծ-  
զոյն գէ մքով, խոշոր քթով, սե ու վայելու պեխով՝ քառ-  
սոն, քառսոն հինգ ստրեկան մարդ մ'է . բաճկոնակ մ'և վար-  
տիք մը հաղեր էր կասպյա, համազոյն ծովերով, և ուրիշ զարդ  
չուներ բայց եթէ սովորական ձեզն (CREVÉS) տակից կ'տեսնուէր  
շապիկը : Այս վարտիքն ու բաճկոնակը թէ և նոր՝ ճիշտած կ'երե-  
ւէին, ճամբորդութեան հաղուստներու պէս սնտուկի մէջ շատ  
ատեն մնալով : Տ'Արդանեան մանրազնին դիտողի մ'աշքով ը-  
րսու բոլոր այս դիտողութիւնները, և անտարակոյս բնական զգա-  
ցումով մ'որ իրեն կ'ըստ թէ այն օտարականը մէծ ազդեցութիւն  
պիտի ունենայ իր ապագայ կենաց վրայ :

Արդ՝ այն միջոցին որ ա՛Արդանեան կապոյս բաճկոնակ հա-  
գած մարդուն ակնասիշ կ'նայէր, և նոյն մարդը պէտքնեան ե-  
րիվարկին վրայ խիստ դիտական և խորին դիտողութիւններ կ'ը-  
նէր, իր երկու ունինդիրները քահանա մ'է ձգեցին, և նոյն  
ինքն՝ իր սովորութեան հակառակ՝ իր զունաւ երեսին վրայ ժպի-  
տի մը նշոյլը ցցուց : Այս անամ ալ տարակոյս չկար որ թըշ-  
նամանքը ա՛Արդանեանի գէմ էր : Ուստի այս համոզմամբ՝ ա՛Ար-  
դանեան իրօք իր դդակն աշերուն վրայ իջեցուց, պալատականի  
հովեր առնելու ջանաց, ինչպէս որ կասքօնի մէջ ճամբորդ իշ-  
խաններու վրայ այնպիսի հովեր տեսէր էր, և յառաջ անցաւ  
մէկ ձեռքը սրին դաստապանին վրայ գրած և միւսը զիստին վը-  
րայ կրթնած : Դժբաղդաբար քանի կ'յառաւ ջանար՝ զայրոյթն ևս  
քան զես զինքը կ'կորացնէր, և հակառակորդն ի մարտ հրա-  
փերլու համար՝ փոխանակ արդէն պատրաստած օրինաւոր և խը-  
րսիստ ճառն ըսելու՝ իր լեզուին ծայրը կոչտ թշնամանք մը զը-  
տաւ և զայրագին շաբժումով մ'արտասանեց .

— ՀԵ՞ , սրարոն — գոչեց նա — պարոն , դու որ փեղիին ետեք կ'պահուիս , այու , դժւ , ըսէ նայիմ անդամ մը թէ ինչ բանի վրայ կ'ծիծաղիս որ միասին ծիծաղինք :

Ազնուադէմ մարդն իր աչքը ձիէն ձիաւորին վրայ դարձոց ծանրօրէն , որպէս թէ փոքր ինչ ժամանակի կարօս էր հասկընալու համար թէ արդեօք այն այլանդակ յանդիմանութիւնն իրեն կ'ուզզէր . վերջը՝ իր կասկածը փարատելով այս մասին՝ թեթե մ'տնքերը սրւատեց և բաւական ատեն կանկ մ'առնլէն ետեւ՝ հեղնական ձայնով և անպատում ժպրհութեամբ մը պատախան տուաւ տ'Արդանեանի :

— Խօսքս քեղի չէ , պարոն :

— Բայց իմ խօսքս քեղի է — գոչեց երիտասարդը յետին ծայր կատղելով օտարականին լիրք և բարեվար , մարդավայել և քամահէլի կերպերէն :

Անծանօթը նորէն նայեցաւ անոր դէմքը թեթե ժպիտով մը , եթագատաւ հանէն ներս մանելով՝ պանդոկէն ծանրաքայլ ելու և տ'Արդանեանէն քիչ մը հեռու եկաւ ու ձիուն առջեւ տնկուեցաւ : Իր հանդարատ կերպարանն ու հեղնալի զէմքն իր խօսակիցներուն զուարթութիւնն աւելի ևս զրգուեր էին , և անոնք պատուհանը կեցեր էին :

Տ'Արդանեան՝ անոր զալուատը դիտելով՝ իր սուրը մէկ ոտքի չափ պատենէն քաշեց :

— Երաւի այս ձին իր երիտասարդութեան ժամանակ ուսկի կռին մ'եղած սիհատի լինի — վրայ բերաւ անծանօթն իր քննութիւնը շարունակելով և խօսքը պատաւ հանը կեցող ունկնդիրներուն ուղղելով , մինչդեռ տ'Արդանեանի կատղութիւնը շտեմելու կ'զարնէր , թէ և նա ասոր և անոնց մէջ կանգուն կ'մնար :

— Բուարանութեան մէջ խիստ ծանօթ դոյն մ'է այս , սակայն մինչեւ ցարգ հաղիւ տեմնուած էր այս դոյն ձի մը :

— Զիտն վրայ ծիծաղողը շհամարձակիր անշուշտ անոր տիրոջ վրայ ծիծաղելու — գոչեց Դրէվիլի նախան նորդը կատաղօրէն :

— Ես ստէպ շեմ ծիծաղիր , պարոն — վրայ բերաւ անծա-

նօթը — ինչպէս որ իմ դէմքէս կրնաս տեսնել . բայց ուզած ա-  
տենո ծիծաղելու արտօնութիւնս պահել գիտեմ :

— Իսկ ես — զռչեց ա'Արդանեան — չեմ ախորժիր որ ծի-  
ծաղի մարդ մ'երբ ես չեմ ողեր :

— Երան ըսիր . պարոն — շարոնակեց անձանօթն աւելի հան-  
դարս քան զառաջիւն . — լան ուրեմն , շատ իրաւացի է խօսքդ .  
և ընդ կրուկ դառնալով՝ պանդոկը մոռնելու պատրաստեցաւ այն  
մնձ դռնէն՝ որուն տակը կազմ նժոյդ մը տեսեր էր ա'Արդա-  
նեան նոյն վայրը հանելու առենը :

Բայց ա'Արդանեան զինքը լրբօրէն ծաղրող մարդ մ'այնպէս  
դիւրաւ արձակ թողլու սովորութիւն չունէր . իր սուրբ պատե-  
նէն բոլորովին քաշեց հանեց և անոր ետևէն ընկաւ պոտալով .

— Դարձիր ուրեմն , պարոն կատակարան , դարձիր որ հա-  
րուածը կոնակէղ չուտես :

— Դու պիտի զարնես զիս — ըսաւ միւսն՝ իր կրոկներուն վը-  
րայ դառնալով . յետոյ երիտասարդին երեսը նայեցաւ զարմանք  
ու միանգամայն քամահանք յայտնելով : — Աահ , սիրելի , թող  
կատակը , միթէ յիմա՞ր ես : ՄԵՇՔ — շարոնակեց նոս . — Ինչ  
մնձ զիւր մը վեհափառ թագաւորին համար որ՝ իր հացանա-  
կիբներուն դունդը զօրացնելու մոօք՝ ամէն կողմէ քաջեր կ'փնտուէ :

Այն ինչ խօսքը կ'աւարտէր՝ որ ա'Արդանեան այնպէս կա-  
տաղի հարսած մ'իջեցուց , որ եթէ տնծանօթն խկոյն դէպ ե-  
տին չցատկէր՝ թերես վերջին անզամ կատակ ըրած պիտի լի-  
նէր : Այն ատեն տեսաւ որ բանը կատակի սահմանէն կ'ելնէր ,  
իր սուրբ քաշեց , ոտխին բարեւ տուաւ և մենամարտի սկսաւ :  
Բայց նոյն պահուն իր երկու ունինդիրները պանդոկապետին հետ՝  
դաւազանով , բահով և ունելիքով անոր վրայ ընկան : Այս յար-  
ձակոմն այնպէս շուտ և զլխովին գարձուց մարտին ընթացքը՝  
որ անծանօթը՝ մինչդեռ ա'Արդանեան կարկուտի սէ ո իջած հա-  
րուածներու դէմ զնելու կ'զանաբ , իր սուրն անհողութեամբ  
պատեանը կ'անցընէր . և կոտին զերասանը լինելու միջոցին՝  
հանգիստես կ'զանայ , և այս զերն իր սովորական անդրդու-  
լի բնութեամբը կ'կատարէ՝ միանգամայն մըմնալով .

— Կրողը տանի կապօնները : Եթ նարնջազոյն ձիուն վրայ դրէք զանի և թող կորսուի երթայ :

— Աւատ, քեզ շսպանած չպիտի մնկնիմ — կ'զոչէր տ'Արդանեան՝ իր երեք թշնամիներուն կարելի եղածին չափ դէմ կենալով առանց ընկրկելու, թէ և անոնք հարուածներ կ'տեղային անոր վրայ :

— Նորէն մեծ մեծ կ'ջարդէ կապօնի մը պէս — մրմաց տարականը : — Պատույս վրայ կ'ըսեմ, այս կապօններն անուղղելի են : Աւրեմն շարունակեցէք կոփոցը, քանի որ կ'ուզէ : Երբ ծեծէն յոգնի դադրի, պիտի ըսէ թէ բաւական է :

Բայց անծանօթը դեռ չդիտէր թէ իր զիմացինն ինչ կամակոր մարդ մ'է . տ'Արդանեան շնորհ խնդրող մարդոց տեսակէն չէր : Աւստի կոխուը քանի մը բոպէ ևս շարունակեցին . վերջապէս տ'Արդանեան ուժաթափ՝ ձեռքէն ձգեց սուրն որ զաւագանով մ'երկու կոտոր եղաւ : Աւրիշ հարուած մ'ալ ճակտին զալով նոյն միջոցին իսկ տապաստ զետին տապալեց արինլուայ և զրեթէ շնչառպառ :

Ահա նոյն պահուն ամէն կողմէն այս տեսարանս տեսնելու համար մարդիկ վազեցին եկան : Պանդոկապետը՝ զայթակղութենէ վախնալով՝ իր սպասաւորներուն օգնութեամբը՝ վիրաւորը խոհանոցը տարառ, ուր քիչ մը խնամք տարին անոր վրայ :

Իսկ ազատորդին (gentilhomme) գարձեր իր առջի տեղը պատոհանէն կ'նայէր՝ փոքր ինչ անհամբեր՝ բռլոր այն ամբոխն՝ որուն ներկայութենէն կարծես թէ իր սիրտը սասարիկ կ'նեղանար:

— Լաւ որեմն, ինչպէս է այն կատաղին — հարցոց նա դրան ձայնին դառնալով՝ և պանդոկապետին ուղղելով իր խօսքը, որ եկեր էր անոր որպիստթիւնն իմանալու :

— Արդեօք Զեր Ասեմութիւնն ողջ առողջ է — հարցոց պանդոկապետը :

— Այո, ողջ առողջ եմ, իմ սիրելի պանդոկապետ, ես ալ հարցոցի քեզ թէ ինչ եղաւ մնը պարոնը :

— Աւելի լաւ է — ըստ պանդոկապետը . — բոլորովին մարեր էր :

— Ի՞նչ կ'ըսես — յարեց ազատորդին :

— Բայց մարելէն առաջ՝ իր բոլոր զյժը ժողվեց անունդ տալու և քեզ անուանելով՝ ի մենամարտ կոչելու :

— Չե՞ս ըսեր որ նոյն ինքն սատանան է այն թշուառ ականը — գոչեց անծանօթը :

— Ո՛չ, ո՛չ, Ասեմափայլ տէր, սատանան չէ — զրայ բերաւ պանդոկապետն արհամարհական ծուռ երեսով մը . — վասն զի մարած առենն անոր վրան գլուխը նայեցանք, և իր ծրարին մէջ լոկ շապիկ մը , քսակին մէջ լոկ տասն երկու սկոտ դտանք, բայց և այնպէս մարելու առեն ըստ որ եթէ այսպիսի բան մը պատահէր՝ ի Բարիդ՝ անմիջապէս պիտի զղայիր, մինչդեռ այս տեղ պատահէլուն վերջէն պիտի զղաս :

— Ուրեմն — ըստ անծանօթը պաղութեամբ — ծպտեալ իշխանագուն մ'է :

— Ասոնք կ'ըսեմ որ զզոյչ լինիս, ազատորդիս — պատստիանեց պանզակապետը :

— Արդեօք բարկութեան առեն՝ մարդու մ' անունը չարտասանեց :

— Իրօք արտասանեց . իր զրապանը կ'զարնէր և կ'ըսէր . «Նայինք Պ. ար Դրէվիլ ի՞նչ պիտի ըսէ իր պաշտպանելոյն եղած նախատինքին համար » :

— Պ. ար Դրէվիլ — ըստ անծանօթը խորհելով . — իր զըբ-պանը կ'զարնէր Պ. ար Դրէվիլի անունը տալով . . . . ճշմարիտն ըսէ նայիմ, սիրելի պանդոկապետս, երբ այն երիտասարդը մարած էր, տարակոյս չոնիմ որ իր զրապանը նայեցար . ի՞նչ կար մէջը :

— Պ. ար Դրէվիլ, հրացանակիրներու պետին ուղղեալ նամակ մը :

— Իրան :

— Ասեմափայլ տէր, ըսածս Ֆշմարտոթին մ'է :

Պանդոկապետն որ խորագիտութենէ զուրկ էր՝ չդիտեց բնաւթէ այն խօսքն անծանօթին կերպարանն ի՞նչպէս այլայլեց : Ասի հեռացաւ այն պատուհանէն որու եզրին վրայ շարունակ արմու-

կովը կոթներ էր, և մասյոյդ մարդու մը պէս ունքը պռստեց : — Սամանան — մրմնաց նա քմին տակէն . — արդեօք Դրէվիլ ղրկած է ինձի այս Կասքօնը . շատ զեռատի է : Բայց սրի հարուած մը՝ միշտ սրի հարուած մ'է , ի՞նչ տարիք որ ունենաց տուողը . և մարդս տղէ մ'այնքան շկատկածիր որշափ ուրիշ անձէ մը . երբեմն թեթե արդելք մը բառական է մեծ խորհուրդ մը խափանելու :

Եւ անծանօթը խորհրդածութեան մէջ ընկաւ՝ որ քանի մը վայրինան տեսեց :

— Ինձ նայէ , պանդոկապետ — ըստ նա — չես կրնար այն խելացնորին ձեռքէն ազատել զիս : Խոզի մոտք չեմ կարող զանի սպաննել , և սակայն — յարեց նա պաղ սպառնական դէմ քով մը — սակայն զիս կ'նեղէ այն պատանին : Ա՞ր է :

— Առաջին գստիկոնը՝ կնկանս սենեակն է . զինքը կ'զարմանեն :

— Միթէ իր լաթերն ու պարկն իր հետն են . կրկնոցը չհանց արդեօք :

— Ընդ հակառակն , այդ ամէն ըստածներդ վարը խոհանոցն են : Բայց ինչո՞ւ համար կ'նեղէ քեզ այն յիմար պատանին . . .

— Հարկաւ . պանդոկիդ մէջ այնպիսի զայթակղութիւն մը կը պատճառէ որ պարկեշտ մարդոց խիստ ծանը է . Աեր ելիր , հաշիս պատրաստէ և սպառառին ձայն տուր :

— Ի՞նչ , արդեօք մեկնելու միտք ունիս :

— Արդէն զիսես . քանի որ հրաման տուեր էի որ ձիու թամրը դնեն : Միթէ հրամանս դեռ շկատարուեցան :

— Ի՞նչպէս չէ . Զեր վսեմութիւնը տեսաւ անշոշտ որ իր ձին կազմ ու պատրաստ է մեծ դրան ներքն մեկնելու համար :

— Շատ լսու . ուրեմն պատուէրս կատարէ :

— Վայ — ըստ ինքնովին պանդոկապետը — արդեօք այն պզտիկ տղէն կ'վախնայ :

Բայց անծանօթին հրամայական մէկ ակնարկն անոր մամուռքին վերջ տուաւ : Աւտի բարեկց խոնարհարար և դուրս ելաւ :

— ուն արք չէ որ այն թշուառականը Հելուն (տիկինը) անմուշ =  
շարունակեց օստարականը . — պահէ մ'ասկից պիտի անցնի . ար-  
դէն քիչ մ'ուշացաւ : Կրաւի առելի լաւ ունիմ ձիս հեծնել և  
երթալ զանի զիմաւորել . . . : Արդեօք կարելի չէ ինձ հասկնալ  
թէ Գրէ վիլի ուղղեալ նամակն ինչ կ'պարունակէ :

Եւ օստարականը քրթմն ջն լով՝ գէպ 'ի խոհանոցը դիմեց :

Այն միջոցին պանդոկապետն՝ որ կարծէր թէ երիտասարդին  
ներկայութեան պատճառուու անծանօթն իր պանդոկէն կ'հեռանայ :  
Իր կնկան խոցն ելեր և վերջապէս ո' Արդանեան ինքզինքին ե-  
կած զաեր էր : Այն առեն՝ պանդոկապետն ուղեց հասկցնել ա-  
նոր որ օստիկանութիւնը կարելի է զինքը ձերբակալ ընէ մէծ  
իշխան մը վէճի գրգուելուն , վասն զի պանդոկապետին կարծ-  
եօքը՝ անժանօթը մէծ իշխան մը միայն կրնար լինիլ , և յորդո-  
րեց որ՝ իր տկարութեան շնայելով՝ սուր ելնէ և Տամբան շա-  
րունակէ : Աւստի , ո' Արդանեան կէս խլցած , անբանկոնակ և  
զլուխը ձերմակ լալմերով փաթթած՝ ելու՝ և պանդոկապետին  
դրդմանը՝ սկսու վար իջնել . բայց խոհանոցը հասնելուն՝ իր  
աշքին ամենէն առաջ իր գրդոփիչը զարկաւ , որ՝ երկու խոշոր  
նորման ձիերով լծուած ծանր կառքի մը բազրունին (marche-  
pied) վրայ կեցած հանդարտ կ'խօսէր :

Իր խօսակիցն՝ որուն զլուխը դռնակէն կ'երեւէր , քսան , քսան  
երկու տարու կին մ'էր : Արդէն ըսինք թէ ո' Արդանեան ինչ  
արագ հետաքննութեամբ մարզու մը գծագրութիւնը կ'ըմբռնէր:  
ուսու՞ մէկ ակնարկով տեսաւ որ կինը նորաաի էր և զեղանի :  
Արդ՝ այս զեղութիւնը շատ զարկաւ աշքին , վասն զի բոլորովին  
անծանօթ էր այն հարացյին երկիրներն ուր մինչ ցայն կէտ  
ընակէր էր ո' Արդանեան . Գունաստ և խարտեշ կին մ'էր , զան-  
դուր մազերն ուսերուն վրայ կ'ծփային , նուազուն կապոյտ աշեր,  
վարդագոյն շրթեր և կձեայ ձեռներ ունէր : Անծանօթին հետ  
աշխուժով կ'խօսէր այս կինը :

— Աւքեմ նորըին բարձրութեան հրամանն է . . . — կ'ըսէր տի-  
կինը :

862-54



— Իսկոյն Անկլիա գտունալ, և եթէ դուքսը Լոնդոնէն մկնի ուղղակի գործն անոր իմացնել:

— Իսկ միւս հրահանցներն ուր են — Հարցոց զեղանի ուղղորդչին:

— Աս տիին մէջ ամփոփուած են, և Մանչէն անդին անցնելու տաենդ միայն նոյն տուփը պիտի բանաս:

— Ծառ լաւ. իսկ գու ինչ պիտի ընես:

— Ե՞ս, Բարիդ պիտի գտունամ:

— Բայց այն յանդուզն պատանեակը պատժելեն առաջ պիտի մկնիս — Հարցոց տիկինը:

Ածանօթը պատասխան տալու վրայ էր՝ երբ բնբանը բանալու միջոցին, ա՛նդանեան որ ամէն ինչ լսեր էր, դրան սեմը վազեց և գոչեց.

— Ահա այն յանդուզն պատանեակն է որ ուրիշները կ'պատճէ, և յուսամ որ այս անդամ առաջնին պէս իր ձեռքէն չպիտի փախչի պատժելիք տնձը:

— 2'պիտի փախչի — վրայ բերաւ անծանօթը յօնքը պոլստելով:

— Մտածէ անգամ մը — ըստ Միլէտին՝ տեսնելով որ ազատորդին ձեռքը սրին կ'տանէր — մտածէ որ ամենաթեթե յապացումն ամէն բան կրնայ ՚ի կորուստ մատնել:

— Իրաւոնք ունիս — պատասխանեց ազատորդին. — որեմն քո ճամբար շարունակէ գու, ես ալ իմ կ'շարունակեմ:

Եւ տիկնոջ զլխի նշմայրով մը բարե՛ տալով՝ իր ձին աշտանակեց, մինչդեռ կառքին կառապանն իր ձիերն ուժզին կ'մտրակէր: Աւստի երկու խօսակիցներն իրարու հակուակի ճամբար մը բռնելով՝ գէպ յառաջ արշաւեցին, հեռացան:

— Հէ, հապա ծախսող — զոչեց զայրալիք պանդոկապետը՝ ուրուն սէրն առ իր ուղևորը խոր արհամարհանքի կ'փոխուէր, տեսնելով որ առանց հաշիւը վճարելու կ'մեկնէր:

— Վճարէ հաշիւը, ապիցատ — զոչեց ուղևորը՝ միշտ ընդ առաջ քշելով՝ իր ծառային, որ երկու երեք արծաթ դրամ՝ նե-

առեց պանդոկապետին ուսքն և ինքն ալ իր տիրոց ետևէն ակնաւ արշաւել :

— Ահ , վաստ , ահ , թշուառական , ահ , շինծու ազատորդք — գոչեց տ' Արդանեան ինքն ալ ծառային ետևէն վազելով :

Բայց վերաւորը շատ տկար էր և այնպիսի ցնցում մը չէր կրնար կրել : Այս ինչ տան քայլ առաւ որ ականջները դուքն չեցին , զլիոն պառյա մ' է բռնեց , արինալի ամպ մ' աշերը պահեց և փռղոցին մէջ տեղն ընկառ դնու ևս պոտալով :

— Վաստ , վաստ : վաստ :

— Արդարեւ շատ վաստ մարդ մ' է եղեր — մըմն ջեց պանդոկապետը տ' Արդանեանի մօտենալով , և այս շողոքորթութեամբ խեղուն հետ հաշտուիլ ռազեց , ինչպէս առակին արտզիլն իր եռեկոյեան խողուն ջին հետ :

— Այս , շատ վաստ է — մըմն ջեց տ' Արդանեան — քայց կինը շատ զեղանի :

— Ո՞ր կինը — հարցուց պանդոկապետը :

— Միլէ տին — թոթովեց տ' Արդանեան , և երկրորդ անդամ մարեցաւ :

— Փոյթս չէ — ըստ պանդոկապետը , — երկու հոգի կորձասի , բայց պատանին մնաց . անշուշտ քանի մ' օր ևս կնսուի պահն դոկս , և ասով տասն և մէկ սկուդ շահ մ' ունիմ :

Ընթերցողը զիտէ որ տ' Արդանեանի քսակին մէջ միայն մտան մէկ սկուդ մնացեր էր :

Պատերկապետը կ'յուսար որ մտասն մէկ օրուան հիւանդութեան համար՝ տ' Արդանեան տասն մէկ սկուդ կ'վճարէ , սակայն այս հաշին ըստ քմաց ըրենի էր : Ասան զի հետեւեալ օրին առաւօտեան ձիշդ ժամը հինգէն տ' Արդանեան ելու , անձամբ խոհանոցն իջու , և քանի մը նիւթերէ զատ՝ որոց ցուցակը մեր ձեռքը շհասաւ , զինի , եղ , խնկունի խնդրեց , և իր մօրը զեղագրին համեմատ՝ սպեղանի մը բաղադրեց և անով իր բազմաթիւ վերքն օծեց՝ և առանց բժշկի մ'օգնութեան ինքը կապերը փոխեց : Անտարակոյս պոհէ մեան սպեղանիին դօրութեամբը , և թերես բժշկի

պակասութենէն, ա՛Արդանեան նոյն իրկուն իսկ ոտքի վրայ ելառ  
և հետեւեալ օրը զբեթէ իր բոյժը գտաւ :

Բայց երբ պէտք եղաւ այս խնկունին, իւղն ու զինին վճա-  
րել, և այս ծախսը միայն ըրած էր ա՛Արդանեան, քանի որ բո-  
լորովին ծոմ պահեր էր, թէ ընդ հակառակն՝ գեղին ձին  
պանդոկապետին խօսքին նայելով եռապատիկ աւելի քան կերած  
էր քան ինչ որ կարելի էր ենթադրել իր հասակին համար,  
ա՛Արդանեան մինակ մաշած թառչէ քառկին հետ տասն մէկ ըս-  
կուզը գտաւ զրապանին մէջ, իսկ ու ար Դրէ վիլի ուղղեալ նա-  
մակն աներևայթ եղեր էր :

Երիտասարդը սկսաւ նախ մեծ համբերութեամբ այն նամակն  
որոնել, քսան անգամ զրապանները վեր վար դարձուց, պարկը  
խառնեց ու խառնեց, քսակը բացաւ ու դոցեց, սակայն երբ հա-  
մազուեցաւ որ նամակն անդտանելի է, երրորդ անգամ կատա-  
դութիւնը բռնեց, և քիչ մնաց որ նորէն համեմալ զինի և  
իւղ զործածելու պէտք պիտի զգար. վասն զի տեսնելով որ  
երիտասարդին խելապատակը նորէն կ'ըորբռքի և պանդոկին մէջ  
ամէն քան խորտակելու կ'սպառնայ թթէ զիրը չդտնուի, պան-  
դոկապետն խկցյն սուին մ'առեր էր ձեռքը, իր կինն աւելի կոճ-  
մը և իր մանշերն ալ առջի օրուան զաւազաններով զիներ էին:

— Յանձնարարաբական զի՞րս — կ'զուէր ա՛Արդանեան — իմ  
յանձնարարական զի՞րս, ապա թէ ոչ, անիծից արմատ, ամնդ-  
նիդ ալ պիտի շամփիրեմ դրախտապաններու պէտ :

Դժբազդորէն այս սպառնալիքն 'ի զործ գնելու արգելք մը  
կար. երիտասարդին սուրն առջի կոտին մէջ երկու կտոր եղեր  
էր, և այս քանս բոլորովին մոռցած լինելուն՝ երբ ա՛Արդան-  
եան սուրը պատենէն հանել ուղեց՝ պարզապէս ութ տաս բթա-  
մատ երկար թուրի կտորով մ'ինքզինքը զիւուած գտաւ, զէնքի  
կտոր մը զոր պանդոկապետն ուշի ուշով պատեանը դրեր էր:  
Իսկ սրին սայրը ճարապիկութեամբ մը պահեր էր նա՝ որպէս զի ա-  
նով շամփուր մը շինէ :

Այս արգելքով իր խորհրդէն ետ չպիսի կենար մեր մոլեզին

պատահնին, եթէ պանդոկապետը չմտածէր որ ողեռքին պահանձումը շատ իրաւացի էր :

— Բայց, զործը հասկնանք — ըստ նա իր սովորը վար իջեցընելով — ուր է այն նամակը :

— Այս, ուր է այն նամակը — զոշեց ա'Արդանեան : «Նախահայրական իմաց կ'տամ քեզ որ այն զիբը Պ. աը Դրէվիլի ողղեալ է, և պէտք է որ անվրէալ գտնուի, իսկ եթէ չդանոի՞ դանել տալու միջոցը զիտէ նա, քաջ զիտէ :

Այս սպառնալիքը պանդոկապետին երկիրւղ տուաւ : Թագաւորէն և Պ. կարտինալէն ետքը՝ Պ. աը Դրէվիլի անոնը թերևս ամենէն շատ կ'յիշուէր զօրականներու և նոյն իսկ սստանիկներու մէջ : Իրաւ է որ հայր ժօղէ ֆն ալ կար, բայց անոր անոնը միշտ կամացուկ մը կ'արտասանուէր, այնքան մեծ էր ալեխառն Բարձրութեան ազգած սարսափը, ինչպէս որ կ'անուանէր կարպինալին մտերիմը :

Աւստի՛ պանդոկապեան իր սովորը մէկդի նետելով՝ հրամայեց իր կնկան որ աւելի կոթը ձգէ, նոյնպէս սպասաւորներն իրենց զաւաղանները, և ինքը կորուած զիբը զտնելու համար մէջ ընկառ և ուրիշներուն ալ՝ նոյնն ընելու օրինակ տուաւ :

— Արդեօք այն նամակը մեծազին բան մը կ'պարունակէր — հարցուց պանդոկապետը պահ մ'անօդուտ տեղ հետազոտութիւններ ընելէն ետեւ :

— Աստուած վկայ, կ'հարցնե՞ս — զոշեց Կասքօնը, որ նոյն նամակին վրայ դրեր էր յոյսն արքունիքը մտնելու համար — իմ բոլոր հարստութիւնն կ'պարունակէր :

— Արդեօք Սպանիոյ վրայ մուրհակներ էին — հարցուց պանդոկապետը մտայոյզ :

— Նորին ԱԵՀ հափառութեան յատուկ գանձուն վրայ փոխանակաղբեր էին — պատասխանեց ա'Արդանեան, որ թագաւորին ծառայութեան մտնելու յաւով՝ նոյն յանձնարարութեան շնորհիլը կ'կարծէր թէ իրաւոնք ունի այս փոքր ինչ յանդոգն պատասխանը տալու :

- Կրոջ — ըստ պանդոկապետը բոլորովին լուսաշատ :
- Բայց՝ փոյթ չէ — յարեց ա'Արդանեան ազդային ազատաւ խօսութեամբը — փոյթ չէ, ստակը բանի տեղ չեմ գներ . նոյն խամակն էր ինձի համար ամեն ինչ : Լաւագոյն ունեի հազար ռազի կորդուսել քան թէ այն գիրը :
- Եթէ քսան հազար ռազի իսկ ըստք՝ վտանգ մը չկար, բայց պատահեկան ամօթափարտութիւն մը զինքը զաքեց :
- Պանդոկապետն՝ որ զիրը չգանելուն ամեն բան առ ու կըողին էտար, յանկացծ ուշաբրելով զուեց .
- Այն նամակը կործուած չէ բնա :
- ԱՇ՝ ըստ ա'Արդանեան :
- Այս, այն զիրը զողցած էն :
- Գողցած, և ով :
- Երեկուան ազնուական պարանն առած է : Խոհանոցն իջառ, թէր կ'զանուէր կրկնոցգ . այն տեղ մինակ մնաց : Գրան կ'զնեմ որ զիրդ այն մարզը խորած է :
- Միթէ կ'կարծե՞ս — պատասխան տուաւ ա'Արդանեան բոլորովին չամոզուելով . վասն զի նոյն նամակին մասնական կարեւորութիւնն ինքը մրայն զիտէր, և չէր կարծեր որ ուրիշի մը տենչը գրգուէ : Եւ իրօք, այն տեղ զանուող ծառայ կամ ուղեար ոչ ինչ չէին շահեր այն թուղթը ձեռք ձգելով :
- Աւրեմն կ'հաստատե՞ս — վրայ բերաւ ա'Արդանեան — որ պյն աներես ազատորդիէն կ'կասկպծիս :
- Կ'պնդեմ որ սողոց եմ — շարունակեց պանդոկապետը . իրը իմաց տուի անոր որ Ձեր ազնուութիւնը Պ. Գրէվիլի պաշտովածութիւնը կ'վայելէ : և թէ այն երեւլի ազատորդիին համար յատկ զիր մ'ունիս, շատ անհանգիստ եղաւ, հարցոց թէ ուր է այն նամակն և անմիջապէս խոհանոցն իջառ, արդէն զիտնալով որ այն տեղ կ'զանուի կրկնոցգ .
- Աւրեմն, այն է զոզս — պատասխանեց ա'Արդանեան . Պ. որ Գրէվիլի պիտի զանգատիմ, Պ. որ Գրէվիլն ալ թաշառին պիտի զանգատի : Յետոյ իր զբանէն երկու սկուզ հա-

նեց վեհապահն կերպով մ'ե պանդոկուպետին տուա , որ՝ զըլ-խարկ՝ ի ձեռին՝ անոր եաւեէն զնաց մինչև դուռը : Այս տեղ մը երիտասարդն իր զեղին երիվարիկը հեծառ՝ և անվտանգ հաստ մինչև Աէնդ-Ենդուան դուռն՝ ի Բարիկ , ուր ձիուն տէ ըլ զայն երեք սկողի ծախսեց , և աղէկ զին մ'էր , վասն զի տ'Երդանեան շափաղանց յոդնեցուցեր էր զայն վերջին կայանէն սկսեալ : Աւստի նոյն իսկ ձիավաճառն՝ որ վերոյիշեալ զնով ծախսու առան այն ձին , խոսսովանեցաւ որ այն տարօրինակ դումաըլ կ'վճարէր մի միայն կենդանիին եղական զոյնին համար :

Հետեւապէս ա'Երդանեան Բարիկ մտաւ իր փոքրիկ ծրաբն ու-սր զարկած՝ և մինչև իր գրամմական չքաւորութեան յարմար վար-ձու սենեակ մը գտնելը ճամբայ քալեց : Այս սենեակը տեսակ մը վերնայարկ մ'էր Ֆօսուայէ օր փողոցին մէջ՝ Լիքունսպորկի մօս :

Տ'Երդանեան առ հաւատչեայն տալով իր բնակարանն անցաւ , օրն անցուց կրկնոցին և տոնապանին ժապաէններ կարելով , և այս ժապաէններն իր մայրը քակեր էր Պ . ա'Երդանեան հօր նոր կրկնոցէ մը և ծածուկ անոր տուեր էր . յետոյ՝ Ֆէրայլ քար-ափը զնաց իր սրին երկաթ մը շինել տալու և անկից Լուվր դար-ձաւ և իր առ ջեն ելնող տուաջին հրացանակրին հարցուց Պ . տը Գրէվիլի ապարանին տեղը . այս ապարանը Վիէօ-Գոլօնպիէ փո-ղոցը կ'գտնուէր , այսինքն՝ ա'Երդանեանի բռնած սենեկին մօ-տակայ կողմերը . պարագայ մ'որ իր ողեռութեան յաջողութեան համար բարեգուակ նշան մ'երեցաւ իրեն :

Այնուհետէ՝ Մէօն բռնած ընթացքէն զոհ , անցեալին մէջ անպարտ , ներկային վրայ վատահ և ապագային մէջ յուսով լի , տ'Երդանեան պառկեցաւ և քաջերու քուն մը քաշեց :

Այս քունը՝ թէ և տակաւին զաւառային էր , մինչև առաւօտ-հան ժամն ինը տեեց , և նոյն ժամուն ելաւ նշանաւոր Պ . տը Գրէվիլի տունն երթալու , անձ մ'որ՝ իր հօրը կարծեօքը՝ տէ-բութեան երրորդ մարդն էր :

## Բ

Ա ՏՐԵՎՈՒԵԼ ՆԱԽԵԱՄԱՆԵԱՅԻ.

Պ. առ Գրուավիլ, ինչպէս որ կ'անուանէ ը ընտանիքը կասքօյի մէջ՝ կամ Պ. առ Գրէվիլ ինչպէս որ վերջապէս կ'կոչէ ը ինքղինքն ՚ի Բարիդ, իրօք ա՛ւրդանեանին պէս սկսեր էր իր ասպարէզը, այսինքն առանց ստակի, բայց՝ իրր գրամագլուխ՝ ուներ յանդղնութիւն մը, արթնութիւն և խելք մ'որսվ ամենէն չքաւօր կասքօն ազնուականը՝ առէ աւելի շատ կ'ժառանգէ հօրմէն յուսալից խոստումներու կողմէ քան թէ ամենէն հարուստ ոկէրիկօլտացի կամ Պէրրիացի ազնուականն իրապէս կ'ընդունի տապուածքի կողմէ: Իր լսիրշ արթութիւնը, իր լսդրագոյն բաղդն՝ այնպիսի ատեն որ հարուածները կարկուտի պէս կ'անզային, զինքն այն գժուարին սանդղին կատարը հասուցեր էին որ արքունի շընորհ կ'կոչուի, և որուն աստիճանները չորս չորս առնլով բարձրացեր էր:

Պ. առ Գրէվիլ մազառորին բարեկամն էր, թագաւորն ալ, ինչպէս ամէն մարդ զիսէ, շատ կ'յարգէր իր հօրը Հանրի Պ.ի յիշատակը: Պ. առ Գրէվիլի հայրը՝ այնչափ հատարմութեամբ ծառայեր էր Հանրիին՝ Նիզակակցութեան գէմ եղած կոիներուն մէջ, որ ՚ի չգոյէ դրամի (և Պէարնէն ալ միշա դրամ՝ ըստած բանէն գուրկ մնաց իր բոլոր կենաց մէջ, և իր պարտքը փոխ առնլու պէտք չունեցած բանով մը միայն վճարեց միշտ, այսինքն խելքով) Բարիդի առումէն ետքը՝ հրաման տուեր էր անոր իրը զինադրում գործածել ուկի առիւծ մը սա նշանաբանով. Հաստիքիւ և առեւզ: Իրը պատիւ մէծ բան էր այս, ասկայն իրը իրական վարձք՝ չափաւոր: Աւտիփ երբ Մեծն Հանրիի

զինակից բնկերը մեռաւ՝ իր որդւոյն թողոց միայն՝ իրը ժառանշագութիւն, իր սուրեն ու նշանաբանը։ Այս կրկնակ պատիւներուն և իր անրիծ անուան շնորհիւը, ո՛ղ. որ Դրէվիլ նորատի իշխանին ապարանն ընդունուեցաւ, և այնքան յաջողութեամբ դոքածեց իր սուրը, և այնքան հաւատարիմ եղաւ իր նշանաբանին, որ Լուի ԺՊ տէրութեան քաջ զինուորներէն մին, սովոր էր ըսելու որ եթէ մենամարտող բարեկամ մ'ունենայ՝ անոր խրատ պիտի տայ իբր վկայ առնուլ նախ ինքզինքն և ապա Դրէվիլը, և թերեւ իրմէ առաջ նոյն ինք Դրէվիլը։

Աւստի Լուի ԺՊ Նշանարիտ սէր մը կ'զգար Դրէվիլի համար, արքայական սէր, եսական սէր, իրաւ, բայց դարձեալ սէր էր։ Վասն զի՞ այն աղէտալի ժամանակները՝ Դրէվիլի նման մարդոց ընկերութիւնը կ'փնտուեր։ Ծատերը կարուլ էին ստանալ իրը նշանաբան ու մակդիրն՝ որ նոյնին ստորին կողմն էր, բայց քիչեր կրնային պահանջել հաստութէ՛ մակդիրն՝ որուն վերին նշանն էր։ Դրէվիլ այս վերջին գասէն էր, այն հազուազիւտ մարդոց կարդէն էր՝ որ դամփուի սէս հւաւ իմացականութիւն, կոյր քաջութիւն, սրատես աչք, արագ ձեռք ունին, և կարծես թէ անոնց աչք տրուեր է միայն դիտելու համար թէ արդեօք թագաւորն անձէ մը դժգոհէ է, և ձեռք՝ զարնելու համար այն անհանոյ անձը, թէ ոէսմ մը լինի, թէ Մօրվէր մը, թէ Քօլտրօ որ Մէրէ մը, թէ Վիտրի մը։ Վերջապէս՝ առիթը միայն պակսեր էր առ Դրէվիլին, բայց այս առիթը կ'փնտուեր, և միտքը դրեր էր անոր մազերէն բռնելու եթէ երբէք ձեռքին տակն ընկնի։ Ահա այս պատճառուն Լուի ԺՊ, իր հրացանակիրներուն հրամանատար կարդէց ո՛ղ. որ Դրէվիլը, և այս հրացանակիրներն անձնուիրութեան կամ լաւ ևս մոլեռանդութեան կողմէ Լուի ԺՊ-ի համար էին, ինչ որ Հանրի Գ-ին էին իր սովաներն և Լուի ԺՊ-ին իր սկզբան պահապան զօրքը։

Սակայն այս կողմէն կարստնալն ալ թագաւորէն ետ չմնաց։ Երբ տեսաւ որ Լուի ԺՊ, իր շօրս զին ընտիր ընտիր քաջեր կը ժողվէ, կարտինալը, ֆրանսայի այս երկրորդ կամ առաջին թա-

զաւորը ու զեց որ ինքն ալ իր պահապան գունդն ունենայ. Աւատի Լուի ԺԳ. ին պէս իրեն հրացանակիրներ ընտրեց, և այս երկու նախանձորդ իշխանութիւնները գուն կ'զործէին՝ ոչ միայն Թրանսայի գաւառներէն, այլ և օտար երկիրներէն անուանի քաջամարտիկներ ընտրել. Աւատի Արիշլիէօ և Լուի ԺԳ. ամսէպ իրկուն սատրինց խաղալու ատեն, վէճ կ'ընէին իրենց մարտիկներուն արժանիքին վրայ. Ռմէն մէկն իրեններուն կերպարանն ու արիութիւնը կ'զովէր, և մնամարտութեան ու կոիներու դէմ յայտնի համարձակ խօսելէն ետև՝ զաղունի կ'զրգուէր որ վէճի քռնուին, և մնծ վիշտ կամ անչափ ու բախութիւններ կ'ըզգար իր մարտիկներուն պարտութեան կամ յաղթութեան վրայ. Այս կ'պատմն դէմ մարդու մը յիշտատիկներն որ քանի մ'անգամ յաղթուեր, առկայն ստէպ, յաղթական ելեր էր այս աեսակ պայքարներու մէջ:

Դրէ վիլ՝ իր տիրոջ տկար կողմը զիտէր. և ահա այս հնարացիտութեամբն էր որ կրցաւ վարել այնպիսի թագաւորի մ'երկարատե և մնայուն շնորհն որ իր բարձրկամներուն հաւատարիմ լինելու համբաւ մը չձգեց: Իր հրացանակիրներն ՚ի հանգէս կը հանէր Արման Տիւրլէսին կարտինալին առջե խարռուիկ գէմքով մը, և Նորին բարձրութիւնն ալ բարկութենէն իր ալէխառն պեխը կ'անկէր: Դրէ վիլ՝ ժամանակին պատերազմը քաջ զիտէր, վասն զի եթէ մարդ ՚ի վեաս թշնամոյն շապրէր՝ ՚ի վեաս հայրենակցաց պիտի ապրէր, իր զինուորները սատանաներու լեզէոն մը կ'կազմէին, որոնք՝ իրմէ զատ՝ ամենուն համար անկարդ և անմարդ էին:

Թագաւորին կամ լու ևս Պ. աը Դրէ վիլին հրացանակիրները մերկանց, արբշիո, վիրալի՝ զինետունները, չեմլիները, զասարանները կ'թափառէին, սաստիկ պոռալով, իրենց պեխերն ոլորելով, սորերն հնչեցնելով, Պ. կարտինալին զինուորներուն հեշտորէն զարնուելով՝ երբ անոնց կ'հանգիպէին. յետոյ բաց օդին իրենց սուրերը մերկացնելով՝ զանազան կատակներ կ'ընէին, երբեմն կ'սպաննուէին, բայց այսպիսի պարագայի մէջ՝ ըս-

բայց էին վիշտ և վրէ ժխնդրութիւն զրգութու ստեղծ կ'սպան, նեին, և այն առենն ալ սույց էին բանտի մէջ չմաշելու, քանի որ ո՛ . ար Դրէ վիլ պատրաստ էր զանոնք ազատելու : Եւ այս պատճառաւ, ո՛ , ար Դրէ վիլ անշափս զովեստներ կ'ընդունէր այս մարտիկներէն որ զինքը կ'պաշտէին, և թէ կախաղանի արժանի արիւնկզակ անձեր էին, դարձեալ անոր առ ջե կ'գողային՝ ինչպէս աշակերտներ կ'գողան իրենց վարժապետներու առ ջե՝ նըշմայրի մ'անգամ հնազանդելով, և պատրաստ մնոնելու ամենաթեթև նախատինք մը սրբելու համար :

ո՛ . ար Դրէ վիլ այս հզօր լծակը զործածեր էր նախ թագաւորին և անոր բարեկամներուն համար, ապա իրեն և իր բարեկամներուն՝ ի նարսատ : Սակայն՝ նոյն ժամանակի յիշատակառ բաններն՝ որոնք բազմաթիւ են, չեն յիշեր բնաւ որ ո՛ . ար Դրէ վիլ ամբասպանուած լինի՝ նոյն իսկ իր թշնամիներէն, և այսպիսիններ կ'զանուէին թէ զրչի և թէ սրի տէր մարդոց մէջ . և ոչ տեղ մը, կ'ըսենք, նշանակուած կայ որ այն ազնուականն իր սէ իտներուն աշակեցութեան համար վարձ մ'ընդունելուն ամբաստանուած լինի : Բանուարկութեան հազուազիւտ տաղանդովն իսկ՝ որով ամենէն հզօր բանսարկուներու դասը կ'անցնէր, դարձեալ պարկեշտ մարդ էր մնացեր : Ասկից զատ՝ իր ընդունուած բարձարեկ մնծ հարուածներն և տաժանելի ու վաստակարեկ կրթութիւնները մոռնալով զորիչներու ամենէն անվեհեր թափառաշըրջեկը, ամենէն վարպետ իգապոլն, իր ժամանակին ամենէն նըրբանակարանն եղեր էր . Դրէ վիլի սիրային արկածներուն վրայ կ'իօսէր ամէն մարդ, ինչպէս քսան տարի առաջ Պատօնքիւրի դէպքերու վրայ խօսեր էին, և այս ալ քիչ բան չէր : Աւրեմ հրացանակիրներու հրամանատարն ամենուն հիանալի, ահարկու և սիրելի կ'երեւէր, և այս ալ մարդկային յաջողութեանց կատարը կ'համարուի :

Լուի ԺԴ . իր արքունեաց մանր մոնր աստղերը նսեմացոց իր համասփեռ փայլութեամբ, իսկ իր հայրը, արև մը բազմաս (pluribus impar) իր անմասկան փայլը մտերիմներուն

մէջ բաժնեց և իր յատուկ արժանիքն ամէն պալատականներուն։  
Բաց ՚ի թագաւորին և կարտինալին պաշտօնական շնորհաւորու-  
թիւններէն՝ այն ատեն Բարիզի մէջ երկու հարիւրէն առելի մանր  
մունք և վայելու շնորհաւորութեան հանգէսներ կային։ Այս եր-  
կու հարիւր հանգէսներու մէջ Պ. առ Դրէ վիլինն ամենէն շատ  
կյանախէին։

Այսօ-Գոլօնպիէ փողոցն եղող ապարանին բակը բանակա-  
տեղիի մը կնմանէր, և այս ալ ամառը մամը վեցէն և ձմեռը  
ժամն ութէն մկնելով։ Յիստնէն վաթմառն հրացանակիրներ՝ որ  
կարծես թէ կ'փոփոխուէին որպէս զի միշտ մնծարելի թիւ մը ցու-  
ցընեն, անդադար կ'պարտէին կազմ՝ ու պատրաստ ՚ի մարտ։  
Մէծ սանդղի մ'երկայնքն՝ որուն բռնած տեղն անտարակոյս ան-  
բաղջ տուն մը կրնար շինել մեր արզի քաղաքակրթութիւնը,  
կ'ելնէին կ'իշնէին Բարիզի խնդրարկուներն՝ որ թերեւ շնորհ մը  
ստանալու ետեւէ էին, նոյնպէս գաւառարնակ ազատորդիներ որ  
զինոր գրուելու հոգի կ'առյին, և զոյն զզոյն ժապաէններով  
զարդարուն սպասաւորներ որ իրենց զլիսաւորներուն հրամանները  
Պ. առ Դրէ վիլի հաղորդելու կ'զային։ Նախառնեկին մէջ՝ բռ-  
լորածե նստարաններու վրայ՝ ընտրեալմերը կ'նատէին, այսինքն  
անոնք որ հրամիթեալ էին։ Առաւատէն մինչև իրկուն բզզում  
մը կ'լսուէր այն տեղ, մինչդեռ Պ. առ Դրէ վիլի նոյն նախառն-  
եկին կից դահլչին մէջ այցելուները կ'ընդունէր, զանգատներ  
մտիկ կ'ընէր, հրամաններ կ'առար, և ինչպէս թագաւորն իր Լու-  
վրի արենակին վրայ (balcon), բնդու ալ բաւական էր որ պա-  
տուհանն երեւէր մարզկան և զինոց հանգէս մը տեսնելու։

Տ'Արդանեանի ներկայացած օրը՝ շքեղ ժողով մը կար, մա-  
նաւանդ իր գաւառէն եկող գրսեցիի մը համար. իրաւ է որ այս  
գաւառարնակը կապօն մ'էր, և մանաւանդ այն տաենը ա՛Ար-  
դանեանի հայրենակիցները մեծ համբաւ ունեին որպէս թէ դիւ-  
րան ահ ու դող շեն զգար։ Եւ արգարէ՛ ով որ անգամ մը ձու-  
լածոյ և քառակուսի զլուխներ ունեցող սեպերով դռնէն անցնէր՝  
դորականաց զնդի մը մէջ կ'առնէր յանկարծ ինքզինքը, որոնք

բակին մէջ կ'անցնէին կ'դառնային , իրարու խօսքեր նետելով՝ վիճելով և խաղալով : Այս յարձանուտ կոհակներուն մէջն ճամբայ մը յարդարելու համար պէտք էր սպայ մը , մեծ իշխան մը կամ սիրուն կին մը լինել :

Ահա այս անկարգ զռոհին մէջն յառաջ անցաւ մեր երիտասարդը դողդոջուն սրտով իր երկար թուրը վահիտ սրտ նքներուն երկայնքը՝ պահած՝ և մէկ ձեռքն իր թաւշեայ գգակին եզրը բըռնած , և այնպիսի չփոթալի դառառաբնակի մը կէս ժպիտ մ'ընելով՝ որ իբր թէ պարզերմս երեիլ կ'փափաքի : Ամէն անզամոն որ խմբէ մ'անցնէր՝ աւելի ազատ կ'չնչէր , բայց կ'զիտէր որ իբեն նայելու համար ոմանք կ'դառնան , և ա՛Յրդանեան առաջին անզամն էր որ կենաց մէջ ծաղըրելի երեցաւ , թէ և մինչև նոյն օրը լաւ զարսփար մ'ունեցեր էր իր վթայ :

Երբ սանդղին հասաւ , զործն աւելի ծանրացաւ . առաջին աստիճաններուն վրայ չորս հրացանակիրներ կային որ հետևեալ կրթութիւնն ընելով կ'զրօնուին , մինչզեռ անոնց ընկերներէն տաս տասն երկու հոգի վերնադաւիթը կ'սպասէին որպէս զի ըստ կարգի խաղին մասնակից լինին :

Առնցմէ մինչ վլըրին աստիճանին վրայ կեցած՝ մերկ սուր մ'ի ձեռին , միւս երեքը վեր ելնելու կ'արզիլէր կամ արզիլելու կ'աշխատէր :

Միւս երեքն անոր գէմ իրենց թեթևաշարժ սրերով կ'մաքառէին : Կախ ա՛Յրդանեան կարծեց թէ այն երկաթներն անսայր սուրեր են և բութ (boutonné) . բայց երբ քանի մը վէտեր տեսաւ՝ իսկոյն զիտեց որ իրաքանչիւրին զէնքը՝ ընդ հախուակին պէտք եղածին պէս բարակ և սրած էր , և ամէն անզամուն որ վէտ կ'առնուին՝ ոչ միայն հանգիստականներն՝ այլ նոյն իսկ գերասանները խենդի պէս կ'ծիծաղէին :

Նոյն միջոցին՝ աստիճանին վրան կեցողն՝ իր հակառակորդները հիանալի ճարսդիկութեամբ կ'վանէր : Հատերն անոնց չորս դին բալորեր էին . խաղին պայմանը աս էր որ՝ եթէ սուրը մէկուն դպէր պէտք էր որ քաշուէր , և իր ներկայութեան կարգը

Վերանուքը ի նպանութ դպրոշին : Հինգ վայրկենի մէջ՝ աստիճանը պաշտպանողը երեք հոգի սրովը գօրաւ , միոյն զաստակին , միսին ծնօտէն , երբորդին ականջէն . թէ և ինքն անվաս մեաց . և այս ձարպիկութեան համար , ըստ որոշեալ պայմանաց՝ երեք անգամ կարգէն առելի խաղալու արածութիւն ստացաւ :

Արշափ որ տ'Արդանեան գծու արաւ կ'զարմանար բանի մը վրայ , կամ լսու ևս , այնոք ո կ'ուղէր ցուցնել , դարձեալ այս զուսանքը տեսնելով զարմացաւ : Տեսեր էր արդէն իր զաւառին մէջ , այս երկիրս ուր զրոխներն այնքան չու տով կ'տափնան , մենամարտի առելի երկար նախարարաթրամտութիւններ , և սակայն այս չորս խաղացներուն մեծարանութիւնն իր մինչ ցայն կէտ լսածներէն նոյն իսկ կապօնյի մէջ առելի զօրառոր երեցաւ իրեն : Ենքզինքն այն հակայից աշխարհը կարծեց ու կրլլիվը այնուհետեւ զնաց և այնչափ երկիւղ զզաց . սակայն զեռ չէր հանձ իր նպաստներին , վասն զի՞ տականին վերնարակին ու նախասենն ակը կային :

Աերնարակին վրայ չէին կուռեր , այլ կիներու պատմութիւններ կ'պատմէին , իսկ նախասեննեկին մէջ պալատի պատմութիւններ : Աերնարակին վրայ տ'Արդանեան կարմրեցաւ : Նախասեններկը մտնելուն մարտու զզաց : Իր արգեռն ու թափառիկ երեաւ կայութիւնը՝ որով կապօնյի մէջ ահարկու կ'զառնար նորահածակ նամիջաներու . և երբեմն նոյն իսկ նորատի տիրուհիներու , երբէք երազած շունէր՝ ցնորդի առնեն անզամ , այն սիրային հրաշալեաց կէտ մասիք , և այն վատշուէր քաջութեան դործերու քառորդը , որոնք մեծ արժէք կ'ստանոյին նաև խիստ ծանօթ անուններու յիշատակութեամբ : Եսպերելի մէկնութիւններով : Սակայն եթէ իր բարցյական զզայումը վիրառորեցաւ վերնարակին վրայ , կարտինալին համար ունեցած յարգանքը նախասեննեկին մէջ զայթակղեցաւ : Արդ՝ տ'Արդանեան զարմանօք կ'լսէր որ բացէ՝ ի բաց վար կ'զարնեն այն քաղաքականութիւնն որ Եւրոպաի զող կ'աղդէր , նոյնոգէս կարտինալին անձնական կեանքը , թէ և շատ մը բարձր և հզօր աւատական իշխաններ պատժուեր էին անոր ներ-

քին կեանքը քննելու փորձ փորձելնուն . այս մեծ մարզը՝ որ ո՞ւր դանեան հօր մեծապէս յարդելի էր , ու . ար Դրէ վիլի հրացանակիրներուն առակ նշառակի կ'լինէր , վասն զի անոր թիւր ոտներն ու կորակոր կոճակը կ'ծաղրէին . ոմանք՝ իր սիրուհի՝ տիկին ո՞ւկիիժնի , և իր քեռաղջիկ տիկին կօնպալի ի վրայ եպերական երգեր կ'երգէին , մինչդեռ այլք կարտինալ—դքսին պայիկներուն և պահապան զօրաց դէմ դառեր կ'նիրթէին , և այս ամէն բաները հրէ շային անհնարին՝ իրողութիւններ կերեւէ ին ո՞ւրդ անեանի :

Սակայն՝ ծրբ թագառին անունն երբեմն յանկարծ յիշուէր այս կարտինալական կատակներուն մէջ տեսակ մը զայլ պահ մը կ'պրկէր այս ծաղրաբան բնրանները . ամէն մարդ չորս զին կը նայէր վարանելով , և կարծես թէ կ'վախնային որ ու . ար Դրէ-վիլի դահշէին միջնորմն ականջ չունենաց . բայց իսկոյն նոր ակնարկութիւն մը խօսքը Դորին բարձրութեան վրայ կ'դարձընէր , և այն տաեն քահ քահներն ու ելի սաստիկ սկսելով՝ անոր ամէն զործերը մաղէ կ'անցընէին եսութեամբ :

— Երանի — կ'ըսէր իւրովի ո՞ւրդանեան տհարեկ — այս մարդիկը Պատգիլլ պիտի զրկուին և կախուին , և անտարակոյս՝ Ես ալ միասին , վասն զի քանի որ անոնց խօսքը մտիկ կ'ընեմ , իրք դառակից պիտի ամբաստանուիմ : Խնչ պիտի ըսէր որպեսք հայրաւեմէր իւրովի այն որ այս տեսակ անհնաւաններու ընկերութեան մէջ կ'զանուիմ , այն որ տաքսպինց ինձ անշափս յարգել կարահնալը :

Աւստի՛ ինչպէս որ դիւրին է մոտաքերել առանց ըսելու , ո՞ւրդանեան չէր իշխեր խօսակցութեան մատնակից լինել . միայն չորս աչքով կ'դիտէր + մոտպիր մտիկ կ'ընէր , իր հինգ զզ այսարանքն արթուն պահելով որ բառ մը չփախցընէ , և իր հօրը խորհուրդներուն վրայ ոնեցած վստահութեան հակառակ , իր յատուկ ճաշակին և բնադրումի բերմանըրը՝ անցած դարձած բաները զովելու քան պարտաւելու հակամէտ կ'երևէր :

Բայց որովհնեան ու . ար Դրէ վիլի պալատականաց խմբին մէջ բոլորովին օտարական մէէր և առաջին անդամ՝ կ'երևէր այն կոու-

մերը, եկան հարցին իրեն թէ ի՞նչ կ'ինդրէ: Այս հարցման վը-  
րայ ո՛ւրդանեան խոնարհաբար իր անոնքը ծանոյց, հայրենակից  
լինելուն վրայ պնդեց, և իրեն հարց ու փորձ ընտու սենեկասրանին  
աղաւեց որ Պ. որ Դրէ վիլէն քանի մը վայրինի համար ուն-  
կնդրութիւն մը հայցէ: սենեկասրանը պաշտպան ձայնով մը խոս-  
տացաւ կատարել իր ինդիրն ու պարտ ու պատշաճը հաղորդել:

Տ' Արդանեանի առաջին զարմանքը փոքր ինչ դադրելով պա-  
րապոյ ժամ՝ ունեցաւ ներկայ գտնուողներուն հաղուստն ու կեր-  
պարանը զննելու:

Ամենն վառ գուռն ակմրին կեդրոնը կ'զտնուէր բարձր համա-  
կառվ, ամբարտաւան դէւրով հրացանակիր մ'որուն այլանդքակ հան-  
դերձն ամենուն ոշագրութիւնը կ'զրուէր: Նոյն պահուն՝ համա-  
զգեստ տառատոկը չէր հազած, որ պարտաւորական չէր այն  
նուազ ազատութեան, և մեծագոյն անհախտ թեան ժամանակը,  
այլ լոկ զրատ մ'երկնազդյն, քիչ շատ գոյնը նետած և մաշած,  
և նոյն զգեստին վրայ ուկեհիւս փառաւոր զօտի մը կապեր էր,  
խեցիներու պէս փալփլինւն երբ ջրով կ'ծածկուի բաց արեւն: Կար-  
միր թաւշէ երկար վերաբերու մը շնորհալիք կերպով ձգեր էր ու-  
սերուն վրայ, մինակ առջեկի կողմէն բաց թողլով շքեղ կամարն  
որուն կախուեր էր երկայն առսեր մը:

Այս հրացանակիրը նոյն միջոցին իսկ իր պահպանութեան  
պաշտօնն առարտելով՝ վար իշեր՝ կ'զանգատուէր որ հարբողին ե-  
ղեր է և առեն ատեն շինովի ձեւրառվ կ'հազար: Այս պատճե-  
ռաւ, ինչպէս որ ինքն ամենուն կ'ըսէր վերաբերուն հաղեր էր և  
մինչդեռ բարձր 'ի զլուխ կ'խօսէր, իր պեխը քամահական երե-  
սով մ'ուլրելով՝ ուրիշներն և առնեն առելի ո՛ւրդանեան անոր  
ռոկեթել կամարին վրայ կ'հիմային:

— Ի՞նչ օգուտ — կ'ըսէր հրացանակիրը — ասոր Հերու կ'մօ-  
տենայ, յիմարութիւն մ'է, քաջ զիտեմ: բայց Հերու է: Ասկից  
գասի պէտք է բանի մը գործածել օրինառոր ստակ մը:

— Ահ, Բարինս — զոչեց հանգիստականներէն մին — փորձ մի  
փորձեր մեղ հառտացնելու որ այդ կամարդ հօրենական առաստ-

մեռնութեան պարզե մ'է . անցած կիրակի Աէ նզ - Օնօրեւ դրան  
մօտ քօզաւոր տիկին մը տեսայ , այն տուած պիտի լինի քեզ :

— Աչ , պատիւս և ազնուականի խօսքս վկայ , ես ինքս զնեցի  
այս կամարն իմ յատուկ ստակովս — պատասխանեց այն անձն  
որ Բորթոս մատնով կոչուեցաւ :

— Այս , ինչպէս որ ես ալ այս նոր քսակը զնեցի առջի որ  
անոր մէջ սիրուհւոյս գրածովը — ըստ ուրիշ հրացանակիր մը :

— Ճշմարիտն ըսի — վրայ բերաւ Բորթոս — և ասոր ապա-  
ցոյցն այն է որ տասն երկու ուկի դահեկան վճարեցի :

Զարմանքն առելցաւ , թէ և այս մասին կասկածը բռլորովին  
չփարատեցաւ :

— Այսպէս չէ , Աչ-հո — ըստ Բորթոս ուրիշ հրացանակիր  
մը դառնալով :

Այս միւս հրացանակիրը՝ որ Արտմիս կոչուեցաւ , այն հար-  
ցումն ընողին կատարեւալ հակապատկերն էր , հազիւ քսան եր-  
կու քսան երեք տարեկան պատանի մ'էր . որարդ և աղջու գէմ-  
քով , անոյշ ու աշերավ և դարնան զեղնի պէս վարդագոյն և  
թառշնի այսաւրով , իր բարակ պեխոր՝ վերին շրթին վրայ յըս-  
տակ և ուղեղ զիծ մը կ'ստուրագրէր . այնպէս կ'թուէր որ իր  
ձեռները վար կախելու կ'երկնչէր որպէս զի երակները շուռին ,  
և ատեն ատեն ական նուերուն ծայրը կ'քամթէր որպէս զի անժնց  
թեթև թափանցիկ ծիրանի գոյն մը տայ : Ասվորաբար քիշ և  
ծանր կ'խօսէր , ստէպ կ'բարեկը , իր ակռաները ցցց տալով  
անձնայն կ'ծիծաղէր , և ակռաներն ալ աղւոր էին և կ'երեւէր թէ՝  
ինչպէս իր բռլոր անձին՝ նոյնպէս անոնց մած հոդ կ'տանէր :  
Գլխի հաստատական նշան մ'ընելով իր բարեկամին հարցման  
պատասխան տուաւ :

Այս ստորաւական պատասխանը՝ կամարի մասին եղած կաս-  
կածներն իրը [թէ ջրեց . անոր վրայ նորէն զմայլեցան , բայց խօս-  
քը չորին . իսկ մաքի արագ մէկ շրջումով յանկարծ խօսակցու-  
թիւնն ուրիշ խնդրի վրայ դարձաւ :

— Ի՞նչ կ'մտածէք Շալէի զինակրին պատմածին վրայ — հար-

ցուց ուրիշ հրացանակից մ'առանց ՚ի մասնաւորի մէ կը հարց ու փորձ ընելու , այլ ընդ հակառակն խօսքն ամենուն ուղղելով :

— Եւ ի՞նչ կ'պատմէ — հարցոց քորթոս ինքնահաճ ձայնով մը :

— Կ'պատմէ թէ՛ Ռոշֆորը , կարտինալին այս կոյր զործակատարը՝ կրօնաւորի հաղուստով ծպտեալ տեսեր է Պրոֆելի մէջ այն անփծեալ Ռոշֆորն՝ որ այս ծպտեալ կերպարանին շնորհիւ ը . ու . ու 1. է կը խաբեր է , այս ալ իրը անմիտ բռնուեր է :

— Այս , իրը անմիտ — բայս Քորթոս . — բայց միթէ այս բանս սաոյդ է :

— Արամիսէն իմացայ — պատասխանեց հրացանակիրը :

— Իրան :

— Ե՛ս , Քորթոս , ինչպէս որ զիտես՝ երեկ մինակ քեղի պատմցի այս իբրութիւնը — բայս Արամիս . — խօսքը զգենք :

— Խօսքը զոցենք , կ'ըսես — վրայ բերան Քորթոս — և այս է քու կարծեիրդ : Ի՞նչպէս խօսքը զոցենք , ի՞նչպէս շատ մը կը կարես կ'թափես : Ի՞նչ , կարտինալն ազատորդիի մ'եւաելն լըրտես մը կ'զրկէ , անոր նամականին մօտնչի , աւազակի , չարարագործի մը ձեռօք կ'կօղոպտէ , Շալէ ին զլուխը կարել կ'այս , սա անձունի պատրուակու թէ՛ Թաշտառը սօսաննել և անոր եղբայրը թագուհւոյն հետ կարդելու միաբ ունի եղեր : Այս հանելուկո ոչ ոք զիտեր , երեկ իմացոցիք մնդի մնծ զոհոնակութիւն պատճառելով , և մինչդեռ այս լուրին վրայ ամենքնիս ապուշ կրթեր կ'մտածենք , այսօր կ'ելնես կ'ըսես որ խօսքը զոցենք :

— Լա՛ , խօսինք , քանի որ այս է փափաքդ — պատասխանեց Արամիս համբերութեամբ :

— Եթէ խեղճ Շալէի զինակիրը լինէի — զուեց Քորթոս — այն Ռոշֆորին աշքին պիտի երեկի :

— Այն ատեն Առաջ զուքսն ալ քու աշքիդ սկիտի երեկը — վրայ բերան Արամիս :

— Ա՛ս , Առաջ զուքսը . քաջ է , քաջ է , Առաջ զուքսը . — պատասխանեց Քորթոս ձեռները զարնելով և զլիովը հատնու-

թիւն տալով, Առաք զտքսը, սրանչելի դիւս։ Եյդ անոնքը պիտի հոչակեմ, սիրելիս, անհոգ եղիր։ Բոլորովին անօխտ չէ մեր Արամիսը։ Կ'նշ մեծ դժբաղլոթիւն որ քայ կոչմանդ չկըցար հետեւյու, սիրելիս, ինչ հիանալի արքայ մը կ'լինէիր։

— Ա՛հ, ժամանակառու յազագում մ'է այդ — վրայ բերաւ Արամիս։ — օրին մէկն արքայ պիտի լինիմ։ արդէն զիտիս որ այս մասը աստուածաբանութիւն կ'ունիմ։

— Եր պիտքը պիտի կատարէ — վրայ բերաւ Բորթոս — ուշ կանոն իս պիտի կատարէ։

— Կանոն իս — ըստ Արամիս։

— Եր համազզեսաբն ետեր կախուած ողջնառորը հազնելու համար բանի մը կ'սպասէ — վրայ բերաւ հրացանակիրը։

— Եւ ինչ բանի կ'սպասէ — հարցուց ուրիշ անձ մը։

— Կ'սպասէ որ թաղուհին ֆրանսաի դահամատանդ ալքայառ զո՞ն մը ծնի։

— Այս կիանին մրայ կատակ ով բնալը, պարօններ — ըստ Բորթոս։ — փառք Աստուածոյ, զեռ թաղուհին արքայորդի մը տառ տարիին ունի։

— Կ'ըսնին թէ Պլքինչէմ Ֆրանսա կ'զանուի — վրայ բերաւ Արամիս հեղնալի մայիսում մ'որ ըստ երեսյթին՝ այսպիսի պարզ խօսքի մը բաւական դայթական իմաստ մը կ'ընծայէր։

— Արամիս, բարեկամիք իս, այս անզամ անիբառ ես — ընդունից Բորթոս — և խելացի երեսելու ահնչդ քեզ ասհմանէն զուրու կ'հանէ։ Եթէ ու, աը Դրէ զիւ ըստեզ լուիր, շատ պիտի զժկամակէր։

— Միթէ դան տալու ելեր ես, Բորթոս — զուեց Արամիս որուն անուշ աչքին մէջ կայծի նիսն բան մ'ոնցաւ։

— Սիրելի իս, հրացանակիր կամ արքայ եղիր։ Մին կամ միսը, բայց թէ մին և թէ միս որ մի լինիր — վրայ բերաւ Բորթոս։ — Գիտես որ Աթոս անյածն օր ըստ քեզ թէ ամէն բանի մէջ քիթէ կ'խոթես։ Ա՛հ, ինչը իմ, չըրդողնք, անօդու բան է, արդէն զիտես թէ ինչ պայման ունինք քո, Աթոսի և

իմ մէջ : Այս, տիկին ա'կելիյօնի տունը կ'երթաս և անոր չեա  
կ'եփես, տիկին Շէվրէ օզի քեռաղջիկ՝ տիկին աը Պուա - Պրասիկ  
տունը կ'երթաս, և ամենքը կ'ըսեն թէ նոյն կնկան շնորհները  
կ'վայելնս : Ա՛յ, Տէր Աստուած, երջանկութիւնդ քեզի որահէ,  
քու զաղտնիքդ հարցնող չկայ, խոհեմութիւնդ ամենուն յայտնի  
է : Արդ քանի որ այդ առաքինութեան տէրն ես, ինչո՞ւ համար,  
ինդրեմ, նոյն ոգով չես վարուիր Կորին վեհափառութեան մա-  
սին : Ա՛վ որ կ'ուզէ և ինչպէս որ կ'ուզէ թող թաղառորին և  
կարտինալին միսու ծամէ . բայց թաղուհին նորիսկան է, և ա-  
նոր խօսքն ընողը պէաք է որ լու խօսի :

— Բորթոս, ահա կ'իմացնեմ քեզ որ Կարսիսին պէս մեծա-  
մբա ես — պատասխանեց Արամիս . — զիսես որ բարոյականը  
կ'առեմ, և մինակ խօսածը մաֆկ կ'ընեմ : Խակ դու, սիրելիս,  
դու խիստ փառաւոր կամար մ'ունիս և բարոյականի մասին շատ  
վարժ չես : Աբրայ պիտի լինիմ երբ յարմար դատեմ, առ այժմ՝  
հրացանակիր մ'եմ, այս իրաւամբ ուղածս կրնամ ըսել, և այս  
պահուս կ'ուզեմ ըսել քեզ որ ինձ տաղտուկ կ'պատճառես :

— Արամիս :

— Բորթոս :

— Ե՛ս, պարօններ, պարօններ, ինչ է այդ — զուեցին չորս  
կողմէն :

— Պ. աը Գրէ վիլ Պ. ա'Երդանետնի կ'սպասէ — ընդմիջեց  
սպասաւոր մը դահճին դուռը բանալով :

Այս ազգաբարութեան վրայ՝ երբ դուռը բաց կ'մնար՝ ամէն  
մարդ լոեց, և ընդհանուր լուսթեան ժամանակ՝ նորատի Կառ-  
քօնը նախասնեկին երկայնքը քալեց և հրացանակիրներու հրա-  
մանատարին քովը զնաց, զոհ լինելով սրառվին որ այն այլան-  
դակ վէճէն պատեհ ժամանակին կ'չեռանար :

## Գ.

ՈՒՆԿՆԴՐԱՅԻՆ

Նոյն միջոցին՝ Պ. աը Դրէ վիլ խիստ նեղացած էր, առկայն քաղաքավարութեամբ բարեեց պատանին, որ մինչև զետինը խոնարհեցաւ, և անոր յարդական խօսքերը լսելուն ժամեցաւ, վաճան զի անոր Պէարնեան շեշտն իր պատանեկոթեան օքերն ու բնիկ երկիրն իրեն յիշեցոց, կրկնակի յիշատակ մ'որ մարդուս խընդում կ'պատճառէ ամէն տարիքի մէջ։ Բայց նոյն պահան իսկ՝ նախասենելիքն մօտենալով՝ Պ. աը Դրէ վիլ ձեռքով նշան մ'ըրբառ տ'Արդանեանի սա մոռք որ տրիշներու հետ դարձն աւարտելէն ետե՛ անոր հետ պիտի սկսի, երեք անգամ, և ամէն անգամոն ձայնը բարձրացնելով գուեց, այնպէս որ հրամայական և ցաննական նայնին ամէն ընդմիջային հնչումներն արտասահեց։

— Աթո՛ս, Բորթո՛ս, Արամի՛ս :

Այս երկու հրացանակիրներն որոց հետ արգէն ծանօթութիւն ըրբինք և վերջին երկու անունները կրող անմերն էին, անմիջապէս իրենց ակմբէն հեռացան և դէպ 'ի դահլիճը զացին, և երբ անոր սեմէն անցան դռուն իրենց վրայ զոցուեցաւ։ Իրենց կերպարանը՝ թէև բոլորովին հանդարտ չէր, դարձեալ արժանավայել և հլու անհոգութեամբը տ'Արդանեանի հրացում պատճառեց, վասն զի կարծէր թէ կիսաստածներ են տունք, իսկ հրամանասարն ալ իր շանթերավ զինեալ որիմպիական Արամազդ մըւ

Երբ երկու հրացանակիրները ներս մատն, երբ դուռը գոցուեցաւ, երբ նախասենելին բզզալի շշոնչը սկսաւ, որ նոր Ճարակ առած էր անշուշտ ներսէն հրացանակիրներուն եղած կոչմամբը, երբ վերջապէս Պ. աը Դրէ վիլ լոին և ունքը պուրաւ

առաջ՝ երեք չորս անդամ՝ վեր վար քալեց՝ ամէն անդամուն թարթասին և Աշամիսին առ ջեւ ն անցնելով՝ որտեղ ձիգ ու համբ կեցեց է ին իրը՝ ի հանդէս, յանկարծ անոնց առ ջեւ կանկ առաւ, և զայրալից ակնարկով՝ մ' անոնց զլիսէն մինչև ոսքը չափելով՝ դռչեց.

— Գիտէք արշեօք թէ թաղաւորն ինձ ըստ, գեռ ևս երէկ իրկուն իսկ, զիտէք, պարոններ:

♦ Զէ, չզիտէնք — ըսին երկու հրացանակիրները պահ մը լուս կենալէն ետեւ, — ոչ, պարոն, չզիտէնք:

— Բայց յուսո՞ւ որ զայն ըսելով՝ կ' պատես մեղ — յարեց Արամիս իր ամենէն մարդավար ձայնով և շնորհալի խոնարհութեամբ մը:

— Թաղաւորն ըստ ինձ որ այսուհետեւ իր հրացանակիրները ու, կարտինալին զնովէն պիտի առնու:

— Ու, կարախնալին զնովէն, և ինչ պատճառու — հարցոց Բարթառ աշխատ ժիւ:

— Ասոն զի կ' նայէք որ իր թթուիկն (piquette) աղուր զիսիի խառնութեալով մը նորողելու որէ աք կայ:

Երկու հրացանակիրները կատ կարմիր եղան: Տ' Արդանեան չը զիտէք ուր էք և զետենին տակն անցնիլ կ' փափոքէք:

— Այս, այս — շաբանակեց ու, որ Գրէ վիլ տեկլի բորբռքելով — և Կարին վեհափառութիւնն իրա ունք ունէք, վասն զի, պատզու վրայ կ' ըսեմ՝ որ հրացանակիրներն իրօք կ' բանրաստին ալքունիրը: Պա, կարախնակը կ' պատմէք երէկ թաղաւորին՝ այնպիսի ցատակցութեան երեսով՝ մ' որ շատ անհանոյ երեցաւ ինձ, թէ առ ջի օքն այն վատթար հրացանակիրները, այն կոտարաները, և այս բառերը հետնալի ձաւնով մը կ' չեցակը, որ առելի ծանր եկաւ ինձ, այն պարծուիները, կ' յարէք նաև ու ընձու առշերավ ինձ կ' նայէք, Փա բառ վաղոցը՝ զինետան մը մէջ ուշ ատեն կ' բերէքին, կարծեցի թէ կատակ կ' ընէք, երբ իր չիշեցային պահնարկներու վաշտ մը սախառուեք է նոյն խուզարանները ձերաքակ ընելու: Ամօթ, անշատ այս բանիս անդեռակ պիտի լիւ

նիք, կարելի է որ հրացանակիրներ ձերբակալ ընեն: Դուք ալ անսուց մէջն էիք անշուշտ, մի՛ ուրանաք, ձեզ ձանչեցին, և կարտինալը ձեր անոնը տուառ: Ահա իմ յանցանքս, այս, յանցանքս, վասն դի ես իմ մարդիկս կ'ընտրեմ: Հիմակ ըսէ նայիմ, ուս Արամիս, ո՞ր սատանան գրգեց քեզ տառասոկ խնդրել իղնել, մինչդեռ կրօնական հազուսաը քեզ տելի կ'վայ-լէր: Եսկ դու, Բորթոս, այդ կամարդ կապեր ես անկից յարդէ սուր մը կախելու համար արդեօք: Հարա Աթոս, Աթոսը չեմ տեսներ, ուր է:

— Պատրժն — պատասխանեց Արամիս արտօնադին — Հիւանդ է, շատ հիւանդ:

— Հիւանդ, շատ հիւանդ է, կ'ըսես. և ինչ է հիւանդութիւնը:

— Վախ կայ որ ծաղկի հիւանդութիւն չլինի — պատասխանց Բորթոս՝ ինքն ալ ըստ կարդի խօսք մ'ըսել փափաքելով. — և իրօք ցաւալի բան մը պիտի լինի, վասն զի երեսը պիտի աւրուի անշուշտ:

— Ծաղկի հիւանդութիւն, Բորթոս, դարձեալ պարծունակ պատմութիւն մը կ'պատմես ինձ: Այն տարիքին մէջ ծաղիկ ունենայ, կարելի չէ . . . բայց անշուշտ վիրաւոր՝ թերեւս սարսնուած է: Աստուած վկայ . . . եթէ զիտնայի. դուք հրացանակիրներ, չեմ ուզեր որ գէշ աեղեր յաճախէք, փողոցը կուտի բռնտիք և քառողիներու մէջ սրով խաղաք: Մէկ խօսքով՝ չեմ ուզեր որ Պ. կարտինալին պահապան զօրաց ծաղը ու ծանսկ լինիք, որոնք քաջ, հանգարտ, հարովիկ մարզիկ են, բնաւ ձեր բակալ լինելու առիթ չեն տար, թէ և ստոյդ եմ որ անոնք միայն դիտեն ձերբակալութենէ պրծիլ: Աւելի լաւ ունին մեռնիլ քան թէ քայլ մ'ընկրկիլ: Խոյս տալ, կծիկը զնել, փախչիլ, մինակ թաղառորին հրացանակիրներու զործեր են անշուշտ:

Բորթոս և Արամիս կատվութենէ կ'գողացին. յօժարակամ կը խեղդէին Պ. աը Պրէ վիլն՝ եթէ չզգային որ իրօք իրենց վրայ տնեցած սէրն էր որ այսպէս խօսել կ'տար անոր: Ուգրով զե-

արին կ'զարնէին, արիւնելու շափ իրենց շրթերը կ'խածնէին և  
բոլոր ուժով իրենց սրին դաստապանը կ'անդմին: Խնչողւ որ  
արդէն ըսինք, դրսէն ամէն մարդ լեեր էր որ Պ. առ Դրէ վիլ  
դաս զատ Ամսոր, Բարթուսն ու Երամփոր կանչեր էր, և դուշա-  
կեր էին անոր ձայնին շեշտ. առ յետին ծայր բարկացած է:  
Տաս հետաքրքիր դլուխներ գունակին կոթնած՝ կատղութենէ կը  
շեշտէին, վասն զի իրենց ականջները ներսի խօսակցութենէ. վասնէ  
մը չէին փախցնէր, մինչդեռ իրենց բժշկաները հետզետէ հրա-  
մանատարին նախատալի խօսքերը կ'կրկնէին նախառնեկին անբա-  
րազմութեան: Մէկ վայըինի մէջ՝ բոլոր առարանը՝ զահճին  
դռնչն մինչեւ փողոցին դուր մեծ յուզման մէջ ընկառ:

— ԱՇ, թագուորին հրացանակիրները Պ. կարտինալին պահ-  
նորդներէն ձերբակալ լինին — շարունակեց Պ. առ Դրէ վիլ՝ որ  
իր զինուրներուն չափ զայրացած էր 'ի ներքուստ, և խօսքերը  
կը կատարվ մի առ մի՝ գաշոյնի հարուածի ովէս՝ իր ունկնդիրներու  
սիրուր կ'մզէր: — ԱՇ, նորին բարձրութեան վեց պահակներ՝  
Նորին վեհափառութեան վեց հրացանակիրները ձերբակալ ընենու  
Ընօրէն, ոյս, որնշտամ ըրի. խօսյն Լուկո պիտի երթամ. թա-  
դաւորի հրացանակիրներու հրացանատարութենէ. պիտի հրամարիմ,  
կարտինալի զօրաց մէջ տեղակալութիւն մը պիտի պահանջեմ,  
և եթէ մերժէ, վայ արևու, արբայ պիտի լինիմ:

Այս խօսքին վրայ արտաքին շշունչը զու ու զուտում դարձաւ,  
ամէն կողմէն լուսանք և հայհայանք կ'լսուէին: Անսպիտաներ,  
ասպիրատներ, վատեր կ'կոչչէին ամէն կողմէ և աղը կ'թնուացնէին: Տ'  
Երդանեան վարացոյր մը կ'փնտուէր անոր եաբն պահութակու-  
համար, և ձեռքէն զար մեղանին տակը պիտի մանէր:

— Լաւ որեմն, հրամանատարս — ըստ Բարթուս մալեդին —  
Ճշմարիտ է որ վեց հոգիի գէմ վեց հոգի էինք, բայց դարձաւ-  
կալութեամբ յարձակեցան մեր վրայ, և մեր սրերը զեռ չքա-  
շած՝ մեջնէ երկուքն անշտոնչ գետին ընկան, և Ամսոն՝ կարեվէր  
վիրաւորուած՝ նոյնշափ վասնի մէջ էր: Եւ դու քաջ կ'ձան-  
չես Ամսոր, հրամանատար, լու, երկու անզամ ուր ենելու փորձ

փորձեց, երկու անգամ զետին ընկառ: Ասկայն անձնատոք չեւդանք մնաք, ոչ, չեղանք, այլ բռնի տոին ապրին. և ճամբան խոյս տուինք: Խակ Աթոռը մեռնալ կարծելով սրատե բազմի դաշտին վրայ հանդարա ձգեցին՝ ոռելորդ դատելով որիշ տեղ փոխադրելու: Ահա այս է Շիշտ պատմութիւնը: Ի՞նչ ընենք, հրամանատար, ամէն ճակատամարտի մէջ մարդ չկրնար յաղթական ելնել: Մեծն Պատմութի Ֆարսալի ճակատամարտը կորոյս, և Գրանտուա Ա. որ լսածիս նայելով քաջութեան կողմէ նշանաւոր էր, դարձեալ Բավիի պատերազմին մէջ յաղթուեցաւ:

— Եւ ես ալ պատիւ ունիմ՝ քեզ վստահացնելու որ անձնցմէնին իր սրովը սպաննեցի — ըստ Արամիս — վասն զի իմն առաջին յարձակման մէջ կօտրեցաւ: Ինչպէս որ համելի է քեզ, այնպէս իմացիր, պարոն, սրով կամ դաշտյնով սպաննեցի:

— Այդ բանը չգիտէի — վրայ բերաւ Պ. որ Դրէվիլ փոքր ինչ մեղմացոյն ձայնով մը: — Կ'նայիմ որ Պ. կարտինալը չափաղանցութեամբ խօսեր է:

— Բայց, կ'աղաւեմ, պարոն — շարտնակեց Արամիս, որ տեսնելով թէ իր հրամանատարը քիչ մը հանդարաեր էր, կ'համարձակէր անոր աղերտ մ'ուղղելու, — կ'աղաւեմ, պարոն, մի ըսեր որ նոյն ինքն Աթոռ վիրաւոր է. պիտի յուսահատի եթէ իմանայ որ այս բանս թագաւորին ականջը հասեր է, և որովհետեւ վէրքը շատ ծանր է, քանի որ ուսէն անցնելով կործքը հասած է, վախ կայ որ. . . :

Նոյն միջոցին դրան սրսկաստանը վեր առին, և աղնիւ ու զեղանի դլուխ մը, թէև սոսկալի կերպով զունամ ծովին տակէն երկցաւ:

— Աթոռ — կրկնեց նոյն ինքն Պ. որ Դրէվիլ:

— Զիս ուղեր ես, պարոն — ըստ Աթոռ Պ. որ Դրէվիլի, տկար այլ լիովին հանդարա ձայնով մը — ընկերներուս խօսքին նայելով զիս կանչեր ես, և կ'փոխամ հրամանդ կատարելու. ահաւատիկ աստ եմ, պարոն, բան մը կ'ուղէ իր:

Այս խօսքին՝ հրացանակիրը՝ ըստ սովորականին անսարտանելի կերպով հազորած շքտած, անյողղողդ քայլով ու. ար Դը-վիլի դահլիճը մտաւ : ու. ար Դրէ վիլ այս քաջոթեան նշանէն սրտավին յուղտած՝ դէ այ անոր վազեց դիմառորելու :

— Այս պարաններուն կ'ըսէի — յարեց նա — որ պարասպ տեղիրենց կեանդի մէջ շդնեն, վասն զի այս արի մարդիկ թաղաւորին սիրելի են, և թաղաւորն ալ զիտէ որ իր հրացանակիրներն երկրիս ամենէն երեկուի քաջերն են : Աթոս, ձեռքտուր :

Եւ ու. ար Դրէ վիլ՝ նորեկ հրացանակիրին այս սիրոյ նշանին չպատասխանած, անոր աջ ձեռքքը կ'ըսնէր և բոլոր ուժովը կը տեղմէր առանց զիտելու որ Աթոս՝ թէ և ինքն իր վրայ մծ էր իշխանութիւնը, վշտակիր շարժում մը կ'ընէր և կ'զեղնէր, և այս ալ անկարելի կ'թուէր :

Դահլիճին դուռը կէս բաց մնացեր էր, ոյնքան մծ էր Աթոփ ներկայութեան պատճառած ազգեցութիւնը, և որչափ որ անոր վէրքը ծածուկ պահել ովեր էին, դարձեալ ամենուն յայտնի էր : Ցնծութեան աղաղակով մ'ընդունեցան հրամանատարին վերջին խօսքերը, և երկու երեք դլուխներէն երեցան : Անտարակոյս ու. ար Դրէ վիլ՝ պատշաճութեան օրինաց զէմ եղած այս անկարգութեան համար ծանր յանցինանութիւններ պիտի ընէր, երբ յանկարծ իր ձեռքին մէջ Աթոսինը զզաց որ կ'կարկամէր, և աչքն անոր վթրայ ածելով՝ զիտեց որ պիտի նուազի : Նոյն պահուն Աթոս՝ որ բոլոր ոյժը ժողվեր էր վշտին զէմ զնելու, վերջապէս ընկճելով՝ զետինն ընկաւ իրը անկենդան :

— Այիրաբոյժ մը — պոտաց ու. ար Դրէ վիլ : — Թռող իմս, թաղաւորինը, ամենէն վարսպետը լինի . վիրաբոյժ մը, թէ ոչ, մեղք, իմ քաջ Աթոս պիտի մեռնի :

ու. ար Դրէ վիլի ձայննեն անոր դահլիճը թափեցան առանց անոր զուռը մարդու մը դոցելու, և եկողները վիրաւորին շորս կողմն առին : Քայլ բոլոր այս եռանդն անօգուտ պի-

ամի դաւնար եթէ վիրաբոյժն ապարանը չէ անուէր . իսկոյն ամ-  
բոխը չեղքեց , միշտ նուազեալ Աճառին մօտեցաւ , և ուղղվէան  
բոլոր ոյս աղմուկն ու շարժումը դինքը կ'նեղեին՝ ամէն բանէ  
առաջ խնդրեց՝ իբր անհրաժեշտ՝ որ հրացանակիրը մօտակայ ու-  
նենակ մը փոխադրուի : Անմիջապէս Պ. աը Դրէ վիլ գոռ մը բա-  
ցաւ . և Բորթոս ու Վրամիսի Համբան ցցուց , ասոնք ալ իրենց  
ընկերն առին իրենց թեկրտն վրայ և տարին : Այս խմբին ե-  
տեւն կ'երթար վիրաբոյժը , և վիրաբոյժին ետեւն դռաը զոց-  
ուեցաւ :

Այս ատեն Պ. աը Դրէ վիլի դահլիճը որ սովորաբար այնքան  
յարգելի էր , նախասենելին մէկ մասը դարձաւ առ ժամանակ մը:  
Ամէն մարդ կ'վիճէր , կ'ատենաբանէր , բարձր կ'խօսէր , հայ-  
չցելով , լուտալով և կարախնալն իր պահակներուն հետ կրո-  
ղին տալով :

Պահէ մը ետքը՝ Բորթոս և Վրամիս ներս մասն . վիրաբոյժն  
ու Պ. աը Դրէ վիլ միայն վիրաւորին մօտ մնացեր էին :

Աերջապէս Պ. աը Դրէ վիլն ըստ կարգի ներս մաս . վիրա-  
ւորն ինք ինքին եկեր էր . վիրաբոյժը կ'յայտնէր թէ հրացանա-  
կըրին վիճակը վատանդառը չէր , և թէ իր ակարտթեան պատ-  
ճառը պարզապէս արեան կորուսն էր :

Այս ատեն Պ. աը Դրէ վիլ ձեռքով նշան մ'ըրաւ . և ամէն  
մարդ քաշուեցաւ , ա'Արդանեանէ զատ՝ որ չէր մոռցած թէ հրա-  
մանատարին հետ խռուիք ունի , և իր կաքօնեան յամառութեամբ  
նոյն աեղը կանգուն կեցեր էր :

Երբ ամէն մարդ զորս ելաւ . և զոռը զոցեցին , Պ. աը Դրէ-  
վիլ դարձաւ . և ինքը ինքն երիտասարդին հետ մինակ դատաւ : Աե-  
րահաս գէպէն իր զազափարներուն թելը կորուսեր էր . ուստի  
հարցուց թէ յամառ խնդրաբիուն ինչ կ'ուզէ : Այս ատեն տ'Վր-  
դանեան իր անունը յիշեց , և Պ. աը Դրէ վիլ իսկոյն ներկային  
և առաջային յիշատակները միափր բերելով ինդրայն իրազեկ ե-  
ղաւ :

— Աերէ — ըստ անոր ժամալով — ներէ , իմ սիրելի հայ-

բենակիցս որ լիովին քեզ մնացեր էի : Ենչ ընկեմ, զօրսպար մ'ընտանեաց հայր մ'է որ սպառական ընտանեաց հօրեւ մ'առելի սպատասխանատոթիւն ունի : Զինոքները մեծիակ տղաքներ են, բայց որովհետև կ'փափաքիմ որ թագառորին, և մանաւանդ ու . կարտինալին հըսմաններն 'ի զործ զրուին . . . :

Տ'Արդանեան ակամայ ժպիտ մ'ըրաւ : Այս ժպիտը տեսնելով՝ ու . որ Դրէ վիլ դատեց որ դիմացներ յիմար մը չէ, և շիտակ ինողիրը բանալով միանդամայն խօսքը փօխելով՝ ըստ :

— Ես շատ սիրեր եմ հայրդ . արգեօք ի՞նչ կարող եմ ընել իր որդւոյն համար . շուտ ըստ, ժամանակս իմն չէ :

— Պարոն — ըստ տ'Արդանեան — Դարագէն այս կողմերս զալով մոտադիր էի ինդրելու քեզնէ՝ 'ի յիշատակ այն բարեկամութեան զոր չես մնացած՝ հրացանակիրի տառատոկ մը, բայց երեկու ժամէ վիլ տեսած բաներէս կ'զոշակեմ որ այսպիսի շնորհ մը շատ մեծ պիտի լինի և կ'վախնամ՝ որ անոր արժանի չպիտի լինիր :

— Իրօք շնորհ մ'է, պատաճի — պատասխանեց ու . ար Դրէ-վիլ — բայց կարելի է՝ ինչպէս որ կ'կարծես կամ՝ կարծել կ'ձեւացընես, այս շնորհը քեզի համար շատ բարձր չէ : Դարձեալ ու որին Վեհափառութիւնը այս կետս նախագոշակեր է . և ցաւօք կ'յայտնեմ՝ որ ոչ ոք հրացանակիր կ'ընդունուի՝ կանխաւ քանի մը մարտ, քանի մը նշանաւոր զործեր, կամ՝ մերինէն աւելի սպառին զնզի մը մէջ քանի մը տարուան զինորական ծառայութիւն մը չըրած :

Տ'Արդանեան զլուխը ծռեց առանց պատասխան մը տալու : Այս մեծ դժուարութիւնները՝ հրացանակիրի համազգեստը հազնելու փափաքն աւելի ես կ'արծարծէին :

— Բայց — շարունակեց Դրէ վիլ՝ իր հայրենակցին վրայ սուր ակնարկ մը ուեեւելով՝ որպէս թէ անոր սրաին խորը կարդալ կ'ուզէր — բայց 'ի շնորհս քու հօրդ՝ որ ինչպէս ըսի իմ վաղեմի ընկերս էր, քեզի համար բան մ'ընել կուզեմ, պատաճի : Մեր ուէարնի բարեկամները սովորաբար հարուստ չեն, և կ'առա-

բակոսիմ՝ որ դաւառէս մեկնելս վեր զործերը կերպարանափայտ եղած լինին այն աեղ։ Աւատի չեմ կարծեր թէ եւելօք ստուկ բերած լինիս հետդ ապրելու համար։

Տ' Արդանեան գէտօրէն զլուխը վերուց և ըսել ուզեց որ մարդէ մ' ողօրմութիւն չնադրեր։

— Ըստ լու, պատանի, շատ լու — շարունակեց Դրէվիլ — կ' հասկնամ այդ կերպերը, Գրագանիս մէջ չորս սկսող ունեի երբ Բարիզ եկայ, և ով որ ըսէր թէ Լուվր չեմ կարող գնել, անոր հետ կռուելու պատրաստ էի։

Տ' Արդանեան եռ քան զես զլուխ բռնեց. իր ձիուն դնոյն շնորհիւր՝ իր ասպարէ զը կ' ակսէր չորս սկուգ աւելի ունենալով քան Պ. Դրէվիլը։

— Աւատի կ' ըսէի թէ պէտք ունիս ունեցած դումարդ՝ որչափ մեծ լինի, լաւ պահել. բայց պարտաւոր ես նաև կատարելա ործիլ այն մարդանաց մէջ որ ազատորդիի մը կ' վայելին։ Այսօր իսկ նամակ մը պիտի զրեմ արքունի Շեմարանի անօրէնին, և զաղն առանց որ և է հասոցման քեզ պիտի ընդունի։ Այս թեթև սփոփանըը մի մերժեր։ Մեր բարեկիրթ և ամենն հարստատ ազատորդինելն անզամ այս շնորհը կ' իննդրեն առանց ձեռք ձգել կարենալու։ Զիավարժութիւն, սուսնախաղութիւն և պար պիտի սովորիս, այն աեղ ընափիր բարեկամներ պիտի ստանա, և ատեն ատեն զիս աեմնելու պիտի զաս և վիճակի յայտնես, և պիտի նայիմ թէ քեզի համար բան մը կրնամ ընել։

Տ' Արդանեան՝ թէ և պալատական ձեւը մէջ համբակ՝ զիտեց այս ընդունելութեան պաղութիւնը։

— Եւաղ, պարոն — բառ նու — կ' նայիմ որ հօրս ձեղի ուղած յանձնարարական դիրը պակսելով՝ այսօր որչափ վեաս կը կրեմ։

— Եւ արդարեն — պատասխանեց Պ. որ Դրէվիլ — կ' զարմանամ որ այսպիսի երկար ուղևորութիւն մ' ըրեր ես առանց այն պիտանի պարէնին, որ մեզի պէս ուշարնեցիներու միակ ազդուան է։

— Եւս այլ յանձնաբարական չիր մ'ունէի , պարոն , և Աստ-  
մած վկայ , խիստ կանոնաւոր էր — դոչեց ա՛Ծըզանեան — բայց  
հեն օր՝ ն պողքան գայն :

Ե . Մէօն առանին մէջ պատահածը պատմեց , մանր նկարա-  
զրեց անձանօթ մարդը՝ այնպիսի ֆերմ և ճշմարիս ոճով մ'որ  
ու . ար Դրէ վիլ զմայլեցու :

— Իրաւի այլանդակ բան մ'է այդ — ըստ ու . ար Դրէ վիլ  
խորհելով . — որեմն բայէ 'ի բաց իմ վրայ անոր խօսեր էիր :

— Այս , պարոն , անշատ այս անխօսհեմովինը դործեր էիր .  
Բնչ ընեմ , ձեր անունն իմ ողերութեանս ատեն իբր վահան  
պիսի ծառացէր ինձ . գատեցէք թէ քանի քանի անդամ անոր  
հերքե սրասասպարան գտայ :

Ըստքորթովինը սովորական բան մ'էր այն ատեն , և ու .  
ար Դրէ վիլ թագաւորի և կարափնալի մը պէս խոնկ կ'սիրէր :  
Աւատի զդալի զոհունակովինը ակամայ ժպակեցաւ , բայց այս  
ժպիսան խոկյոն անցաւ և Մէօնի արկածին դառնալով :

— Ըսէ ինձ — շարունակեց նա — արդեօք այն անձանօթ աղ-  
նուականը թեթե տղի մը չոնչէր այտին վրայ :

— Այս , ինչպէս որ գնասակի մը կեղեքածէն կրնայ զոյանալ :

— Միթէ բարեգէմ մարդ մը չէր :

— Այս :

— Բարձրահասակ :

— Այս :

— Դէմքով զունաս և կաշին թուխ :

— Այս , այս , ճիշտ այդ է նկարակիրը : Ե՞նչ կերպով այս  
մարդը ձեզի՝ ծանօթ կ'զանուի , պարոն : Ա՛հ , թէ որ երբէք  
զանի դանեմ , և պիտի զանեմ , կ'երդնում ձեզ , նոյն իսկ դը-  
ժոխըր . . . :

— Կնկան մը կ'սօրասէր — շարունակեց Դրէ վիլ :

— Սա զիսեմ որ պահ մ'իր սօրասած կնկան չետ խօսելէն  
ետե՝ մեկնեցաւ :

— Գիտես արդեօք թէ ինչ նիւթի վրայ կ'խօսէին :

— Մարդը կնկան տուփ մը կ'յանձնէր, անոր կ'ըսէր թէ այն տուփը հրահանդներ կ'պարտնակէր, և կ'ապապրէր որ Լոնածն միայն բանայ զայն :

— Միթէ անկլինցի՞ էր այն կինը :

— Միլէ տի կ'անուանէր զանի :

— Այն ինքն է — մրմնջեց Դրէ վիլ — նոյն ինքն է, կարծէի թէ տակալին զիտքաւէլ կ'բնակի :

— Ո՛չ, պարոն, եթէ զիտք թէ այն մարդն ով է — զուցեց ա՛Վրդանեան — բաւք ինձ թէ ինչ է և ուր է, առով ամէն բան հաստցած կ'լինիք ինձ, նոյն խոկ հրացանակիր բնելու խոստումնիդ. վասն զե տե՛ն բանէ առաջ վրէ ժ լուծել կ'ողեմ:

— Զգուշացիր, պատանի — զուցեց Դրէ վիլ — եթէ ընդ հակաակն՝ փողցին մէկ կողմէ զալը տեսնես, միւս կողմէն անցիր: Այսպիսի ապառածին մը մի զարդարիր, ապակիի ոգէս կ'փշը քեզ:

— Այդ չկրնար արդելք լինիլ — ըստ ա՛Վրդանեան — որ եթէ երրեք զանի դանեմ . . .

— Առ այժմ — վրայ բերաւ Դրէ վիլ — մի փնտուր, քեզի խորհուրդ մ'ունիմ տալու:

Դրէ վիլ՝ յանկարծ կանկ առաւ վերահստ կասկածէ մ'ուշաբրելով: “Կորատի ուղեւորին այն անծանօթ մարդուն գէմ”, որ իր հօրը նամակը զողցեր էր, թէ և հաւանական չէր երեկը, բացէ ՚ի բաց յայտնած առելու թիւնն արգեօք նենուու թիւն մը չէր պահէր. արգեօք այս երիտասարդը նորին բարձրութեան կողմէ՝ զորկուած էր. արգեօք իրեն զարան մը լարելու համար եկած էր. այս շնորհի ա՛Վրդանեան կարտինալին մէկ բանքերը չէր, և իր տանը մտած չէր որպէս զի իր վատահութիւնը զրաւէ և առա իր կորուսաը պատրաստէ, ինչպէս որ այսպիսի բաներ հազար անդամ պատահած են: Հետեւալով ու առ Դրէ վիլ այս անդամ տեղի աելնովէ ու նայեցաւ ա՛Վրդանեանի քան զատաշինն: Անոր կայտառ զէմիին վրայ նենդութեան նշոյլներ և շինծու խոնարհութիւն մը տեսնելով՝ այս կասկածները լիսպին չփարատեցան:

— Քաջ զիտեմ՝ որ կապօն մ'է — ըստ Կոմալի բայց

կրնայ նոյնը լինիլ թէ կարտինալին և թէ ինձի համար : Հիմակ՝ նայինք, զանի փորձենք : — Բարեկամ — ըստ անոր ծանրութեամբ — կ' փափաքիմ, իբր իմ վաղեմի բարեկամիս որդուոյն, վասն զի կորուուալ նամակին պատմութիւնը ճշմարիս կ' աւպեմ, կ' փափաքիմ, կ' ըստեմ, մը քաղաքականութեան դաշնակիքը յայտնել, որովէս զի իմ ընդունելու ինեւս մէջ տեսած պազութիւնդ մեղմեմ : Թայտուորն ու կարտինալը շատ մերա բարեկամներ են, իրենց արտաքին կոխները լոկ յիմարները խարելու համար են: Ես չեմ ախորժիր որ հայրենակից մը, սիրուն ձիռուոր մը, արի պատանի մ' որ յառաջնանալու այս ունի, կարտինալին զէմ հեռունենայ, և միամտօրէն ծուղակն ընդինի, ինչպէս որ շատերն ընկեր ու կորեր են: Մտածէ անդամ մ' որ այս երկու ամենագօր տեարցու անձնուէր եմ, և իմ բոլոր ձիգս կ' թափեմ թագաւորին և կարտինալին անխոտիր ծառայել, կարտինալն որ Ֆրանսայի ծնած ամենին հռչակառ հանձնարներէն մին է :

« Աւստի հիմակ, պատանի, ըստ այնամ շարժէ, և եթէ ընտանի, աւ անդամիւն, և նոյն իսկ բնածին սի մ' ունիս կարտինալին զէմ, ինչպէս որ մէկ քանի ազատորդիներ ունին, ինձ մաս բարե ըսէ և հեռացիր : Քեզ շատ պարագաներու մէջ կրնամ օդնել, սակայն չեմ կարող իմ ծառայութեանս առնուլ : Ըստամ որ այս իմ անկեղծութիւնն ի' հաւնիս և բարեկամն կ' լինիս. վասն զի առաջին անգամն է որ քեզի ովէս պատանիի մ' այսպէս և կ' բացուիմ :

Դրէ վիլ ինքնովին կ' ըսէր .

— Եթէ կարտինալն այս համբակ աղուէսն ինձ դրեց, անտարակոյս այս իր լրտեսին ըստ պիտի լինի, քանի որ քաջ զիտէ թէ ո՛րչափ զինքը կ' ատեմ, որ իմ սիրաս շահելու լրտազոյն միջոցն է ըստ կարի իր վրոյ չարախումնել . ուստի՝ իմ բարեկամնական յայտարարութեանս հակառակ՝ այս ամենդուկը պիտի պատասխանէ անշուշա որ նորին բարձրութիւնէ կ' զարշի :

Սակայն՝ Դրէ վիլի ակնկալութեան հակառակ՝ ա՛ Արդանեան պատասխան տուաւ յետին ծայր միամտութեամբ .

— Պարոն, ես ալ ճիշտ մի և նոյն զգացումներով Բարիղ կը զամ։ Հայրս պատուիրեց ինձ որ մինակ թաղաւորին, ոլ. կարտինալին և ձեր խօսքին գուրս չելնեմ, վասն զի երեքնիդ ալ Փրանսայի առաջին մարդիկը կ'համարի։

Տ'Արշանեան առաջին երկու անուններուն ոլ. որ Դրէվիլն ես կ'յաւելուր, ինչպէս որ գիւրին է դիտել. բայց կ'մտածէր որ այս միտուորութիւնն անցարմար չէր։

— Ճետեապէս ոլ. կարտինալին համար մնծ պատկառահիք՝ և իր գործոց համար մնծ յարգ ունիմ— շաբոնակեց նա։ — Զափազանց որախ եմ, պարոն, եթէ ձեր ըստածին պէս ինձի հետ անկեղծոթեամբ կ'խօսիք. վասն զի այն ատեն պատիք պիտի ընթք ինձ ճաշակի մեր այս նմանութիւնը հաւնիլ, բայց եթէ թեթև կասկած մ'անցաւ ձեր մորքն, թէ և ինքնին բնական բան մ'է, կ'դումը որ Ճշմարտութիւնն ըսելով մնծ կորուսա կ'ընեմ. բայց, փոյթ չէ, յուսամ որ ստելի ևս պիտի յարդէք զիս այս բանիս համար, և ես ալ ձեր այդ համարունն ամէն բանէ վեր կ'դասեմ։

Ոլ. ար Դրէվիլ յետին ծայր զարմանք զգաց։ Պատանիին այս խորադիտութիւնն ու անկեղծութիւնն իր հիացումը կ'զբակէին, բայց կասկածները չէին փարատեր. որքան որ այս պատանին միւսներէն զեր ՚ի վեր էր, նոյնքան ահարկու էր եթէ կ'սխալէր։ Սակայն ա՛Արշանեանի ձեռքը սեղմեց և անոր ըստ։

— Դու բարեկիր տլայ մ'ես, բայց այս միջոցիս քիչ մ'առուջ քեզի խոստացածս միայն կրնամ ընել։ Իմ աղարանս քեզի համար միշտ բաց պիտի լինի։ Վերջ ն' ամէն պատեհ առթիւ խորիր, առաջարկելով ինձ՝ հատանական է որ փափաքիդ համարու

— Ռոտլ ըսել կ'ու զէք, պարոն — վրայ քերառ ա՛Արշանեան — որ պիտի սպառէք նայելու թէ արդէօք արժանի պիտի լինիմ ձեր պաշտպանութեան։ Լաւ, այս մասին անհոդ եղիք — յարեց նա կասքօնեան ընտանութեամբ — երկար ատեն չպիտի սպառէք ։ Եւ բարե տալով գուրս ելնել ուղեց որպէս թէ ինքն իր ընելիքը զիտէր այնուհետեւ։

— Բայց սպասէ քիչ մը — ըստ անոր ու . որ Դրէ վիլ զառ նի կեցնելով . — քեզի նամակը մը խոստացոյ տալ ձեմարանին անօրէնին համար : Միթէ հպարտութիւնդ չ'ներեր զայն ընդունելու , նորատի ազատորդիս :

— Ա՛չ , պարան — ըստ ա' Արդանեան . — վսառչ եղիք որ ձեր տալիք նամակը միւսին բաղդին չողիտի վիճակի : Այնպէս լու պիտի պահեմ , կ'երդնում ձեղ , որ իր ուղղութեան պիտի համեմի , և վայ անոր որ ձեռքէս առնլու պիտի յանդկնի :

Պ . որ Դրէ վիլ այս մեծարանութեան վրայ ծիծաղկցու , ե իր նորատի հայրենակիցն իրենց գանուած և խօսակցութիւնն ըրած որմածակին մէջ թողով՝ դնաց սեղանի մ'առ ջեւ նատաւ և խօստացած յանձնարարական դիրք սկսու զրել : Կայն պահուն' ա' Արդանեան' որ ինչովէս ժամանակ անցընելը շշիալք , սկսու զինուրական հանդիսի եղանակ մ'ածել ազակիներուն վրայ , միանգամցն դիտելով պատշհանէն հրացանակիրներն որ իրարու ետեւ կ'երթացին մինչեւ որ փողոցին անկիւնը դարձան :

Պ . որ Դրէ վիլ նամակը զրելէն ետեւ ինքեց՝ և ոտք ելնելով՝ երիտասարդին մօտեցաւ որ անոր ասոյ , բայց Ճիշտ այն միջոցին որ ա' Արդանեան ձեռքը կ'երկարէր զայն ընդունելու . համար , Պ . որ Դրէ վիլ շատ զարմացաւ որ իր պաշտպանած պատահին յանկարծ կ'ուսուատէ , բարկութեանէ կ'կարմրի և գահը դուրս վազելով՝ կ'առուայ . — Ահ , ապիրատ , այս անզամ ձեռքէս չողիտի ազատիս :

— Եւ ով է այն — հարցուց Պ . որ Դրէ վիլ :

— Կայն ինքն , դրաշողը — պատասխանեց ա' Արդանեան . — Ահ . դռւաձան :

— Եւ աներեւոյթ եղաւ :

— Ի՞նչ զիւահար է — մըմնջեց Պ . որ Դրէ վիլ : — Կարելի է — յարեց նա — այս ով վարպետութեամբ մը խոյս տալու կերպ մ'է , երբ տեսու որ իր նորատակին չհասնիր :

## ¶

ԱԹԱՍԻ ՈՒՅԾ · ԲՈՐՋԱՎՈՒ ԿԵՄԵՐԸ ԵՒ ԱՐԱՄԻՍԻ  
ԹԱՇԿԻՆԱԾԱՅ.

Տ' Արդանեան զայրալիք՝ երեք ոստումով նախառենեկէն ելեր՝  
դէպ ի սանդողը կ' գիմիք՝ որուն աստիճաններէն չօրս չօրս վար  
իջնելու կ' միաւր, երբ սաստիկ արտորալուն՝ դնաց զլուխն ուժ-  
դին զարկաւ հրացանակրի մշոր Պ. առ Դրէ վիլի սենեկին քով-  
ընաի դռնէ մը դորս կ' ելնէր, և ձակատն անոր ուսին տալով  
հրացանակիրն աղաղակ մը կամ զօղան շին մ' արձակեց :

« Ներէ ինձ — ըստ ո՛ւրդանեան, նորէն ձամբան շարս-  
նակել ուզելով — ներէ ինձ, իրաւի մեծ շտապի մէջ եմ :

Հազիւ թէ առաջին աստիճանէն վար իջեր էր որ երկաթէ-  
գաստակ մ' անոր ուսնոցէն բռնեց և զանի կեցոց :

— Մե՛ծ շտապի մէջ ես — զռչեց հրացանակիրը՝ պատանքի  
պէս զունատ. — այս պատրուակաւ ինձ կ' մշտիս, ու կ' ըսես. « Ներէ ինձ » : Եւ կարծես թէ այս բան է. հէրիք չէ այս,  
պատանի : Միթէ կարծես թէ՝ այսօր Պ. առ Դրէ վիլ մեզի հետ  
քիչ մը ծանր կերպով խօսելուն, ամէն մարդու ներելի՞ է մեզի  
հետ նոյնպէս վարուելու : Այդ սխալդ փարատէ, ընկեր. դո-  
Պ. առ Դրէ վիլ չես, պարոն :

— Իրաւի — պատասխանեց ա՛ւրդանեան որ Աթոսը ձանչեց,  
այս որ բժշկին ձեռօք դարմանն ընդունելէն ետեւ իր սենեակը  
կ' երթար — իրաւի կամաւ չըրի, և ըստ որում կամաւ չըրի, ը-  
սի. « Ներէ ինձ » : Ուստի կարծեմ թէ այսպափս բան է : Սա-  
կայն վերստին կ' ըսեմ, և այս ես չափէն աւելի է թերեւ, պա-

տուցս վրայ, շատ կ'շտապիմ, շատ: Աւստի թող զիս: կ'աղաւ չեմ, որ իմ գործիս երթամ:

— Պարոն — ըստ Եթոս զանի թողլով — դու քաղաքավար մարդ չես. կ'երեի որ շատ հեռու տեղէ կ'զատ:

Տ'Երդանեան արդէն երեք լորս աստիճան վար իջեր էր, բայց Եթոսի զիսողովթեան վրայ յանկարծ կանկ առաւ:

— Վահ, պարոն — ըստ նա — որչափ հեռուէն զամ քաջ զիսոցիր որ քու բերնիդ չէ ընկեր ինձ քաղաքավարութեան դառ տալու:

— Կարելի է — ըստ Եթոս:

— Ես, թէ որ ստիօպողական գործ չունենայի — զոչեց տ'Երդ զանեան — և եթէ մէկու մ'ետեէն չվազէի . . . :

— Պարոն արտօրացող, զիս զանելու համար վազելու պէտք չունիս, կ'լսե՞ս:

— Եւ ուր կ'ուզես որ զանեմ քեզ, խնդրեմ:

— Գարմ-Տէ շօի մօս:

— Ժամը քանիին:

— Կէս օրի մօս:

— Կէս օրի մօս, շատ լսու, անդ պիտի զանուիմ:

— Նայէ որ զիս սպասել շտաս, վասն զի կէս օրէն քառօրդ անցնելուն՝ պիտի զամ ականջներդ կարեմ:

— Լան. — Արտօց անոր տ'Երդանեան — կէս օրին տաս վայրկեան մնալով ըստած տեղդ պիտի զանուիմ:

Եւ սկսու վազել, որպէս թէ ստատան փորն էր մտեր, յուսալով տակախն իր սնձանօմը զանելու, քանի որ ծանր քալուն շատ ճամբայ տաած չողիտի լինէր:

Բայց փողոցին դռութ պահապան զիւուրի մը հետ կ'խօսէր Բորթոս: Եյս երկու խօսակիցներու մէջ մարդ մ'անցնելու: շափ միջոց կար: Տ'Երդանեան կարծեց թէ այն միջոցը բաւական էր, և նետի պէս անոնց մէջն անցնելով սրացաւ: Բայց տ'Երդանեան հովը հաշուի չէր առեր: Եյս միջոցին իսկ որ պիտի անցնէր, հովը Բորթոսի երկար վերարկուն ուսեցաց և տ'Երդանեան

էկան շիտակ վերարկուին մէջ ընկառ : Ի հարկէ Բորթոս պատ-  
ճառներ ուներ իր հագուստին այս էական մասը չթողլու , վասն  
զի՞ փոխանակ բռնած քղանցքը ձգելու , զայն իրեն քաշեց , այս-  
պէս որ ա'Արդանեան՝ կամակոր Բորթոսի զիմադրութենէն յա-  
ռաջ եկած սուանցքական շարժումն՝ թառշեայ վերարկուին մէջ  
զլորեցաւ :

Տ'Արլանեան՝ հրացանակրին հայհոյանքը լսելով՝ ջանաց վե-  
րարկուին մէջէն ելնելու , որով աչերը զոցուեր էին , և անոր  
ծալք՝ աշատելու ճամբայ մը փնտոեց : Դա մանաւանդ կ'եր-  
կընչէր որ մզի արդէն ծանօթ փառաւոր կամարին փայլութեան  
վես մը չհասցնէ : Սակայն իր աչերը վեհերոսութեամբ բանա-  
լով իր քիթը՝ Բորթոսին երկու ուսերուն մէջ փակած զտաւ ,  
այսինչն Ճիշտ կամարին վրայ :

Վ.Փոքու , այս աշխարհին շատ բաներուն պէս՝ որ լոկ երեսյթ  
մ'ո ն'ն , կամարին առ ջնի կողմն ուկեղ՝ն , և ետևի կողմը պար-  
զապէս կաշի էր : Բորթոս՝ որ Ճշմարտապէս պարծասէր անձ մ'էր ,  
չկ'նալով ամբողջ ուկեղէն կամար մ'ունենալ . զոնէ անոր կէսը  
կապեր էր . Հետեւապէս դիւրին էր ըմբռնել թէ ՚ի հարկէ ստի-  
պեալ հարրուխ եղեր եմ կ'ըսէր և վերարկուն շէր ձգեր :

— Անզդամ — զոչեց Բորթոս՝ ամէն Ճիզը թափելով որ ա'Ար-  
դանեանէ աղաստի , քանի որ դեռ իր կոնակին վրայ կ'խլսեէր  
նա — ինչո՞ւ մարդոց վրայ կ'յարձակիս կատաղիի մը պէս :

— Կ'երէ ինձ — ըստ ա'Արդանեան՝ հսկային ուսին տակէն կը  
վաղեմ , և . . . :

— Արդեօք դիավանածով աչերդ կ'զոցեն վազելու առենդ —  
հարցուց Բորթոս :

— Ոչ — պատասխանեց ա'Արդանեան դժարելով — ոչ , և իմ  
աչերուս շնորհիւն ուրիշներուն շտեսածն ալ կ'տեսնեմ :

Բորթոս անոր միաքը հասկցաւ . կամ չհասկցաւ , սակայն այս  
իրաւ է որ իր բարկութեան թափը չկրնալով զսպել ,

— Պարոն — ըստ . — ահա քեզ կանխաւ իմաց կ'տամ՝ որ

ծեծ պիտի ուտես՝ թէ որ այդպէս հրացանակիրներու շատ քսովիս : — Շեծ ուտեմ՝ պարոն — ըստ ա՞ւրդանեան — խօսք շատ ծանր է :

— Եր թշնամիները գէմ առ զէմ նայող մարդու վայել խօսք մ'է ըստես :

— Ա՛հ, անշնչւշտ, քաջ զիտեմ որ կոհակդ թշնամիներուդ չես դարձներ, դո՞ւ :

Եւ պատանին, իր հոռ ըր ակնարկութեան վրայ զոհ քահ քահ ինդալով անկից հեռացաւ :

Տորթոս կատը թենէ փրփրաց և ա՞ւրդանեանի վրայ յարձակելու համար շարժում մ'ըրաւ :

— Եաբէն, եաբէն — պատաց ա՞ւրդանեան — երբ վերաբեկուդ հանես :

— Աւրեմն ժամը մէկին զանուէ, Լուքանակուրկի եաբին :

— Ըստ լու, ժամը մէկին — պատասխան տուաւ ա՞ւրդան փողոցին անկիննէն զանալով :

Բայց ոչ իր անցած փողոցն և ոչ այն փողոցն որ այժմ իր առջեր կ'զտնուէ, բ' մարդ մը չտեսաւ : Որչափ ծանր քալէր անձանօթը զարձեալ ճամբայ կտրած պիտի լինէր . թերես առն մ'ալ մտած էր : Տ'Արդանեան՝ առջեն ելնողին հարց ու փորձ ըրաւ, մինչև զետափն ի թաւ, անկից Սէնի և Քըտա-Առումի փողոցին վեր ելաւ, բայց բան մը չդտաւ : Սակայն այս արշաւանքն իբեն օդտակար եղաւ, վասն զի քանի քատինքն իր ճակար կ'ողողէր, նոյնչափ սիրաը կ'պաղչիէր :

Այն ատեն անցած դարձած զէպքերուն վրայ սկսաւ խորհիլ . բազմաթիւ էին և չարաղէով . հազիւ ժամը տասն մէկ կար, և արդէն ու . աը Գրէ վիլի աչքէն ելած պիտի լինէր, վասն զի քիչ մ'անքաղաքալար պիտի զանէր անշուշտ ա՞ւրդանեանին իր քովէն մէկնելու կերպը :

Ասկէ զատ՝ երկու մենամարտի հրաւէր ընդունեց այնօրիսի մարդոց կողմէ որ իւրաքանչիւրը կարող էր երեք հաստ ա՞ւրդանեան սպաննել, վերջապէս երկու հրացանակիրներու կողմէ, այսինքն

այն իր ամենէն շատ յարդած և մոքին ու սրախն մէջ ամէն մարդերէ զեր՝ ի վեր դասած էակներու երկուքին կողմէն :

Իր վիճակը ավառոր է օր Սաոյզ լինելով որ Աթոս զինքը պիտի սպաննէ՝ դիւրին է երեակայել որ պատանին Բորթոսի կողմէն անհոգ է օր Սակայն՝ որովհետեւ մարդուս սրախն մէջ յոյսն ամենէն վերջը կ'մարի, ա՛Յրդանեան ուղեց յուսալ որ թերեւս ողջ կ'մնայ, հարկաւ ծանր վէրքեր առնլով այն երկու մենամարտութեան մէջ, և ենթադրելով որ պիտի ապրի, ապագային համար սա յան իմանութիւններն ինքինքին ուղղեց .

— Ի՞նչ շամբուշ եմ և ասուշ: Այն արի և զժրազզ Աթոսին ուսն իսկ՝ որուն գէմ զարնուեցայ խոյի մը որէս, վիրաւորուած է: Զարմանքս կ'տանի միայն որ անմիջապէս զիս չմուցոց յ. իրաւունք ունէր, և հարկաւ անոր պատճառած ցաս խիստ սոսկալի եղած պիտի լինի: Իսկ Բորթոսին գալով՝ ոհ, Բորթոսը, խաչ վկայ, առելի ծաղրելի է:

Եւս պատանին սկսաւ ակամայ ծիծալի, միանգամայն զիսելով որ այնալ՝ սմինակ՝ և անցորդներուն աչքին սուանց պատճառի ծիծալի ըստիառուուրուի:

— Իսկ Բորթոսի հետ կոխա, այս, առելի ծաղրաշարժ է, բայց դարձեալ անշահ կոպիտ մարդ եմ: Կ'վայլէ որ ասոր անոր վրայ ընկնիմ առանց ձայն տալու. ոչ, կ'վայլէ որ երթամ անոր վերաբերուին տակը մանեմ նայելու համար ինչ որ իրօք չկայ: Անտարակոյս ինձ կ'ներէր, անշուտ պիտի ներէր եթէ այն անիծեալ կամարին վրայ խօսք մը շրսէի, և բացէ ՚ի բաց, այս, խիստ բաց կերպով: Ա՛հ, ի՞նչ անիծեալ կասքօն մ'եմ, ծովն անդամ ընկնիմ, կատակ կ'ընեմ: Աղէ, ա՛Յրդանեան, բարեկամի իմ — շարայարեց նա ինքինքին խօսելով՝ առ անձն պատշաճ քաղցրութեամբ — եթէ մահէն պրծիս, թէ և հաւանական չերեիր, պէտք է որ այնուհետեւ կատարեալ քաղաքավարութեամբ վարուիս ամենուն հետ: Պէտք է որ իրը օրինակ քեզ յիշեն և վրադ դմայլին: Մարդավար և քաղցրաբարոյ լինելը, վաս լինել չէ: Կայէ անդամ մ'Յրամիսին. Արամիս նոյն ինքն կեն-

դանի անուշով թեան պատկեր մ'է , նոյն իսկ շնորհ է : Ասի : մինչեւ երբէք մէկուն խելքէն անցաւ զանի վաս կոչել : Աչ երբէք , և այսուհետեւ կ'փափաքիմ՝ ըստ ամենայնի անոր հետեւիլ : Ահ , նայէ , նոյն ինքն Արամիսն է :

Տ'Արդանեան՝ քալելով և մենախօսելով՝ Կ'իյօնի ապարանին մօտ հասեր էր , և սոյն ապարանին առ ջեւ Արամիսը տեսեր էր որ թաղաւորին երեք ազատորիի պահակաց հետ կ'խօսակցէր : Խակ Արամիսն ալ ա՛Արդանեանը աեսառ . բայց որովհետեւ չէր մոռցեր որ Պ . աը Դրէվիլ նոյն առաւօտ այն պատանիին առ ջեւ սաստիկ բարիկացեր էր , և բնաւ հաճելի չէր կընար լինիլ իրեն՝ հրացանակիրներուն եղած կշտամբանած ականջալուր վկայ մը , դանի շտեսնելու զարկաւ : Ընդ հակառակն՝ ա՛Արդանեան՝ հաշտոթեան և մարդակարութեան խորհուրդ ներսիլ լի , չորս նորատի խօսակիցներուն մօտեցաւ , և շնորհալի ժպիտով մ'անհնց ողջոն տուաւ : Արամիս թեթև մը ղլուխը ծռեց , բայց շմպտեցաւ : Եւ ամենքն խկոյն խօսակցութիւնը դադրեցուցին :

Տ'Արդանեան բաւական արթուն էր և խկոյն հասկցաւ որ իր ներկայութիւնն անախորժ է , բայց տակալին կենցաղավարական կերպերուն անվարժ էր , ուստի չկրցաւ վարսկետութեամբ մ'այն զժպատեհ վիճակէն աղասիլ , վիճակ մ'որ ստէպ կ'պատահի մարդու մ'երբ հազին ուրիմն ձանձած մարդոց և իրեն չվերաբերող խօսակցութեան կ'զայ խառնուելու : Հետեապէս հնար մը կ'փրնատէր երեսի ջրով քաշուելու . երբ տեսաւ որ Արամիսի թաշկինակը վար ընկեր , անշու շատ անշիտաբար ուսքով կ'կոխէր , յարմար առիթ սեպեց իր անմարդավարութիւնն ուղղելու : Առափ ծռեցաւ , և իր ամենէն շնորհալի դէմքովը՝ հրացանակիրին սարքին տակէն թաշկինակը քաշեց , թէ և այս վերջինն ամէն ձիգ կ'թափէր որ չթռպու , և զայն անոր տալով ըստ :

— Պարոն , կարծէմ թէ պիտի ցաւէիր անշու շտ եթէ այս թաշկինակը կորուսէ իր :

Արդարեւ թաշկինակը պերճօրէն բանուած էր և մէկ անկինին վրոյ պատկ մ'ու զէնքեր կային : Արամիս սաստիկ կարմրեցաւ և

Կասքօնին ձեռքէն խլեց քան թէ առաւ թաշկինակը :

— Ա՛հ, ահ — զուեց պահակներէն մին — վերստին պիտի ժամին ըսելու թէ ոյուա-Գրասի տիկնոջ հետ հաշտ չես, մինչդեռ այն շնորհաղեղ կինն իր թաշկինակները բարեսրատ մեամբ քեզի փոխ կ'առյ :

Երամբս այնպիսի ակնարկ մը նետեց ա՛Երդանեանի վրայ, որմէ մարդ խիզյն կ'հասկնայ թէ անհաշտ թշնամի մը շահեցաւ . յետոյ աղու կերպարանն առնլով,

— Կ'սիալիք, պարաներ — ըստ նա — այս թաշկինակն իմն չէ, և չղիտամ թէ ինչ փուեց այս պարանին խելքին որ փոխանակ ձեզնէ մէկուն տալու բերաւ ինձի տուաւ, և իմ ըսած իս ապացոյցը սա է որ իմն գրապանիս մէ ջն է :

Այս ըսելով իր յառակ թաշկինակը հանեց, խիստ վայելու և բարակ կտաւէ թաշկինակ մը, թէ և բարակ կտաւը շատ սո դէր այն ատենելը, բայց շրանոած, զինա ըռըմ շո նէցը թաշկինակ մ'էր, և մինակ նշան մ'ուն' ը և այս նշանն էր ալ-բէջ անուան գիրը :

Այս անգամ ա՛Երդանեան ձայն մը շհանեց, իր սիսալմոնքը ձանչեր էր, բայց Առամինի բարեկամները շո տով շհամնով եցան անոր խօսքերէն, և անոնցմէ մին շինծո ծանուո մեամբ մը նարատի հրացանակին ողեղելով խօսքն ըստ .

— Եթէ ըսածդ, ինչպէս որ կ'պիտես, սայդ լինէր, պիտի սախուտէի, սիրելի Առամին, այն թաշկինակն ես ուզելու. վասն զի, արդէն զիտես, պաւա-Գրասին իմ՝ մտերիմն է, և չեմ ուզեր որ անոր կնկան զեղեցկու թիւնը պարծենալով բերան առնու նւ:

— Դու շտառ զ' շ կերպով կ'առաջարկես խնդիրդ — պատասխանեց Արամիս — և որշափ որ պահանջմանդ իբօք աբդարացի լինելը կ'ձանչեմ՝ զայն կատարելու պիտի մերժեմ ձեին համար:

— Այս իրաւ է — յարեց ա՛Երդանեան երկչուատ մեամբ — որ թաշկինակին Արամիսի գրապանէն վար ընկնիլը շաեսայ, ուոքը վրան դրեր էր միացն, և որովհետեւ ուսքով կոխեր էր, կարծեցի թէ թաշկինակն իրն է :

— Հետևապէս սխալ կարծիք ըրեր ես, սիրելի սպաբոնս — պատասխան տուաւ Արամիս պաղութեամբ, արտած բացատրութենէ զոհ չընելով. յետոյ ինք ինքը Պուա - Դրասիի բարեկամ կոչով պահակին դառնալով, — Բայց դարձեալ — յարեց նա — կ'մուածեմ, Պուա - Դրասիի մասերիմի, որ ես ալ քեզի չափ անոր փափկասիրտ բարեկամն եմ, այնովէս որ այս թաշինակը՝ ինչպէս իմ, քու դրաբանէդ ալ ընկած կրնայ լինիլ:

— Ամենեին, պատցա վրայ կ'ըսեմ — գոչեց Կորին Աեհափառութեան պահակը :

— Դու պատցա վրայ կ'երջուս, ես իմ խօսրիս վրայ, և հետեւապէս մեղնէ մին սուտ կ'խօսի: Ահա, լաւ միջոց մը կայ, Մօնղարան, արի կէսը դու առ կէսն ալ ես առնեմ:

— Թաշկինակին :

— Այս :

— Շատ լաւ — գոչեցին միւս երկու պահակները. — այս է Սողոմնի դատաստանու: Իրաւի, Արամիս, շատ իմաստուն ես: Երիտասարդները քահ քահ խնդացին, և ինչպէս դիւրին է երեակայել, խնդիրն ասով վերջ առաւ: Ապյուինէ մ'եւքը՝ խօսակցութիւնը դադրեցաւ, և երեք պահակներուն հետ հրացանակիրը՝ իրարու ձեռք մանրօրէն սեղմալէն ետե՛ բաժնուեցան երեքը մէկ կողմէն և Արամիս միւս կողմէն երթալով:

— Ահա հիմակ ժամանակն է այս քաջ մարդուն հետ հաշտուելու: — ըստ ինքնուիին տ'Արդանեան, որ փոքր ինչ հեռու կեցեր էր այն խօսակցութեան վերջին միջոցին, և այս բարի ըզգացումով՝ Արամիսին մօտեցաւ, որ առանց իրեն ուշադրութիւն ընելու կ'հեռանար:

— Պարոն — ըստ անոր — յուսամ որ ինձ կ'ներես:

— Ահա, պարոն — ընդմիջեց Արամիս — ներէ ինձ յայտնելու որ այս պարագայիս մէջ արժանի մարդու մը վայել կերպով չվարուեցար:

— Ի՞նչ, պարոն — գոչեց տ'Արդանեան — արդեօք կ'կարծես...:

— Ես կարծեմ թէ , պարո՞ն , դու յիմար չես , և թէ զիտնալ պէտք ես , թէ և Կառքօնէ կ'զառնաս որ մարդ մ'առանց պատճառի թաշկինակ մը չկոխեր : Արող , Քարիղի սալայատակը կոսուէ չէ :

— Պարո՞ն , իրաւոնք չո՞նքս զիս գսրովելու — ըստ ա՛Յրդանեան , որո՞ն կուտասէ՞ր քնառորդ թիւնը կ'ակէր աւելի քարձր խօսիլ քան թէ հաշարար խորհուրդները : — Իրաւ է որ բնիկ երկիրս Կառքօնյն է , և քանի որ այս զիտես , պէտք չո՞նիմ ըսելու որ Կառքօնները շատ համբերող չեն . ոստի երբ անդամ մը ներզզութիւն կ'իւնյիրեն , նոյն իսկ յիմարութեան մը համար , համոզուած են որ կիսով շափ աւելի հասուցում տուած են քան զարժանն :

— Պարո՞ն , այս ըսելով իմ միտքս քեզի հետ կո իւ բանալ չէ — պատաժանեց Յրամիս : — Փառք Վաստածոյ , ես սուօերամարտ մը չեմ , և ըստ որում ժամանակաւոր հրացանակիր մ'եմ , երբ բնագատուիմ այն ատեն միայն կ'մնամարտիմ ակամայ . բայց այս անդամ խնդիրը շատ ծանր է , վասն զի աշա կնկան մը պատիւը վտանգի մէջ ընկաւ քու պատճառաւոդ :

— Կմ՝ պատճառաւոս , ինչ ըսել կ'ուզես — զուց ա՛Յրդանեան :

— Ինչու համար անձարակութեամբ թաշկինակը ձեռքս տուիր :

— Ինչու համար դու ալ զետինը ձգելու անձարակութիւնն ունեցար :

— Երդէն ըսի և կ'կրկնեմ , պարո՞ն , որ ոյն թաշկինակն իմ դրաբանէ ու չընկաւ :

— Լաւ , երկու անդամ է որ սուտ կ'իօսիս , պարո՞ն , վասն զի ես որպանէզ ընկնիլը աչքովս տեսայ :

— Ա՛Հ , այդ յանդզնութիւնն ուր սորվեցար , պարո՞ն Կառքօն . լաւ ուրեմն , քեզ մարդու հետ վարուիլ պիտի սորվեցնեմ :

— Խոկ ես պատարազ ընելու պիտի դրիեմ քեզ , պարո՞ն արբայ . հանէ սորդ պատեւէդ , ինչըրեմ , և անմիջապէս :

— Խնդրեմ , այդշափ մի շտապիր , իմ սիրո՞ն բարեկամս ,

այս չէ կռուելու տեղը : Զե՞ս զիտեր որ Եկիյօն ապարանին դիմայն ենք , ապարան մ՞որ կարտինալին արբանեակներով լեցուն է : Ա զիտէ , կարելի է Նորին բարձրութիւնն ապապրեց քեզ որ զլուխս առնուս իրեն տանիս : Ար՝ թէ և ծիծաղելի է , զըլուխս ինձ ովէտք է , վասն զի կարծեմ թէ բաւական ճշտութեամբ ուսերուս վրայ կ'կենայ : Աւսափ քեզ սպաննել կ'ո զեմ , անհոգ եղեր այս մասին , բայց առանձին և չոց տեղ մը պիտի սպաննեմ քեզ լոելիայն , այնապիսի տեղ ուր չկարենաս պարծիլ մահուանդ վրայ :

— Շատ լաւ , բայց շատ մի՛ վաստահիր , և թաշկինակդ հետդ առ , որու կ'ո զէ թող լինի . թերեւս զայն զործածելու առիթ ոհենաս :

— Արդեօք Կասրօն ես , պարոն — հարցոց Արքամիս :

— Այս , ես պարոնս խոհեմո թեն : շարժեալ մենամարտութիւն մ'ետ չեմ ձ եր :

— Պարոն , խոհեմո թիւնն անօդու առուաքինո թիւն մ'է հբացանակիրներուն , իսկեմ , բայց Եկեղեցոյ պաշտօնէից համար անհրաժեշտ է . և որովհետեւ առ ժամանակեայ կերպով հրացանակիր եմ . կ'փափաքիմ խոհեմ մեալ : Ժամն երկոքին ոդ . որ Դրէ վիլի ապարանը քեզի սպասելու պատիւ պիտի ոնենամ : Այն տեղ լաւ անդերը կընամ ցոյց տալ քեզի :

Երկու երիտասարդներն իրարու բարեւ առին , վերջն Արքամիս հեռացաւ Լուքսանարու թիւ տանող փողոցը բռնելով , մինչդեռ ա՛Վրդագանեան տեսնելով որ կռուի ժամը կ'մօտենայ Գարդ-Տ՛շօի Ճամբէն կ'զարներ , ինքնուղին ըսելով . — Երաւի , զարմանքս չլադքիր , բայց զէթ եթէ սպաննուիմ , մէկ հբացանակրի ձեռօք միայն պիտի սպաննուիմ :

## Ե

ԹԱԳՅԵՒՈՒՆԻ ՀՐԱՑԱԿԱԿՈՒՐՆԵՐՆ ԵՒ Պ. ԿԱՐՏԻՎԱԼԻՆ  
ԶՈՐԱԿԱՆՆԵՐԸ.

Տ' Երդանեան՝ Բարիղի մէջ մարդ մը չէր հանչեր : Աւստի Աւ  
թոսի հետ ժամանիր եղած աեղը դնաց առանց վկայ մը տանեւ-  
լու իր հետք , և միաքը զբառ իր հակառակորդին ընտրած վկա-  
ները բաւական սեպել : Միս կողմէն հաստատ որոշեր էր՝ ա-  
ռանց տկարութեան՝ քաջ հրացանակին առ չե ինքնիքն ար-  
դարել , վախալով որ այս մենամարտութիւնն աղև տալի վախ-  
ճան մը չունենայ՝ ինչպէս որ այս առակ զործի մէջ կրնայ պա-  
տահիլ , երբ կորովի երիտասարդ մը տկար և վիրաւոր հակա-  
ռակորդի մը գէմ կ'կրտի . եթէ յաղթուի՝ իր ոսոխին յաղթու-  
թիւնը կ'կրկնապատկէ , եթէ յաղթէ՝ իրը օրինազանց և ժպիրչ  
կ'ամբաստանի :

Սակայն եթէ մեր յազդախնդիր առպետին բնաւորութիւնը լաւ  
նկարագրեցինք , ընթերցողն արգէն դիտած պիտի որ ա՛նք-  
դանեան հասարակ մարդ մը չէ : Ասաի՞ որչափ որ ինքնին իը  
խստավանդուր որ իր մահն անխռանի էր . դաշնամուշ իր աեղը  
դանու ող որիշ անարի և անխռհեմ մարդու մը պէս՝ հեղութ . և  
մենելու չորստասառ եցաւ : Կախի իր ուսխաւելուն առարիբ տար-  
բեր բնաւորութեան վրայ մասձեց և իր կոցութիւնն այնքան մանել  
չերեցաւ իւեն : Անկեղծօր ններում ինւլւելով կ'յուսար Աթու-  
ուը շահիլ , որուն իշխանական կերպարանն և խիստ գ' մքս իւեն  
շատ ախարժելի էր : Կամարին արկածով Բարթուն ահարեկելու-  
կ'մտադրէր , վասն զի եթէ կոխէն անվաս ելնէր՝ կրնար նոյն

արկածն ամենուն պատմել այնպիսի վարպետութեամբ մ'որ հարկաւ Քորթու ծաղը ու ծանակ պիտի լինէր . իսկ կեղծամփա Արքամիսին զալով՝ ա'Արդանեան շատ երկիւղ չէր զգար անորմէ , և եթէ անոր հետ մենամարտէր իսկ՝ պարզապէս զանի անցին դրկելու որոշեր էր , և կամ՝ անոր երեսին զարնելով՝ ինչպէս Կեօար Պամարի զինուարներուն ընկելու ապազրեր էր , բոլորովին անոր գեղեցիւթիւնն որով կ'շվանար , խանգարելու կ'արամագրուէր :

Ասկից զառ՝ ա'Արդանեանի սրտին մէջ անլրդուելի անվեհերութեան ողի մը կար զոր իր հօրը խորհուրդներին ստացեր էր . և այս խորհրդոց իմաստը առ էր . — Մի միայն թաղառորին , կարտինալին և ո՛ . առ Դրէվիլին կամըր կատարել : — Աստի թռաւ քան քալեց Քարմի վանքին կողմը , որ անջրդի արօաներէ շրջապատուած , և Բրէ-օ-Քլէրի մէկ Ճիւզն էր , և առ հասարակ մենամարտելու շտապող անձերու ժամադրութեան տեղը կ'համարուէր :

Երբ ա'Արդանեան այս մենաստանին ստորոտը զանուած ամայի վայրը հասու , Աթու հինգ վայրկենէ վեր միայն կ'սպասեր անոր և կէս օր կ'զարնէր : Հետեւապէս Սամարացիին պէս ժամապահ էր , և մենամարտութեան մասին ամենէն անաշառ վարփնար չէր կրնար բան մ'ըսել :

Աթու՝ որ շարունակ իր վէրքն կ'առաւապէր , թէ և ո՛ . առ Դրէվիլի վերարցմը նորէն զայն զարմաներ էր , անկիւնաքարի մը վրայ նստեր էր և իր հակառակորդին կ'սպասէր իրեն յատուկ հանդարտ և արժանի կերպարանով մը : Երբ ա'Արդանեանի զալուստը տեսաւ , ոտք ելու և քաղաքամարութեամբ քանի մը քայլ գէլու յառաջ զնաց դիմուորելու համար : Իսկ ա'Արդանեան իր կողմէ՝ անոր մօտեցաւ զլխարկը ձեռքը՝ որուն վետուը զետին կ'քսուէր :

Պարոն — ըստ Աթու — իսկ երկու քարեկամերուս իմաց տուի որ զան ներկայ զանուին իրքե վկայ , բայց այս երկու քարեկամերու տակառին չերեցան : Կ'զարմանամ՝ որ ու շացան իրենց սովորութեան հակառակ :

— Ես վկայ չտնիմ, պարոն — ըստ ա'Արդանեան . — վասն զի զեռ երեկ Բարից դալով, ու . ար Դրէ վիլէն զատ մարդ մը չեմ ճանչեր, որուն յանձնաբարութիւն տնիմ իմ՝ հօրս կողմէ, որ պատիւ ո՞նի փեքր ինչ անոր բարեկամը լինելու :

Ամես պահ մը մասձեց :

— Մինակ ո՛ . ար Դրէ վիլը կ'ճանչես — հարցոց անոր :

— Այս, պարոն, միայն զանի կ'ճանչեմ :

— Ա՛ս, զարմանք — շարայարեց Ամոս իէս մ'առ անձին և կ'ս մը ա'Արդանեանի խօսելով — բայց եթէ քեզ սպաննեմ, աղայակի մ'երես՝ պիտի ունենամ՝ ես :

— Ամենեին, պարոն — պատասխանեց ա'Արդանեան այնպէս բարեւ տալով որ արժանապատ մթենէ շատ հեռու չէր, — առմենեին, քանի որ՝ մթէ և խիստ նեղիչ վէրք մ'ո՞նիս, դարձեալ ինձի հետ մնամարտելու պատիւ կ'ընես ինձ :

— Խիստ նեղիչ վէրք մը, ստոյգ է ըստածդ, և պէտք է ըսել որ ստիւլի ցաւ մը պատճառեցիր ինձ . բայց ձախ ձեռքս պիտի դործածեմ, այս է ասվորութիւնս այն անսակ պարագայի մէջ : Ուստի մի կարծեր որ իմ՝ առ ջես շնորհ պիտի դանես . երկու ձեռօք ալ ստր կ'շարժեմ, և այս ալ վատանգաւոր բան մ'է քեզի համար . ձախուիլ մը վեստակար մնարտիկ մ'է, երբ հակառակորդն այս մասին տեղեկութիւն չտնի : Կ'ցաւիմ՝ որ այս պարագան կանխառ շիմացոցի քեզի :

— Իրաւի, պարոն, շատ մարդավար ես և ասոր համար շնորհ հաղորդաւ եմ՝ քեզ — ըստ ա'Արդանեան նորէն զլուխը ծուելով :

— Զափազանց կ'զավիս զիս — պատասխանեց Ամոս իր աղնու ականի երեսով . — Հիմակ որիշ բանի վրայ խօսինք, կ'աղաղչեմ, եթէ անախորժ չես զաներ : Ա՛ս, թշուառ ական, ո՛ր զափ ցաւ պատճառեցիր ինձ . ոսս զեռ կ'այրի :

— Եթէ ներողավիա լինիս . . . — ըստ ա'Արդանեան երկչուութեամբ :

— Ե՞նչ ըսել կ'ուզես, պարոն :

— Հրաշուի սպեղանի մ'ո՞նիմ՝ վէրքի համար, սպեղանի մը

զոր մօյրս տուած է ինձ , և որո՞ն փոլո՞ն իմ՝ վրաս ըրի :

— Լան :

— Լան , ստոյդ եմ որ այն սպեղանին երեք առուր մէջ կըր-  
նայ քեզ բռժել , և երեք օրէն ետքը , երբոր բոյժ զանես , լաւ:  
սպարո՞ն , կ'ըսեմ թէ մնձ պատիւ պիտի համարիմ վերստին քե-  
զի հետ մենամարտելու :

ՏԱՐԴԱՆԵԿԱՆ այնպէս սպարզ կերպով արտասանեց այն խօս-  
քերն որ իր մարդասիրութեան պատիւ կ'բերեին , առանց իր  
քաջանրութեան արաւտ մը բերելու :

— Երանի , սպարո՞ն — ըստ Աթոս — այդ առաջարկութիւնդ  
ինձ ախորժելի է , սակայն չեմ ընդունիր , որչափ որ մզոն մը  
հեռու(ն մարդ կ'զշայ որ ազնիւ սրախ արլի նըն է : Շարլը-  
մանյի (Մեծն Կարոլոս) օրովն այսպէս կ'խօսէին և կ'զործէին  
քաջերը , որոց օրինակին հետեւի ամէն ասպետի պարագանորու-  
թիւնն է : Դժբաղլոր ն այժմ մնձ կայսեր ժամանակը չենք , և  
երեք օրէն ամէնքը պիտի խմանան որ պիտի մենամարտինք , որո-  
շափ որ դաշտանի պահո՞ ի զործը , և մը կռանին պիտի զիմա-  
դրեն : Բայց , ո՞ր մնացին այն թափառաշրջիկները , չպիտի զան  
արդեօք :

— Եթէ կ'շատապիս , սպարո՞ն — ըստ ա՛ՏԱՐԴԱՆԵԿԱՆ Աթոսին  
այն սպարո՞ւթեամբ որով առաջարկեր էր անոր երեք օրուան հա-  
մար կ'ի ը ետ ձշէլ — եթէ կ'շատապիս և զիս շուա մը սպան-  
նելու փափաք ո՞նիս , մի նեղանար , կ'աղաշեմ , կրնանք սկսի :

— Այդ խօսք այ հաճելի է ինձ — ըստ Աթոս ա՛ՏԱՐԴԱ-  
ՆԵԿԱՆԻ շնորհալի զիսի նշանոյը մը բնելով — անմիտ մարդու մը  
խօք չէ այդ , և անսարքակոս քաջանրութանորութ մը բերնի  
վահել է : Վարսն , քու բնութեան ու բ մաշ իկը կ'սիւեմ և կը  
նայիմ որ եթէ իրար չարանենոյ , մնձ հաճոյք պիտի զ ամբ ա-  
պա պի՞ն թջ քու խօսակցութենոյ . բայց այն պաշոններուն բա-  
սա պահո՞ք , կ'աղաշեմ , ևու ժամանակ ո՞նիք , այսպէս ա ելի կա-  
նանապահ կ'լի վինք : Ահ , ահաւասիկ մէկն երեցան , կարծեմ :

Եւ արլարն Վաօժիբար փաղոցին ծայըը՝ սկսեր էր երեկիլ հըս-  
կայան Բորթոսը :

— Ի՞նչ — դուեց ա՛Արդանեան — միթէ քու առաջին վկադ  
Բորթունն է :

— Այս, միթէ անհաճոյ կ'թուի քեզ :

— Բնան, ամննեին :

— Եհաւասիլք երկբորշը :

Տ'Արդանեան Աթոսին ցոյց տուած կողմը դարձաւ և Արամի-  
ոը հանչեց :

— Ի՞նչ — դուեց նա քան զառաջինն աւելի զարմացած ձայ-  
նով մը — միթ, քու երկրորդ վկադ Արամինն է :

— Ենաւարակցյա, միթ չես դիտեր որ մեզ իրար նէ հեռու չեն  
տեսներ և հարցանակիրներու ու զօրականներու, արբանիքն ու  
քաղաքը՝ Աթոս, Բորթուն և Արամին կ'անուանեն մեզ, իամ՝ ելեք  
անրածանելիները : Բայց որովհեան նոր կ'զատ Տաքսէն կամ  
Քո . . .

— Դարպէն — ըստ ա՛Արդանեան :

— Ներելի է քեզ այս պարագային անտեղեակ լինիլ — ըստ  
Աթոս :

— Խաչ վկայ — ըստ ա՛Արդանեան — յարմար վկաներ էք,  
սպարոններ, և իմ արկածն՝ եթէ աղմուկ հանէ, զէթ պիտի առ-  
սպացցց մը լինի որ ձեր միութիւնը հակադէմ բնաւորութեանց  
վրայ հիմնեալ չե :

Նոյն պահուն՝ Բորթոս մօտ եկեր և ձեռօքն Աթոսին բարե-  
տուեր էր. յետոյ՝ ա՛Արդանեանի կողմը դառնալով՝ բոլորովին  
զարմացած կեցեր էր :

Զմունանիք ըսելու որ կամարը փոխեր և վերարկուն հաներ էր:

— Հա, հա — ըստ նա — ի՞նչ է այս :

— Այս պարտնին հետ է կոխու — ըստ Աթոս ձեռամբ ա՛Ար-  
դանեանը ցոյց տալով, և նոյն շարժմամբ ողջունելով :

— Ես ալ անոր հետ պիտի կոտիմ — ըստ Բորթոս :

— Բայց ժամը մէկին միայն — պատասխանեց ա՛Արդանեան :

— Ես ալ այս պարոնին հետ պիտի կոտիմ — ըստ Արամին  
նոյն միջոցին անոնց զանուած տեղը հասնելով :

— Բայց ժամն երկուքին միայն — ըստ տ' Արդանեան մի՛ և նոյն հանդարսութեամբ :

— Բայց կրնամ՝ հարցնել թէ ինչո՞ւ համար կ'կռտիս, դու Աթոս — հարցոց Արամիս :

— Աստուած վկայ, ես ալ չդիտեմ, ուստ ցանցոց, հասրա գու, Բարթոս :

— Աստուած վկայ, պիտի կռտիմ, վասն զի պիտի կռտիմ — պատասխանեց Բարթոս կարմրելով :

Աթոս՝ որո՞ն աչքը շորս դին էք, զիտեց որ Կապօնին շըրթերոն վրայ թեթե ժպիս մը կ'անցնի :

— Հազուսի վրայ վէճ մ'ունեցա՞ք — ըստ պատասխանին :

— Իսկ զո՞ւ Արամիս — հարցոց Աթոս :

— Իսկ ես, պիտի կռտիմ աստուածաբանական ինողրոյ մը համար — պատասխանեց Արամիս, նշան ընկելով միանձամոյն ա՛Արդանեանի որ իր մենամարտութեան պատճառը դադանի որահէ :

Աթոս զիտեց որ տ' Արդանեան երկրորդ անդամ՝ կ'ժպափ :

— Իբան կ'ըսնս — հարցոց Աթոս :

— Այս, Ա. Օգոստինոսի մէկ կիսին վրայ համաձայն չենք — ըստ Կապօնիք :

— Անսարակոյս խելացի մարդ մ'է այս — մըմնաց Աթոս :

— Եւ որովհետեւ հիմակ մէկ անդ զումարուած էք, պարմներ — ըստ տ' Արդանեան — ներեցէք ինձ ձեզմէ ներում խընդրելու :

Այս հերոս՝ բառին վրայ՝ Աթոսի ձակտին վրայէն ամոց մ'անցու, ժպիս մը ուահեցաւ Բարթոսի շրթերու վրայ, և բացասական նշան մ'Արամիսի պատասխանն եղաւ :

— Իմ միտքս չիմացաք, պարմներ — ըստ տ' Արդանեան զլուիր վեր առնելով, որո՞ն վրայ նոյն պահո՞ն արեւո՞ն մէկ ձառագայթը կ'ըոզար և անոր նուրբ ու վէս զծերը կ'զարդարէք — ձեզմէ ներողութիւն կ'ինզրեմ, Լիմէ երբէք ձեր երեքին ունեցած պարագս չկարենամ վհարել, վասն զի Աթոս ամենե՞ն առաջ զիս սպանենելու իրառո՞նք ունի, որով քան առնելիքից արժեքը կ'ի՞-

նէ , ու . Բորբթոս , իսկ քոկդ ալ լիովին կ'օշնչանայ , ու . Արարտիս : Աւրեմն , վերստին կ'ըսեմ , պարոններ , ներդաշխութեցինձ , և մի միայն ըստածիս համար , և պատրաստուեցէք :

Այս ըսելով՝ ա'Արդանեան խիստ ամրարտան կերպով մը սորբ քաշեց :

Տ'Արդանեանի արիւնը զլխին զարկեր էր , և նոյն միջոցին իր սուրբն աշխարհիս բոլոր հրացանակիբներուն դէմ քաշելու չպիտի վարաններ , ինչպէս որ քաշեց Աթոսի , Բորբթոսի և Արամիսի գէմ :

Կէս օր քառորդ անցեր էր : Արեն իր զէնիթը կ'զանուէր , և այս մենամարտութեան թատր լինելու պատրաստոած վայրին աշնոր սասափկ ջնջմութեան ներքեւ էր :

— Ծատ տաք կ'ընէ — ըստ Աթոս՝ իր սուրբն ըստ կարդի քաշելով — սակայն չեմ կարող բանկընակս հանել , վասն զի քիչ մ'առաջ զդացի որ վէրբս կ'արիւններ , և կ'երկնչիմ պարոնին ներդիր սրտամառել արիւն ցոյց տալով անոր , քանի որ ինքն առած չէ :

— Իրաւ է , պարոն — ըստ ա'Արդանեան — սակայն արիւնով թէ ուրիշ մ'ե թէ ես առնում , կ'հաւասառեմ քեզ որ ցաւաք սըրտի պիտի նշմարեմ միշտ քեզի պէս արի ազնուականի մ'արիւնու ուստի ես ալ քեզի հետ բանկընակընվա պիտի մենամարտիմ :

— Լաւ , լաւ — ըստ Բորբթոս — բաւական են այս քաշաքաշ վարական խօսքերը , և մտածեցէք որ մնիք ևս մեր կարդին կ'ըստ պատճենք :

— Դու քու դործիդ խառնուէ , Բորբթոս , և այդպիսի անաբաժնն խօսքեր մի ըսեր — ընդմիջեց Արամիս : — Ես՝ ընդ հակած ուսին՝ այս պարոններուն փոխադարձ խօսքերը շատ ընտիր և երկու ազգատրողիներու արժանի կ'զանեն :

— Ես պատրաստ եմ , պարոն — ըստ Աթոս՝ սուրբ չարժելով :

— Հրամանիդ կ'սպասեմ — ըստ ա'Արդանեան իր սուրբ խոշանձելով :

Ցայց երիտ թուրերն այն ինչ խաշաճելով հնչեր էին՝ որ նորին բարձրութեան պահապան զօրաց զումարտակ մը Պ. աբ

Ժիւսագի հրամանատարութեամբ՝ վահքին մէկ անկիւնն երեցաւ :

— Ահա կաբանալին զօշականները — դոչէցին միաձայն բոյնուն և Երամիս : — Սորը պատեանը զբէք, պարմներ, սորը պատեանը :

Բայց արդէն ուշ էր : Երկու մարտիկներն այնպիսի դրէի մը մէջ տեսնուիր էին որմէ զիւրին էր ըմբռնել անոնց զիսասութիւնը :

— Հէյ — զոշեց ժիւսագ դէպ անոնց երթալով և իր մարդոց աղ նոյն ընել պատուիրով — Հէյ, հրացանակիրներ, ինչպէս կ'մնամարալք ոյս տեղ : Հապա հրավաբտակները, ինչո՞ւ համար չ'ք պահեր :

— Շատ վեհանձն էք դոք, պարմն պահապահներ — ըստ Վ. Բայ խթիւ, որովհետեւ ծխառադ առ ցի օրուան զարանականերէն մին էր : — Եթէ ձեր մանամարտիւթ տեսնէինք, կ'ապահովեմ ձեզ որ արգելք մը չպիտի լինէ ինք ձեզ : Ուստի դոք աղ մղի լոյլ տռեք, և առանց նեղոթեան մնձ հաճոյք պիտի զոյար :

— Պարմններ — ըստ ժիւսագ — ցաւօք սբոյի կ'յայտնեմ ձեզի որ այդ անկարելի բան է : Եմէն բանէ առաջ մեր պարտքը կատարենք : Ուստի սռ բերը պատեանը զբէք և մեր ետելն էկէք :

— Պարմն — ըստ Վ. Բայիս ժիւսագ — յօնարամիւր քու շնորհալի հրաւերդ կ'ընդունէինք եթէ այդ բանը մեզնէ կախում ունենար . բայց զժրաղղօրէն անհնարութիւնն կայ դործին մէջ, ու . առ Դրէ զիի հրամանն այս է : Ուստի ձեր համբան շարանակեցէք, ձեր աղէկոթեան համար կ'ըսեմ :

Այս հեղինութեան վրայ ժիւսագ սաստիկ զայրացաւ :

— Արեմն ձեր վրայ պիտի քալենք — ըստ նա — եթէ շհառղանցիր :

— Հինդ հոդի են — ըստ Ս. Բայ կիսաձայն — իսկ մնչք միայն երեք հոդի . նորէն պիտի յաղթուինք, և պէտք է այս տեղ մնանինք . վասն չի ահա բացէ 'ի բաց կ'ըսեմ, հրամանատարին առ չե պարտեալ չպիտի երեխիմ :

Աթոս, Բորբոռս և Արամիս խսկոյն իրարու մօտեցան, մինչդեռ  
Ժիւսազ իր զին որները կ'շարէք :

Եյս վայրկեանս միայն բաւ ական եղաւ ա՛Արդանեանի իր ու-  
րոշո մն ընելու . այնպիսի դիպուած մ'էք այն որ մարդու մը  
բազւը կ'զնէ է, ալ՝ ար էր թաւ աւորին կամ կարահնալին կողմը  
բանել, այս ընարութիւնն ընելէն ետե, հարկ էր յարաւեկլ :  
Կուտիլ, այսինքն՝ օրինաց անաստել, այսինքն զլու խը վառանի  
դնել, այսինքն մէկ բառ՝ ի մէջ թագաւորն առելի հզօր պաշ-  
տօնէի մը թշնամին դառնալ, ահա այս բաներն ընդհշմարեց պա-  
տանին, և ալ՝ ար է ըսել անոր ՚ի զովեստ, որ բոսկ մը չվա-  
րանեցաւ : Ասսի դ' ալ՝ ի Աթոսին և բարեկամացը գաւ նաշով :

— Պալոններ — ըստ — եթէ կ'ներ ք, ձեր խօսքին մէկ սիսա-  
լը պիտի ողղեմ: Ըսիք որ երեք հողի էք, բայց կ'երեսի ինձ որ  
չորս հողի ենք :

— Բայց դու մնզնէ չես — ըստ Բորբոռս :

— Երաւ է — պատասխանեց ա՛Արդանեան — Հայուսատը չու-  
նիմ բայց հողին ունիմ: Իմ սիրաս հբացանակիր է, քաջիլը շու-  
դամ այս բանս, պարոն, և ինքինիքս չեմ կարող զսպել :

— Հեռացիր, պատանի — զոչեց օիսազ որ անոր շաբժու-  
ներն և դէմքին բացատրութենէն զուշակեր էր անշաշա ա՛Ար-  
դանեանի զիտառորութիւնը: — Կրնաս քաշուիլ երթալ, կ'հա-  
ւանինք: Կաշիդ ակատէ, շուտ զնա:

Տ'Արդանեան աեղն չշարժեցաւ բնաւ:

— Երաւ որ սիրուն պատանի մ'ես — ըստ Աթոս ելիտառար-  
դին ձեռքը սեղմալով:

— Օ՞ն անոր, որոշենք մը ընելիքը — վրայ բերաւ ժխճազ:

— Եղէ — ըսին Բորբոռս և Արամիս — բան մ'ընենք:

— Պարսոր սաստիկ վեհանձն է — ըստ Աթոս:

Բայց երեքին ալ ա՛Արդանեանի սրատանեկութեան վրայ կը  
խորհին և անոր անփորձութենէ կ'երկնչէն:

— Երեք հօ ի ենք, որոց մին վիրաւոր, և միւսը տղայ մ'է  
— վրայ բերաւ Աթոս, — բայց զարձեալ սիտի ըսեն թէ չօրս  
մարդ էինք:

— Ճիշտ է , բայց ընկրկիլ կարելի՞ է — ըստ Բորթոս :  
— Դժուարին է — վրայ Քերաւ Աթոս :

Տ'Արդանեան անոնց վարանման պատճառը հասկցաւ :  
— Պարոններ , ի՞նչ վեաս ունի , փորձեցէք զիս անգամ մը —  
ըստ նա , — և պատոյս վրայ կ'երգնում որ ասկից չպիտի ետ  
զանամ եթէ յաղթուինք :

— Ի՞նչ է անոնդգ , քաջե իմ — ըստ Աթոս :

— Տ'Արդանեան , պարոն :

— Լաւ ուրեմն , Աթոս , Բորթոս , Արամիս և ա'Արդանեան ,  
յառաջ անցնինք — զուեց Աթոս :

— Լաւ ուրեմն , նայինք անգամ մը , միթէ որոշումը մ'ընելու<sup>մ</sup> որոշեցիք — զուեց Ժիւսաղ երբորդ անգամ :

— Պատրաստ ենք , պարոններ — ըստ Աթոս :

— Եւ ի՞նչ է ձեր որոշումը — հարցուց Ժիւսաղ :

— Պատիս սիստի ոնենանք ձեզի հետ մաքառելու — պատաս-  
խանց Արամիս : մէկ ձեռքով զլխարկն ու միռով սուրը հա-  
նելով :

— Ա'չ , զէմ դնելու մի՛աք ունիք — զուեց Ժիւսաղ :

— Վայ զլխիդ , ինչո՞ւ կ'զարմանաս :

Եւ ի՞նը մարտիկներն իրարու վրայ յարձակեցան այնսիսի մո-  
լիքնութեամբ որ լիսվին անկանոն չէր :

Աթոս Գահիւսակ անուն մարդու մը զէմն ելաւ , որ կարտի-  
նալին մտերիմն էր , Բորթոս Պիղարէն առաւ , և Արամիս երկու  
հակառակորդաց զիմացը զտաւ ինքզինքը :

Խոկ ա'Արդանեան , նոյն խոկ Ժիւսաղին զէմ մաքառելու յար-  
ձակեցաւ :

Նորասի Կառքօնին սիրաը պայթելու չափ կ'բախէր , չէ լիւ  
վախէն , փառք Աստուծոյ , վախի ստուերն անգամ չունէր , այլ  
բարի նախանձէն . կատաղի վագրի պէս կ'կռուէր . տաս անգամ  
իր սատիսին շուրջը դառնաւալով , քանին անգամ իր ուազմն ու հողը  
փոխելով : Ժիւսաղ , ինչպէս որ այն ատեն կ'ըսէին , սրախազու-  
թեան մոլին էր և շատ զործածեր էր , տակայն , մեծ դժուարու-

թիւն կ'զգար ինքզինքը պաշտպանելու այնպիսի ռոտխէ մ'որ՝ առաջաշարժ և ռատուառն, առվրական կանոնէ կ'հեռանար, ամէն կողմէն միանդամցն զարնելով, և դարձեալ իր կաշին յաղթող մարդու մը պէս ամէն հարուածի կ'զիմահարեր:

Աերջապէս Ժիւապին համբերութիւնը հասաւ այս տեսակ պայքարէն: Տղայ մը համարած անձէն այսովէս ինքզինքը նեղը մտած տեսնելուն կ'կատղի, զլուխը կ'առաքնայ և կ'սկսի սխալ շարժումներ ընել: Տ'Արդանեան՝ որ թէ և զործնականին մէջ անփորձ տեսապէս արհեստը քաջ զիսէր՝ իր արագաշարժութիւնը ռատակացոց: Ժիւապ՝ զործին վերջ տալ փափաքելով՝ իր ռառխին աշապին հարուած մ'ի ջեցոց մարմնովին ուշանալով ընդ յառաջ (se rendre à fond), բայց առ խոկցն հարուածը դարձոց. և մինչդեռ Ժիւապ նոյնը կրկնելու կ'պատրաստուէր, ա՛Արդանեան օձի պէս անոր սրին տակ ահճելով՝ սուբն անոր մարմնէն թափ անցուց. Ժիւապ՝ անշունչ զետինն ընկա տապատ:

Այն ատեն ա՛Արդանեան անհանգիստ և արագ ակնարկ մը նետեց պատերազմի զաշտին վրայ:

Երդէն Արամիս իր մէկ ռատիք սպաններ էր, բայց միւսը զինքը սաստիկ կ'նեղէր: Սակայն Արամիսին զիրքը լաւ էր և տակաւին կրնար ինքզինքը պահպանէլ:

Պիզարա և Բորթոս կերպ շարժում մ'ըրեր էին: Բորթոս սրի հարուած մ'ընդուներ էր թեկին, և Պիզարա՝ ազդրին: Բայց ուրավհետեւ երկոքին վէրքն ալ վտանգառը չէր, անընդհատ կատղութեամբ իրարու հետ կ'սուերամարտէին:

Աթոս նորէն Գահիսապէն վէրք մ'առնլով ակն յայտնի կը զունատէր, բայց մազի չափ չընկրկէր, մինակ սուրը ձախ ձեռքն սուեր էր և անով կ'մաքառէր:

Տ'Արդանեան՝ այն ժամանակի մնամարտի օրինաց համեմատ՝ կրնար մէկուն օգնել, մինչդեռ՝ աշքով իր աջակցութեան ամենէն կարօս եղագ ընկերը կ'փնտուէր, Աթոսին ակնարկին հանգիստցաւ: Այս ակնարկը վսեմ հարտասանութիւն մ'ունէր: Աթոս լաւ ևս կ'համարէր մեռնիլ քան թէ մէկն իրեն օգնութեան

կաշել, բայց նայելն արդիլուած չէր և նայուածքով նեցուկ մը հայցել, Տ' Երդանեան անոր միարը զուշակեց, սոսկալի ռուտին մ' ըբառ, և Գահիսակին կողն սրաշաբելով դռչեց.

— Գործդ ինձի հետ է, սպարն զօրսկան, քեզ պիտի ըստ սպաննեմ:

Գահիսակ դարձառ, սպատեհ ժամ էր: Աթոս որ մի միոյն իր ծայրային արխօն թեամբը կ'զիմանար, մէկ ծնկին վրայ ընկաւ:

— Մի, այս թշուառականը, մի սպաններ, սպատանի — կ'զումքը Աթոս ա՛ն Երդանեանին — կ'աղաչեմ, հին գործ մ'անիմ անոր հետ լինցնելու երբ բժշկուիմ և ունանաց: Մինակ զինաթափ ըրէ դանի, և սուրը կազէ: Ճիշտ այդպէս, լաւ է, շատ լաւ:

Այս բացառանշտ թիւնն արձակեց Աթոս Գահիսակին սրին սպատանուա, որ իրմէ քսան քայլ անդին թուա: Տ' Երդանեան և Գահիսակ միասին վազեցին, մին զայն առնլու, միւսը՝ զրաւելու համար, բայց ա՛ն Երդանեան աւելի սրաշաբճ լինելով միւսը կանխէց և սուրը վրան դրա:

Գահիսակ Արամիսին սպաննած զինուորականին կողմը գնաց, անոր թուրն առաւ և ուղեց վերստին ա՛ն Երդանեանի վրայ յարձակիլ, բայց ճամբուն վրայ Աթոսին հանդիսկցառ, որ ա՛ն Երդանեանի շնորհիւը քանի մը վայրիինի շափ հանդիսաւ դանելուն, շունչ առեր, և առ աշի որ ա՛ն Երդանեան իր ձեռքէն թշնամին շառնու, իրիւը նորէն մկանիլ կ'ուզէր:

Տ' Երդանեան հասկցաւ որ Աթոսին պիտի զժշոհտ թիւն սպատանէ և թէ անոր կամաց դիմագրէ: Եւ արդարմէ քանի մը բուզէ ետքը՝ Գահիսակ վար ընկաւ կոկարդին սրի հարուած մ' ընդունելով:

Նոյն սրահո ն Արամիս սուրն իր տապալ տախին լանջին վրայ գըներ էր և շնորհ խնդրելու կ'ասիպէր:

Ամեային բորթոս և պիշտը: Բորթոս մեծ մեծ կ'ջարդէր, Պիղաբախին կ'հարցնէր թէ արդեօք ժամը քանի՞ է և իր շնորհաւարութիւնները կ'ներկայացնէր Կամփարի զօրադնդին մէջ ուիզարդ եղած սարցած հրամանատարութեան վրայ. բայց մինչդեռ

այսպէս կ'հեղնէր, բան մը չէր շահեր: Պիդարա այն երկաթի մարդոց կ'ամանէր որոնք մինչև ցվերջին շոնչ կ'առատերազմին:

Սակայն հարկ էր վերջ տալ կոտրին: Պահանջորդ զօլոր կրնար դալ և ամենըը՝ թէ մարդիկ և թէ վիրաւոր, թէ թաղա որականներ և թէ կարտինաւալականներ առնուլ առնիլ: Այսու, Արամիս և ա՛Վրդանեան Պիդարաին չորս կողմն առին և ձայն տուին որ անձնատոր լինի: Թէ և առանձին էր ամսնուն զէմ և ազդըը վիրաւոր, Պիդարա զեռ ևս զիմակալել կ'ո զէր: Բայց մի ասզ, որ արմին վրայ կոթներ էր զետին ընկած՝ զուեց անոր որ անձնատոր լինի: Պիդարա ա՛Վրդանեանի որէս կասքօն մ'էր: Խուլ ականչ եղաւ, միայն խնդաց: և երկու ձեւ ընելով՝ ժամանակ, տու սրին ծայրովը դետինը ցոցնել, և հին Կատակարանին մէկ առն վերակեզծելով ըստ:

— Այս տեղ, այս տեղ սիտի մնոնի Պիդարա, իր ընկերներուն մէջ առանձին:

— Բայց քեզի զէմ չորս հոգի են. Լմբցուր, կ'հրամայեմ քեզ:

— Ահ, թէ որ կ'հրամայես, խնդիրը կ'փոխի — ըստ. Պիդարա — և որովհետեւ դու խմ՝ ռազմավետս ես, որ հարզանիլ:

Եւ զէս ետեւ ոստոնաելով, սորը ծնկին վրայ կտրեց որ զայն թշնամուն չառայ, վանքին պատերէն անլին նետեց անոր կառաներն և թեկերը խաշաձեց կարտինալեան եղանակ մը սուլելով:

Արփութիւնը մը միշտյարշելի է նոյն իսկ թշնամուն մը կողմէ: Հրացանակիրներն իրենց սրերով բարե տուին Պիդարային և զանոնք պատեամնը դրին: Կայնն ըրաւ և ա՛Վրդանեան, և յետոյ Պիդարային օշնութեամբը, որ միայն անվտաս և կանուզն մնացեր էր, վանքին դա իմը առաւ միւսազը, Գահիւսակն և Արամիսի վիշրաւոր ոստիսերէն մին: Չորրորդն՝ ինչպէս արշէն ըսինք, մեռեր էր: Յետոյ զանդակը զարկին, և հինգէն չորս սուր առնլով զէս ՚ի ու, աը Դրէ վելի ապարանը զարկին ուրախութեամբ արբշին:

Իրաբու փաթթուած և փաղցին բոլոր լայնքը բռնկվով կ'քաշէին : որ հրացանակիրն որ իրենց հանգիպէր՝ կ'մօտենար, այնպէս որ ՚ի վերջէ յաղթական չու մ'եղաւ : Տ'Արդանեանի սիրար ծայրալիր ինդութեան մէջ կ'լոզար, Ամոսի և բարթոսի մէջ աեղէն կ'քալէր զանանք դորովադին աեղմելով :

— Եթէ տակառին հրացանակիր չեմ — ըստ իր նոր բարեկամաց Պ. ար Դրէ վիլի ասպարանին դռնէն անցնելով — զանէիր աշակերտ ընդունուած եմ, այնպէս չէ:

## 9

ՆԱՐԴԻԿԱ Վ. ԵՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼՈՒՄ ԵՐԵՎԱՆԱԿԵՐՊՐԴԻ  
ԹԱՂԻՄԻՄԻՐ

Այս կոիւը մեծ աղմուկ հանեց : Պ. ար Դրէ վիլ բարձրաձայն որոտաց իր հրացանակիրներուն գէմ, և զաղառուկ անոնց յաղթանակը չնորհառեց, բայց որովհետեւ առանց ժամանակ կորուսելու՝ զործը թագառորին իմաց տալու հարկ կար՝ Պ. ար Դրէ վիլ խկոյն Լուվր զնաց : Արդէն շատ ոշ էր, թագառորը կարտինալին հետ առանձին փակուեր էր, և Պ. ար Դրէ վիլին ըսին որ թագառորը կ'աշխատէր և մարդ չէր կընար ընդունիլ նոյն միջացին : Իրկունը Պ. ար Դրէ վիլ թագառորին հետ թողղալու եկաւ : Թագառոր կ'շահէր, և որովհետեւ Կորին վեհափառութիւնը շատ ազահ հետեապէս ուրախ զուարթ էր, և երբ հեռուէն Դրէ վիլը տեսաւ .

— Աստ եկուր, պարոն հրամանաւար — ըստ նա — եկուր որ քեզ սասաեմ : Գիտե՞ն արդեօք որ կարտինալն եկաւ զանզատեցաւ հրացանակիրներուդ զէմ, և այնպէս յուղու էր որ այս

իրկուն հիմնդ է : ԱՇ , բայց սասցզն ըսկլով՝ այն քու հրադա-  
նակիրներդ ստունաներ , կախաղանի արժանի մարդեր են :

— Աչ , վեհափառ տէր — պատասխանեց Գրէվիլ , որ իսկոն  
հասկցաւ թէ դործն ինչ կերպարան պիտի առնու . — ոչ , ընդ  
հակառակն բարեմիտ արարածներ են , զառնուկի պէս հեզ , և  
կ'հառատեմ՝ որ միակ փափաք մ'առնին , այսինքն Զեր վեհափառ  
թեան ծառայելու . համար միայն իրենց ոռը պատենէն կ'հա-  
նեն : Բայց ինչ օգուտ , ոլ . կարտինալին զօրականներն անդա-  
ղար անոնց հետ կուր բանալու . կ'աշխատին , և նոյն իսկ իրենց  
զնուին պատցն համար , այն խեղճ հրացանակիրներն ալ պար-  
տաւոր են ինքզինքնին պաշտպանելու :

— Մարկ ըրէ : ոլ . ար Գրէվիլ — ըստ թաղաւորը — մաիլ  
ըրէ . — կարծես թէ կրօնական միարանութեան մը վրայ կ'խօսիս :  
Խրախի , իմ սիրելի հրամանատարս , քու արտօնադիրդ ձեռքէդ  
առնուլ և օրիորդ Շէմրօին ասալու փափաք ունիմ , քանի որ ա-  
նոր մենաստան մ'ընծայելու . խոստացոյ : Բայց մի կարծեր թէ  
քու խօսիդ վրայ ամէն բանի պիտի հաւաամ : Զիս Արդարն  
Լուի կ'անուանեն , ոլ . ար Գրէվիլ , և պահակէ մը , պահակէ-  
մը կ'անունենք :

— ԱՇ , ձիշտ այդ արդարութեանդ վտահ լինելուս , վեհա-  
փառ տէր իմ , որ համբերութեամբ և հանդարաօրէն Զեր վե-  
հափառութեան վճռոյն պիտի սպասեմ :

— Աւքեմն սպասէ , պարոն , սպասէ . — ըստ թագաւորը —  
քեզ երկար տանն չպիտի սպասեցնեմ :

Եւ իրօք բազզը կ'զառնար , և որովհետեւ թագաւորը վասար-  
կածը կ'կարուսէր , ուրախ էր պատրուակ մը դանել որոք ո զի  
(ներուի մեզ այս բացարարութիւնը . որուն ծազումը , կ'խոսառվա-  
նինք որ չդիմենք) շըրշոյն ընէ : Աւստի թագաւորը քիչ ատե-  
նեն ոտք եւար , և իր առջեր դանուած ստակը՝ որուն մեծ մասը  
շահ էր , զբանը դնելով :

— Լա վիէօվիլ — ըստ . — անզս բռնէ , ոլ . ար Գրէվիլի  
խօսելիք ունիմ կարևոր դործի համար : ԱՇ . . . իմ առջես ո թառն

ուկի ունեի . նոյն օտամարը դիբ որպէս զի կլիոպէները զանցաւ ահլու . առիթ մը չս նենամ : Ամէն բան՝ առաջ՝ արշարաթիւն արէաք է : Ծեայ՝ Պ . աը Դրէվիլի դառնալով՝ անոր հետ դէպ ՚ի ուստուհանին սրմածածակլը զնաց ու շարու նակեց .

— Լու , պարան , կըսես թէ Պ . կարտինալին զինորները հրացանակիրները կոտի դրդուցին :

— Այս վեհափառ աէր , ինչպէս միշտ :

— Եւ զորն ինչպէս սկսաւ , նայինք . վան զի , ինչպէս որ զիաես , իմ սիրելի հրամանատարս , ագէաք է որ զատաւոր մը երկու կողմն ալ մտի ընէ :

— Ահ , Աստածած իմ , խիստ պարզ և բնական կերպով մը : Իմ երեք լաւաշոյն զինորներս , զոր Ձեր վեհափառութիւնը յականէ անուանէ կ'ձանչ , և որոց անձնութբութիւնը շատ պարզաներու մէջ փորձեր էք և կրնաց հաւատակել թագուորիս , հուռով չափ ձեզ կ'ծառայեն , իմ երեք լաւաշոյն զինորներս , ըսի , Պ . Շ. Թոս , Բորթոս և Արամիս , զուարձանալու զացեր էին Կապօնյի ընկերակցի մը հետ՝ զոր նոյն առառ խոկ անոնց յանձն առեր էի : Կարծեմ թէ իրենց խնջոյքը Աէ ն-ժէ թէ բան առ զի պիտի ունենար , և խօսքը մէկ ըրեր էին Քարմ-Տէ շօ զանուելու , երբ Պ . աը Ժիւապ և Գահիւսակ , ոմիշարա և երկու ուրիշ զինուորներ անոնց խորհուրդը խանդարեցին , և անտարակցոյ այն չափ բազմութեամբ զալով արքոնի հրամաններու գէմ զործելու զէշ զիտառուութիւն մը պիտի ունենային :

— Ահ , ահ , խօսք մտածել կ'այ ինձ — ըստ թագաւորը — անտարակցոյ իրենք մնամարտելու համար այն կողմը կ'երթային :

— Էս չէմ ամրաստաներ զանոնք , վեհափառ աէր . այլ ձեզի կ'թողում մաստիւրել թէ հինգ զինեալ մարդիկ ինչ ործ կըրնան ունենալ Քարմի վանոց շրջակաւից պէս ամացի տեղ մ'երթալով :

— Այս , իրաւոնք ունիս , Դրէվիլ , իրաւոնք ունիս :

— Այն ասեն երբ իմ հրացանակիրներս տեսան , իրենց զուարը

փօխեցին, և իրենց յատուկ տառելութիւնը մտցան իրենց ուխտին տառելութիւն համար, վասն զի Զեր վեհափառութիւնը քոջ շիռէ որ թագաւորին, ոչ թագաւորին հբացանակիրնելը, ոչ կարարնացի զօրականութան բնական թշնամինեցն են :

— Այս, Գրիգի, այս — ըստ թագաւորը — և արդարի շատ ցա ուի է Գունացի մէջ այսպէս եղիու կուտակած թիւն, երկու զուն թագաւորութիւն մը տեսնելու բայց այս բաներս պիտի դադրին, Դրիգի, այս, պիտի զալլին : Այս եւ եւ թիւն թէ կաշափնալին պահանձնելին են որ հբացանակիրները կոտի զբուցին :

— Կըսեմ թէ հա անական է որ այսուհետարձած լինին որոծերը, բայց չեմ պնդեր, վեհափառ աէր : Գիտեք թէ որչափ դժուարին է ճշնարարութիւնը ճանչել, և եթէ չը նենայիք այն սքանչին բնազրութեալով Եր արծ Լուի Ժո : կ'անաւնիք . . . :

— Եւ իրաւուք ունիս, Դրիգի, բայց առանձին չ'ին քու հբացանակիրներէ, անոնց հետ առզյ մ'ալ կար :

— Այս, վեհափառ աէր, և վիրաւոր մարդ մը, այնովէս որ թագաւորին երեք հբացանակիրները, որոցմէ մին վիրաւոր էր և ուրիշ մը առզյ մը, ոչ միայն ոչ . կարարնալին ամենէն աշարկու : Տինդ պահանձնելու գէմ կիցան, այլ և չորս հուի ալ զետին փռեցին :

— Բայց այդ բառածդ յաղթութիւն մ'է, յաղթութիւն — զաշեց թագաւորը խնդացին — կատարեալ յաղթութիւն մ'է :

— Այս, վեհափառ աէր, առ Սէ կամուրջին յաղթութեան շափ կատարեալ :

— Զորս հոգի, որոցմէ մին վիրաւոր, և ուրիշ մը առզյ էր, ըսիր :

— Հաղին պատահի մ'է, և այս պարագային մէջ այնովէս արիարար վարեկցան նաև, որ պիտի համարձակիմ Զեր վեհափառութեան յանձն առնել :

— Ի՞նչ է անունը :

— Անունը ա'Յրդանեան է, վեհափառ աէր, իմ մէկ վաղեմի բարեկամիս որդին է, այնպիսի մարդու մ'որդին որ Զեր

սպանծովի յիշուտակաց արժմանի հօր հետ կուտակցութեան պատերազմ ըրբու :

— Ըսիր թէ քաջարար վարուեր է այն պատանին, իրաւ է: Դրէ վիլ, պատուի նայիմ ինձ պայտ բանը, դիտես որ զոռ ու որա սերտազմի նկարաղիրներ կ'ոփիրմ:

— Եւ Լուի ԺԿ. թագաւորը դաւողաբար իր սկիբը վերցոց և աղջրին վրայ կանկ առաւ :

— Վեհափառ տէ ը — վրայ բերաւ Դրէ վիլ — ինչպէս որ արգէն ճեզի ըսի, Պ. ա՛Յրդանսան զրեթէ պատանեակ մ'է, և ուրախնեան հրացանակիր լինելու պատիւ չոնի, իր քաղաքացիի հաղուսոր հաղեր է ը, Պ. կարսանալին պահակներն անոր մատղաշ երիտասարդութիւնը տեսնելով, և ասկից զատ նոյն զնդին մէջ օտար է ը, հրաւեր կարգացին անոր որ կոխն սկսելէն առաջ քաշուի երթայ:

— Արեմն քաջ կ'տեսնես, Դրէ վիլ — ընդմիջեց թագաւորը — որ անոնք առաջ յարձակեցան հրացանակիրներուն վրայ :

— Ճշմարիտ է, վեհափառ տէ ը, այս մասին տարակցոյ չկայ, տասի հրաւերեցին որ պատանին քաշուի, բայց պատասխան տուա որ սրանվ հրացանակիր և լիովին Զեր վեհափառութեան անհնուեր, հետեւազ ու հրացանակիրներէն չպիտի զատուի երթէք:

— Քաջ պատանի — մըմնաց թագաւորը :

— Եւ իրոք անոնց հետ մնաց, և Զեր վեհափառութեան համար այնպիսի հաստաբազուկ ախոցեան մ'է այն, որ նոյն ինքն է ժիւսադին սոսկալի սրի հարուած մը տուողը՝ որով այնքան դայրացեր է Պ. կարսանալը :

— Կ՞նչ, միթէ այն պատանին վիրաւորեց ժիւսազը — զուչեց թագաւորը — այն, որ զեռ առայ մ'է: Դրէ վիլ, այդ բանն ինձ անկարելի կ'երեի :

— Բայց Զեր վեհափառութեան բասծս շատ ճիշտ է :

— Ժիւսազ, այն որ թագաւորութեան առաջին սուբբէն մին կ'ուսուի :

— Լու վեհափառ տէ ը, իր վարպետը զտաւ :

- Կ'ուզեմ տեսնել այն պատահին, Գրէվիլ, կ'ուզեմ զանի  
տեսնել, և եթէ անոր բան մ'ընել կարելի է, լաւ, ով աք է  
որ ընենք :
- Տեր վեհափառութիւնը երբ պիտի հաճի զանի ընդունելու :  
— Աղօք կէս օրին, Գրէվիլ :
- Միթէ մինալի քերեմ :
- Եէ, չորսն ալ միտսին թաղ գան, կ'ուզեմ ամենուն ալ  
իմ շնորհակալիքս յայտնել, անձնուէր մարդիկ հազուադիւտ են,  
Գրէվիլ, սիէտք է անձնուիրութիւնը վարձասարել :
- Աւ հափառ աէք, կէս օրին Լուվր պիտի գանութիւք :
- Ա՛հ, ծածոկ կ սանդղէն, Գրէվիլ, ծածոկ կ սանդղէն,  
հարի չկոյ որ կարտինուլն իմանայ . . . :
- Այս, վեհափառ աէք :
- Ա՛հակաս միտքս, Գրէվիլ, հրավարտակ մը միշտ հրա-  
վարտակ մ'է, և ինչ որ ըստ նք, մնամարտութիւնը միշտ ար-  
դիլեալ է :
- Բայց այս կոիւը, վեհափառ աէք, մնամարտութեան սո-  
վորական պայմաններէն գորս է, վէդ մ'է, և ասոր արացացյն  
այս է որ կարտինութին հինգ զօրականներն իմ երեք հրացանա-  
կիրներուս և ու . ա՛ւրդանեանի գէմ մաքսակցան :
- Ճշմարիտ է — ըստ թագառորը . — Բայց ինչ փոյթ,  
Գրէվիլ, դու միշտ ծածոկ կ սանդղէն եկուր :
- Գրէվիլ ժամանեաւ : Բայց որովհեաւ արգէն մնձ բան էր որ  
կարող եղաւ յարգորել այն արքունի պատահին իր տիրոջ գէմ  
ապատամբելու, յարդանօք թագառորը բարեկց, և անոր հանու-  
թեամբը, անորմէ հեռացաւ :
- Նոյն իրկունն իսկ երեք հրացանակիրներն իմացան թէ ինչ  
պատոյ սահմանած են : Որովհեաւ շատ առենէ վեր թագա-  
ռորը կ'ձանչէին, շատ չու բախացան . բայց ա՛ւրդանեան՝ իր կաս-  
քանեան երեակայութեամբ, այն տեսութեան մէջ իր ապադոյ  
բարդը տեսաւ, և նոյն գիշեր ոսկեզօյն երազներ ունեցաւ : Աւ-  
տի, առառօտեան ժամեն ութին իսկ Աթոսին առնը զնաց :

ՏԵՐՊԱՆԵԱՆ՝ ՀՐԱՋԱՆԱԿԻՐԾ ՔՈԼԾԲՈՎՄԻՆ ՀԱՅՈՒԹՅ ՊԱՍԱՌ և Ա  
զարս ԵՐՆԵԼՄ մօտ : ԱՐԱՎՀԵԱՆ կէ ո օրին պիտի երթային թա-  
ղաւ որը առանձիւու , խորհուրդ ըրեք էր բորթասի և Արամիաի հետ  
Լուգանսկու բիի ախտոներու մօտ զանուած զրօսալանը զնայ և  
զնոդախաղ խաղալ : Աթոս հրաւիրեց ա՛ՎՐՈՂԱՆԵԱՆՆ որ իրենց հետ  
զայ : և թէ և անհմատ էր խաղըն , քանի որ բնաւ խաղած չէր,  
դարձեալ ընդունեց պատանին անոնց հրաւերը , վասն զի իր  
ժամանակը՝ ժամն իննէն մինչև կէ ո օր , ինչպէս անցընել չ խալու

Երկաւ հրացանակիրը արդէն հառեր և զնոդախաղն ակսեր էին  
միավին : Աթօս որ ամէն տեսակ մաշմանկան մարզանաց մէջ քաջ  
էր , ա՛ՎՐՈՂԱՆԵԱՆԻ հետ հակառակ կողմն անցաւ : և անոնց մէնա-  
մարտ կարյաց (faire desii) : Բայց այն ինչ առաջին շարժումը  
փորձեց , թէ և ճախ ձեռանով կ'խաղար , հասկցաւ որ իր վէրքը  
տակաւին շատ նոր ընկելուն չպիտի կարենայ այն կրթութիւնն  
ընել : Հետեասկէս ա՛ՎՐՈՂԱՆԵԱՆՆ մինակ մնաց . և երբ յացանեց  
թէ համբակ է և չպիտի կարենայ կանոնաւոր կերպով խաղալ ,  
որոշեցին իրարու զնոդակ նեանել միայն առանց խաղը համբելու :  
Բայց բորթոսի հերքիւլ սեան դաստակով արձակուած զնոդակ  
մէնկաւ ա՛ՎՐՈՂԱՆԵԱՆԻ զէ միին մօտ այնպէս մ'անցաւ , որ մաս-  
ծեց որ , եթէ զնոդակը քովէն անցնելու անդ՝ զըսին զարնէր ,  
թերեւս թագաւորին հետ ուննարիք ունկնդրութիւնը պիտի կոր-  
սուէր , վասն զի անհնար պիտի լինէր իրեն արքանիքը ներկա-  
յանալու : Երդ՝ որովհեան իր կարօնեան երեակոցութեամբ կ'կար-  
ծէր թէ իր բոլոր ասրագան այն ունկնդրութիւնէ կախումն ունի ,  
քաղաքավարութեամբ բորթոսն ու Արամիսը բարեկց , յայտնե-  
լով որ այն խաղըն մէջ չպիտի մանէ մինչև որ անոնց հետ  
չափուելու կարող չլինի , և դարձաւ պատանին մօտ հանդիսա-  
րանը նատաւ :

Պ1. ա՛ՎՐՈՂԱՆԵԱՆԻ համար զէշն այն էր որ հանդիսականաց  
մէջ նորին բարձրութեան զօրականներէն մին կար , որ արդէն  
զայրացած լինելով իր ընկերացն առ ջի օրուան պարտութեան վր-  
ժաց , միաքը դրեք էր պատեհ առթիւ վրէժ լուծելու : Առաջի

կարծեց թէ յարմար առիթը հասած է և իր ընկերին դառնալով :

— Զարմանք չե՞ն — ըստ — որ այս պատանին զնղակէ մը կ'վախնայ , անտարակոյս հրացանակրի աշակերտ մ'է :

Տ'Արդանեան զլուխն այնովէ որ դարձուց որպէս թէ օձ մը զինքը խայթեց , և ակնասպից դիմոց այն լրբենի խուզն ըստղը :

— Ա՞հ — վրայ բերաւ անծանօթը լրբօրէն իր պեին ոլորեւ լով — որչափ կ'ուղես երեսա նայէ , իմ փոքրիկ պարոնս , ըստօ ըստ է :

— Եւ որովհետեւ ըստածդ շատ բայրուշ է և բացատրութեան պէտք չկայ — պատասխանին տ'Արդանեան ցած ձայնով մը — պիտի աղաչեմ քեզ որ ետևէս դաս :

— Եւ ե՛րք — հարցուց օտարականը նայն հեզնալիք դէմքով :

— Անմիջապէս , եթէ կ'հաճիս :

— Եւ անտարակոյս գիտես թէ ես ով եմ :

— Ես , ընտան չղիտեմ , և ամենեին հոգս չէ թէ ով ես :

— Բայց ծուռ կ'զատես . վասն զի եթէ անունս զիտնայիր :

Կարելի է այդչափ չէիր շատապեր :

— Ի՞նչ է անունդ :

— Պէտքամտ , հրամանիդ պատրիարք :

— Լաւ ուրեմն , Պ . Պէտքամտ — ըստ տ'Արդանեան հանգարտօրէն — պիտի երթամբ քեզ դրան վրայ սպասելու :

— Գնաւ , պարան , ետևէդ կ'զամբ :

— Ըստ մի շտապիր , պարան . շտեսնեն որ միասին դաւթ կ'ելնենք . զիտես արգէն որ շատ մարդու պէտք չունինք մը ընկելիքն անարդել կատարելու համար :

— Ըստ լու . — պատասխանեց զօրականը , որ կ'զարմանար թէ ինչպէս իր անունը տպաւորութիւն մը չըրաւ պատանիին վրայ :

Արդարեւ պէտքամտի անունն ամենուն յայտնի էր , և թերեւ միայն տ'Արդանեանի անծանօթ . վասն զի ամենօրեայ կորիներու մէջ ատէպ անպակաս զտնուող զօրականներէն մին էր , և այժ կորիներն անկարող էին արգիլել թաղաւորին և կարտինալիք հրտվարակները :

Բարիթոս և Արամիս այնքան զբաղած էին իրենց խաղըվ, և Բարիթոս այնքան ուշադրութեամբ անոնց կ'նայէր, որ և ոչ իսկ տեսան իրենց ընկերին դուրս ելնելը։ Տ'Արդանեան՝ ինչպէս որ Նորին բարձրութեան պահակին ըստը էր, դրան վրայ կեցաւ, պահ մ'ետքն այս վերջինն ալ վար իջաւ։ Առկայն ա՛Արդանեան՝ թաշա որին հետ ունկնդրութիւն ունենալուն՝ որ կէս օրին որշուած էր, պարտաւոր էր արտորալու, ուստի իր չորս զին աչք մը նետեց և տեսնելով որ փողոցը մարդ չկար.

— Խամչ վկայ — ըստ իր հակառակորդին — բարեբաղդ ես, թէ ու ոնամու կ'անուանիս, որ միակ համբակ հրացանակը հետ է զործդ ։ տակայն, անհոգ եղիր, ես իմ ձեռքն ու եկածը պիտի բնեմ։ Պատրաստուէ որիմ։

— Բայց — ըստ այն որուն ա՛Արդանեան մենամարտի հրաւեր կ'կարդար — կարծեմ թէ այս յարմար տեղ մը չէ, և թէ Աէն-Ժէրմէնի մենաստանին ետին կամ Քրէ-օ-Քլէրին մէջ աւելի լաւ կ'սեպիմ։

— Ըստածդ շատ բանացի է — պատասխան ուստ առ ա՛Արդանեան։ — դժբաղդաբար ժամանակս ուղ է, վասն զի կէս օրին որիշի հետ ժամադիր եմ։ Աւստի պատրաստ գտնուէ, պարոն, պատրաստուէ։

Բայց ա՛Արդանեան արդէն առ ջի օրն բատական մարզուեր էր, և իր տարած յաղթութեամբ վառ, տարագոյ յոյսերով շփացած՝ միաբը դրեր էր քայլ մ'անդամ չընկըլիլ. հետևագէս երկու օրերը մինչեւ դաստանը խաչածն փական, և որովհետեւ ա՛Արդանեան իր ամդն անօսաւան կ'կենար, անոր հակառակորդը սախով եցաւ քայլ մը նահանջիլ։ Բայց ու ոնամու՝ նոյն շարժման ժամանակ՝ օրանեհ գտաւ, ձկչտ այն պահուն որ ա՛Արդանեանի ուորը զծէն կ'չեղէր, յառաջ մղելու և հակառակորդին ուսին դըպելու։ Տ'Արդանեան ևս քայլ մը նահանջեց և սրովն անոր զարկաւ։ բայց ու ոնամու պատաց անոր որ բան մը չէ և կորորէն ընդ առաջ սրանալով՝ հակառակորդին սրի հարուած մ'ստ առ։ Բայց որովհետեւ չէր ընկներ և զինաթափ չէր լինէր, այլ ու.

որ Դրէմոյի ապարանին կողմը զարնելով՝ կ'մաքառէր, որուն  
ծառայութեան մէջ ազգական մ'ունէր, ա' Արդանեան անզամ  
չղիտէր թէ սոսիսին առած վերջին վէրքն որբան ծանր էր; և  
զանի աւելի սաստիկ կ'նեղէր: Անտարակոյս զանի պիտի սպան-  
նէր երբորդ հարուածով մ'երբ փողոցէն ելած աղմուկը մինչև  
խաղարսնը համնելուն, զօրականին երկու բարեկամները, որ լսեր  
էին ա' Արդանեանի հետ խօսք տանուլ տալը, և այս խօսքին ետք  
անոնց գուրս ելնելը տեսեր, խաղարանէն գուրս յարձակեցան  
սուր 'ի ձեռին և յաղթողին վրայ ընկան: Բայց անմիջապէս Ա-  
թոս, Բորթոս և Արամիս ալ երեցան, և այն միջոցին որ այս  
երկու պահակներն իրենց նորասի ընկերը կ'զարնէին, զանոնք  
ստիպեցին զառնաւալու: Նոյն միջոցին ուէրնաժու զետին ընկան;  
և որովհետեւ երկու պահակ չորս հողիի ում պիտի պատերազ-  
մէին, սկսան պոռապ. «Հասէք, Դրէմոյի ապարանի մարդիկն: Այս  
աղաղակէն՝ ապարանը զառնուող մարդիկ դուրս ելան, և  
շորս ընկերաց վրայ ընկան: առնք ալ այն ատեն սկսան պոռապ.  
«Հասէք, հրացանակիրներ»:

Այս աղաղակը սովորաբար լսելի կ'լինէր. վասն զի ամէն  
մարդ զիտէր որ հրացանակիրները նորին բարձրութեան թշնամի  
էին, և ամենքը կ'սիրէին զանոնք առ ատելութեան կարտինալին:  
Աւստի միւս զնդերան զինորիներն: 'ի բաց առեալ անոնք որ Ռուժ  
դքսին ներքեն էին, ինչպէս որ կոչեր էր Արամիս, այս տեսակ  
կոխներու ատեն ընդհանրապէս թագուորին հրացանակիրներուն  
կողմը կ'բռնէին: Տէ զէ սարի զնչին երեք զինորիներէն՝ որ ան-  
կից կ'անցնէիրն երկուքը չորս հրացանակիրներուն օգնութեան հա-  
սան, մինչդեռ միւսը Պ. առ Դրէմոյի ապարանը կ'վազէր պի-  
ռաւով. «Հասէք, հրացանակիրներ, հասէք»: Սովորաբար Պ:  
առ Դրէմոյի ապարանն այս տեսակ զինուորներով լի էր, և իրենց  
ընկերներուն օդ նութեան հասան. հետևապէս ընդհանուր մարտ  
մը ծաղեցան և հրացանակիրները զօրառոր էին. կարտինալին պա-  
հակներն և Պ. առ Դրէմոյի մարդիկն ապարանը քաշուեցան:  
և անմիջապէս դռները զոցեցին որպէս զի իրենց թշնամիները

միտոն ներս շարշաւեն : Խոկ վիրաւորեալն , արդէն նոյն ապա-  
րանը փոխադրեր էին , և ինչպէս որ ըստնք , շատ զէշ վիճակի  
մէջ կ'զանու էր :

Հրացանակիբներն ու իրենց գաշնակիցները մեծ շփոթութեան  
մէջ էին , և կ'իսորչէին արդէն որը լա Դրէմոյի ապարանը կրա-  
կի տալ . նոյն ապարանին սպասուորները պատժելու համար՝ ո-  
բոնք յանդէներ էին թաղաւորին զինուրներուն մրայ յարձակիլ :  
Երգէն այս միջոցն առաջարկուեր և խանդադին ընդունուեր էր,  
երբ բարեբաղդօրէն մամբ տասն մէկ զարկու . և ա՛Վրդանեան  
իր ընելերներուն հետ իրենց ընելիք այցելութիւնը յիշեցին , և  
իրր թէ կ'ցաւէին որ այն զործն առանց իրենց մասնակցութեան  
սփառի կառարէին . յաջողեցան մլուներուն զայրայթը խաղաղը-  
նել : Առաջի բաւական համարեցին քանի մը քարեր նետել գոնե-  
րուն գէմ , բայց գոները զիմացան . այն տաեն ձանձրացան : Նա  
մանուանդ այս զործին պարագլուխներն՝ արդէն խմբէն հեռա-  
նալով դէպ 'ի ու . առ Դրէվիլի ապարանը կ'զիմէին , և այս ալ  
որ արդէն այս սույգարին տեղեակ էր , անսնց կ'սպասէր :

— Շուտ , Լուվը երթանք , Լուվը — բառ նա — առանց  
վայրիկան մը կորուսելու , և ջանանք կարսինալը չհասած թա-  
գառորին հետ տեսնուելու . այսորուան զործն իրը երէ կուանին շար-  
ութանկութիւնն անոր կ'սպասենք , և երկուքն ալ միտոն կ'ան-  
ցին :

Պ . առ Դրէվիլ՝ շորս երկաստարդաց ընկերակցութեամբ՝ Լու-  
վիկ Տամբան բռնեց . բայց որչափ մեծ եղաւ . հրամանատարին  
զարմանքն երբ իմաց տային իրեն թէ թագաւորը Աէն-գէրմէնի  
անսառը զայցեր է այծեամբ որսալու : Պ . առ Դրէվիլ՝ այս լուրն  
երկու անդամ կրկնել տուաւ . և ամէն անդամուն ընկերները  
զիտեցին որ անոր երեսը սաստիկ կ'տիրը ր :

— Միթէ ։ Նորին վեհափառութիւնն երէ կուանէ որսորդութեան  
երթալու դիտաւորութիւնն ունէր — հարցուց նա :

— Աչ , վանմափայլ տէր — պատասխանեց սենե կապէաը . —  
այս առ առ միայն որսորդապետն եկաւ յայտնելու թագուորին ոյք

առջի զիշեր այծեամ՝ մը պատրաստեր են յատկապէս իրեն համար : Կախ պատասխան տուաւ որ չպիտի երթայ, բայց վերջն այս որսորդութենէ հաճոյք գտնելու յուսով ճաշն ըրաւ և զնաց:

— Եւ միթէ թագաւորը կարափնալին հետ տեսութիւն ըրաւ Հարցոց Պ. աը Դրէ վիլ :

— Ըստ հաւանական է — պատասխանեց սենեկապայն . — վասն զի այս առտու Կորին բարձրութեան կառքը լծուած տեսայ, Հարցոցի թէ ուր պիտի երթայ և ըսին ինձի թէ Սէն-Ժէրմէն :

— Մեղ կանխեր են — ըստ Պ. աը Դրէ վիլ : — Պարոններ, այս իշկուն թագաւորը պիտի տեսնեմ, բայց դուք նայեցէք որ արքունիքը չերեխք :

Այս խորհուրդը շատ իրաւացի էր, նա մանաւնդ այնպիսի մարդու մը բերնէն կ'ելնէր որ թագաւորին բնութիւնը քաջ կը ճանչէր, և հետեւապէս հրացանակիրներն անսաստելու հարկ չը տեսան : Աւստի Պ. աը Դրէ վիլ յորդորեց որ իրենց տեղը գտան և նոր անօրէնութեան մը սպասեն :

Պ. աը Դրէ վիլ իր ապարանը մտնելուն՝ մտածեց որ արթոն կենալ և ամենէն առւաջ գանգատիլ պէտք է : Աւստի իր սպասաւորներէն մին Պ. աը Դրէ մոյի առներ զրկեց նամակով մը, որուն մէջ կ'աղաւէր որ Պ. կարտինալին զինորը առնէն ճամբէ և իր մարդիկն յանդիմանէ որ հրացանակիրներուն դէմ յարձակելու յանդգներ էին : Ավկայն Պ. աը լա Դրէ մոյ՝ արդէն զործին էութիւնն իմացած լինելով իր ձիապանին միջոցաւ, որուն ազգականն էր ուկընաժու, ինչպէս զիտենք, պատասխանեց թէ Պ. աը Դրէ վիլ և հրացանակիրներն իրաւոնք չունին զանդատելու, այլ ինքը, քանի որ հրացանակիրներն իր մարդոց վրայ խռթեր և ապարանն այրել ուզեր էին : Արդ՝ որովհետեւ այս երկու իշխաններու մէջ վէճն երկար կրնար տևել, իւրաքանչիւրը բնականապէս իր կարծիքին վրայ յամառելովք . Պ. աը Դրէ վիլ հնար մը մտածեց որուն նպատակն էր ամեն բան աւարտել, այս հնարն էր երթալ անձամբ Պ. աը լա Դրէ մոյը տեսնել :

Ք առի անօմիջառվէս անոր ապարանը զնաց և խնլրեց որ իր կալն իմացնեն :

Այս երկու իշխանները մարդավարութեամբ իրարու ողջոյն տուին : Վասն զի եթէ բարեկամութիւն չկար անոնց մէջ, զէթ յարդանք կար : Երկու քնին ալ քաջասիրու և պատուուոր անձեր էին . և որովհեան ու . ար լա Դրէմոյ, բողոքական և թագաւորէն հեռու լինելով՝ և ոչ մէկ կուսակցութենէ: Էր, սովորաբար իր ընկերային յարաբերութեանց մէջ նախապաշարում չունէր: Սակայն այս անդամ իր ընյունելութիւնը, թէ և քաղաքար, սովորականէն աւելի պաղ էր:

— Պարոն — ըստու ու . ար Դրէվիլ — կ'կարծենք թէ իրարմէ գանգատելու պատճառ ունինք, և ես անձամբ եկայ որ այս խընդիրը լուսաբանենք :

— Յայարակամ — պատասխանեց ու . ար լա Դրէմոյ . — բայց կանխու իմաց կ'առամ քեզ որ ամէն բանի քաջ տեղեակ էմ, և բոլոր յանցանքը քու հրացանակիրներուդ վրայ կ'ընկնի:

— Պարոն, դիտեմ որ խիստ արդարաւէր և բանիրուն անձ մ'ես և անտարակոյս ընկելիք առաջարկութիւնս պիտի ընդունիս :

— Ի՞նչ է առաջարկութիւնդ, պարոն, ըսէ, մակլ կ'ընեմ:

— Ի՞նչ վիճակի մէջ է ու . ուէ ընաժու, ախուապեսիզ աղջականը :

— Զդիտես որ շատ զէշ վիճակի մէջ է, պարոն: Ոչ միայն ընկն որի հարուած մ'առեր է, որ քատ բաւականին վտանգաւոր է, այլ և թոքն ալ վիրուսուեր է, այնպէս որ բժիշկները շատ յօյս չոնին բժշկութեան :

— Բայց միթէ վիրաւորին խելքը զլու խը չէ:

— Անշուշտ :

— Կ'խօսի:

— Գժուաբառ, բայց կ'խօսի:

— Լան ուրեմն, պարոն, անոր մօտ երթանիք, երդում ձգենք միան՝ յանոն Առաւեծոյ որուն առջեր թերեւս պիտի երեխ, որ մեղի ճշմարտութիւնը յայտնէ: Ես իր դատին համար զինքը զարդարուած եմ:

առառոր կ'ընդունիմ՝ պարոն, և ինչ որ լուէ, պիտի հաւաամ:

Պ. ար լա Գրէմոյ պահ մը մասձեց, յետոյ՝ զիտելով որ այս առաջարկութիւնը խիստ բանառոր էր, զայն ընդունեց:

Երկուքնին ալ վիրառորին զտնուած սենեակն ի ջան: Հիւանդը այս երկու աղնիւ իշխանաց զալուստը տեսնելով՝ փորձեց իր անկողնին վրայ ելնել նստելու, բայց շատ տկար էր, և ըրած ձիգէն ուժաթափ մնալով՝ զրեթէ ընկառ շնչառպատ:

Պ. ար լա Գրէմոյ վիրառորին մօտեցաւ. և անոր ողելից ջրեր շնչել տալով՝ սթափեցոց: Այն առեն Պ. ար Գրէվիլ որպէս զի ետքէն շամբաստանեն զինքը թէ հիւանդին վրայ ներգործեր է, Պ. ար լա Գրէմոյը հրաւիրեց հարց ու փորձ ընելու:

Ինչ որ Պ. ար Գրէվիլ զուշակեր էր պատահեցաւ: Պէտքածու կենաց և մահու մէջ զտնուելով՝ ճշմարտութիւնը զաղտ պահէլու մորքէն անդամ շանցաւ, և երկու իշխանաց ամէն բանինչպէս որ իրօք պատահեր էր, ճշտիւ պատմեց:

Պ. ար Գրէվիլին բոլոր ուղածն ալ այս էր. Պէտքածուին արագ բուժութիւն մաղթեց, Պ. ար Գրէմոյին մնաս բարեցաւ, իր ապարանը գնաց և խոկոյն իմաց տուառ չորս բարեկամաց որ ճաշի գան և անոնց կ'սպասէ:

Պ. ար Գրէվիլ ընտիր հիւրեր կ'ընդունէր, թէ և անաիկարտինաւեան էր լիովին: Գիւրին է երևակայել որ ճաշի ատեն խօսակցութիւնը՝ նորին բարձրութեան զօրականաց կրած պարտութեան վրայ գարձաւ: Արդ՝ որովհետեւ ա՛Յրդանեան այն երկու օրուան քաջութեանց դիւցազն էր, անոր վրայ գարձան բոլոր զովեսաները, զոր Ամոս, Բարթոմ և Արամիս անոր թողուցին, ոչ միայն իրրեւ լու ընկերներ, այլ իրրեւ այնպիսի մարդիկ որ ատէպ իրենց բաժինը ստացած էին ուրիշ պարագաներու և անոր աչք չունէին.

Ժամը վեցին ատենները՝ Պ. ար Գրէվիլ իմացուց թէ Առվը երթալու պարտաւոր էր, բայց որովհետեւ նորին վեհափառութեան ունկնդրութեան համար որոշած ժամն անցեր էր, փոխանակ ետեի սանդղէն վեր ելնելու, չորս երիտասարդաց հետ նա-

իսաւենեակը սպասեց : Թագաւորը տակաւին որսէն չէր դարձած , հազիւ կէս ժամ կար որ մեր երիտասարդները կ'սպասէին պալատականաց հետ խառն , երբ բոլոր դռները բացուեցան և իմաց մուին որ Նորին վեհափառութիւնը կ'զայ :

Այս ազգաբարութեան վրայ՝ ա՛լրդանեան ուսրուու զբաց մինչեւ ոսկորները : Ըստ հաւանական էր որ դաշիք վայրիեանն իր կենաց բաղդը պիտի վճռէր զիսովին : Ուստի անձկութեամբ աշերը սեենեց այն դրան վրայ ուսկից թագաւորը պիտի անցնէր :

Լուի ԺԴ . ամենէն առաջ կ'քալէր . որսի հազուատով էր , գեռ ևս փոշելից , մեծ կօշիկներով և խարազան մ'ի ձեռին : Առաջին նայուածքէն , ա՛լրդանեան դիսեց որ թագաւորը փոթորիկ մը պիտի հանէ :

Որչափ որ Նորին վեհափառութեան այս արամադրութիւնն ակներեւ կ'երևէր , դարձեալ սրալատականները հարկ սեպեցին անոր Խամբուն վրայ կարգաւ շարուիլ , վասն զի արքայական նախասենեմակներուն մէջ աւելի աղէկ է վայրալիր աշօք նայուիլ . քան թէ անսես անցնիլ : Ուստի երեք հրացանակիրները չվարանեցան և քայլ մ'առաջ անցան , մինչդեռ ա՛լրդանեան անոնց ետին պահուեր էր : Բայց թէ ե թագաւորն անձամբ կ'ձանչէր Աթոսը , Բարթոմուն ու Արամիսը : սակայն առանց անոնց երեսը նայելու , առանց խօսելու անցաւ , որսին թէ բոլորովին իրեն անձանօթ լինէին : Եսկ ու , աը Դրէ վելին դալով երբ թագաւորը պահ մը իր աշքն անոր վրայ ածեց՝ այս ակնարկն այնպիսի քաջութեամբ յարաւ որ թագաւորը սահնուեցաւ անողին նայիլ . հուսկ ուրեմն Նորին վեհափառութիւնը քրթմն նելով իր սենեակը մատ :

— Դորձերը ծուռ կ'երթան — ըստ Աթոս մասելով — և այս մանգամ ևս սասպետական կարդին չպիտի արժանանանք :

— Տաս վայրիեան այս անդ սպասեցէք — ըստ ու . աը Դրէ վել — և ելիւ տաս վայրիենէն դուքս չենեմ , իմ տպարանս դարձէր , վասն զի անօգուտ բան է աւելի երկար ժամանակ ըստ պահել ինձ :

Զորս երիտասարդները սպասեցին տաս վայրիեան , քառ որդ մը ,

քսան վայրիկան, և երբ տեսան որ ո՛, աը Դրէ վիլ չերեցաւ .  
դուրս ելան մասպայզ անցան զարձածին վրայ :

Պէտք արձակագործ թե անցան զահլիճը մատեր էր համարձակ և  
զանի մեծ սրտնեղութեան մէջ զատեր էր . թիկնաթոռի մը վրայ  
նատեր իր խարազանին կոթովը կօշիկները կ'զարնէր նա . ուստի  
չվարանեցաւ անոր սրափառ թեան վրայ լուր հարցնել անդրզուելի  
կերպարանքով մը :

— Աղէկ չեմ . պարտն, աղէկ չեմ — պատասխանեց թագառ ու-  
րը — ձանձրոյթ կ'զգաց :

Եւ արդարեւ ու ու ի ժամանէն ծանր հիւանդութիւնը ձանձ-  
րոյթն էր, որով առէ ու իր պաշտականներէն մին կ'կոչէր, պա-  
տահանի մը քով կ'տաներ և անոր կ'ըսէր . Պարտն այս ինչ .  
արի, միասին ձանձրանանք :

— Կ'նշաքէս, միթէ Զեր վեհափառ թիւնը կ'ձանձրանայ —  
ըստ ո՛, աը Դրէ վիլ — միթէ այսօր որսի երթալու բերկրու-  
թիւն մը չզգաց :

— Արդարեւ աղմուր բերկրութիւն, պարտն, հոգիս վիայ : Ա-  
մէն ինչ կ'խանդարի, և չզիտեմ թէ արդեօք երէն կ'առ կոփ թէ  
ոչ շուները քիթ շունին : Այծեմի մ'ետեէն կ'ընկնինք, վեց  
ժամ անոր ետեէն կ'վաղենք, և երբ բռնուելու մօտ է, երբ  
Սէն-Սիմոն փողը բերանը կ'առնու . որսական հնչիւնը հանելու,  
և ահա բոլոր որսական չները կ'խրանին և եղնորթի մը վրայ կը  
յարձակին : Կ'նշիս որ, ինչպէս հաւորսութիւնէ, նոյնպէս ե-  
րէի որսէն հրաշարելու պիստի տափառիմ : Ա՛հ, իրօք դժբաղդ  
թագառոր մ'եմ, ո՛, աը Դրէ վիլ . լոկ բազէ մ'անէի, այն ալ  
առջի օր մեռաւ :

— Ահհափառ տէր, քիչ շատ յուսահառութիւնդ կ'ըմբռո-  
նեմ, և արդարեւ մեծ է այս դժբաղդութիւնը . բայց կարծեմ թէ  
տակառին շատ մը շահէններ, բազէ ներ, և վարուժաններ ունիք :

— Սական մարդ մը շունիմ զանոնիք մարզելու . բաղէ ակիրթ-  
ներն հասան և մինակ ես կ'հասկնամ երէ որսութիւնն արհետ-  
ուն : Իդնէ ետքը բան մը շպիտի մեջ և ամէն մարդ թակարթ

ծողակ և պրոդյուս շնորհվով պիտի որոցյ : Գոհն՝ աշակերտ հառցընելու ժամանակ ունենայի , բայց , անս . Պ . կարահնալը զըլ-խիս վրայ է և ինձ վայրկեան մը հանդիսատ չտար , որ անդադար Ասդանիոյ վրայ կ'խօսի ինձ , Սւստրիոյ վրայ կ'խօսի , Անկլիոյ վրայ կ'խօսի : Ա՛հ , Պ . կարտինալը յիշելով բան մը միաքա ե-կաւ Պ . աը Պրէ վիլ թագաւորէն այս խոստովանութեան կ'սպա-սէր : Ե վազրց կ'ձանչէր թագաւորին բնաւորութիւնը . քաջ զու-շակեր էր որ բոլոր այս դանդանները յառաջարան մը , տեսակ մ'ինքնու բոյն խրախուսանաց զրգիռ . մ'է ին , և վերջապէս իր նպաւ-տակին հասեր էր :

— Եւ . ինչպէս Զեր վեհափառութեան դժուհութիւնը պատ-ճառ ելու դժբաղդութիւնն ունեցայ — հարցոց Պ . աը Պրէ վիլ խորին զարմանք մը կեզծելով :

— Միթէ այդպէս կ'կատարես քու պաշտօնդ , պարսն — շա-րունակեց թագաւորը , Պ . աը Պրէ վիլի հարցին տղակի շպա-տասխաննելով . — միթէ քեզ հբացանակիրներու . հրամանատար անուաննեցի որպէս զի ասոնք մարդք մը սպաննեն , ամրող թաղ մը վրդովեն , և Բարիկն այրելու ելնեն , առանց այս մասին ինձ բառ . մ'ըսելու : Ատկայն — շարայարեց թագաւորը — տարակոյս շոնիմ որ քեզ յանիրափ կ'ամբաստաննեմ , անտարակոյս խռո-վարարները բանտն են , և եկած ես ինձ յայտնելու որ արդար զատաստան եղած է :

— Աւհափառ աէր — պատասխանեց հանդարաօրէն Պ . աը Պրէ վիլ — ընդ հակառակն եկայ ձեզնէ արդարութիւն ինդիրելու :

— Եւ որո՞ւ գէմ — զուեց թագաւորը :

— Զրոյարտիչներու գէմ — ըստա . Պ . աը Պրէ վիլ :

— Ա՛հ , այդ ալ նոր բան մ'է — վրայ քերաւ . թագաւորը : — Միթէ պիտի կարենան հաւտացնել ինձ որ քու երեք անշահ հբացանակիրներդ , Աթոս , Բորթոս և Ծրամիս և Պէտարնեցի համ-բակդ կատաղի զաղաններու պէս խեղձ Պէտարնեցի վրայ ընկած և զանի շարաչար զարկած չեն , այնպէս որ շատ հաւանական է :

թե այս ժաման ու հոգին փշելու վրայ է : Արիլի և պիտի համացըք նեռ ինձ որ այնուհետեւ չեն դացեր ար լա Դրեմոյ դքսին ապարանը պաշարելու և զայն այրել ու զելու : Թէ և այսպիսի բան մը սրատերազմի ժամանակ գերազդութիւն մը չէր համարուեր , վասն զի նոյն ապարանը հի կնօներու չոր մ'է , առկայն խաղաղութեան ժամանակ՝ դէշ օրինակ մ'է : Ըստ նայիմ , մինչ կարող ես այս բաներս ու բանալ :

— Աեհափառ տէր , ով հիւսեց ձեզի այս ազ որ պատմութիւնը — հարցոց Պ . ար Դրել վիլ հանգարանութեամբ :

— Ո՛վ ըրան այս ազ որ պատմութիւնը մի , և ով կ'ազես որ լինի եթէ ոչ այն որ քնանալու ատենա կ'հակէ , որ զրօնիլու ատենա կ'աշխատի , որ թաղաւորութեանս ներքին ու արտաքին դործերը՝ թէ ՚ի ֆրանսա և թէ յերսապա՝ կ'վարէ :

— Զեր վեհափառութիւնն ըստու ծոյ կ'ակնարկէ անշոշա — ըստ Պ . ար Դրել վիլ — վասն զի մինակ զըստու ած կ'ձանչեմ Զեր վեհափառութիւնն այսպան զօրսա որ :

— Աչ , պարոն . պետութեանս նեցու կին վրայ , իմ միակ ծառայիս , իմ միակ բարեկամիս , Պ . կարտինալին վրայ է խօսրու :

— Նորին բարձրութիւնը նորին Սրբազնութեան շհանիր , տէր իմ :

— Ի՞նչ ըսել կ'ուզես , պարոն :

— Պազլը միայն անսխալական է , և այս անսխալականութիւնը կարտինալները չեն վայելեր :

— Ըսել կ'ուզես թէ զիս կ'խարէ , ըսել կ'ուզես թէ զիս կը մատնէ : Արեմ զինքը կ'ամբաստանես : Լաւ , բայէ ՚ի բաց խոռոշավաննէ նայիմ որ զանի կ'ամբաստանես :

— Աչ , վեհափառ տէր . ոյլ կ'ըսեմ միայն որ ինքն ալ կը սխալի . կ'ըսեմ թէ ծուռ աեղեկութիւններ ստացած է , կ'ըսեմ թէ Զեր վեհափառութեան հրացանակիրներն ամբաստանելու շատ շտապեր է , որոց դէմ անիրաւ է , և թէ ստոյգ աղբիւ բներէ առած չէ իր լուրերը :

— Ես ամբաստանութիւնն ընազը նոյն իսկ Պ . ար Դրել -

մույն է, նոյն իսկ դոքան է: Առոր ի՞նչ պատասխան ունիս:

— Սա պատասխանը կրնամ առաջ, առեր իմ, որ ինքը դորձին մէջ շահ ունենալուն՝ թերեւ անկօղմնաւէր վկայ մը շլինի, բայց դարձեալ, զիսեմ որ դոքան անկեղծ աղջուական մ'է, և անոր վկայութիւնը կ'ընդունիմ, մէկ պայմանաւ միայն:

— Ո՞րն է այդ պայմանը:

— Այս է, պէտք է որ Զեր վեհափառութիւնը դանի կոչէ, հարց ու փորձ ընէ անձամբ, առանձնակի, և այս տեսանքնէ անմիջապէս ետքն ես տեսնեմ Զեր վեհափառութիւնը:

— Կրա՞մ, ուրիմն ո՞ւ ար լա Գրէմոյին վկայութիւնը կ'ընդունիս:

— Այս, վեհափառ առեր:

— Անոր գատասատանը պիտի ընդունիս:

— Անշուշտ:

— Եւ ի՞նչ փոխարինութիւն որ պահանջէ պիտի կատարեն:

— Բալորովին:

— Լա Շէզնէյ — դոչեց թաղաւորը. — լա Շէզնէյ:

Լուի Ժ.Դ.ի մուսքիմ սենեկասպասը՝ որ միշտ զրան մօս կ'ըստասէր, ներս մնան:

— Լա Շէզնէյ — ըստ թաղաւորը — իսկոյն մարդ զրկէ ո՞ւ ար լա Գրէմոյիր կանչելու, այս իրկուն անոր հետ խօսիլ կ'ուշեմ:

— Միթէ Զեր վեհափառութիւնը խօսք կ'տայ ինձ որ ո՞ւ, ար լա Գրէմոյի տեսանքնէն անմիջապէս ետքը զիս պիտի տեսնէ:

— Այս, աղջուականի խօսք կ'տամ:

— Ուրիմն, վեհափառ առեր իմ, վազը կ'տեսնուինք:

— Առաջը, պարոն:

— Ժամը քանիին կ'հաջիք, վեհափառ առեր:

— Ա՛ր ժամն որ կ'ուզես:

— Բայց շատ կանուխ զալով, կ'վախնամ՝ Զեր վեհափառութեան քունը վրայիլ:

— Քո՞ւնս վրայիլ, միթէ ես կ'քննանամ: Ա՛լ քո՞ն չո՞նիմ,

ոպարոն . երբեմն կերազեմ միայն : Ուստի որչափ կանուխ կ'ուզի ու կուր , ժամը եօթին , բայց վայ դլիսիդ թէ որ հրացանակիրներդ յանցաւոր են :

— Եթէ հրացանակիրներս յանցաւոր ելնեն , վեհափառ տէր , անոնք Զեր ձեռքը պիտի յանձնեմ որ ըստ հաճոյս պէտք եղածը տնօրինէք : Միթէ Զեր վեհափառութիւնն ուրիշ հրաման մը ունի , ըսկը , պատրաստ եմ հնազանգելու :

— Աչ , պարոն , ոչ , և անշուշտ իրաւոմբ զիս Ծրդարն Լուի կ'անուանեն : Ուստի , վաղը կ'տեսնուինք : պարոն , վաղը :

— Վաստած Զեր վեհափառութեան երկար կեանք տաց :

Որչափ որ թաղառը քիչ քո՞ն եղաւ , ոչ . որ Դրէ վիլ աւելի դէշ քնացու : Կոյն իրկունն իսկ ձայն տուեր էր իր երեք հրացանակիրներուն և անոնց ընկերակցին որ առառ ժամը վեց ու կէսին իր տոնը զտնուին : Իր հեան առաւ տարաւ զանոնք առանց բան մը հաստատելու , առանց բան մը խոստանալու , և յայտննեց միայն որ անոնց և իր բաղդը մազի թելէ մը կախուած է :

Երբ պղտիկ սանդղին ստքը հասան , ոչ . ար Դրէ վիլ զանոնք այն տեղ ձգեց : Եթէ թաղառը միշտ անոնց զէմ բարկացած լինէր , առանց տեսնուելու պիտի մեկնէին , եթէ թաղառը զանոնք ընդունելու հաւանէր , այն առեն զանոնք պիտի կանչէին :

Թագառորին յատակ նախասենեակը հասնելով՝ ոչ . ար Դրէ վիլ լս Շէզնէյր դաստ , որ ըստ անոր թէ առ ջի իրկուն ոչ . որ լս Դրէմոյ իր առարանը չէ զտնուեր , թէ ոչ առն զտնալուն Լումբ չէ կրցիր դադ , և թէ նոյն պահուն թաղառին քանի էր :

Այս պարագան շատ հաճելի եկաւ ոչ . ար Դրէ վիլին , որ սյու կերպով ստոյգ եղաւ որ օտարը թելաղբութիւն մը չպիտի սպրոդի ոչ . ար լս Դրէմոյի և իր վիլայութեան մէջ :

Արդարե՛ այն ինչ տաս վայրինան անցեր էր որ թագառորին դահնչին դուռը բացուեցաւ , և ոչ . ար Դրէ վիլ տեսաւ ոչ . ար Դրէմոյի անկից ելնելու , որ իրեն դալով բառ :

— Պ. . ար Դրէ վիլ . Կորին վեհափառոթթիւնը զիս տեսնելու գողեր էր որպէս զի հասկնայ թէ երէկ ստատ թնչպէս դարձան զործերն իմ՝ ապարաննիս մէջ : Ես ալ ճշմարտոթթիւնը յայտնեցի , այսինքն թէ յանցանքն իմ մարդոց է , և թէ ձեզնէ ներողութթիւն խնչըլու պարտառը եմ : Քանի որ ձեզ կ'հանդիպիմ այժմ , հաճեցէք զայն ընդունելու և զիս միշտ ձեր բարեկամաց կարողը գնելու :

— Պ. . դոքս — ըստ Պ. . ար Դրէ վիլ — այնքան վասահ էի ձեր անկեղծութեան վրայ որ Կորին վեհափառոթթեան մօտ ձեզնէ տարբեր պաշտպան մը չուզեցի ինձի համար : Կ'նայիմ որ չեմ սխալիք , և շնորհակալ եմ որ տակառին կայ ֆրանսայի մէջ մարդ մ'որմէ կարելի լինի ըսել առանց սխալըլու . ինչ որ ձեզի համար ըսի :

— Լաւ է , լաւ է — ըստ թագաւորն որ այս մարդավարական խօսքերը լսեր էր զրան մէջէն . — մինակ ըսէ անոր , Դրէ վիլ , քանի որ քո բարեկամներէդ մէկն է , որ ես ալ իր բարեկամն եմ , բայց զիս չէիշեր . թէ զբեթէ երեք տարի կայ որ զինքը չ'ի տեսեր , և երբ մարդ զըմեմ այն տան միայն կ'տեսնեմ : Այս ամէնն ըսէ իմ կողմէս , վասն զի այսպիսի բաներ թառորն ինքնին չկրնար ըսել :

— Շնորհակալ եմ , վեհափառ տէր , շնորհակալ եմ — ըստ դոքսը : — բայց թող Ձեր վեհափառոթթիւնը վասահ լինի , թէ և այս խօսքս Պ. . ար Դրէ վիլի համար չէ , թող վասահ լինի որ ամէն վայրիեան ձեզի հետ տեսնուողներն առննէն անձնուեր համարակներդ չ'են :

— Ա՛հ , իմ խօսքերս լսեցիր . աւելի աղէկ , շատ աղէկ : Դոքս — ըստ թագաւորը մինչեւ դուռը յառաջանալով : — Ա՛հ , դու ես , Դրէ վիլ . ուր են հրացանակիրների : Միթէ անցածն օր շապապեցի՞ քեզի որ հետդ բերես . ինչո՞ւ համար պատուերս չը կատարեցիր :

— Աւարն են + վեհափառ տէր , և եթէ հբանան տաք , լոր Ըլ զնէլ կընայ անոնց իմաց տալ որ վեր ելնեն :

— Այս, այս, թող շոտ մը վեր դան, ճամկ ոթ զարնելու մօն է, և ինքին այցելու մեսն մը կ'ոպասեմ: Վհան, ո՛ղ, դուքս, միայն թէ նորէն եկուր: Կերս մատիր, Գրել վիլ:

Դուքսը բարեեց և գուրս ելաւ: Դուռը բանալու միջոցին՝ լազնիկի առաջնորդութեամբ՝ երեք հրացանակիրներն ու ա'լը զահեան, սահողզին դլու իր կ'երեէին:

— Եկէք, քաշեց — ըստ թաղաւորը — եկէք, ձեզի աղէ կ'մը պիսի լուամ:

Հրացանակիրները մօտեցան խոնարհելով: ա'լը անեան ետեւն կ'երթար:

— Կրոզ, ինչպէս կարելի է — շաբանակեց թաղաւորը — որ դոք՝ միայն շորս հոգի՝ երկու առուր մէջ ո՛ղ, կարսինալին եօթ զըրականները վիրառելք: Այս շատ է, պարոններ, շատ է: Այս ընթացքով, նորին բարձրութիւնը, պիտի բռնազատուի երեք շաբաթն անուամ մ'իր դունդը վերակազմել, և ես ալ իօն հրովարտակներս դործադրելու համար անաշատ պիտի լինիմ: Եթէ զիւուածով մարդ մ'ընկնի, ինչ և է, բայց երկու օրուան մէջ եօթ հոգի, կ'կրկնեմ, շատ է, շափազանց է:

— Այս պատճառու, վեհափառ ակը, կ'տեսնէք որ բոլորովին շուարած և զղջալով կ'զան Ձեր ներողամութիւնը հայցելու:

— Ծուարած և զղջացած: Հըմ — ըրաւ թաղաւորը — ես անոց կեղծ և պատիր կերպարանին չեմ վստահիր. մանաւանդ վարը կասքօնի յէմք մը կայ. մօտ եկուր, սրարոն:

Տ'Արդանեան համկանով որ այս զովեսան իրեն էր, մօտեցան շափազանց յուահատ կերպարան մ'առնելով:

— Լաւ ուրեմն. ինչպէս կ'ըսէիր ինձ որ երիտասարդ մ'է սա. ահա մանուկ մ'է, ո՛ղ, աը Գրել վիլ, իրօք մանուկ մը: Եւ միթէ այս է ժիւսազին այն ծանը հարուածը սուողը:

— Եւ միանցամայն ուէրնամուին որի երկու աղ որ հարուածները:

— Երս ըսիր:

— Զման նամ՝ ըսելու — վրայ բերաւ Աթօն — որ եթէ զիս  
ոկիզարային ձեռքէն շաղատէր, անտարակոյս այժմ պատիւ շպի-  
տի ունենայի Ձեր վեհափառութեան իմ խորին յարդանքն նորի-  
բելու :

— Ո բեմն այս ու արնեցին ճշմարիստ սատանայ մ'է, ու . աը  
Գրէ վիլ : Եյս արհեստով շատ բանկոնակ պիտի ծակէ և շատ  
սո բնը պիտի խորապէ՛ անշատ : Աբք՝ Կապօնները միշտ աղ-  
քատ են, այնու ոչ չէ :

— Վեհափառ տէր, պէտք է ըսել որ տակուին իրենց լեռ-  
ներու մէջ ուկի հանք չշտան, թէկ Աստուած այս հրաշքն ը-  
նել պարաւոր էր Ձեր հօրն իրաւունքը պաշտպանելու ՚ի վար-  
ձատըութիւն :

— Ասով ըսել կ'ուղիս որ նոյն իսկ Կապօնները զիս թագա-  
ւոր ըրին, ու . աը Գրէ վիլ, այնպէս չէ, քանի որ հօրս որդին  
եմ: Լաւ, ասոր հակառակ բան մ'ըսելիք շոնիմ: Լա Շէզնէյ,  
զնա նոյէ, զբաղաներս լաւ մը խառնելով, քառառն ուկի դա-  
հեկան կրնաս գտնել, և եթէ գտնես, ինչի բեր: Հիմակ, նա-  
յինք, պատանի, ձեռքդ խզչիդ վրայ դնելով պատմ: ինձ թէ  
այս բաներն ինչպէս անցան:

Տ'Արշանեան առջի օրուան արկածը մանր պատմեց, պատմեց  
թէ ինչպէս Նորին վիհափառութիւնը տեսնելու ցնծութենէն  
չկրնալով քնանալ՝ ունինդրութեան որոշեալ ժամէն քանի մը ժամ՝  
առաջ իր բարեկամները դառնելու եկեր էր, ինչպէս խաղարանը  
միասին գացեր էին, և ինչպէս երեսին դնելու մ'ընդունելու վա-  
խէն՝ խաղը թողեր և ուկ ընաժամին կատակին ենթակայ եղեր էր:  
թէկ սա մազ մնացեր էր որ իր կատակը մահուամբը առժէ, և  
ու . աը լա Գրէմոյն ալ որ այս դարձին մէջ մատ չունէր, իր  
ոսպարանը պիտի կարուաէր :

— Այդ Ճիշտ է — կ'մըմապ թագաւորը — այս, դոքսն ալ  
ոյդպէս պատմեց ինձ դարձը: Խեղջն կարափնալ, եօթ մարդ կո-  
րոյս երկու օրուան մէջ, և իր սիրական մարդերը: Բայց այսչափ  
քառական է, ողարօններ, կ'լսէր, բառական է . Ֆէրու փողոցին

զիրծին համար ձեր վրէմբ լուծեցիք, և չափեն աւելի: ուստի  
պէտք է զոհ լինիք:

— Եթէ Ձեր վեհափոռթիւնը զոհ է — ըստ՝ Դրէ վիլ —  
մնդ ալ զոհ ենք:

— Այս: զոհ եմ — յարեց թագաւորը լա Շէղնէլին ձեռքէն  
ափ մ'ոսկի առնելով և տ' Արդանեանի ափին մէջ զնելով: Ահա  
ասփիկ — ըստ — իմ զոհունակոթեանս մէկ նշանը:

Այն առենները հպարտոթեան զաղափարներ որ մեր օրերը  
սովորական են: գեռ ևս ոյժ լունելին: Ազնուական մը ձեռքէ  
ձեռք ստակ կ'առնուր թագաւորէն և բնու նուաստոթիւն չէր  
սեպուեր: Աւստի տ' Արդանեան զրպանը գրաւ քառասուն ոսկի դա-  
հեկան առանց ընդդիմոթեան: այլ ընդ համբաւակն՝ Նորին  
վեհափոռթեան իր շնորհակալիքը յայտնելով:

— Լաւ: — ըստ թագաւորը ժամացոյցին նայելով — լաւ: հիմակ  
մակ որ ժամն ութ ու կէս է: քաշուցեք. վասն զի ձեզի ար-  
գէն ըսի, ժամն իննին մէկուն կ'սպասեմ: Շնորհակալ եմ ձեր  
անձնուիրութենէն: պարուններ: կրնամ վասահիլ ձեզ, այնպէս չէ:

— Ա՛ս: վեհափառ տէր — զոչեցին չորս ընկերները միտք-  
րան — Ձեր վեհափոռթեան համար պատրաստ ենք միշտ կտոր  
կտոր լինելու:

— Լաւ: լաւ: բայց ամբողջ մացեք. այդ լսուագոյն է: և  
ինձ աւելի օդտակար: Դրէ վիլ — յարեց թագաւորը կիսաձայն: մինչդեռ միւսները կ'քաշուէին — որովհետեւ հրացանակիրներուն  
մէջ պարագ տեղ չկայ: և առկէ զար նոյն զնդին մէջ մտնե-  
լու: համար որոշեր էինք որ պէտք է աշակերտոթիւն ընել, Պ: Տէ զէսարի: քու քեռայրիդ գումարտակին մէջ մոցուր այն պա-  
տանին: Ա՛ս, ճշմարիտ վկայ, Դրէ վիլ, կ'ցնծամ քանի մտու-  
ծեմ թէ Պ: կարտինալն որչափ պիտի կախէ արդեօք իր երեսը:  
պիտի կատղի, բայց փոյթս չէ: ևս իրաւունքիս մէջն եմ:

Եւ թագաւորը ձեռք Պ: ալ Դրէ վիլին բարեւ տուառ: այժ  
ալ դուրս ելու և եկաւ հրացանակիրներուն միանալու: որոնք  
տ' Արդանեանի հետ քառուն ոսկի դահեկանը կ'բաժնէին:

իսկ կարտինալն , ինչպէս ըսեր էր հարին վեհափառթիւնը : իրաք կատղեցաւ , այնչափ կատղեցաւ որ ութ օր շարունակ թագաւորին հետ թուղթ շխաղաց , թէ և դարձեալ թագաւորն անոր հետ շատ անուշ կ'վարուէր , և ամէն անգամուն որ անոր հանդիպէր իր զգուելի ձայնով կ'հարցնէր .

— Լաւ տրեմն , ող . կարտինալ . ինչպէս ե՞ն քու խեղչ ու բնաժող և խեղչ ժիւսազդ :

## Ե

ՀՐԱՑԱՆԱԾԿԻՐՆԵՐՈՒՆ ՆԵՐ-ԲԻՆ ԿԵՐԱ-ՖԲ

Երբ ա՛ւրդանեան Լուվրէ գորս ելաւ , և իր բարեկամներուն խորհուրդ հարցուց թէ արդեօք ինչ ընէ իրեն բաժին ընկած քառուուն ոսկի դահեկանը , Աթոս յորդորեց որ լաւ ճաշ մը պատրաստել տայ , Քօմ-տը-Քէնի պանդոկը , Բորժոս՝ սպասաւոր մը բռնէ , և Երամին՝ յարմար տիրուհի մը ձեռք ձգէ :

Ճաշը նոյն օրն իսկ պատրաստ եղաւ , և սպասաւորը սեղանին հողը տարաւ : Աթոս ճաշն ապսպրեց , և Բորժոս սպասաւորը գտաւ : Բիդարտացի մ'էր այն որ պարծուի հրացանակրին ձեռք նոյն օրն իսկ բռնուեր էր այս առթիւ թուրնէլի կամրջին վրայ , մինչդեռ պտոյտներ կ'ընէր ջրին մէջ թքնելով :

Բորժոս կարծեր էր թէ Բիդարտացիին այս զբաղմոնքը մտախոչ և դիտող բնաւորութեան մը նշանն էր , և զանի հետ առեր էր առանց ուրիշ որ և է յանձնարարութեան : Այս ազնուականին խրոխտ կերպարանէն հրապորտեր էր Բլանչէ — այս էր Բիդարտացիին անունը — կարծելով թէ անոր պիտի ծառայէ . սակայն շատ զշարեցաւ երբ դիտեց որ Մուպրօն անուն ուրիշ մարդ մ'իր տեղն արդէն բռներ էր . և երբ Բորժոս անոր հաս-

կցոց որ իր տունը՝ թէե մէծ՝ երկու ծառայ չէր կրնար պահել։  
և թէ պէտք էր ա՛նըանեանի ծառայութեան մտնել։ Աակայն՝  
երբ իր տիրոջը տուած հացկերայթին ներկայ գտնուելով՝ տեսա-  
որ նա վճարելու առան զրագանէն լիափ ոսկի հանեց, կարծեց  
թէ բաղդը պիտի շինէ, և շնորհակալ եղաւ Ըստուծոյ որ այն-  
պիսի Կրեսոսի մը հանդիպեր էր. այս կարծիքը պահեց մինչեւ  
հացկերոյթին ետքը՝ որուն մնացորդներէն երկար ծոմապահու-  
թիւնը դադրեցոց ։ Բայց զիշերն իր տիրոջ անկողինը շտկելու  
առեն, Բլանշէի ցնորդքը թուան։ Լոկ անկողին մը տեսաւ տան  
մէջ, որ նախասենեակ մ'ու պատկելու խուց մ'ունէր։ Բլանշէ-  
նախասենեիին մէջ ծածկոցի մը վրայ պատկեցաւ և այս ծածկոցն  
ալ ա՛նըանեան իր անկողնէն քաշեր հաներ և այնուհետեւ ա-  
նոր պէտքը չէր զացեր։

Աթոս ալ սպասուոր մ'ունէր, և զանի իր յատուկ կերպով  
մարզեր էր իրեն ծառայելու համար, առոր անունն էր Կրիմօ։  
Եյս արժանի իշխանը շատ լռակաց էր, մեր խօսքն ՚ի հարկէ  
Աթոսին կ'նայի։ Հինգ վեց տարիէ վեր որ իր Բորթոս և Արա-  
միս ընկերացը հետ սերտ մտերմութեամբ կ'ապրէր, ասոնք ստէպ  
տեսեր էին անոր մպտիլը, բայց երբէք ծիծառիլը չէին տեսած։  
Իր խօսքը հակիրճ և կտրուկ էր, և միշտ որչափ որ պէտք էր  
կ'խօսէր, և ոչ ինչ առելի։ Խնդում, զարդ ու շարար շունէր։  
Իր խօսակցութիւնն իրողութիւն մ'էր առանց սրտառութ զիս-  
ուածի մը։

Թէե Աթոս հազիւ երսուն տարեկան էր և մարմնովի ու մատ-  
վի զեղեցիկ, ոչ ոք զիտէր որ նա տիրուհի մ'ունենայ։ Երբէք  
կանանց խօսք չէր ըներ։ Մինակ չէր արզիկեր որ իր առջեւ ա-  
նոնց խօսքն ընեն, թէե զիրին էր զիտել որ այս տեսակ խօ-  
սակցութիւն մ'որուն գառն բառերով և մարդառտեաց նկատումներով  
մասնակից կ'լինէր, իրեն լիովին անախորժ էր։ Իր երկշռու-  
թեամբը, վայրենութեամբն ու համբութեամբը զըեթէ ծերունիի  
մը դարձեր էր. ուստի՝ իր սովորութեան ներհակ չշարժելու հա-  
մար, Կրիմօն վարժեցոցը էր հնազանդելու լոկ իր մէկ ձեմ։

կամ՝ լոկ շրթերուն մէ կ շարժման : Մի միայն ծանրակշխու սրբազնութեան անոր:

Երբեմն Կրիմո, որ իր տիրով մէն իրը կրակէ կ'վախնար, թէ և անոր անձին համար մնծ սէր, և հանձարին համար մնծ պատկառանք կ'զգար, կարծէր թէ կատարելապէս համկցած է անոր փափաքածը, ընդունած հրամանը կատարելու կ'վազէր և բոլորովին անոր հակառակը կ'զործէր : Այս առեն Աթոս ուսերը կը բարձրացնէր, և առանց սրբամություն: Կրիմօն կ'ծեծէր: Այս օրերը շատ քիչ կ'խօսէր: Բորբուս ինչպէս որ ընթերցողը կարող եղաւ զիսություն, Աթոսի հիմնովին ներհակ բնաւորութիւն մ'ունէր: Աչ միայն շատ այլ և բարձր կ'խօսէր - սակայն փոյթ չէր ըներ, պէտք է խոստավանիլ, որ խօսքը մտիկ ընող կայ թէ ոչ: կ'խօսէր միայն խօսելու և իր խօսքն ինքնին լսելու: Հաճութեան համար - ամէն բանի վրայ կ'խօսէր, զիսութեան նիւթերէ զատը ինչպէս որ կ'ըսէր՝ տղայութենէ վեր, այս մասին անհաշտ ատելութիւն մը տած ելում զիսութեանը: Աթոսին չափ վաեմ կերպարան չունէր, և ինքն աղ այս մասին իր պատիկութիւնն զդալով՝ այն ազատորդիին գէմ ստէպ յանիրափի վարուեր էր: Իրենց կապակցութեան առջի օրերը, և զանի գերազանցելու աշխատեր էր իր փառառոր հազուառներով: Սակայն Աթոս՝ իր հրացանակիրի պարզ վառակազմ՝ և մի միայն զլունն եախն և ոտքը յառաջ նետելու կերպովը՝ իրեն վայել զիրքը կ'սատնար ընկերութեան մէջ և պերճանակը Բորբուն երիրորդ աստիճանի զիրք մը բռնելու կ'ստիպէր: Բորբուս ինքզինքը կ'մսիթարէր ու. արդրէ վիլին նախասենեակն ու Լուգրի զօրանցցներն իր սիրային արկածներուն պատմութեամբը, որմէ Աթոս երբէք չէր խօսեր: և նոյն պահուն՝ պատմունանի ազնութենէ սրի ազնութեան, իրաւագիտութենէ՝ պարունակութեան անցնելով՝ կ'անդէր թէ օտար իշխանուհուց մը հետ յարաքերութիւն, և այս իշխանուհին իրեն մնծ բարիք ընելու փափաք ունի:

Հին առած մը կ'ըսէ. և Այսոց ափօր այսոց ա ծառայ ։ Աւասի Աթոսի ծառային հիմակ Բորբուսի ծառային անցնինք: Կրիմօն Մուսքը օնին ։

Մուսքդօն նօրմանտացի մ'էր, որոն խաղաղութ պօնիքառ  
անունը փոխեր էր տէրն և խիստ առելի հնչական Մուսքդօն ան-  
տառի մկրտեր էր: Բորթօսի ժառայութեան մաեր էր ուս պայ-  
մանաւ միայն որ հազուի կապուի և տունը բնակի, բայց փառա-  
ւոր կերպավ մը - օրն երկու ժամ միայն կ'պահանջէր որպէս զի  
տւրիշ պիտոյքներ հոգալու համար ձարտարութեան մը պարա-  
պի: Բորթօս այս սակարկութիւնն ընդուներ էր, որովհետեւ ի-  
րեն շատ յարմար կ'երեւէր: Մուսքդօնին համար իր հին հազուատ-  
ներով և փոխնորդ վերաբերութեան բանկոնակներ կտրել կ'տար,  
և խիստ մտացի դերձակի մը շնորհիւը՝ որ երեսները դարձնելով  
զգեստները կ'նորէր և որուն կնկան համար կասկած կար թէ  
Բորթօսին ազնուապետական առվորութիւնները մոռցնել պիտի  
առյ, Մուսքդօն խիստ ազւոր կերպարան մը կ'առնուր իր աիրոջն  
ետեւէն:

Իսկ Երամիսին դալով՝ որուն բնառորութիւնն ըստ բռականին  
նկարագրեցնոք, բնառորութիւն որ իր ընկերակցացը պէս, կըր-  
նանք վէպիս ընթացքին մէջ առելի լու ձանչել, իր սպասառորը  
պազէն կ'անուանէր: Գիտնալով որ իր տէրն օրին մէկը կրօ-  
նական կարգը պիտի մտնէ, միշտ սեեր հազուած կ'երեւէր, ինչ-  
պէս որ պարաւոր էր Եփեղեցոյ սպասառը մը: Երսուն հինգ  
քառասուն տարու Պէքըիշոն մ'էր, անուշ, հանգարտ, զիրուկ,  
իր պարապոյ ժամերը բարեպաշտական զիրքեր կարդալով կ'ան-  
ցնէր, և երկու հոգեց համար թէ և ոչ բազմատեսակ՝ այլ ըն-  
տիր կերակուր կ'պատրաստէր: Ասիէ զատ՝ համբ, կոյր, խոլ  
էր և կատարեալ հաւատարիմ:

Հիմակ որ տէրերն ու ծառաները կ'ձանշենք՝ զէթ վեր ի վե-  
րոյ, անոնց բնակած տուներն անցնինք:

Աթոս Գէրու փողոցը կ'բնակէր՝ Լոքսանպորկէն քանի մը  
քայլ հեռու՝ իր բնակարանն երկու փոքրիկ՝ այլ խիստ վայելուչ  
կահեալ խոցերէ կ'բաղկանար՝ զարդարուն տան մը մէջ որուն  
տիրուհին տակաւին նորատի և իրօք գեղանի լինելով անոր ա-  
նուշ աչքեր կ'ընէր ընդունայն: Այս համստ բնակարանին պա-

տերուն վրայ՝ ասպիս անլին հին շքեղութեան մը բեկորները կը փայլէին . օրինակի համար , սուր մ'որ պերձօրէն ուսկիով դրուագած էր և անոր ձեւն կ'երևէր որ Ֆրանսուա Ա.ին ժամանակը շնութեր էր . իսկ դաստապանը զոհարակու , երկու հարիւր ուսկի դահնեկան արժուղաւթիւն պիտի ունենար , և սակայն Աթոս իր մեծ նեղութեան ժամանակներն անդամ յանձն չէր առած զրափ զնել կամ ծախել : Բորթոս այն որին շատ առենէ վեր աչք անկեր էր . Բորթոս այն սուրը ձեռք ձգելու համար իր կենացը տաս տարին մտադիւր կ'ընծայէր :

Օր մը դքսուհիի մը հետ ժամագիր լինելուն՝ փորձ փորձեց նոյն սուրն Աթոսէն փոխ առնլու : Աթոս՝ առանց խօսք մ'ըսնելու , իր դրաբանները պարսպեց , բոլոր զոհարները ժողվեց , քանի , ժապաէն և սովոր շղթայ , և ամենն ալ Բորթոսին տուառ . իսկ սրին գալով՝ յայտնեց թէ իր աեղք դրոշմուած է և իր տեղէն չպիտի շարժէ մինչեւ որ տան տէրն իր բնակարանը չփոխէ : Իր սրէն զատ՝ կենդանազիր մ'ալ մ'անէր որ Հանրի Գ.ի ժամանակի մէկ իշխանը կ'ներկայէր և որ Նորին Սրբոյ տիսան ունէր , իսկ այս կենդանազիրն Աթոսին դէմքին զծագրութեան հետ նըմանութիւն մը , ընտանեկան նմանութեան մը նշաններն ունէր , և որմէ կ'իմացուէր թէ այս մեծ իշխանը , արքունի կարգի ասպետներէն մին , իր նախահատն էր :

Աերջապէս փառաւոր ուսկեզարդ մնտուկ մ'ալ կար , որ սրին և կենդանազրին զինապրոցը կ'կըէր՝ կրակարանին մէջ դրուած էր և սենեկին միւս դարդերուն հետ ամեննեին չէր յարմարեր : Աթոս միշտ հետը կ'առնուր այս մնտուկին բանալին : Բայց որ մը Բորթոսին առ ջեր զայն բացեր էր և Բորթոս ստոգեր էր որ այն մնտուկը մինակ նամակներ և թղթեր կ'պարտնակէ . անտարակոյս սիրոյ նամակներ և ընտանիքի թղթեր :

Բորթոս խիստ լայն և շքեղ երեսյթ ունեցող տուն մը կ'ընակէր Ա.իէօ-Գոլոնազիէ փողոցը : Ամէն անզամուն որ բարեկամի հետ իր պատուհաններուն առ ջեւէն կ'անցնէր , որոց միոյն վրայ Մուսքշօն միշտ աղջնազգեստով կ'երևէր , Բորթոս ձեռքն ու զլու-

իր կ'վերցնէր և կ'ըսէր . Ահա մի էս բնութերն : Բայց երբէք ինքը տունը չէր դառնուեր , երբէք մէկը չէր հրափիրեր վեր ելնելու , և ոչ ոք կրնար երևակայել թէ այն շքեղատեսիլ տունն իրապէս ինչ ճոխոթիւններ կ'պարունակէ :

Խոկ Արամիս փոքրիկ բնակարան մը բռներ էր , որ մնարան մը , սեղանատուն մ'ու պատկելու խուց մ'ունէր . այս խուցը՝ միւսներուն պէս գետնայարկը գտնուելով՝ թարմառէտ , զալարուտ , հովանաւոր և զբացիներուն աշքին անթափանց պարտիզի մը վրայ կ'նայէր :

Խոկ ա՛Արդանեան՝ զիտնիք թէ ինչ բնակարան ընտրեր էր , և անոր Քլանչէ սպասաւորին հետ արդէն ծանօթոթիւն ըրինք :

Տ'Արդանեան՝ որ ՚ի մնէ շատ հետաքրքիր էր , ինչպէս են ոռվորաբար անոնք որ քսութեան ողի ունին , իր բոլոր ձիգն ըրասոր համինայ թէ իրօք ինչ էին Աթոս , Քորթոս և Արամիս . վասն զի այս պատերազմի անուններու ներքե՝ իւրաքանչիւրն իր ազնուականի անունը կ'պահէր , մանաւանդ Աթոս , որուն ազնուականոթեան հոտը մէկ մղոն հեռուէն զգալի էր : Աւստի Քորթոսին դիմեց՝ Աթոսի և Արամիսի վրայ տեղեկոթիւններ ստանալու , և Արամիսին՝ Քորթոսը ճանչելու համար :

Գժբաղդօրէն նոյն ինք Բորթոս իր լուակաց բարեկամին վրայ մինակ ՚ի լրոյ իմացածը զիտէր : Կ'ըսէին թէ իր սիրային զործերու մէջ մեծ աղջակից հանդիպեր է , և թէ տոսկալի մատնութիւն մ'իսպառ թունաւորեր էր այս արիստակրտ մարդուն կեանքը : Ի՞նչ էր այս մատնութիւնը , ոչ ոք զիտէր :

Խոկ Քորթոսը՝ իր ճշմարիտ անունէն զատ՝ որ մինակ Պ . առ Դրէ զիլի ծանօթէր , ինչպէս նաև միւս երկու ընկերացը , իր կեանքը ճանչել զիւրին էր : Նանդասէր և անխոչեմ լինելուն՝ անոր սիրտը հեշտի կ'թափանցէր մարդ , ինչպէս թափանցէլի է բիւրեղը : Բան մը կար որ հետաքնին մարդը կրնար մոլորել . այս է , եթէ հաւատը անոր վրայ խօսուած ամէն բարիք :

Խոկ Արամիս՝ թէ և այնպէս կ'ցուցնէր որ գաղտնիք մը չունի . դաղմանիքով շաղտած տղայ մ'էր , ուր ուրեմն կ'պատասխանէր

երբ աւ ըիշներու վրայ իրեն հարցումներ լինելին , և իր վրայ եղածներն փախուստ կ'տար : Օր մը տ'Արդանեան՝ երկար բարակ Ծորթոսի վրայ հարց ու փորձ ընելէն և իմանալէն ետե այն աղմուկն որ հրացանակրին իշխանուհոյ մը հետ ունեցած սիրային արկածի մը վրայ կ'գառնար , ուղեց նաև համինալ թէ իր խօսակիցն ինչ սիրային արկածներու մէջ ելեր մտեր է :

— Հապա դու , իմ սիրելի ընկերու — բառ անոր — դու որ տըրիշներուն պարմուհիները , կոմու հիները և իշխանուհիները զիանես , դու բան մը չունիս :

— Տէ՛ս — ընդմիջեց Արամիս — զիտեմ և կ'խօսիմ , վասն զինոյն ինքը Բորթոս կ'խօսի անոնց վրայ , վասն զի այս աղւոր բաներն իմ առջես պոռաւլով պատմեց . բայց հաւոտ ինձ , իմ սիրելի Պ. տ'Արդանեան , եթէ անոնք տըրիշ աղրիւրէ մ'իմանայի , կամ թէ ծածռել յայտնէր ինձ , իզնէ աւելի խոհեմ խոսուվառհայր մը չեր կրնար զտնել :

— Չեմ տարակտուիիր — վրայ բերաւ տ'Արդանեան . — բայց կ'երեխ ինձ որ դու ալ շատ ընտել ես զինանշաններու հետ , վըկայ են բանուած Թաշկինակ մ'որուն պարտառը ևմ քեզի հետ ծանօթանալուս պատիւր :

Այս անդամ Արամիս չնեղացաւ , այլ խիստ համեստ կերպարան մ'առաւ և սիրալիր պատահանեց :

— Սիրելիդ իմ , մի մոռնար որ Եկեղեցոյ մարդ լինիլ կ'ուզեմ և ամէն աշխարհային արկածներէ կ'խորշիմ : Այս Թաշկինակը զօր տեսար՝ ձեռքէ չեր , այլ բարեկամ մը զայն տունս մուցեր եր : Պէտք եղաւ զայն պահել որպէս զի թէ երիտասարդին և թէ տիկնոջ պատւցն գալչելիք բան մը չհամնի . վասն զի ես , ոչ աիրուհի աւնիմ և ոչ ալ կ'ուզեմ ունենալ , այս մասին Աթոսի խիստ ոշիմ օրինակին հետեւլով , քանի որ այն ալ ինձի պէս սիրուհի չունի :

— Բայց զարմանք , աբրայ չես , քանի որ հրացանակիր ես :

— Առ ժամանակեայ հրացանակիր , սիրելիդ իմ , ինչպէս կ'ըսէ կարտինալը , ակամայ հրացանակիր մը , և արդարն սրտով

Ներդեցոյ պաշտօնեայ եմ։ Աթոս և բորթոս այս վիճակիս մէ ջղին զիս զբաղելու համար, ճիշտ այն միջոցին որ պիտի ձեռնադրուէի, պղտիկ գժուարութիւն մը ծաղեցան ։ ։ Բայց այս կէտք քեզի վերաբերութիւն չտնի, և քու անդին ժամանակիդ ՚ի դոր կ'սպառեմ։

— Ամենեին, շատ հետապրդիր եմ — զուհց ա՛նբդանեան — և այս պահուս բնաւ բան մը չունիմ ընելու։

— Այս բայց ես իօմ ազօթմաղիրքս պիտի կարգամ — պատախանեց Արամիս — ամկից զատ ուսանառորներ պիտի շինեմ, ինչպէս որ տիկին ա՛կեկյօն իւնդրեց ։ յետոյ Աէնթ-Օնօրէ փողոցը պիտի երթամ որպէս զի տիկին Շէվրէօվին համար մնայր զնեմ։ կտենես, բարեկամդ իմ, որ եթէ դու սախալողական բան մը չտնիս, ես շատ սախալողական դործ ունիմ։

Եւ Արամիս իր նորասի ընկերին կարկառեց ձեռքը սիրադին և անոր մնաս բարե ըստու։

Տ՛Արդանեան՝ որչափ որ ճիզ թափեց՝ շկրցաւ իր երեք նոր բարեկամաց վրայ ուրիշ աեղեկեռթիւններ ստանալ։ Շւտուի միտքը գրաւ ներկային մէջ հառավալու ինչ որ անոնց անցելոցն վրայ կ'իրուէր, ապազային մէջ աւելի սույզ և ընդարձակ ծանօթութիւններ առնելու յուսով։ Կոյժն միջոցին Աթոսն Աքիւլէս մը սեպեց, Բորթոսը՝ Աժաքս մը, և Արամիսը՝ Յովսէփ մը։

Այլ սակայն, այս չորս երիտասարդաց կեանքը շատ զուարժէ էր. Աթոս կ'խաղար, միշտ կ'կթաւէր։ Բայց բարեկամներէն սումանզամ փոխ չէր առնուր, թէև իր քսակն անոնց բանալու միշտ պատրաստ էր. իսկ երբ ապառիկ խաղար, միշտ առառ ժամը վեցին արթնցնել կ'տար իր պարստապահանջն որպէս զի առջի օրու ան պարաբը վհարէ։

Բորթոս իր եռանգոստ ժամերն ունէր. եթէ այն օրերը շահէր, լիբր և սնապարծ կ'դառնար. եթէ կարուսէր, քանի մ'օր լիովին աներեւոյթ կ'լինէր, և այնուհետեւ երեսն կ'ելնէր դունատ և նիշար գէմբով, բայց դրանները լեցուն ստակով։

Իսկ Արամիս երեք չէր խաղար։ Արդարեւ սախ ամենէն անշահ

Հրացանակիրն և անզգամբ կոչվածկան մ'էր : Այս աշխատելու պէտք ունէր : Երբեմն, ձաշի առևն՝ երբ ամէն մարդ, զլուխներն և խօսակցութիւնը տաքցած ատեն, կարծէր թէ տակաւին քանի մը ժամ ունէր սեղան նստելու, Արամիս իր ժամացոյցը կնայէր, շնորհալի մաղիառվ մ'ուսք կ'ելնէր, ընկերութեան հրաժարական բարեւ կ'տար, և կ'բաէր թէ պիտի երթար խղճավարի (casuiste) մը հետ առանուիլ որու հետ ժամագիր եղեր է :

Աւրիշ անզամ, իր բնակարանը կ'գտնար բնարան մը գրելու, և իր բարեկամները կ'աղաւէր որ իրեն արզելք չլինին :

Սակայն Աթոս մելամաղձու և սիրուն կ'ժպտէր, ժողիս մ'որ այնքան կ'վայլէր իր ազնիւ գէմքին, և բորթոս զինի կ'անկէր լուտալով թէ Արամիս մի միայն դեղի երեց լինելու յարեար է :

Բլանշէ, ա՛Արդանեանի սպասառորը, աղնուարար դլուխ ծուեց իր բաղդին . օրն երառն սու կ'ընդունէր իրը վարձք, և ամիս մ'ամբողջ սարեկին պէս զուարթ բնակարանը կ'զար և շատ անուշ կ'վարուէր իր ափրոջ հետ : Երբ ձախորդութեան հովե ըսկու փշել քօսուայէօրի փողոցի տան վրայ, այսինքն երբ Լուի ՓԳ-ի տուած քառուուն ուկի գահեկանը հատաւ կամ ասոր պէս բան մը, սկսաւ զանզատներ ընել, զոր Աթոս տաղտիւլի, Բորթոս անվայելու և Արամիս ծաղրելի դտան : Աւստի Աթոս խորհուրդ տուա . ա՛Արդանեանի որ այն թշուատականը նամքէ, Բորթոս կ'ուզէր որ նախ լու ծեծ մը քաշեն անոր, և Արամիս պընդեց թէ տան տէր մը միայն իրեն արտած զավեստները պէտք է լսէ :

— Դիւրին է քեզ այդպէս խօսիլ — վրայ բերաւ ա՛Արդանեան — քեզի, Աթոս, որ Կրիմօյի հետ լսիկ մնջիկ կ'ասպրիս, և անոր խօսելու արզիլած լինելով՝ անոր հետ բնաւ խօսքի չես զար, քեզի, Բորթոս, որ փառաւոր կեանք մը կ'վարես և քու Մուռգօն սպասառորիդ համար աստուած մ'ես, վերջապէս քեզի համար, Արամիս, որ միշտ քու աստուածաբանական ուսումներովդ զբաղած, քու Պազէն անուշ և կրօնասէր սպասառորիդ խորին յարդանիք մը կ'աղդես . իսկ ես որ ոչ վիճակ ունիմ և ոչ ապ-

բուսոր, ևս որ ոչ հրացանակիր և ոչ իսկ պահակ մ'եմ, ինչ  
կընամ ընել Բլանշէին սէր, ապրուափ կամ յարդանք ներշնչե-  
լու համար:

— Խնդիրը ծանրակշխու է — պատասխան տուին երեք բարե-  
կամները — անական զործ մ'է . ինչպէս կանանց նոյնպէս սպա-  
ռաւորներուն հետ վարուիլ պէտք է . պէտք է որ իսկոյն մեր  
փափաքած սահմանին մէջ դնենք զանոնք: Աւքեմն խորհեցէք:

Տ'Արդանեան մօսածեց և որոշեց Բլանշէն առ զբոշութեան  
լաւ մը կոփել, և այս որոշումն՝ ի զործ դրաւ ա՛Արդանեան խղճի  
մոսք . լաւ մը կոփելէն ետեւ պատուիրեց անոր որ տունէն շմէ ի-  
նի առանց իր հրամանին . վասն զի, յարեց նա , սպաղան ինձի  
յաջող պիտի դառնույ . լաւ աղոյն օրերու կ'սպառէմ անվրէպ :  
Աստի բաղդդ պիտի շինես եթէ ինձի հետ մնաս , և ես ալ քու  
սիրոյդ համար չեմ ուզեր որ քովէս հեռանաս և բաղդդ կորու-  
սես :

Այս ընթացքը մեծ յարդանք ազգեց հրացանակիրներուն ա՛Ար-  
դանեանի բաղդաքականութեան համար : Կոյնպէս Բլանշէ զմայ-  
լեցաւ մնաց և բնաւ երթալու խօսք չըրաւ :

Այս չորս երիտասարդները զբեթէ միօրինակ կ'ասպէին . ա՛Ար-  
դանեան որ ընաւ սովորութիւն մը չունէր , քանի որ ընկի զա-  
ւառէն կ'զար և իրեն համար լիսպին նոր աշխարհի մը մէջ կ'ընկ-  
նէր , շատ շանցաւ իր բարեկամոց բարուց ընտելացաւ :

Չմոռը ժամն ութին կ'արթնային , իսկ ամառը զբեթէ վե-  
ցին , և Պ. տը Դրէվիլի ապարանը կ'երթային զործոց ընթացքն  
ու անցախօսն իմանալու . թէ և ա՛Արդանեան հրացանակիր չէր,  
իրը այն սրտաշարժ ճշտութեամբ կ'ծառայէր . միշտ պահպա-  
նութիւն կ'ընէր , վասն զի միշտ իր ընկերակիցներուն մէկուն  
հետ կ'զանուէր երբ սա իր պաշտօնը կ'կատարէր : Հրացանակիր-  
ներուն ապարանը ծանօթ էր և ամէն մարդ զանի իբրև լաւ ըն-  
կեր մը կ'նկատէր . Պ. տը Դրէվիլ՝ որ արւածին նայուած քով ա-  
նոր արթէքը ճանչեր էր և ճշմարտապէս կ'սիրէր զանի , թագա-  
ւորին անոր զովեսար կ'ընէր անդադար :

Միւս կողմէն՝ երեք հրացանակիրները շատ կ'սիրէին իրենց նորատի ընկերը։ Այս շորս մարդիկ բարեկամութենէ և օրն երեք շորս անգամ տեսութիւն ընելու պիտոյքէն, թէ մենամարտութեան, թէ տրիչ զարծերու, թէ զուարձութեան համար, տառերի պէս իրարու ետեւէ կ'վաղէին, և միշտ այս անբաժանելիները կ'առնուէին որ Լոքսանապուրկէն Աէն-Ախլըիսի հրապարակը և Ա.իէ.օ.Գոլոնապիէի փողոցէն՝ի Լոքսանապուրկ զիրար կ'որոնէին։

Նոյն միջոցին, Պ. ար Գրէվիլի խոստումներն՝ի կատար հասնելու մօտ էին. օրին մէկը թագաւորը պատուիրեց Տէղէսար ասպետին որ ա՛Արդանեանն իրքեւ աշակերտ պահապան զօրաց մէջ ընդունի։ Տ'Արդանեան հառաջելով հազար պահապանի զգեստը, թէ և իր կենաց տառ ասրին կ'նուիրէր, եթէ հրացանակիրի վտաւակի հետ զայն փոխիւր։ Սակայն Պ. ար Գրէվիլի խօսք տուառ այս շնորհը ձեռք չըել երկու տարի աշակերտութիւն ընելէն ետեւ, աշակերտութիւն մ'որ թերեւս այնչափ չտեւէր եթէ առիթ մը պատահէր ա՛Արդանեանի թագաւորին ծառայութիւն մը մատուցանելու կամ նշանաւոր գործ մ'ընելու։ Տ'Արդանեան այս խոստումն վրաց հեռացաւ և հետեւալ օրն իսկ իր ծառայութիւնը ըսկաւ։ Այն ատեն Աթոսի, Բորթոսի և Արամիսի ընկաւ կարգը ա՛Արդանեանի հետ պահպանութիւն ընելու, երբ սա ևս պահպանութեան կ'զբաղէր։ Հետեւապէս Տէղէսար ասպետին գունդը չորս մարդ ընդունեց մէկու տեղ, այն օրն որ ա՛Արդանեանն առաջ իր մէջ։

## Ը

ԱՐՔՈՒՆԻ ՆԵՐԳ ՄԸ

Սակայն ԺՊ. Լոի թագաւորին քառառն ոսկի դաշեկանը, աշխարհիս ամեն բաներուն պէս, սկիզբ մ'ունենալէն ետեւ վերջ

ժամանեցան, և այս վախճանէն զիւր մը չորս ընկերները հեղութեան մէջ ընկեր էին: Կամ Աթոս իր ստակավը քիչ մ'ատեն իր ընկերակցացը պիտոյքը հոգաց, յետոյ Բորթոս յաջորդեր էր, և հնչպէս տովոր էին, քիչ մ'ատեն անոր անհետ լինելը տեսնելէն ետեւ՝ յաջորդը էր գեռ ևս տասն հինգ օրի շափ ամենուն տաեսար հոգալ, վերջապէս Արամիոի կարգն եկեր էր, և այս ալ իր կողմէն սիրով պէտք եղածը հոգացեր էր, և իր աստմածաբանական զրբերը ծախելով, քանի մը դահեկան ձեռք ձգելու ատիկեր էր + կ'ըսէր:

Այն ատեն՝ ըստ տովորովթեան ու տը Դրէվելի գիմեցին, և այս ալ անսոնց ամսականին թերհաշին կանխառ քիչ մը ստակ տուառ. բայց այս թերհաշին ստակը չէր կրնար բառել երեք հրացանակիրներուն, որ արդէն վճարելի շատ մը հաշիներ ունեին, իսկ չորրորդն ալ գեռ բնաւ հաշին չունէր:

Վերջապէս երբ տեսան որ բոլորովին անարծաթ պիտի մնան, յետին Ճիզ մ'ըրին և ութ տաս դահեկան ժողվելով Բորթոսին տուին որ խաղայ: Դժբաղդօրէն Բորթոսին բաղդը շրանեցան, բոլոր ստակը կորցյս, և ասկէ զատ քսան հինգ ոսկի դահեկան ևս պարտական մնաց:

Այն ատեն նեղութիւնը թշուառովթեան դարձաւ, այս անօթիներն իրենց սպասառուներն ետեւ ձգած՝ սկսան քարափներն և զօրանոցները պարտիլ և իրենց դրսի բարեկամներու միջոցաւ ճաշելու հնարը զտնել. վասն զի, ըստ Արամիոի, պարա էր բարորովթեան ժամանակ ասդիս անդին ճաշ սերմանել, ձախորդովթեան ատեն մէկ քանին հնձելու համար:

Աթոսի չորս անդամ հրաւէր եկաւ և ամէն անդամուն իր բարեկամներն սպասառուաց հետ մխասին տարաւ: Բորթոս վեց անդամ նոյն բաղդն ունեցաւ և նոյնովէս ընկերներն իրեն բաղդակից բրաւ. Արամիս ութ անդամ ճաշի զնաց: Կնչպէս որ արդէն յայսնի է, այս մարդը քիչ աղմուկ կ'ընէր այլ շատ զործ կ'տեսնէր:

Իսկ ա՛Արգանեան՝ որ գեռ ևս մարդ չէր ճանչեր մայրաքաղաքին մէջ, լոկ շուշուշի նոսիսամաշիկ մը ճարեց իր քաղաքակից

քահանայի մը տուն , և ճաշ մը՝ պահապան զօրաց դրօշակրի մը կողմէն : Տ' Արդանեան իր բանակը քահանային տարատ , որուն երկու ամփառան որաշարը լափեցին , և դրօշակրին՝ որ կտոր կտոր եղաւ իր հիւրերը դոհ ընելու համար . բայց ինչպէս որ Բլանշէ կ'ըսէր ; մարդս լոկ մի անդամ կ'ուտէ , շատ կերած ժամանակն անդամ :

Աւտոի ա՛Արդանեան շատ պղղտիկ ընկառ մէկ ու կէս ճաշ միւսն գտնելուն , (վասն զի քահանային նախաձաշիկը կէս ճաշի տեղ կ'անցնէր) իր ընկերներուն համար , Աթոսի , Բորժոսի և Արամիսի գտած ինջոյից փոխարէն : Կարծէր թէ ընկերութեան բռո մ'է , և կ'մունասր իր մանկական անկեղծութեամբն որ նոյն ընկերութիւնն ամփս մ'ամբողջ կերակրեր էր . ուստի մտայող սկսու անձանձիր աշխատիլ : Մտածեց որ չորս երիտասարդաց գաշնակցութիւնն , որոնք արիտափրատ , միբ և ձեռներէց էին , ուրիշ նպատակ ունենալ ողէսք էր քան գանդաղիուս պատյաներ , սուսերամարտութեան դասեր և փոքր 'ի շատէ մտացի խեղկատակութիւններ :

Եւ արդարեւ , իրենց ողէս չորս մարդ , ստակով և կեանքով իրարու նուիրուած չորս մարդ , միշտ իրարու նեցուկ գտնուող չորս մարդ՝ որ բնաւ չեն ընկերկիր , որ առանձին կամ խմբովին կ'զործադրեն միաբանութեամբ եղած որոշումներ , չորս բազուկներ որ չորս զլանուոր նպատակի կ'վաղեն կամ մէկ նպատակի կ'գիմն , հարկու կարող պիտի լինէին , թէ ստորերկրեայ Ճամբարվ , թէ բաց արևոտն , թէ ականի , թէ խրամատի միջոցաւ , թէ նենզութեամբ , թէ ուժով Ճամբայ մը յարդարել գէպ 'ի կէտ նպատակին , որչափ որ այս նպատակը լաւ պաշտպանուած կամ հերի լինէր : Տ' Արդանեան զարմանալով կ'զարմանար թէ ինչպէս իր ընկերներն այս բանիս վրայ չեն խորհիր :

Սակայն ա՛Արդանեան կ'մտածէր , սրտի մտօք կ'մտածէր և գլուխը կ'յոդնեցնէր ուղղութիւն մը զանելու այն միակ քառապատիկ զօրութեան որով աներկրոյ էր՝ Արքիմէտէսին փնտուած լծակին ողէս , աշխարհս սասաննել , երբ կամացուկ մը դրան զար-

կին : Տ' Արդանեան Բլանշէն արթնցուց և հրամայեց որ դժուրը բանայ :

Տ' Արդանեան Բլանշէն արթնցուց ըսելով՝ ընթերցողը չկարծէ թէ զիշեր էր կամ թէ տակալին չէր լուցեր : Աչ, գետայն ինչ ժամը չորս զարկեր էր : Բլանշէն երկու ժամ առաջ եկեր իմաց տռեր էր տիրացն որ ճաշի դայ , և այն ալ սա առածով պատասխաներ էր . « Որ ննջէ ճաշէ » . Եւ Բլանշէն կը ճաշէր քննալով :

Մարդ մը ներս մնառ , որ պարզ կերպարան և ոստանիի մը հովն տնելու :

Բլանշէն իրքն աղանդեր , կ' փափաքէր խօսակցութիւնը լսել , բայց ոստանիիը ա՛րդանեանի յայտնեց որ անոր ըսելիքը կարեւը և մուերմական լինելով՝ կ' փափաքէր առանձին խօսակցիլ :

Տ' Արդանեան Բլանշէնի ճամբայ տռու և իր այցելուն նստեցուց :

Պահէ մը լրութիւն պահէցին և նոյն միջոցին երկու մարդիկ իրարու երես նայեցան որպէս թէ ծանօթութիւն ընեն . յետոյ ա՛րդանեան ծռեցաւ տնկնդրութեան ՚ի նշան :

— Տ' Արդանեանի զովեստը լսեցի և իմացայ որ քաջարի երիտասարդ մ'է — ըստ ոստանիիը . — և իրաւամբ վայելած այս համբաւը զազանիք մ'անոր յայտնելու յորոգորեց զիս :

— Խօսէն , պարոն , խօսէ — ըստ ա՛րդանեան՝ որ բնազդումով զզաց թէ շահառէտ բան մը կայ բանին մէջ :

Ոստանիիը նորէն կանկ առառ և ապա շարունակեց .

— Կինս թագուհոյն քով կտաւագործ է , պարոն , և ինքը քիշ շատ խոհեմ և զեղունի : Գրեթէ երեք տարի կայ որ զիս անոր հետ կարգեցին , թէ և պղտիկ տացուածք մ'ոնի , վասն զի՞ ո . ար լա Բօրդ , թաղուհոյն լօգիկապեար , անոր կնքահայրն է և զանի կ'ողաշտապանէ . . . .

— Լաւ որեմն , պարոն — ըստ ա՛րդանեան — վեշջը :

— Լաւ — վրայ բերան ոստանիիը — լաւ , պարոն , իմ կինս երէկ առառու . իր աշխատելու ոենեկէն ենելու առեն՝ առ և անդեցին :

— Եւ ով առեանդէց կինդ :

— Ֆիշտ չդիմեմ , պարոն , բայց մէկուն վրայ կասկած ունիմ :

— Եւ ով է կասկածած մարդդ :

— Մարդ մ'որ շատ ատենէ վեր անոր ետեէն ընկեր էր :

— Կոնդ :

— Բայց Տշմարիալ կ'ուղեն , պարոն — շարայարեց ոստանիլը

— Համոզուած եմ որ այս բանին մէջ առելի քաղաքականութիւն կայ քան թէ սէր :

— Աւելի քաղաքականութիւն քան սէր մի — վրայ բերաւ ա՛Յը անեան մօտախոհ երեսով մը — որո՞ւ վրայ կ'կասկածիս :

— Զգիտեմ թէ հարկ է յայտնել քնզ կասկածելի մարդը . . . :

— Պարոն , սէտք ե դիմել որ ես ամենեն բան մը չեմ խընդիր քենէ , ևս : Դու անձամբ եկար տունս . դու ըստի ինձ թէ զաղանիք մ'ունիս ինձ ծածկապէս առանդելու : Աւստի ողածիու պէտ շարժէ , ժամանակ ունիս քաշուելու :

— Ոչ , պարոն , ոչ , դու պարկեշտ պատանի մը կ'երևս և քու վրադ վստահութիւն սփափի ունենամ : Աւստի կարծեմ թէ կինա իրեն յատուկ սիրային զործի մը համար շառեանդեցին , ոյլ իրենց բարձր տիկնոջ սիրահարութեան մը համար :

— Ահ , ահ , արգեօք ոյուա - Դրասիի տիկնոջ սիրահարութեան համար է — ըստ Տ'Յը անեան , որ իր խօսակցին առ ջեւ արքունի դործոց հմուտ երեխլ կ'ուղեր :

— Աւելի բարձր տիկին մը , պարոն , աւելի բարձր :

— Միթէ տիկին տէկիլյօնն է :

— Աւելի բարձր :

— Տիկին Շէվոէսկ :

— Աւելի բարձր , շատ աւելի բարձր :

— Միթէ տիկին . . . — ա՛Յը անեան կանկ առաւ :

— Այս , պարոն — պատահուանեց ահարեկ ոստանիկն այնպիսի ցած ձայնով մ'որ հաղին թէ կարող եղաւ լսելու :

— Եւ որո՞ւ հետ :

— Որո՞ւ հետ կրնայ լինիլ , եթէ ոչ . . . զքախն հետ :

- զ. քարին :
- Այս, պարոն — պատասխանեց ոստանիկը, իբ ճայնին առելի խուլ հնչին մը տալով :
- Բայց ուսկից իմացար դու այս բաներս :
- Ահ, ինչպէս իմացայ մի :
- Այս, ուսկից իմացար : Կէս վատահութիւնն չեմ ընդունիր:
- թշու ոչ կ'հասկնաս բաելիքս :
- Կայն իսկ կինս իմացոց ինձ այս բանը, պարոն :
- Այս մի դիտէ ու որմէ :
- Ու, առ լա Բօրդի միջոցաւ : Միթէ չըսէ՞ քեզի որ կինս  
ու, առ լա Բօրդի սանն էր, և ու, առ լա Բօրդն ալ թագուշ  
հայն մաերիմը : Լաւ, ու, առ լա Բօրդ Նորին վեհափառուս  
թեմն մօս զրեր էր զանի ուրաքն զի մը խեղչ թագուհին զանէ  
վատահելու անձ մ'ունենայ, քանի որ թաղտուրը զանի երեսի  
վրայ ձգեր, կարտինալն անոր զլու իր լրտեմներ դրեր, և ա-  
մենուն կողմէն մատնիչներով պաշարուեր էր :
- Հա, հա, ահաւասիկ ինդիրը պարզուելու վրայ է — ը-  
ստ ա՛ւրդանեան :
- Երէ չորս օր կայ որ կինս եկաւ, պարոն . շարաթն երկու  
անդամ՝ դալ զիս աեւնելու պարտաւոր էր, այս պայմանն ունէ-  
ինք . վասն զի, ինչպէս որ պատիւ ունեցայ քեզ ըսելու, կինս  
զիս շատ կ'սիրէ, ուստի կինս եկաւ և զաղունի յայտնեց թէ այս  
պահուս թագուհին մեծ երկիրդներ ունի :
- Իբա՞ :
- Այս, ու, կարտինալն, ինչպէս որ կ'երեի, առաջուանէ-  
աելի անոր եռեն ընկեր կ'հալածէ : Զիրնար ներել անոր կա-  
քաւին պատմութիւնը : Կաքաւին պատմութիւնը դիտես :
- Կ'հարցնես — պատասխան տուաւ ա՛ւրդանեան, թէ և ի-  
րօք բան մը չցիտէր, բայց ինքզինքին ամեն բանի աեղեակ ցո-  
յնել կ'ուղէր :
- Այնպէս որ հիմակ ատելութիւն չո՞նի, այլ գըշմինդրու-  
թիւն ունի կարտինալը :

- Իրան :  
 — Եւ թագուհին կարծէ թէ . . . .  
 — Լաւ , ի՞նչ կ'կարծէ թագուհին :  
 — Կ'կարծէ թէ ու . տը Պլքինկչէմ դքսին իր կողմէ զիր գրուած է :  
 — Թագուհւոյն կողմէ :  
 — Այս , Բարիղ կանչելու մտօք , և երբ մի անդամ Բարիղ զայ , ծուղակը պիտի նետեն :  
 — Կրող , բայց քու կինդ , պարսն , ոյս գործին մէջ ի՞նչ մտաւ ունի ?  
 — Գիտեն թէ թագուհւոյն անձնուեթէ , և կ'ուզեն կամ տիրուհին զանի զատել և կամ Նորին վեհափառութեան զադանիբը խոստովանելու ստիպել , կամ զանի հրապորել որպէս զի իրեն լրտեսուհի մը գործածեն :  
 — Հաւանական է — ըստ ա'Արդանեան . — բայց միթէ կը հանչես զանի առեանդող մարդը :  
 — Քեզի ըսի որ կարծեմ զանի հանչել :  
 — Ի՞նչ է անունը ?  
 — Ընունը չդիտեմ . սա միայն զիտեմ որ կարտինալին մէկ արրանեակն է , անոր կոյր գործակատարն է :  
 — Բայց տեսած ես անշուշտ :  
 — Այս , օր մը կինս զանի ցցոց ինձ :  
 — Միթէ նշան մ'ունի՞ իր վրայ որմէ դիւրին լինի զանի հանչել :  
 — Ո՛չ , անշուշտ , աղնուաղէմ իշխան մ'է , մե մազ , թուխ գոյն , սուր աչք , սպիտակ ակուաներ և քոնքին վրայ սպի մը անի :  
 — Քունքին վրայ սպի՞ մը — զուեց ա'Արդանեան — և ասկէ դամ՝ սպիտակ ակուայ , սուր աչք , թուխ երես , ու մազ և վէս կերպարան . Տիշտ Մէօնի մարդս է այն :  
 — Քու մարդդ է , ըսիր :  
 — Այս , այս . բայց ասի գործին վաստ մը չունի : Ո՛չ , կ'սխաւ

լիմ, ընդ հակառակն՝ զործը շատ կ'պարզուի եթէ քու մարդի միանգամայն խմս լինի. մեկ հարուածով երկու վրեժ պիտի լուս ծեմ, ահաւասիկ խնդիրը. բայց ո՞ւր զանելու է այն մարդը:

— Չդիտեմ:

— Միթէ անոր բնակովնեան վրայ տեղեկութիւն մը չունի՞ս: — Ամենաքին, օր մ'օր կինու Լուսը կ'առնէի, ներս մտնելու պահան, ևս դուքս կ'ելնէր, և զանի ինձի ցցուց:

— Կրադ, կրադ — մրմնաց ա'նրդանեան — այս ամեն ըստածք սարտամ բաներ են, ովք իմացոց քեզ կնոջդ առեանդը,

— Ո! աը լու Բորդ:

— Միթէ մանը պատճեց քեզի զործը:

— Ուշ, շատ բան չգիտեր:

— Ես միթէ ուրիշ կողմէ բան մը չիմացա՞ր:

— Այո, ընդունեցայ . . . :

— Ի՞նչ:

— Բայց չգիտեմ թէ արդեօք մեծ անխոհեմութիւն մը կ'ընել:

— Դարձեալ նոյն բանը կ'կըկնես. սակայն պէտք է զիտել տամ՝ քեզ որ այս անգամ եթէ զործը պահել անգամ ուղես, շատ ուշ է:

— Ես այլ չեմ պահեր, թշուառական — դոչեց ոստանիկը լուսալով որպէս զի զբուի: — Սակայն, Պօնասիկօի խօսքս խօսք . . . :

— Միթէ Պօնասիկօ է անոնդ — ընդմիջեց ա'նրդանեան:

— Այո, այս է անոնս:

— Ուրեմն Պօնասիկօի խօսքս խօսք կ'ըսէիր, ներէ եթէ ընդմիջեցի քեզ. բայց ինձ այնպէս երեցաւ որ այդ անոնը պիտի զիտնամ:

— Ըստ կարելի է, պարոն: Ես եմ տանտէրու:

— Համ, համ — ըրաւ ա'նրդանեան կ'ու մ'ուոք ելնելով և բարե տալով — զո՞ւ ես իմ տանտէրս:

— Այո, պարոն, այս: Եւ որովհետեւ երեք ամսէ վեր տունս կ'ընակիս և անտարակոյս մեծ մեծ զբաղմունքով պաշարուած՝ տան

վարժքով վճարելու մոռցած ես, որովհետև, կ'ըսեմ, պահ մը  
քեզի նեղութիւն շատի, մտածեցի որ իմ այս փափկութիւնն կը  
յարջես:

— Ի՞նչպէս, իմ սիրելի ու, Պօնասիկօ — վրայ բերաւ ա՛Ար-  
դանեան, — չա առ շամ շնորհապարտ եմ քեզ այդ ընթաց-  
քի համար, և թէ, ինչպէս որ ըսի, եթէ կարող եմ քեզի  
ծառայեր բանի մը մէջ . . . :

— Կ'հաւտամ՝ քեզ, պարոն, կ'հաւտամ, և ինչպէս որ ես ալ  
պիտի ըսէի, Պօնասիկօի ալ! ո խօսքս խօսք, կատարեալ վստա-  
հութին ո նիմ քու վրադ:

— Ա թեմն սկսածդ լմնցուր նայիմ:

Ռոտանիկը գրապանն մտութիւն մը հանեց և ա՛Արդանեանի ներ-  
կայեց:

— Կամնակ մը — ըստ պատանին:

— Այս առառ ընդունեցայ զայն:

Տ՛Արդանեան զայն բացաւ, և որովհետև մութնալու մօտ էր:  
պատահանին մօտեցաւ: Ռոտանիկն անոր ետեէն զնաց: Տ՛Ար-  
դանեան կարդաց.

« Կինդ մի փնտոեր, քեզ պիտի դարձնենք երբ անորմէ պէտք  
չունենանք: Եթէ դանի դանելու համար հնար մը մտածես,  
դիտցիր որ կորսուած ես »:

— Ահա հաստատական վճիռ մը — շարունակեց ա՛Արդանեան  
— բայց դարձնեալ սպառնալիք մ'է:

— Այս, բայց այս սպառնալիքն ինձ ահ կ'ազդէ. Ես, պա-  
րոն, զի՞ն որական չեմ, և Պատղիյէն կ'երկնչիմ:

— Հըմ — ըրաւ ա՛Արդանեան. — բայց իմ փոյթս չէ բնաւ  
Պատղիյը: Եթէ լոկ սրի հարուած մը ողէտք լինէր, դարձնեալ  
հոգ չէր:

— Սակայն, պարոն, այս պարագայիս մէջ յոյսս վրադ դըմը  
էի:

— Իրան:

— Քեզ անդադար փառաւոր հրաշանակիրներով շրջապատեալ

անեանելով, և դիմեալով որ անոնք Պ. ուշը Դրեվելին կ'վերաբերին, հետեւապէս Պ. կարտինալին թշնամինելին էին, մոտածեր էի որ դու և բարեկամներդ, մեր թարուհոյն իրաւունքը պաշտպանելն զատ՝ շափաղանց պիտի հընուիք նորին բարձրութեան խաղ մը խաղալով:

— Անշուշտ:

— Ասկէ զատ՝ խորհեցայ որ ինձի եռամսեայ տան վարձ պարաւնիս, ինչպէս որ արդէն ըսի:

— Այս, այս, արդէն այդ պատճառդ մէջ բերիր և զայն շատ ընտիր կ'զտնեմ:

— Ասկէ զատ՝ միաբա դնելով որչափ որ տունս բնակելու պատռես զիս, բնաւ դալ վարձքի վրայ շխսնիլ . . . :

— Շատ լու:

— Ասոր հետ նաև, եթէ հարկ կայ, որոշած լինելով յիսունի չափ սակի դահեկան տալ քեզի, եթէ այս պահուս նեղութեան մէջ ես, թէե չեմ կարծեր:

— Սքանչելի է . ուրեմն դու հարուստ ես, իմ սիրելի Պ. պօնասիէօ:

— Հանգիստ ապրուստ մ'ունիմ, պարոն, և ոչ ուրիշ բան մը: Փերեզակութիւն ընելով և մանաւանդ ժան Մօքէ երեւելի նաւապետին ուղևորութեան զործին մէջ քիչ մը ստակ շահուտալով երկու երեք հազար սկուդի մօս եկամուտ մը շննեցի, այնպէս որ, դիւրին է հասկնալ, պարոն . . . : Ա'հ, բայց . . . — զուեց սստանիկը:

— Ի՞նչ կայ — հարցուց ա'Արդանեան:

— Ի՞նչ կ'տեսնեմ վարը:

— Ուր:

— Փաղոցը, պատռհանիդ դիմացը, սա դրան որմածակին մէջ, մարդ մը կայ վերաբերուով փաթթուած:

— Նոյն ինքն է — զուեցին միաբերան ա'Արդանեան և ոստանիկը, իւրաքանչիւրը նոյն միջոցին իր փնտուած մարդը նանելով:

— Ա՞չ, այս անգամ — դոչեց տ' Արդանեան իր սրբն վաղեւլով — այս անդամ ձեռքեւ չպիտի փախի:

Եւ իր սուրը պատենէն հանելով սենեկին դուրս վազեց:

Սանդղին վրայ Ամուսին ու Բորթոսին հանդիսեցաւ որ զինքը տերմանելու կ' գային: Երկու քն ալ քաշուեցան, և տ' Արդանեան նետի ոքեւ անոնց մէջն սրացաւ անցաւ:

— Է՛ս, մեղ նայէ, ո՞ր կ' վազես այդպէս — պառացին երկու հրացանակիրներն ի միասին:

— Մէջնի մարդը — պատասխանեց տ' Արդանեան և աներեցի եղաւ:

Տ' Արդանեան քանի մ' անդամ՝ իր բարեկամուց պատմեն էր անծանօթին հետ ունեցած արկածը, նոյնպէս գեղանի ողևորուհին երեցին որուն այն մարդը յանձնած պիտի լինէր այն խիստ կարեռը նամակը:

Աթոսին կարծիքը սա էր որ տ' Արդանեան իր նամակը կույին մէջ կորուսեր էր: Ըստ անօթին այէս ազատորդի մը՝ տ' Արդանեանի ըրտած նկարագրին նայելով ազատորդի մը կրնայ լինիլ, և ազատորդին նամակ մը զողնալու վատութիւնը չէր կրնար դոր ծել:

Բորթոս այս բանիս մէջ սիրային աեստ թիւն մը կ' տեսնէր, որուն համար ամիկին մ' իր ասպետին հետ, կամ՝ ասպետը տիկնոց հետ ժամանիր եղած պիտի լինէին: և այս աեստ թիւնս վրդոված պիտի լինէին տ' Արդանեանի ներկայութիւնն ու իր գեղին ձին:

Արամիս ըսեր էր թէ այս տեսակ բանէր խորհրդառոր լինելով, լաւ ադոյն էր անոնց խորը շթափանցել:

Աւստի տ' Արդանեանի թիւնէն փախած քանի մը խորեն հառկան թէ ինչ էր ինայիքը, և մասած ելով որ տ' Արդանեան իր մարդը զանելէն կամ աչքը հեռացնէլէն եւսեւ՝ իր տանը պիտի դառնայ հարկաւ, իրենց ճամբան շարունակեցին:

Երբ տ' Արդանեանի խորը մնան, սենեակը մարդ չկար, տան տէրը՝ վախնալով անշուշտ երիտասարդին և անծանօթին մէջ

Արաւաշելիք կուտին հետեւանքէն՝ խոհեմութիւն սեպեր էր խոյս  
տալու, ա՛Արդանեանի վառվուոն բնառորութեան նկարագիրն ա-  
նոր բերնէ ն լսելուն համար :

## Բ

ՏԵՐԴԻՆԵՐԸ ԱՌԱԿՐՈԳԻՒՄ

Խնչպէս որ Աթոս և Քորթոս զոշակեր էին՝ ա՛Արդանեան  
կէս ժամէն գարձաւ, Այս անզամ ալ իր մարդը ձեռքէն փա-  
խոցեր էր, որ կարծես թէ հմայտ թեամբ մ'աներեսյթ եղեր էր,  
Տ'Արդանեան սուր 'ի ձեռին՝ շրջակայ փողոցները վազեր բայց  
մարդ մը չէր զտեր որ իր փնտուած անձին նմանի. վերջապէս  
վերադարձեր էր ընելու բան մը՝ զոր թերես սկիզբէն ընել պէտք  
էր, այսինքն զարնել այն դուռն որուն կոթներ էր անծանօթը.  
բայց պարագ տեղը տաս տամն երկու անզամ զրան ուռը հետ-  
զհետէ զարկեր էր, ոչ ոք պատասխան տուեր էր. և դրացի-  
ներն որ ազմուկը լսելով իրենց տան սեմն իջեր կամ պատու-  
հանէն զլուխնին հաներ էին, անոր հաւաստեր էին որ այն  
տունը՝ որուն բոլոր լուսարանները փակուած էին, ոչ ոք կը  
ընակեր վեց ամսէ 'ի վեր :

Մինչդեռ ա՛Արդանեան փողոցները կ'վազվզէր և գոները կը  
զարնէր, Արամիս իր երկու բարեկամաց եկեր միացեր էր, այն-  
պէս որ ա՛Արդանեան տունը դառնալուն՝ իր ընկերները խըմ-  
բուած զտաւ :

— Լաւ ուրեմն — ըսին երեք հրացանակիրները ա՛Արդանեանի  
ներս մանելը տեսնելով որուն ճակտէն քիրտը կ'հոսէր և բար-  
կութենէ այլ յայլմէ եղեր էր :

— Էաւ — զոչեց տ' Արդանեան սուրբն անկողնին վրայ նետելով — պէտք է որ այն մարդը նոյն ինքն սատանան լինի . Ճիւաղի պէս , ստուերի պէս , ուրուականի պէս աներեցին եղաւ :

— Միթէ ուրուականներու կ' հաւատաս — հաշցոց Աթոս Բորթոսին :

— Ես մինակ տեսածիս կ' հաւատամ , և որովհետեւ բնաւ ուրուական շեմ տեսեր , հետեւապէս չեմ հաւատար :

— Աստուածաշոնչը — ըսաւ Արամիս — կ' պատուիրէ մեզ հաւալու . Սամուկը ստուերը Սաւողին երեցաւ , և հաւատոյ մաս մ' է այս , Բորթոս , և պիտի ցաւիմ եթէ այս կիսին վրայ կասկած տեսնեմ :

— Ինչ և է , մարդ կամ սատանայ , մարմին կամ ստուեր , խար կամ իրութիւն լինի , այն մարդն իմ պատուհաս լինելու ծնած է , վասն զի , անոր փախուառը , պարոններ , ուրանչելի գործէ մը կ' ընէ մեզ , զործ մ' որով հարիւր ունի դահնեկան , թերեւ աւելի պիտի շահէ ինք :

— Ի՞նչպէս — ըսին բորթոս և Արամիս միաձայն :

Իսկ Աթոս՝ իր համբակաց դրութեան հաւատարիմ՝ բաւական համբաց տ' Արդանեանի հարց ու փոքք ընել ակնարկութ :

— Բլանչէ — ըսաւ տ' Արդանեան իր սպասարին , որ նոյն պահուն կիս բաց դռնէն զլուխը ցցց տալով կ' աշխատի ք եղած խօսակցութենեն քանի մը կտոր բան քաղցլ — ու . Պօնասիք օ տան տիրածո խոցն ի ջնր և ըսէ անոր որ մնզի վեց շիշ պաժանսիի դիմի դրկէ , այս դիմին ամեննէն աւելի կ' սիրեմ :

— Ա՛ս , զարմանք . ուրիշն տան տէ բդ քեզի վարկ բացած է հարցոց բորթոս :

— Այու — պատասխանեց տ' Արդանեան — այսօրուանէ սկսելով վարկ ոնիմ անոր մօս , և անչող եղէք , եթէ զինին լաշգանելք , կրնանք ուրիշ զինի մ' ուզել :

— Պէտք է ՚ի բարին դործածել և չէ թէ ՚ի շար — ըսաւ Արամիս վարդապետական կերպով մը :

— Ես միշտ ըսեր եմ որ տ' Արդանեան մը չորսին ամենէ չ:

կարմիր գլուխն է — մըմուց Աթոս, որ այս կարծիքը բացատքեւն ետև՝ որուն ա՛Արդանեան բարեւ մը տալով պատասխանեց, իր սովորական լոռ թեան մէջ ընկաւ :

— Բայց վերջապէս, նայինք, ի՞նչ է ինչիքը — հարցոց Քորթոս :

— Այս — ըստ Արամիս — յայտնէ մեղի այդ դադամիքը, սիրելի բարեկամ, միայն թէ կնկան մը պատիւը այն զործին մէջ բան չոննայ, եթէ իրաք այնպիսի բան մ'է, առելի լաւ կընես գաղտնիքդ քեզի պահել :

— Ինչող եղիք — պատասխանեց ա՛Արդանեան — իմ ըսելիք զործիս մէջ և ոչ մէկուն պատիւն արաւ կընայ ընդունիլ :

Եւ այն առեն բառ առ բառ պատմեց իր բարեկամաց իր և առն տիրոջ մէջ անցածը, և թէ ինչպէս արգոյ առն տիրոջ կինն առեանգող մարդը նոյն խակ այն մարդն էր որուն հետ Քրան-Մէօնիքի պանդոկին մէջ կոիր ըբեր էր :

— Այդ գէշ զործ չէ — ըստ Աթոս, իրը զիտակ զինին ձաւշակելն և դլիսի նշմայրով մը զայն շատ լաւ զանելը յայտնեւէն ետեւ — և կարելի է այն բարի մարդէն յիսուն վաթուոն ոսկի քաղել : Կ'մասյ որոշել թէ յիսուն վաթուոն ոսկի համար չըրս զլուի վլուանի զնել կ'ամէ՛ արդեօք :

— Բայց միտ զրեք — զուեց ա՛Արդանեան — որ այս զործին մէջ կին մը կոյ, առեանց եալ կին մը, կին մ'որուն կ'ոսկունան անշուշտ, կին մը զոր թերեւս կ'տանջեն իր սիրուհոյն հաւատարից մնալուն համար :

— Զոյց եղիք, ա՛Արդանեան, զոյց եղիք — ըստ Արամիս, — կարծեմ թէ քիչ մ'եւելոք կ'տաքնաս ոլոնափէօ տիկնոջ մինչակին համար : Կինը մեր կորսանեան համար ռանդուած է, և մեր բոլոր աղեաքն անոր ձեռօք մեղի կ'հասնին :

Աթոս՝ Արամիսի այս վճռայն վրայ, ունքը պուստց և շորեթը խածաւ :

— Ունասիթօ աթիկոջ վիճակը հոյ չեմ ըներ — զուեց ա՛Արդանեան — այլ թագուհին կ'մուտեմ, որ թագաւորին կողմէն

Երեսի վրայ ձգուած , կարտինալին կողմէ հարածուած է , և զը շուշի ու իր բարեկամոց շուխները հետ զհետէ կ'ընկնին :

— Ենչ . համար Սպանիացիքն ու Ընկլիացիքը կ'սիրէ , մնիք որ զանունք սաստիկ կ'առանք :

— Սպանիա իր հայրենիքն է — պատասխանեց տ'Արդանեան և իր աէրն առ Սպանիացիս բնական բան մ'է , քանի որ իր բնիկ երկրն զատակինքն են : Խոկ միւս յանդիմանութեան մասին՝ կ'ըսեմ , ի լրոց իմացած եմ որ չէ թէ անկլիացիներն այլ անկլիացի մը կ'սիրէ :

— Ե՞ս , հա ասա վկայ — ըստ Աթոս — ով աք է խոստովանիլ որ այս անկլիացին արժանի էր սիրուելու : Երբէք անորդէմքին որևէ աղջուական դէմք մը տեսած չեմ :

— Ասկէ զատ՝ ոչ որ անոր որէս կ'հաղոի — ըստ Բարթուս :

— Լուգրն էի իր մարդարիտները թափան օրը , և արդարի ես ալ երկու հատ շետնէն տոի և ամէն մէկը տաս ուկի զահեկան ծափուցի : Խոկ դո , Արամիս , միթէ կ'հանչես զանի :

— Ձեղի չափ կ'հանչեմ զանի , պարոններ , վասն զի Ամինի պարտիզնն մէջ զանի բռնողներէն մին ես էի , և այն տեղ մտներ էի թագուհւոյն ախոռոապես ո՛ . առ Իմուտանուի միջոցաւ : Այն առեն կղերանոցն էի և այս դէպքը շատ զառն երեցաւ ինձ թագաւորին նկատմամբ :

— Բայց դարձեալ այդ պատճառ չէ ինձի համար — ըստ տ'Արդանեան — Պլքինկհէմի դաքան տակելու , և եթէ դիմացի թէ մէր կ'զանուի , անոր ձեռքէն կ'բռնէի և թագուհւոյն մօտ կ'տանի : Եթէ ոչ որիշ մտօք , դէ թ ո՛ . կարտինալու կատղեցրնելու համար . վասն զի մը ճշմարիս , մը միակ , մը մշտակաց թշուամին կարտինալն է , պարոններ , և եթէ կարենանք միջոց մը դանել և անոր անազորոյն խաղ մը խաղալ . կ'խոստումանիմ որ մահս աչքս կ'առնում և անոր մէջ կ'մտնեմ :

— Ո թեմն — վրայ բերաւ Աթոս — վերեկզմին ըստ քեզ , տ'Արդանեան , թէ թագուհին կ'մտածէ որ սուտ հրաւէր մի կելով Պլքինկհէմ այս տեղ բերել տոեր են :

- Աշ միայն կ'մտածէ այլ և ահ ու դոզի մէջ է :
- Կեցիր նայինք — ըստ Արամիս :
- Ի՞նչ է — հարցոց Բօրթոս :
- Շաբանակէ միշտ, այլ և այլ պարագաներ միտքս բերելու կ'ջանամ :
- Եսկ հիմակ ես հաւասար եմ — ըստ ա՛Արդանեան — որ թագուհոյն այն կնիան առեւանցը մեր ախնարկած դէպքերուն չետ վերաբերութիւն ունի, և թերեւս ո՛ւ, որ Պլքինկչէ մի ներկայութեան հետ ՚ի Բարիզ :
- Կապօնիք շատ լսու կ'խորհի — ըստ Բօրթոս հիացմամբ :
- Շատ կ'ախորմիմ անոր խօսակցութիւնը մտիկ ընկել — ըստ Ամոս — իր զաւառական բարբառն ինձ զտարձութիւն կը պատճառէ :
- Պարոններ — զբայ զերտ Արամիս — սա ըսելիքս մտիկ բրեք :
- Նայինք Արամիս ի՞նչ պիտի ըսէ — յարեցին երեք բարեկամները :
- Երեկ աստտածարանութեան զիտուն վարժապետի մը քնը կ'զանուէի, ինչպէս որ երբեմն անոր հետ կ'աեսնուիմ իմ ուսմանցս համար . . . :
- Աթոս մարտեցաւ :
- Ամայի Շաղ մը կ'բնակի նա — շաբայարեց Արամիս : — Իր հաշակն, իր պաշտօնն այսպէս կ'պահանջեն : Արդ՝ իր տունէն ելուելու պահուած . . . :
- Այս անգ Արամիս կանկ տուաւ :
- Վերջը — հարցոց յին իր ունկնդիրները — այն պահուն որ անոր տունէն դուրս կելնելիր :
- Կարծես թէ Արամիս ինքնն իր զբայ ձիգ մ'ըրաւ, իրը մարդ մ'որ կատարեալ տուաւ մը հիւսելու ժամուն անսկնկայ արդելք մ'առջեք կ'ելնէ . բայց իր երեք ընկերաց աշխն իր զբայ ուեռած էին, իրենց ականջը բաց կ'սպասէին, և կարելի չէր խօսքը կտրել :

— Այն վարժազետը քեռաղջիկ մ'ունի — շարունակեց Այրամիս :

— Ա՛հ , քեռաղջիկ մ'ունի — ընդմիջեց Բորթոս :

— Խիստ յարդելի տիկին մ'է — ըստ Առամիս :  
Երեք բարեկամներն սկսան ծիծաղիլ :

— Ա՛հ , թէ որ այդպէս ծիծաղիք կամ կասկածիք — վրայ բերաւ Արամիս — բան մը չպիտի իւնանաք :

— Մահմէտականաց պէս հաւաքառաօր և զերեզմանի պէս համբ ենք — ըստ Աթոս :

— Աւրեմն կ'շարունակեմ — վրայ բերաւ Արամիս : — Այն աղջիկն երբեմն իր մօրեղպայրը տեսնելու կ'զայ . արդ՝ երեւ կ'ալ իմ զտնուած ժամանակս անդ էր , դիմուածով , և պէտք եղան առ բաղաքավարութեան զանի կոտքն առաջնորդել :

— Ա՛հ , կանք մ'ունի ուրեմն աստուածաբանին քեռութուսորը — ընդմիջեց Բորթոս , որուն մէ կ պակասութիւնն էր լեզուաղարութիւնը — իրաւի ազւոր բարեկամնէի մը զաեք ես , բարեկամ :

— Բորթոս — վրայ բերաւ Արամիս — արդէն քանիցս ըսած եմ քեզի որ չափաղանց անխոհեմ ես , և ասով կանանց մօտ չես յաջողիք :

— Պարաններ , պարաններ — զուեց ա'Արդանեան , որ արկածին էութիւնը կ'ըմբռնէր — ինչիրը շատ ծանրակշու է , ուստի նայինք որ՝ եթէ հնար է , կատակ շընենք : Ըաբունակէ , Արամիս , շարունակէ :

— Յանկարծ մեծահասակ , թիւերես , աղնուականի ձեւը ունեցող մարդ մը . . . Ճիշտ քու մարդո դ տեսակէն , ա'Արդաննեան . . . :

— Կարելի է նոյն ինքն է — ըստ ա'Արդանեան :

— Կարելի է — շարայարեց Արամիս . . . — Ինձի մօաեցան հեան ունենալով հինգ վեց մարդիկ որ տաս քայլ հեռուէն անոր կ'հետեւին , և խիստ մարդավար ձայնով մ'ըստ ինձ . և Պարսոն զաքս , և զու , տիւին , յ յարեց նա խօսքն ողղելով ոյն կնկան որ թես մտեր էր . . . :

— Ամուսածաբանին քեռաղջկան :

— Առողջիւն, Բորթոս — ըստ. Աթոս — անտանելի ես :  
 « — Շնորհ ըրեք այն կառքը մանելու, և առանց թեթև ընդու  
 յիմութիւն մը, թեթև շատ կ մը հանելու մաէք » :  
 — Կարծած է որ գոյ Պրքինկ հէմն ես — զոչեց ո՞ւ Արդանեան :  
 — Ես ալ այդորէս կարծեմ — պատասխանեց Արամիս :  
 — Հասկա այն տիկինն — հարցոց Բորթոս :  
 — Կարծեր է թէ թառհին է — ըստ. ա՞րդանեան :  
 — Ճիշտ է — պատասխանեց Արամիս :  
 — Կարծոնը սատանայ մ'է — զոչեց Աթոս — ամէն քարի  
 տակէն կ'ելնէ :  
 — Այս իրաւ է — ըստ. Բորթոս — որ Արամիս զեղաղէմ  
 դքսին հասակն ու կարտածը փաքր ինչ ունի, բայց սակայն կ'ես  
 ըսկ ինձ թէ հրացանակրի հառատը ... :  
 — Ահադին վերարկո մ'ունէի — ըստ. Արամիս :  
 — Ծուլիս ամսուն, ինչ խելք — ըստ. Բորթոս . — միթէ  
 վարդապետը կ'վախանայ որ չհանչցուիս :  
 — Շատ հաւանական է — ըստ. Աթոս — որ լրտեսը հասա  
 կէդ խարստած է, սակայն դէմքդ ... :  
 — Մեծ դլուարկ մ'ունէի դլուիս — ըստ. Արամիս :  
 — Ահ, Աստուած իմ — զոչեց Բորթոս — այդ որչափ ըզ  
 դուշութիւններ կ'առնուս աստուածաբանութիւն սորվելու համար :  
 — Պարոննենը, պարոննենը — ըստ. ա՞րդանեան — զոր խօս-  
 քեր ընճլով յամանակ չանցնենք . ասդին անդին ցրուինք և փե-  
 րեղակին կինը փնտռենք, անոր մէ ջն է նենդին բանալին :  
 — Այսպիսի նուաստ աստիճանի կինն մը փնտռենք, ինչ կ'ը-  
 սես, ա՞րդանեան — յարեց Բորթոս և քանահական կերպով  
 մ'իր շրմերն երկնցուց :  
 — Տը լա Բօրլին սանն է այն, թագուհոյն մտերիմ ապա-  
 սուհին : Միթէ արդէն չըսի ձեզ, պարոններ : Աարելի է Կո-  
 րին վեհափառութեան բանին ձեռք չտայ այս անդամ ստորին  
 գասուն մէջ նեցուկ փնտռել : Բարձր զլուխները հեռուէն կ'նըշ-  
 մարտին . և կարսինալն ալ հեռատես է :

— Ասու ուրեմն — ըստ Բորթոս — նախ փերեղակին հետ զին կարէ, և լու դին մը :

— Անօգուտ է — ըստ ա' Արդանեան — վասն զի կարծեմ որ եթէ մզի չվճարէ ուրիշ կողմէ սատկ պիտի առնունք :

“Նոյն պահունակ տանը զին վրայ որոտալի ուստի ձայններ լսուեցան, գուռը զդրումամբ բացին և հեք փերեղակը վազեց այն սենեակին ուր հրացանակիրները իւրեցըի նատեր էին :

— Ահ, պարուներ — դոչեց նա — յանուն Աստուծոյ, ազատեցէք զիս, աղասեցէք, Աւորը չորս մարդ եկեր զիս ձերբակալ ընել կ'ուղեն, աղասեցէք զիս, աղասեցէք :

Բորթոս և Արամիս ուսիր ելան :

— Քիչ մը կեցիք — դոչեց ա' Արդանեան, և նշան ըրատ անոց որ կէս մը քաշուած սուրերը պատեանը դնեն — քիչ մը կեցիք, այս տեղ քաջո թիւնը սատկ չըներ, խոհեմութիւն պէտք է :

— Սակայն — դոչեց Բորթոս, չպիսի թողոնք որ . . . :

— Թողէք որ ա' Արդանեան չիտցած ն ընէ — ըստ Աթոս — այս է մեր մէջ, ինչպէս որ արդէն ըսի, ամենէն կորովի գլուխը. ես ահա իմ մասիս կ'ըսեմ որ անոր պիտի հնաղանդիմ: Դու, ա' Արդանեան, ուզած գ ըրէ :

“Նոյն պահուն չորս պահակները նախառենեկին զուն երեցան; և սուրեր քովիտի կախած չորս հրացանակիրները տեսնելով կանգուն, առելի յառաջ անցնելու վարածեցան :

— Ներս մտէք, պարուներ, ներս մտէք — պոռաց ա' Արդանեան — այս տեղ իմ տունս էք, և ամենքնիս ալ թաղաւորին և ոլ. կարտինակին հաւատարիմ: Ճառաներն ենք :

— Ուրեմն, պարուներ, չէք զիմադրեր անշուշտ եթէ մեր առած հրամաններն 'ի զործ զնենք — ըստ դասակին զլիսաւորն երեցող անձը :

— Ընդ հակառակն, պարուներ, և եթէ հարկ լինի, ձեզի օդնելու պատրաստ պիտի զանուինք :

— Բայց ասի ինչ կըսէ — քըթմաջեց Բորթոս :

— Դու ապրու ես — ըստ Աթոս — լուռ կեցիք :

— Բայց դոք ինձի խօսք առիք . . . — ըստ կամացուկ մը ինեղչ փերեղակը :

— Ազատ մնալով միայն քեզ կրնահք աղատել — պատասխանեց ա' Արդանեան արագօրէն և մաղմաձայն — և եթէ քեզ պաշտպանելու երես մը ցոյց տանք, մեղ ալ քեզի հետ ձերբակալ կընեն :

— Սակայն կ'երեի ինձ թէ . . .

— Եկէք, պարոններ, եկէք — ըստ բարձրաձայն ա' Արդանեան — պէտք չունիմ այս պարսնը պաշտպանելու : Դեռ այսօր անայ զինքը, և այս ալ բնու առթիւ, դիմէք, նոյն ինքը կըբնայ խռոսովանիլ, եկէք էք սենեկիս վարձքը պահանջելու : Այս պէս չէ, ո! . Պօնասիէօ, պատասխան տուք :

— Զուտ ճշմարտ թիւնն այս է — զուեց փերեղակը — բայց պարսնը ըստեր քեզի թէ . . .

— Լութիւն իմ մասիս, լութիւն բարեկամացս մասին, մանուանդ թագուհոյն վրայ, ապա թէ ոչ ամենքն ալ 'ի կրուստ կ'մասնես առանց ինքշինքդ աղատելու : Եկէք, եկէք, պարոններ, առէք տարեք սա մարդը :

Եւ ա' Արդանեան շմմօրած փերեղակը պահակներուն կողմը հըրց, անոր ըսելով .

— Դու խեռ ու ստահակ մ'ես, սիրելի . իզնէ ստակ ուզելու կ'զատ, իզնէ՛, հրացանակը մը : Բանաւ զնա նայիմ : Պարոններ, նորէն կ'ըսեմ, տարեք սա մարդը բանս նետեցէք, և որչափ կարելի է երկար ատեն թող ծակը մնայ, ասով իմ պարագս վճարելու ատեն պիտի զանձմ :

Փատորները շատ շատ շնորհակալ եղան և իրենց որսն առ սին տարին :

Այն միջոցին որ վար կ'իշնէին՝ ա' Արդանեան դլխաւորին ուսսին զարկաւ :

— Հիմակ ես քո կենդանութեանդ և զու ալ իմինիս համար զինի մը չկամնաք — ըստ Պօնասիէօի զինին էլու բաժակ լընելով, զինի մ'որ ո! . Պօնասիէօի առատասրոտ թեան պարուն էք :

— ԱՌԵՋ պատիւ մ'է ինձ համար — ըստ փառորներուն զըստուն — և առաջարկութիւնդ երախտաղիտոթեամբ կ'ընդունիմ:

— Ռւրեմն կենացք, պարոն . . . ի՞նչ է անունդ:

— Պլուարընար:

— Պարոն Պլուարընար:

— Քու կենացք, առ! Ի՞մ ի՞մ, ի՞նչ է քու անունդ և դու ալ ըստ նոյիմ:

— Տ'Արդանեան:

— Քու կենացք, պարոն:

— Եւ առանցմ աելի — զոշեց ա'Արդանեան իրը իր խանքէն շարժեալ — խմնիք թագաւորին և կարսինալին կենաց:

Փառորներուն զլիսաւորը՝ թերեւո ա'Արդանեանի անկեղծութեան վրայ կատկած էր, եթէ զինին անշահ լինէր, բայց զինին աղուր էր, հետևապէս համազուեցաւ:

— Բայց ի՞նչ անճռունի ընթացք է քուեց — ըստ Բորթուն երբ փառորապեան իր ընկերներուն միացաւ, և երբ չորս բարեկամներն առանձին մնացին: — Կորիր, չորս հրացանակիր լինինք և թողւնիք որ մեզի օշնութեան կանչող մը ձերրակալ ըստնեն. ի՞նչ, պատորդի մը թելակալի մը հետ բաժակներ ընդհարել:

— Բորթուն — ըստ Արամիս — Աթոս արդէն ըստ քեզ որ դու ապուշ մ'ես, և ես ալ անոր համամիտ եմ: Տ'Արդանեան, դու մծ մարդ մ'ես, և երբ ու ար գործ վիլի տեղն անցնիս: Քու պաշտպանթթիւնդ պիտի հայցեմ մնաստանի մը տեսչութեան համար:

— ԱՇ, Ճշմարիտը, իելքս չհամնիր այս բանին — ըստ Բորթուն — ի՞նչպէս կ'հաւանիս ու, ա'Արդանեանի ըստածին:

— Ի՞նչպէս չհաւանիմ — ըստ Աթոս. — ոչ միայն անոր ըստածին կ'համնիմ, այլ նաև կ'չնորհա որեմ:

— Խակ հիմակ, պալուներ — ըստ ա'Արդանեան առանց իր ընթացքը Բորթունի բացատրիլու — զիտք որ ամենքնիս մեզնէ մէկուն, և ամէն մէկն ամենուս համար հողի կ'տանք, այս է մեր հշանաբանն, այնպէս չէ:

— Աակայն — ըստու Բորթոս :  
— Չեռքզ կարկառէ և երգում ըրէ — զուեցին Աթոս և Ա-  
րամիս

Այս օրինակէն ընկնեալ և կամացաւկ հայհոյելով Բորթոս  
ձեռքն երկնցուց, և չըստ բարեկամները միաձայն կրկնեցին ո՞Ար-  
դանեանի ըստած բանաձեր, այս է :

« Ամենքը միոյն, և մին ամենուն համար » :

— Ծան լսու, թող ամեն մէկն իր տունը քաշոի — ըստ  
ա՞Արդանեան, որպէս թէ իր բոլոր կենաց մէջ մինակ հրամա-  
յելու վարժած լինէր, — — ուշադրութիւն, վասն զի այս վայր-  
կենէս սկսեալ, կարտինալին հետ պայքարն սկսած ենք :

## Ժ

ԵՕԹՆԵՒՏՏԱՍԻՐՈՐԴԻ ԴԱՐՅՈՒԽԻ ԱԿԱՆԱԾ ՄՌ

Ականատի դիւտը մեր օրերու դիւտ չէ . երբ՝ ընկերութիւն-  
ները կազմուլով կերպ մ'ոստիկանութիւն հնարեցին, սոյն ոս-  
տիկանութիւնն ականատներ հնարեց :

Արագչեան մեր ընթերցազները թերես ընտել չեն Երաւաղէմի  
փողոցին անշահ ոճին հետ, և արագչեան տասն հինգ տարի է  
որ այս տաղերը դրելէն վեր՝ առաջին անգամն է որ սոյն բառը  
կ'որդածենք նոյն մատը, սիստի բացատրենք ուրեմն թէ ինչ է  
ականատ մը :

Երբ որ և է տան մէջ ոճիրով մ'ամբաստանեալ մարդ մը  
ձերբակալ ընեն, այս ձերբակալութիւնը ծածուկ կ'պահեն, չորս  
հինգ հոգի առաջին դատիկանին մէջ դարանամուտ կ'սպասին .  
ով որ դուռը զարնէ կ'բանան, զանի ներս կ'առնուն և ձերբա-  
կալ կ'ընեն, այս կերպով երկու երեք օրէն եաքը՝ նոյն տան  
բոլոր յահախորդները կ'ըսնուին :

Այս այս է ականատ ըստածը :

Հետեւապէս զարդեատ Պօնասիէ օք առնն ականատ մ'ըրին , և ոք որ ներկայացաւ՝ Պ. կարտինալի մարդիկը զանի բռնեցին և հարց ու փարձ ըրին : Աւելորդ է ըսել թէ , ըստ որում յատոկ անցք մը ա՛ Արդանեանի բնակած գատիկնը կ'առներ , անձնք որ իրեն այցի կ'դային՝ նոյն հարցաքննութենէ զերծ կ'մնային :

Ա. Ասկայն երեք հրացանակիրները մինակ կ'դային . ամէն մէկն իր կողմէ հետազօտութեան ելեր և ոչ ինչ չէր զաներ , բան մը չէր անենք : Ամու մինչեւ անզամ՝ Պ. ար Դրէ վիլը հարց ու փորձ ըրեր էր , և այս բանս՝ պատուարժան հրացանակիրն համբութեան նոյնելով՝ չափազանց զարմանք պատճառ էր էր հրացանակարին : Բայց Պ. ար Դրէ վիլը բան մը չէ իսկէր , բայց էլլէ վիլը ջին անշամ կարտինալը , թագառորն ու թագուհին անսնելուն՝ կարտինալը շատ մասայող դտեր էր , թագառոր՝ անհանդիսա , և թագուհին կարմիրցած աչքերէն հասկցեր էր որ կամ հօկած և կամ լացած էր : Բայց այս վիլը ջին պարագան այնքան իրեն հոգ չէր տուած , քանի որ թագուհին՝ իր ամու մնութենէն վիլը՝ միշտ կ'հսկէր և կ'լար : Պ. ար Դրէ վիլ գարձեալ պատուիրեց Ամոսին՝ որ թագառորին՝ և մաշտանդ թագուհիյն ծառայութեան անվիրէ այ զանութե , խնդրելով որ մի և նոյն պատուէրը տայ նաև իր բնիկը բնւերուն :

Իսկ ա՛ Արդանեան իր սունեն՝ չէր հեռանար : Եր սենեակը զիտարան գարձուցեր էր : Պատուհաններէն կ'զիտէր անսնք որ ըրունուելու կ'դային , և ըստ որում սալայատակիր վերոցցեր , զետինք փորեր և վարի սենեկին սարդ ձեզնուով մը զատաեր էր , և նոյն վարի սենեկին մէջ հարցաքննութիւնները կ'լինէին : զատաքննիչներուն և ամբաստանելոց մէջ անցած դարձածը լիսովին կ'լուէր :

Ա. Աս հարցաքննութիւնները կ'սկսէին նախ ձերբակալ եղած անձին վրայ մանր խոզարկելէն ետք և անոնց ձեն այս էր :

— Միթէ ամէկին Պօնասիէ օք իր էրկան կամ ուրիշ անձի մը տրուելու համար վեզի բան մը յանձնեց :

— Պարսին Պօնասիէօ՝ իր կնկան կամ ուրիշ անձի տրուլը համար քեզի բան մը յանձննեց :

— Մին կամ միւսը քեզի դաշտնիք մը յայտնեցին բերանացի:

— Եթէ բան մը զիտնային՝ այսպէս հարց ու փորձ չէին ըներ — բառ խթովին ա՛ւրդանեան: Հյուսկ, ի՞նչ կ'ոգեն իմանալ: Արդեօք Պըքինկհէմի դոքոր Բարիզ չ'դանուիր, և թագուհին հետ համար մը ըրած է կամ պիտի ընէ արդեզ:

Տ'Արդանեան այս դաշտափարին վրայ իւցաւ. վասն զի բոլոր լուս բաներուն նայելով՝ նոյն դաշտափարն ամենէն համականն էր:

Սակայն նոյն պահուն, ականատը կ'ործէր անդուլ, նոյնով և ա՛ւրդանեանի դորձունեանը:

Խեղճ Պօնասիէօն Ֆերրանկալ լինելէն քանի մ'օր եաբը՝ երբ իրկունն Աթոս ա՛ւրդանեանի քովէն եղնելով ու. որ Դրէմելի առանը կ'երթար, երբ ժամն իննը կ'զարնէր, և երբ Բլանշէ՝ որ տակառին անկազինը շնուած չէր, իր զործը կ'ակսէր, դաղոցին դրան զարնուիլը լսուեցաւ. այս դուռն անմիջապէս բացին և զոցեցին. նոյն միջոցին մէ կն ականատն ընկեր էր:

Տ'Արդանեան խոյզին սենեկին անյատուկ կոզմը վաղեց, փորի վրայ ընկառ սրակուցաւ և ակսնջ կախուց:

Հաստ չանցաւ աղաղակներ, հեծեծանք լսուեցան թէ և զանոնք Բափանել կ'ջանային: Հարց ու փորձ բառ ընող շկար:

— Սատանայ — բառ իւրովին ա՛ւրդանեան ։ կարծեմ թէ բանուողը կին մ'է. դրան զլու խը կ'փառաւն, նա զէմ կ'կենայ, թշուառականները կ'բռնաշարեն զանի:

Եւ ա՛ւրդանեան իր ինչեման թեան չայելով՝ բոլոր չիգը կը թափէր վարի խոյն անյած կոտին շխառնուելու համար:

— Բայց ըստ ձեզ որ ես առն տիրուհին եմ, պարոններ. ու հա նորէն կ'ըստ որ տիրին Պօնասիէօն եմ. ձեզ կ'ըստ որ թագուհին սպասուուղով կիներին եմ — կ'զաշէր խեղճ կինը:

— Տիկին Պօնասիէօ — մըմուց ա՛ւրդանեան — արդեօք ու մասն վիստ ածն իմ՝ ուրս եկաւ:

— Արենք ալ ճիշտ քեզի կ'սպասէինք — վրայ բերին հարցաքնիչները :

Չայնն երթալով խեղդուկ կ'ելնէր . առսկալի շարժում մը հընչեց . . . Թակարդն ընկնող կինը կ'մաքառէր որչափ որ կին մը կարող է մաքառիլ չորս մարդու գէմ :

— Կերեցէք , պարզններ , ներէ . . . — մըմաց ձայնը , որ այնուշետեւ անհեթեթ հնչիւններ կ'հանէր :

— Ինկան թերանը զայլ կ'դնեն , կ'քաշին կ'տանին — զուեցա՛րգանեան իրը զսպանակէ կանդ առնլով : — Առնրու , լաւ , քովս է : Բլանչէ :

— Պարոն :

— Վաղէ դորի Աթոսը , Բորթօսը և Արամիոսը : Անտարակոյս երեքէն մին տօւնը պիտի զանուի . թերես երեքն ալ տօւն դարձած են : Թո՞ղ իրենց զէնքն առնուն , թո՞ղ զան , թո՞ղ վաղեն հասնին : Ա՛հ , կ'յիշեմ , Աթոս Պ . ար Դրէվիլի տունն է :

— Ա՛ր կ'երթաք , պարոն , ուր կ'երթաք :

— Պատուհանէն վար կ'իջնեմ — զուեց ա՛Արգանեան — որպէս զի ժամ առաջ հասնիմ . դու սալաբարը տեղը զիր , զետինն ալէ , գանէն զուրս ելիր և ըսած տեղս վաղէ զնա :

— Ա՛հ , պարոն , պարոն , զլուխնիդ պիտի պատուէք — զուեց Բլանչէ :

— Լուէ , անմիտ — ըսաւ ա՛Արգանեան : Եւ ձեռքովս պատուհանին շրջանակէն բռնելով առաջին գտտիկոնէն վար սահեցարնկու , որ բարեբաղդօրէն բարձր չէր , առանց իրեն մնացնելու :

Ծետոյ իսկոյն զնաց զուռը զարնելու՝ մըմալով .

— Ես ալ կամովին պիտի երթամ աշխանատը բռնուիմ , և վայ այն կատաներուն որ ինձի պէս մկան հետ չափուիլ պիտի ուղեն :

Այն ինչ զրան ուռն երիտասարդին ձեռքին տակ հնչեց , որ ներսի աղջուկը դաղբեցաւ , ոսքի քայլեր մօտեցան , զուռը բաշին և ա՛Արդանեան՝ մերկ սրով Պօնասիէօ վարպետին սենեակը մօտաւ որացաւ , որուն զուռն անշուշտ զսպանակ մ՛ունենալուն՝ ինքն իր վրայ դոցուեցաւ :

Այս առեն Պօնասիէօի ողորմէլի տան մէջ դեռ ևս բնակողներն եւ մօսագոյն դրացիներ՝ խոշոր ձայներ, ոտքի թփրտոք, սրերու շառացչին և կաչ կարասիներու խորտակումը լսեցին ընդերկար: Յեւայ պահ մ'եւաքը, անոնք որ այս աղմկէն պատռհան ելեր էին անոր պատճառն իմանալու, տեսան որ գուռը նորէն բաց ըրին և չորս սեազգեստ մարդիկ՝ չէ թէ դորս ելան, այլ ահաբեկ աղուաներու պէս թուան դացին, զետինն ու սեղաններուն անկիւնները թողլով իրենց թեերան փետուրները, այսինքն՝ իրենց զգեստներուն ծունդներն և վերաբկուներուն կտորները:

Հարկ է ըսել որ ա՛Արդանեան յաղթութիւնը տարեր էր անաշխատ, վասն զի պահակներէն մին միայն զինեալ էր, և այս ալ լոկ առ երեսս պաշտպանեց ինքզինքը: Կրառ է որ միւս երեքը փորձ փորձեր էին, աթոռ, աթոռակ և հողէ ամաններ դորձածէլով երիտասարդը վանել, սակայն Կառքօնին կողմէ սրով մէկ երկու վերտ ընդունելով ահաբեկ խոյս տուեր էին: Տաս վայրկեան բաւական եղեր էր զանտնք պարտելու, և ա՛Արդանեան պատերազմի դաշտի տէրն եղեր էր:

Այս դրացիներն՝ որ իրենց պատռհանները բացեր էին այն պարզբանաթեամբ որ յատուկ էր Քարիզի այն ատենուան բնակիչներուն որ անդադար չփոթութիւն և կոիներ կ'տեսնէին, նորէն գոցեցին երբ այն չորս ուե մարդկան փախուստը նշմարեցին: Իրենց բնազդումը կ'ըսէր իրենց որ առ ժամս ամէն ինչ լմնցած էր:

Սակայն ատեննն ուշ էր, և ինչպէս հիմակ՝ այն ժամանակն ալ կանուխ կ'պառկէին Լուքսանակութիվ թաղին մէջ:

Տ'Արդանեան տիկին Պօնասիէօի հետ առանձին մնալով՝ դէպ անոր դնաց: Խեղճ կինը թիկնաթոռի մը վրայ տապալեր մարեր էր: Տ'Արդանեան արագ նայուածքով մը զանի զննեց:

Քսան հինգ քսան վեց տարեկան չքնաղ կին մ'էր, թիւերես այլ կապուտակն, թեթէ մը քիթ վեր ելած, սքանչելի ակուաներով, երեսի դոյնն ալ կհակերազ վարդագոյն և արեակնեայ էր: Այս կինը, մեծաղի կնկան մը հետ շփոթել կարելի էր յոկ այս

և շահնաերով : Չեռները սպիտակի էին՝ առանց նրբութեան . ուսները չեն ցա ցներ որ նշանաւոր կին մ'է : Բարեբազզօրեն ա՛Արդա-  
նեան այս մանր սպարազաները զիտելու կարողութեան չուներ  
տակալին :

Մինչդեռ ա՛Արդանեան Պօնասիէօ ալելինը կ'քննէր , և աչքը  
դեռ ոսիցը վրայ էր , ինչուէս որ բանիր , բարակ կտաէ թաշ-  
կինակ մը տեսաւ զետինը , և ըստ սովորութեան՝ զայն առաւ . և  
անոր անկին նը զիտեց այն զիրը զոր արգէն տեսեր էր այն թաշ-  
կինակին վրայ որտես սպառաւուաւ քիչ մնաց Երամոի հետ ՚ի  
վեզ պիտի զար :

Այն ժամանակին ն վեր ա՛Արդանեան զինանշան Յաշկինակնե-  
րէ կ'երկնչէր , ուստի առանց բան մ'ըսելու նոյն Յաշկինակը  
տիկին Պօնասիէօի զրագանը զրաւ :

Կոյն պահուն տիկին Պօնասիէօի խելքը զլուխը կ'չար : Եւ-  
քերը բացաւ նա , իր շորս զին նայեցաւ աշարեկ , զիաեց որ  
սենեակը պարապ է և իր ազատաբարին հետ առանձին կ'ամսուի :  
Խօկոյն ձեռքն անոր երկնցոց ժապակըլով : Տիկին Պօնասիէօ խիստ  
սիրուն ժպիտ մ'ունէր :

— Ա հ , պարսն — ըստաւ նու — անշուշան զու ազատեցիր զիս ,  
ներէ ինձ որ քեզի շնորհակալ լինիմ :

— Տիկին — ըստաւ ա՛Արդանեան — իմ տեղու ուրիշ որ և է  
ազատարդի՝ ըրածս պիտի ըն'ը . ուստի պարապաոր չես ինձ շնոր-  
հակալ լինելու :

— Ի նչպէս չէ , պարսն , ինչպէս չէ , և յոսամ փորձով  
յայտնել քեզ որ ապերախտ մը շպարաւորեցիր : Բայց այն մար-  
դիկին ինչ կ'ազէին իզնէ , ես որ նախ կարծեցի թէ զողեր են ,  
և ինչու համար ո՛ . Պօնասիէօ այս տեղ չէ :

— Տիկին , այս մարդիկը զողերէն առելի վասնդաւոր էին ,  
վասն զի ո՛ . կարտինալին դործակալներն են : Կոկ քու էրիկզ ,  
ո՛ . Պօնասիէօ հոս չէ , վասն զի երէկ եկան զանի առին Պաս-  
ցիյ տանելու համար :

— Իմ էրիկս Պատլիյ տարին — զուեց տիկին Պօնասիէօ —

ո՞չ, Վաստած խմ, ի՞նչ ըրաւ, խեղջ սիրական մարդ, այն որ  
նայն բնակն անմեղութիւնն է :

Եւ թեթև ժպիտ մ'այն ինչ կ'նշմարուէր նորաստի կ'նոց ա-  
հարել երեսին վրայ :

— Ե՞նչ ըրած կրնայ լինիլ, տիկին — բառ ա՛՛Երգաննեան .

— կարծեմ թէ իր միակ յանցանքն է քու ամուսինդ լինելու բա-  
րեբազդութիւնն ու միանդամայն շարաբազդութիւնն :

— Արեմն դու զիտես, պարոն, որ . . . .

— Գիտեմ որ քեզ առեանդեցին, տիկին :

— Եւ ով բառ քեզի . ոչ, թէ որ զիտես, ըստ ինձ նայիմ :

— Քառասուն քառսուն հինգ ասքեկան, սև մազերով, արեա-  
կեզ գեմքով մարդ մ'էր, և ձախ քոնքին վրայ սպի մ'ունի :

— Ճիշտ այն մարդն է, այն մարդն է . հազար իր անունն  
ինչ է :

— Ա՛՛, իր անունը չդիտեմ միայն :

— Եւ միթէ է ըիկո զիտէ՞ որ զիս առեանդեր էին :

— Կոյն իսկ առեանդողին կողմէն ընդունած նամակէն իմա-  
ցեր էր :

— Եւ միթէ բան մը զիտէ՞ — հարցոց տիկին Պօնասիէօ շփո-  
թութեամբ — այս առեանդին պատճառին վրայ :

— Կարծեմ թէ քաղաքական պատճառի մը կ'վերագրէր զայն :

— Ես ալ առաջ այդ մասին կասկած ունիր, առեայն հիմակ  
ես ալ անոր համամիտ եմ: Այսպէս ուրեմն իմ սիրական Պօնա-  
սիէօս իմ վրայ պահ մը կասկած չտնեցած է :

— Ա՛՛, ընդ հակառակն, տիկին, քու իմաստութեան մանա-  
ւանդ սիրայդ վրայ կ'պարծենար :

Կորաաի / զեղանի կ'նոց վարդաղոյն շրթերուն վրայ զրեմէ  
աննշմարելի երկրորդ ժպիտ մը սահեցաւ անցաւ :

— Բայց — շարու հակեց ա՛՛Երդանեան — բնչպէս փախար :

— Եսր զիս մինակ թօղոցին՝ յարմար առ իմ զտայ պատճ-  
հանէն վար իջնել սաւաններու միջոցաւ, քանի որ այս սուա-  
ռուէն իմ առեանդիս բուն պատճառը համեցեր էի, և սրամէե-  
ան կարծէի թէ էրիկո հոս է, վաղեցի եկայ :

— Արարէս զի անոր պաշտպանութիւնը խնդրես :

— Ո՛չ, ոչ, խեղճ մարդս . քաջ դիտէի որ զիս պաշտպանէլու անկարող է, բայց որովհետեւ որիշ բանի մէջ կընար ինձ ծառայել, կ'ուզէի անոր պէտք եղածն իմացնել:

— Ե՞նչ բան :

— Ա՛չ, այդ իմ գաղանիքս չէ, ուստի չեմ կընար յայտնել քեզ :

— Ասկից զատ — ըստ ա՛Յըդանեան (Ներէ, տիկին, եթէ խոհեմութեան կ'յարդորեմ, որչափ որ զինուր մ'եմ) ասկից զատ՝ կարծեմ թէ այս տեղ իրարու սիրու բանալու յարմար տեղ մը չէ : Քիչ մ'առաջ վանած մարդիկս պիսի վերագառնան որիշ զօրքավ, և եթէ մեղ այս անդ զտնեն, մեր բանը կ'բռնանի : Յարմար զատեցի իմ երեք բարեկամներս այս տեղ կանչել, բայց ո դիտէ, կարելի է զանոնք տունը չեն զանոնք :

— Այս, այս, իրաւոնք ունիս — զուշեց աիկին Պօնասիէօ աշարեկ — փախինք, շնոր խոյս տանք :

— Կամ այս տունէն հեռանանք, ապա մեր ընելիքը կ'մտածենք :

Եւ նորասոի կինն ու պատանին դուռը զոյելու անհոգ՝ շտապտ քօռուայէօր փալցոն իջան, Գօսէ-Մօսիէօ-լը-Բրէնս փողցը զարկին և Աէն-Սիւլիսի հրապարակը կանկ առին :

— Հապտ հիմակ ի՞նչ պիտի ընենք — հարցոց ա՛Յըդանեան — և ո՞ր կ'ուզես որ քեզ տանիմ :

— Երանի ես ալ ի՞նչ ըսելիքս չշիտեմ — ըստ տիկին Պօնասիէօ : — Իմ դիտաւորութիւնս էր Պ, աը լա Բօրդին զրկել էրիկս կանչելու համար, որպէս զի Պ, աը լա Բօրդ Տշտիւ մեզի յայտնէ երեք օրէ վեր Լուվրն անցած զարձածը, և թէ արդեօք վտանգ կայ ինձի համար այն տեղ ներկայանալովս :

— Բայց ես կընամ երթալ կանչել Պ, աը լա Բօրդը — ըստ ա՛Յըդանեան :

— Համ լաւ, միայն մէկ անգատե հոթիւն կ'տեսնեմ, այս է թէ Պ, Պօնասիէօն կ'հանչեն արքունիքն և կընայ մնարդել Լուվր

մանել, մինչդեռ քեզ չեն ճանչեր, և դոնէն ներս մանելու յը պիտի թողուն :

— Ա՛հ, վահհ — ըստ ա՛Ծրդանեան, — անտարակոյն Լուլըի մէկ դռնակին մօտ բարապան մը կ'զտնուի որ քեզի անձնուէր է, և անցախօսին միջոցաւ . . . :

Տիկին Պօնասիկօ անժամբթ նայեցաւ պատանւոյն :

— Եւ եթէ այն անցախօսը քեզի հաղորդէի ըստ նա — զայն գործածելէն ետեւ՝ անմիշապէս մարքէդ կ'հանէիր արդեօք :

— Պատոյս վրայ կ'երդնում, ազատորդիի խուքս կ'առամ — ըստ ա՛Ծրդանեան այնպիսի ձայնով մ'որուն ճշմարտութեան վրայ կարելի չէր տարակուսիլ :

— Ըստ լու, քեզի կ'հառարամ, դու ազնուանիրաւ պատանի մը կ'երեխս, այս ալ ըսեմ որ թերեւ քու անձնուիրութենէդ կախեալ է բաղդդ :

— Ըստոց վարձատրութեան յուսոյ և խոշի մաօք պիտի կառ տարեմ ինչ որ թագաւորին օգտակար և թագուհոյն հանելի պիտի լինի — ըստ ա՛Ծրդանեան, — ուստի հրամայէ ինձ ու զածդ իրը բարեկամի մը :

— Խոկ նոյն միջոցին զիս ուր պիտի թողուս :

— Միթէ չե՞ս ճանչեր անձ մ'որուն տունը զալով ո? որ լու բօրդ քեզ զայ տոնու :

— Ոչ, չեմ ուզեր որիշ մարդու մը վատահիլ :

— Սպասէ — ըստ ա՛Ծրդանեան — Աթոսի դրան մօտ հասանք, այս, Ճիշտ անոր տունն է :

— Ո՛վ է Աթոս :

— Իմ բարեկամներէս մին :

— Բայց եթէ տունը զանուի և զիս տեսնէ :

— Տունը չէ . և քեզ սենեակը ձգելէն ետեւ պիտի փակեմ և բանալին պիտի առնում երթամ :

— Հապա եթէ ինքը տունը զառնայ :

— Նա չպիտի զառնայ, բարձեալ կրնան անոր ըսել թէ կի՞մ բերի և այն կինն իր սենեակն է :

— Բայց զիսենս որ այդ կերպով անունս կընայ արատիլ :

— Ե՞նչ հողդ է . քեզ չեն ձանշեր , ասկէ զար՝ այնպիսի պիճակի մէջ Ե՞նք որ կրնանք քանի մը սրատշանութիւններ զանց բնել :

— Ու քեմն երժանք բարեկամիր առնը : Ո՞ր կ' բնակի :

— Գէրու փողոցը , ասկից քանի մը բայց անդին :

— Երթանք :

Եւ երկաքնին ալ նորէն ձամբայ Ելան : Ֆնջպէս որ ո՛Շրջանեան զոշակեր էր , Ռիսոս առնը չէր : Բանալին առաւ , վասն զի սովոր էին իրը տան մէկ բարեկամը զայն անոր տալ , տանգղէն վեր ելու և արիկին ուօնասիէ մն՝ մը արդէն նկարագրած փոքրիկ խոցը մացուց :

— Ֆեղլինքդ տանգ մէջ համարէ — ըստ նոս . — սպառէ այս տեղ , ներսէն զուռը զոցէ և մարզու մի բանար . բայց միայն երբ սա կերպով երեք անդամ զարնեն զուռը . այսովէս , միա զիր — և երեք անդամ զարկու . երկու ոժզին հարուած իրարձէ եսեն , և որբէշ մալ առելի սորշ և թեթե կերպով :

— Շատ լսու — ըստ արիկին ուօնասիէ ո . — Հիմակ ինձ կ' մնայ ովէ ուք եղած հրահանգները տալ քեզի :

— Ականջս քեզի է :

— Եշէլ փողոցին կողմէն Լուզըրի դռնակը ներկայացիր և Ժէրմէնը հարցուր :

— Լուտ , ապա :

— Քեզի պիտի հարցնէ թէ ի՞նչ կ' ուզնս , և այն առեն սա խօսքիրով պիտի պատասխանես . Դուք և Պրուքուլ : Այս խօսքին վրայ խոկոյն ուղածդ պիտի կատարէ :

— Եւ ի՞նչ հրաման տամ անոր :

— Պիտի հրամայես որ երթայ ու , աը լա Բօրդը թագուհոյն աննեկատարը զանէ :

— Եւ երբ զանի երթայ զանէ և ու , աը լա Բօրդ զայ ի՞նչ յնեմ :

— Զամի ինձի կ' դրկես :

- Ըստ լաւ, բայց ես ո՞ր և ի՞նչպէս աեմեմ՝ քեզ հորեն:  
 — Միթէ շատ կ'փափաքիս զիա աեմնելու վերստին:  
 — Ասաբակոյս:  
 — Ըստ լաւ, այդ հոգ իմ վրայ թող և հաճողաւ եղիք:  
 — Քո խօսիլու կ'վասահիմ:  
 — Աստահէ:

Տ'Արդանեան՝ ալիքին Պօնասիկօն բարեկց՝ կարելի եղածին չափ անոր չքնազ փոքրիկ անձին վրայ սիրակ ակնարկի մը ունենելով, և մինչդեռ սահողը ն վար կ'իջներ, կրկին կղզակով զրան դոցուելու ձայնը լսեց: Արակի պէտ Լումբ հասաւ, և Էշէլի դռնակին անցնելու միջացին՝ ժամը տաս կ'զարներ: Աեր արդէն պատմած բոլոր դէպքերը կէս ժամու մէջ իբրատ յաջորդեր էին:

Տիկին Պօնասիկօն ըստակին պէտ անցաւ ամեն բան: Որոշապէ անցախօսը լսելուն՝ ծերմէն ծուեցաւ, տաս վայրիկեան ետքը ար լս Բօրդ բարապանին օվեամկը կ'զանուէր. երկու խօսքով ա՛Արդանեան անոր ամէն բան հասկցոց և խնացոց թէ: ուր կ'զբանուի տիկին Պօնասիկօն: Լա Բօրդ կրկին կրկին հարցոց հասցէն լսու մը ստողելու մատօք և վաղելով ճամբայ եւաւ: Սակայն այն ինչ տաս քայլ առեր էր որ ետ գարձաւ:

— Պատահի — ըստու նա ա՛Արդանեանի — խօրհուրդ մ'ունիմ տալու:

— Ի՞նչ խօրհուրդ:

— Այս անցած դարձած բաներուն պատճառու թերեւ զլիսից տնենաս:

— Միթէ այդպէս կարծէս:

— Այս:

— Արդեօք ո՞նիս այնպիսի բարեկամ՝ մ'որուն ժամացոյցն ետ մնացած լինի:

— Ի՞նչ կայ:

— Գնա՞ այն բարեկամդ տես որպէս զի ՚ի դարձին վկայէ թէ ժամն իննը կէսին իր առնն էիր: Երաք տար կ'ըսէն որիշ աեզ լինիլ:

Տ' Արդանեան այս խորհ՛ուրդը խոչեմ՝ դառաւ։ Առները վերցոց և արտարնօք Պ. ար Դրէ վիլին ապարանը դնաց։ ուսկայն ամենուն պէս արահը ժամանակ անցընելու տեղ՝ խնդրեց որ գահլիճը մանէ։ Արտիշեամ ա՛Արդանեան ապարանը մտնող եւնողներէն մին էր, իր խնդիրը կատարելու զժուարութիւն մը չ, բայց անեցին, և զացին իմաց տալու Պ. ար Դրէ վիլին որ իր նորահասակ հայրենակիցը՝ խիստ կարեռ բան մ' ունենալով ըսելու, մասնաւոր ունկնդրութիւն մը կ' իմնդրէր։ Հինգ վայրիեան եսքը՝ Պ. ար Դրէ վիլ կ' հարցնէր ա՛Արդանեանի թէ ինչ խնդիր ունի յայտնելու և այնքան ուշ ատեն ըբած այցելութեան նպատակն ինչ էր։

— Կերեցէք, պարտն — ըսաւ ա՛Արդանեան, որ մինակ մնացած միջոցին, յարմար սուիթ զաեր էր ժամացոյցն երեք քառորդ եւս գարձնելու։ — մոտածեցի որ թերեւ ձեզի ներկայանալու պատեհ ժամ մ' էր, քանի որ ժամն ինն քսան հինգ անցած է։

— Ի՞նչ, ժամն ինն քսան հինգ անցած է — զուեց Պ. ար Դրէ վիլ իր մեծ ժամացոյցը նայելով — բայց կարելի բան չէ։

— Կայեցէք, պարտն — ըսաւ ա՛Արդանեան — ահաւափի մեծ ժամացոյցը կրնայ վկայել ըսածիւ։

— Ճիշտ է — ըսաւ Պ. ար Դրէ վիլ — կարծեցի թէ ատենն աւելի ուշ է։ Բայց նայինք, ինչ է խնդիրդ։

Այս ատեն ա՛Արդանեան թագուցոյն վրայ երկար պատմութիւն մ' ըրաւ։ Յայտնեց թէ ինչ երկիւ դներ պաշարեր էին զինքը նորին վեհափառութեան մասին։ Պատմոց անոր Պլքինկհէմի մասին Պ. կարտինալին ունեցած խորհրդոց վրայ լսածը, և այս ամէնն այնպէս հանդարտ և բնական կերպով ներկայացոց որ Պ. ար Դրէ վիլ այնչափ շուտ հաւատալով խարուեցաւ որչափ որ՝ ինչպէս արդէն ըսինք, ինքն ալ զիտեր էր որ կարտինալին, թաղուորին և թագուցոյն մէջ նոր բան մ' անցած պիտի լինէր։

Երբ ժամը տաս զարկաւ՝ ա՛Արդանեան Պ. ար Դրէ վիլի քովէն ելաւ, և Պ. ար Դրէ վիլ շնորհակաղ լինելով տուած տեղեկութեանդ մասին՝ պատմիրեց որ թագաւորին և թագուցոյն

ծառայելու միշտ պատրաստ գտնուի , և ապա սրահը մնան : Առաջն տ' Արդանեան առնդղէն վար իշնելուն յիշեց որ ցուպը մնացեր էր . հետեւաբէս՝ արտօրնօք վեր ելաւ , զահլիճը մնան , մասովը ժամացցցին առեղը ձիշտ ժամուն զարձոց , որպէս զի հետեւալ օրը չդիմեն որ խանդարուեր էր , և վասահ լինելով այնու հետեւ որ վկայ մ'ունէր և անշոշտ պիտի հաստատէր թէ այսինչ ժամուն իր քանի էր , առնդղէն վար ի թառ և քիչ առենէն ինքսինոր վարոցը դառն :

## ԺԱ

ՆԵՐԴՐ. ԱՌԵԽԹՈՒՆԻ

Տ' Արդանեան Պ. ար Դրէ վիլի այցելութենէն ետքը՝ իր տան ձամբան բռնեց մատախոհ և պատյտներ ընելով :

Ե՞նչ բանի կ'մտածէր ա' Արդանեան որ այսոյէս իր տանը ձամբէն կ'հեռանար , երկնից աստղերը կ'զիտէր և մերթ ընդ մերթ կ'հառաւէր :

Տիկին Պօնասիէսի կ'մտածէր : Այս համբոկ հրաժանակրին համար տիկին Պօնասիէս զբեթէ սիրանուշ անուլական նկար մ'էր . սիրուն , խորհրդատոր , արքունեաց զբեթէ ամէն զաղանեաց վերահասու , որոնք իր շնորհալի գէմիքին վրայ այնքան չքնար ծանրութիւն մը կ'առասորէին որ այն արկկնոր բոլորովին անզգայ չէր կրնար համարուիլ , և այս բանս անփորձ սիրահարներու համար անդիմագրելի հրապար մ'ունէր . ասկէ զատ՝ ա' Արդանեան ազատեր էր այն կինը սատանաներու . ձեռքէն՝ որ անոր վրան խուզարկել և տան ջել կ'ուզէին , և այս կարեւոր ծառայութիւնն առոր և իր մէջ երախտագիտութեան այնպիսի դպացում մը հաս-

տառեր էր որ չէշտիւ առելի դորովալիք զգացոմ մը կրնար դառնալ :

Երեակայտթեան թերոն վրայ պյնբան շուտ կ'վազեն երազ-ներն՝ որ ա՛ւրդանեան կ'տեսնէր մառվի նորատի կ'նոջ կողմէն համառու բաներեր մ'որ իրեն ժամադրութեան համար առմասկ մը կ'յանձնէր, նոյնաք ու ուիի շղթայ մը կամ անդամանդ մը : Արդէն ըստնք որ նորատի առաքեաներ առանց ամօմի սասակ կ'ընդունելին իրենց թագաւորէն, ըստնք նաև թէ այն թոյլ բարոյականի ժամանակի՝ չէ ին ամաչեր նաև իրենց սիրու հնաներէն ընդունելու, և աստնք ալ զրեթէ միշտ թանկաղին և տեղական յիշատակներ կ'տային անոնց, որպէս թէ փորձ կ'փորձին իրենց զգացմանց թեթեռ միւնք ծածկել ծածկել համատուն նուէ ըներով :

Այն առենները մարդ իր բազզը կ'շնոր կանանց միջոցաւ առանց ամաչելու : Այն կիներն որ միայն զեղանի էին, իրենց զեղցիութիւնը կ'ապցին : և անտարբակցոյ ասելից յառաջ եկած է այն առածն որ կ'ըսէ՝ աշխարհին ամենազեղանի աղջիկը մինակ ունեցածը կրնայ ընծայել : Անոնք որ հարուստ էին իրենց ստակին մէկ մասն ալ կ'սրարգելէին, և զիւրին է յիշել այն իշտուք ժամանակի շատ մը դիցավուներ որ նախ իրենց մորակը, ասսա իրենց յաղթանակները չպիստ շահէ ին և թէ իրենց սիրուհին քիչ շատ լիցոն քասկ մ'անոնց թամրին չկացէր,

Տ'Արդաննան ոչ ինչ չունէր . զատառացիին վարանումը, թերթե շարարի, վաղանցիկ ծաղկի, զեղձի մաղին պէս ցնդեր զայեր էր երեք հրայանակի իրենքուն իրեն տու ած առս զդայ խորհրդոց հոգին : Տ'Արդաննան ժամանակին այլանդակ սովորութեան համաձայն ինքնինքը Քարիկի մէջ իրը պատերազմի զաշտը կը նկատէր, և այս ալ իրը թէ Պլանտարը լինէր . Ապանդացին այն տեղ, կինն այս տեղ : Ամէն ուրեք թշնամի մը կար վանելու, հարկեր կային հաստատելու :

Բայց պէտք է խոստովանիլ որ նոյն պահուն ա՛ւրդաննան աւելի ազնիւ և անշահագետ զգացումով վաս էր : Փերեղակն ըներ էր անոր որ հարուստ է . պատանին կրցեր էր զոշակիլ

որ ոկ. Պահապին օի ովէս ապուշ մարդու մը քառելին բանալին կը մնա  
կամը քով զանտիլ ովէ աք էր : Բայց այս ամենը Պահապին օ կնոջ  
ահսքին արտադրած զգացման վրայ ներգործութիւն մը չունեցեր  
էր , և ասկից յառաջ Եկած սիրոյ հետ շահը դրեթէ բնաւ դորձ  
չունէր : Գրեթէ շրմանք , վաճան զի այն դաշտափարը թէ նորատի ,  
զեղանի , շնորհալի , ու շխմ կին մը միանդամայն հարուստ է ,  
սիրոյ այս սկզբնաւորութիւնը չնուազեցնէր , այլ մանաւանդ կը  
կազզութէ :

Ունեարութեան մէջ կան խել մ'ազնուազեաւկան հոգեր , քմա-  
ծին հաճոյք որ զեղեցիութեան կ'վայլէն : Բարձիկ և սպիտակ  
դուլպայ մը , մեռացուէ շրջազգեստ մը , տանդէլոյէ լանջանակ  
մը , տարը սիրուն տոլեր մը , զրիսի վրայ նոր ժամանակն մը՝ չեն  
կրնար տուեղ կին մը սիրուն դարձնել , սակայն սիրուն կին մը զե-  
ղանի կ'զարձնեն , առանց հաշուելու ձեռներն որ այս բաներով  
շատ կ'օգաբն . մանաւանդ ովէսք է որ կանանց ձեռներն անդորձ  
մնան զեղեցիկ դառնալու համար :

Երի տես որ ա՛Արգանեան , ինչպէս քաջ զիանէ ընթերցո-  
ղը , որուն չըրահեցինք անոր նիւթական վեճակը , ա՛Արդանեան  
միլիոնի տէր մարդ չէր . իբրաւ է որ օր մը միլիոնի տէր դառ-  
նալու կ'յուսար , բայց այս յաջող փափսիսութեան համար որու-  
շած ժամանակը շատ հեռու էր ասկաւին : Այլ սակայն՝ ինչ  
յուսահատութիւն է զիանալ որ մեր սիրած կինն այն հազար  
տեսնակ մնասիքը՝ որով իր երջանկութիւնը կ'կազմէ , կ'փափաքի  
տնենալ , և չիսրենալ նոյն հազար տեսնակ մնասիքն անոր մա-  
տակարարել : Գոնէ՝ երբ կինը հարուստ է և սիրովը նոյնպէս  
չէ , և չկրնար անոր խնդրածը կատարել , կինն ինքնին կ'ձարէ՝  
և թէկ սովորաբար էրկան սասակովը կ'վայելէ նոյն բաները՝ հա-  
զիւ որեմն նոյն էրկանն երախտագէտ կ'լինի այս մասին :

Վակէ զատ՝ ա՛Արդանեան փափկասիբու սիրահար մը դառնա-  
լու տրամադիր՝ առ այժմ խիստ անձնուեր բարեկամ մ'էր : Փե-  
քակի կնկան մասին ունեցած սիրային խարհութիւնն մը չ'  
իր յաստի խարհութիւնն ըէր մանար : Կ'վայլէր որ Պօնասիէս

որիքան տիկինն առնու և Աէն-Տընի դաշտը կամ Աէն-Ժէրմենի տօնավաճառը պարբռելու տանի , Աթոսի , Ռոբերոսի և Արամիսի ընկիրակցութեամբ , քանի որ ա'Արդանեան շատ զլուխ պիտի բըռնէր այսպիսի յաղթանակ մ'անոնց ցոյց տալով : Ասկէ զատ՝ երբ մարդ շատ քալէ շուտով կ'անօթնայ . քանի մ'ատենէ վեր ա'Արդանեան այս բանս զիտեր էր . հետեւագէս անշուք սիրուն հաշեր պիտի ընէին , երբ մարդ մէկ կողմէն բարեկամի մը ձեռքին կ'գոյի , և միւս կողմէն սիրունոյ մ'ոտքը : Աերջապէս ստիպողական մրջացներու , ծոյրայեղ վիճակներու մէջ ա'Արդանեան իր բարեկամաց աղաւարարը պիտի լինէր :

Միթէ ու , Պօնասիրէ օն ալ պիտի աղաւալէր ա'Արդանեան , այն զոր փաստորներուն ձեռքը յանձներ էր բացէ ՚ի բաց շնանչնաւլու զարնելով՝ թէե զարդանի խոստացեր էր զանի աղաւանելու : Պէտք է խոստովանիլ մեր ընթերցողաց որ ա'Արդանեան և ոչ իսկ անոր կ'մտածէր , և կամ եթէ խորհէր՝ ինքնովին կ'բաէր որ դանուած տեղն աղէկ էր , ուր որ լինէր այն տեղը : Աէրը բոլոր կրից մէջ առնենէն եռականն է :

Սակայն թող մեր ընթերցողները հանդարտին . եթէ ա'Արդանեան իր տան մէրը կ'մտնայ կամ մունալ կ'կեղծէ , սա պատրուակով թէ մէր զանուիլը չփառէ , մնչդ զանի չենք մոռնար և ուր զտուիլը զիտենք : Բայց առ այժմ սիրահար Կասքօնին ըրածն ընենք . իսկ սրատուարժան փերեղակին վրայ եաքէն պիտի խօսինք :

Տ'Արդանեան՝ իր ապագայ սիրայն վրայ խորհէլու , մութին հետ խօսելու , աստղերուն ժամանելու ատեն՝ Շէրշ-Միտի կամ Շաս-Միտի փողոցն ՚ի վեր կ'ելնէր , բնչովէս որ այն ժամանակ սոյն փողոցը կ'անուանէին : Արամիսի թաղը զտնուելուն՝ իր բարեկամին այցի երթալու միտք ըրատ , որպէս զի բացատրէ թէ ինչ պատճառուու Բլանշէ սպասուորը զըկեր էր որ անմիջապէս Ականատը զայ : Արդ՝ եթէ Արամիս իր առնուը զանուեր էր Բլանշէ ի զալու ատեն , անտարակցոս Ֆօսուայէօր փողոցը վազած պիտի յինէր , և այն տեղ թէրեւ իր միւս երկու բարեկամները զանեւ

լով միայն , ամենքնին ալ հասկցած չպիտի լինելին թէ ինչ նշանակութիւն ունէր այն հրաւէրը : Հետևեալիք ս այս անկարգութիւնը բացատրութիւն մը կ'պահանջէր , և ահա այնողէս կ'տրամաբանէր ա՛Արդանեան բարձրաձայն :

Յետոյ ինկախիւն կ'խորհէր թէ յարմար առիթ մ'էր իրեն համար ուօնասիէօ փոքրիկ սիրուն տիկնոջ վրայ խօսելու , որով եթէ ոչ իր սիրաը , միաքը լցուած էր : Կարելի չէ խոհեմութիւն պահանջել առաջին սիրոյ առթիւ : Այս առաջին սէրն այնպիսի մձ տրախութիւն մը կ'բերէ իր հեան որ պէտք է յորդէ այն : Թէ ոչ անով մարդս կ'խողդուի :

Երկու ժամէ վեր հարիզ խաւարեր և սկսեր էր անապատ զառնալ : Սէն-Ժէրմէնի արուարձանին բոլոր ժամացոյցները ժամը տան մէկ կ'զարդնէին : Անուշ օդ մը կար : Տ'Արդանեան զորիչէ մը կ'անցնէր որուն տեղն այսօր Աստիք փողոցը կ'զանուի , և կը չնչէր այն հօտաւէտ բուրմունքն որ հովին հետ Աօժիրար փողոցէն կ'զային և զոր երեկոյեան ցողէն ու զիշերային քամիէն թարմացած պարտէ ղները կ'առաքէին : Դաշաին մէջ ասդիս անդին զտնուած հեռառոր զինետուններէն արբեցողներու երգերը կ'լսուէին , թէ և այս երգերու ձայնը ցորենի տախտակներէն կ'մղմէին : Երբ ա՛Արդանեան զորիչին ծայրը հասաւ ձախ կողմը բըռնեց : Արամիսի բնակած տունը Քասէդ փողոցին մէջ տեղը կը դանուէր :

Տ'Արդանեան արդէն Քասէդ փողոցէն անցեր և իր բարեկամին տան զուռը ձանցեր էր , տուն մ'որ շատ մը մալաթկենեաց և բաղեղներու տակ ծածկուած՝ անոր վրայ մանեկանն պուրակ մը կ'յօրինէր , երբ ստուերի նման բան մը տեսաւ որ Աէ բվանտօնի փողոցէն դուրս կ'ելնէր : Այս անորոշ բանը վերարկուավ փաթթուած էր և ա՛Արդանեան կարծեց նախ որ մարդ մ'էր . բայց ասոր հասակին կարձութենէն , քալուածքին անստուգութենէն , քայլին շփոթութենէն՝ խկոյն հասկու որ կին մ'էր : Ասկէ զատ՝ այս կինն որպէս թէ վնստած տունը կորուսած լինէր , աչերը վեր կ'բարձրացնէր որ հասկոյ թէ ուր է , իանկ

ի պահանջ , եւս կ'զառնար , նորէն կ'զար : Տ'Արդանեան շուտը՝  
եալ մնաց :

— Արդեօք երթամ իմ ծառայութիւնս անոր մաստցանեմ :  
Ազոր կերպէն կ'երևի թէ նորահասակ է , կարելի է սիրոն աղ  
լինի : Ա՛հ , այս բայց այս ժամաւ փողոցները վաղող կին մը  
մինակ իր սիրուղը փնտուելու համար զորս կ'ելնէ : Անիծից ար-  
մատ . թէ որ երթամ անոր տեսաւթիւնը վրառվեմ , յարաբերու-  
թեան մանելու անյարնար միջոց մը պիտի լինի :

Սակացն դեռահասակ կինը միշտ յառաջ կ'գալէր՝ տուներն ու  
պատուհանները համբելով : Այս ալ ոչ երկայն և ոչ դժուարին  
զործ մ'էր : Փողոցին այն կողմը մինակ երեք ապարան կար , և  
նոյն փողոցին վրայ նայող երկու պատուհան միայն . մին Արա-  
մուխի բնակած տաղաւարին զուգահեռական տաղաւարինն էր ,  
միուսը նոյն իսկ Արամիսինն էր :

— Թշուաստիկան — ըստա իւրաքի ա'Արդանեան , որուն միտքը  
կ'զար ասսուածարանին քեռաղջիկը . — Թշուաստիկան , զարմա-  
նալի կ'լինէր եթէ այս յետամնաց տատրակը մնը բարեկամին  
տունը փնտուէր : Բայց՝ հողիս վկայ՝ կարծեմ թէ այսպիսի բան  
մը պիտի լինի : Ա՛հ , սիրելիր իմ Արամիս , այս անդամ՝ ամէն  
կառքոծ պիտի փարաւածեմ :

Եւ ա'Արդանեան կարելի եղածին չափ բարեկանալով փողոցին  
մթագոյն անկինը՝ որմածակի մը խորը զմնուած քարե նստա-  
րանի մը մօտ սքլեցաւ կեցաւ :

Նորատի կինն իր ճամբան ընդ առաջ շարունակեց , վասն զի  
ոչ միայն թեթենան լինելով՝ մասնուեր էր , ոյլ և թեթեն մը  
հաղալուն հասկցուեցաւ որ թարմ ձայն մ'ունի : Տ'Արդանեան  
մտածեց որ այս հազը նշան մ'է :

Սակայն՝ սեպէ թէ այս հազին նոյն օրինակ նշանով մը պա-  
տասխան առնլով՝ զիշերային խնդրակին կասկած ները փարաւե-  
ցան , սեպէ թէ առանց արտաքին աջակցութեան հասկցաւ որ  
իր ողնութեան ծայրը հասեր է , կինն անվեհեր մօտեցաւ Ա-  
րամիսի պատուհանին փեղկին և կար մասովն երեք հաւասար մի-  
ջացներով անոր զարկաւ :

— զիշտ Արամիսին առունն է այն — մրժեաց ա՛Արդանեան : — Ահ, պարուն կեղծաւոր, այս է ուրեմն քու աստուածաբանութեան դաստ :

Են ինչ կինն երեք հարուած զարկեր էր որ ներքին պատուանինը բացուեցաւ, և վեղինն ապակիներուն մէջէն լոյս մը երեցաւ :

— Համ, համ — ըրու, չէ թէ դրան այլ պատուհանին մօմ կեցող անկնդիրը . — Համ, ուրեմն այս այցելութեան սպասող կար : Կայինք, փեղկը պիտի բացուի հիմուկ և կինը սանդղով վեր պիտի ելնէ անշուշտ : Ըամ լու :

Բայց՝ 'ի մեծ զարմոցումն ա՛Արդանեանի' վեղկը դոց մնաց : Ասկէ զատ՝ լոյսն եր պահ մը փայլեր էր՝ անհետ եղաւ և ամէն բան խռարի մէջ ընկաւ :

Տ'Արդանեան մատածեց որ այս այսպէս չպիտի երկար տեէ, և չորս աշքով և ականջները բաց՝ չորս կողմը կ'զիտէր շարունակ :

Եւ իրառունք ունէր . քանի մը բոտէ եաքը՝ երկու չոր հարուած առան ներքին կողմը հնչեց :

Փողոցին նորաատի կինը մէկ անգամ զարնելով պատասխանեց և փեղկը կէս մը բացուեցաւ :

Ընթերցողը թող դատէ թէ ա՛Արդանեան ինչ անյադ հետաքրքրութեամբ կ'նայէր և մարիկ կ'ընէր :

Դժբաղդորէն լոյսն ուրիշ սենեակ մը փախադրեր էին . բայց պատասխինն աշքը դիշերային մթութեան վարժեր էր : Ասկէ զատ՝ Կապօններու աշքը՝ ինչպէս որ կ'հառաստեն՝ կատաներու աշքին պէս, դիշերը տեսնելու յատկութիւնն ունին :

Աստի ա՛Արդանեան տեսու որ կինն իր դրամնէն ներմակ բան մը կ'հանէր, զոր աշխատմի բանալուն թաշկինակի մը ձեն առաւ : Այս բանը բանալուն ետև՝ անոր անկիւնը ցցոց իր խօսակցին :

Տ'Արդանեան ասոր վրայ յիշեց Պօնասիէօ ափկնոջ ոտքը զըտած թաշկինակը, որ միանգամայն յիշեցոց իրեն Արամիսի ոտքին ներբեւ դասձը :

Բայց ի՞նչ նշանակութիւն կրնար ունենալ այն թշուռական թաշկինակը :

Տ' Արդանեան կեցած տեղէն չէր կարող Արամիսի դէմքը տեսնել, վասն զի պատանին աներիբայ էր որ արտաքին կնոջ հետ խօսող ներքին անձը նոյն ինքն իր բարեկամն էր. Հետեազգէս հետաքրքրութիւնը խոհեմութեան յաղթեց, և զիտելով որ մեր տեսարան հանած երկու անձերը թաշկինակին տեսքն կերպով մը մատղիք կ'խորչէին, իր թագստի վայրէն ելու, և փայլակի պէս արագօրէն, թէ ուաքի ձայնը մեղմելով գնաց պատին մէկ անկիւնը փակելու, ուսկից կրնար Արամիսի սենեկին ներքնակողմը զիւրաւ նշմարել :

Երբ այն անդ հասու՝ քիչ մնաց որ տ' Արդանեան զարմանքէն արագակի մը պիտի ձգէր. վասն զի զիշերային այցելու հիմն հետ խօսողն Արամիս չէր, այլ կին մը : Միայն տ' Արդանեան բաւական որոշ տեսնելով անոր հագուստին ձեր՝ կ'ձանչչէր, սակայն անոր երեսը գանձագանել անկարող էր :

Նոյն պահուն ներսի կինն իր զրապանէն ուրիշ թաշկինակի մը հանեց, և միւսին քիչ մ' առաջ հանած թաշկինակին հետ փոխանակեց : Յետոյ՝ երկու կանանց մէջ քանի մը խօսքեր անցան: Վերջապէս՝ փեղկը դոցուեցաւ, պատահանէն դուրս դանուող կինը դարձաւ և տ' Արդանեանէն չորս քայլ հեռու անցաւ իր լուղիկին զլամանոցն իջեցնելով. բայց այս զգուշութիւնն ոչ տոեր էր, վասն զի տ' Արդանեան արդէն տիկին Պօնասիէօն հանչեր էր: Տիկին Պօնասիէօն: Արդէն կասկածն առեր էր միաքը թէ նոյն ինքն էր, երբ զրապանէն թաշկինակը հաներ էր, բայց միթէ հաւանական էր որ տիկին Պօնասիէօն, որ Պ. տը լա Բօրդը կանչելու համար զինքը զրկեր էր Լուգր դառնալու մտօք, Բարիզի փողոցները շրջի միայնակ, զիշերուան ժամք տասն մէկ ու կէսին, երկրորդ անգամ զողոցւելու վտանգն աչք առնելով:

Անշուշտ խիստ կարևոր զործի մը համար եղած պիտի լինէր: և ի՞նչ է քսան հինգ տարեկան կնոջ մը կարևոր զործը. Աէր:

Բայց միթէ իր հաշուբն թէ ոչ տրիշեն հաշուբն համար էր

որ այսպիսի վտանգներու կ'ենթարկէր ինքզինքը : Ահա այս հարցումը կ'ընէր ինքնովի պատահին, որուն սիրան արդէն իբր օրինաւոր սիրահար նախանձու սասանան կ'կրծէր :

Սակայն պարզ միջոց մը կար իմանալու թէ ուր կ'երթարտիկին գօնասիէօ . այս էր անոր հետեւիլ : Այս միջոցն այնքան պարզ էր, որ ա՛Արդանեան բնականապէս և ինքնայորդոր դորածածեց գայն :

Բայց երբ տիկին Պօնասիէօ տեսաւ պատանին՝ որ՝ իբր արձան մ'իր խորշէն՝ պատէն կ'չեռանար՝ աղաղակ մ'արձակեց և խոյս տուաւ :

Տ'Արդանեան անոր ետեւէն վազեց : Դժուարին բան մը չէր իրեն համար՝ իր լոդիկին մէջ շփոթած կնկան մը համակիլ : Աւատի փողացին երեք մասն այն ինչ քալեր էր որ պատանին անոր միացաւ : Թոշուառ կինն աւժաթափ էր՝ չէ թէ յոզնութենէն՝ այլ սարսափէն, և երբ ա՛Արդանեան ձեռքն անոր ուախն վրայ դրաւ, մէկ ծունկը կրկնեց խեղդուկ ձայնով մը պոռալով .

— Եթէ կ'ուզես, սպաննէ զիս, բերնէս բան մը չես կրնար առնուլ :

Տ'Արդանեան զանի վերցոց թեր մէջքին անցնելով՝ բայց անոր ծանրութենէն զգալով որ մարելու մօտ է, ջանաց անոր երկիւրոյ փարատել իր անհնուիրութեան ցոյցերը տալով : Այս ցոյցերը Պօնասիէօ տիկնոջ համար ոչ ինչ էին . վասն զի այսպիսի ցոյցեր կրնար տալ մարդ խօստ անշահ խորհուրդներով . բայց ձայնն ամէն բան էր : Նորատի կինն անոր ձայնին հնչիւնը ճանչել կարծեց . աչքը բացաւ, ակնարկ մը նետեց այն մարդուն վրայ որ այնքան ահ ազգեր էր իրեն, և ա՛Արդանեանը ճանչելով՝ ուրախութենէ Ճիկ մը հանեց :

— Ո՛չ, զո՞ւ ես, զո՞ւ ես — բառ նա — փառք քեզ Տէր Աստուած :

— Այս, ես եմ — բառ ա՛Արդանեան — այս, Աստուած դրկեց զիս քու վրատ հսկելու համար :

— Միթէ այդ մոտք իմ ետեւս կ'զայիր — հարցոց նորատի

կինը փարելի ժողիսով մը , մինչդեռ փոքր ինչ հեղնական բնու  
ւորութիւնն երեան կ'եւնէր , և իր բոլոր վախը փարատեր էր  
դիտելով որ թշնամի կարծած մարդն իր բարեկամն էր :

— Աչ — ըստ ա'Արդանեան — ոչ , կ'խռատօվանիմ որ զիու-  
ածով քու համբուգ վրայ ընկայ . կին մը տեսայ որ մէկ բա-  
րեկամիս պատուհանը կ'զարնէր . . . .

— Մէկ բարեկամիդ — ընդմիջեց տիկին Պօնասիէօ :

— Անշուշտ . Արամիս՝ իմ ընտիր բարեկամներէս մին է :

— Արամին . ովլ է այն :

— Կատակը մէկըն . միթէ կ'ջանաս հաւացնել ինձ որ Ա-  
բանիսը չե՞ն հանչեր :

— Առաջին անգամն է որ այդ անոնը կ'լսեմ :

— Աւրեմին առաջին անգամն է որ այն այսոնը կ'զաս :

— Անշուշտ :

— Եւ միթէ չցիսէն ի՞ր որ պատանի մը կ'բնակի անդ :

— Աչ , չցիսէն :

— Բնիկն ալ հրացանակիրը մ'է :

— Ամ նեին :

— Աւրեմին այն հրացանակիրը տեսնելու եկած էիր :

— Բնաւ : ամենեին : Հարկաւ տեսար որ ինձ խռակից անձը  
կին մ'էր :

— Իրաւ է . բայց այն կինն Արամիսի մէկ բարեկամն հին սիր-  
ուի լինի :

— Չցիսէմ :

— Քանի որ անոր տունը կ'բնակի :

— Այդ իմ զիտնալիք բանս չէ :

— Բայց ովլ է այն :

— Ա՛չ , այդ զաղանիքն իմն չէ :

— Սիրելի տիկին Պօնասիէօ , չքնաղ ես , բայց միանգամայն  
իմաս խորհրդաւ որ կին մ'ես . . . .

— Միթէ տառվ ողեղ կ'երեխմ աշքիդ :

— Ա՛չ , բնոդ հակառակն պաշտելի ես :

- Արքման, թեզ տար նայիմ:
- Վանացն սիրով: Հիմակ ի՞նչ ովասի ընենք:
- Հիմակ զիս առաջորդէ:
- Ո՞ւ:
- Ար որ երթամ:
- Բայց ո՞ւ կ'երթամ:
- Հիմակ պիտի տեսնես, քանի որ զիս դուռը պիտի թողուս:
- Ուտք պիտի լինի քեզի սպասել:
- Անօդաւու է:
- Արքման մինակդ պիտի դառնաս:
- Կարելի է դառնամ, կարելի է չդառնամ:
- Բայց ետքէն քեզ ընկերոցով անձն այր պիտի լինի թէ  
ոչ կին:
- Դարձեալ չգիտեմ:
- Ես լուսնամ պիտի անշուշտ:
- Ի՞նչոք:
- Պիտի սպասեմ որ դուրս ելնելու տեսնեմ:
- Արքման մնաս բարե:
- Ի՞նչոք:
- Քեզնէ աղետք չառնիմ:
- Բայց նախ խնդրեցիր . . . :
- Ազատորդիի մ'աջակցոթիւնը, և չէ թէ լրասի մը հսկութիւնը:
- Այդ բառդ քիչ մը ծանր է:
- Ի՞նչ կ'անուանեն այն անձերն որ դաշտին որիշներուն եւ  
ուելն կ'երթման:
- Անխոչեմ:
- Այդ բառը շատ անուշ է:
- Լու, տիկին, կ'հայիմ որ քու ամէն ուզածդ կատարել  
ողետք է:
- Ի՞նչու համար անմիջապէս ընելու արժանիքը չտնեցար:
- Միթէ արժանիք մը չէ զլջալը:

— Եւ միթէ իրօք կ'զղաս :

— Ես ալ ճիշտ չդիտեմ. սա միայն դիտեմ որ ամէն ուղածդ  
կատարելու խօսք կ'տամ՝ քեզ եթէ թողոս որ ուղեկցիմ՝ քեզ  
մինչեւ երթալիք տեղդ :

— Աերջը պիտի ձգես երթաս :

— Այս :

— Առանց իմ զուրս ելնելու լրտեսելու :

— Այս :

— Պատոյդ վրայ կ'իրուստանան :

— Պատօյս վրայ :

— Աւրեմն թես առ և միասին քալենք :

Տ'Աբգանեան Պօնասիէօ տիկնոց տուառ իր թեր, որմէ կախաւ  
ուցաւ՝ կէս խնդում կէս գողդոջուն, և երկոքնին ալ լա Հարբ  
փողոցին ծայրը հասան : Երբ հասան անդ, նորասի կինը վարա-  
նում յայտնեց, ինչպէս որ Աօժիրարի փողոցն ալ ցոյց տուեր  
էր արդէն : Սակայն՝ քանի մը նշաններէ՝ կարծես թէ զուս մը  
հանչեց, և նոյն գրան մօտենալով,

— Հիմակ, պարո՞ն — ըստու նա — ահա սյս տեղ է զործս,  
անչափս շնորհակալ եմ քու պատուառը ընկերակցութեանգ հա-  
մար, որով ազատեցայ այն ամէն վատանդներէ որ ինձ կրնային  
հանդիպիլ եթէ մինակ լինէի : Բայց խօսքդ կատարելու ժամն ե-  
կառ, ևս իմ ուղղութեանս հասայ :

— Եւ միթէ ՚ի զարձին բանէ մը չե՞ս վախնար :

— Մինակ զողերէն վախնալու տեղի ունիմ :

— Միթէ այդ պզտիկ բան կ'սեպէս :

— Ի՞նչ կրնան առնոլ, թանկ մը չունիմ քովս :

— Կ'մոռնաս արդեօք սա դեղեցիկ նկարակերտ և զինանշան  
թաշկինակը :

— Ա՞ըլ :

— Ատքիդ տակը դտած և զրաբանդ զրածա :

— Լոէ, լոէ, թշուառական — զուեց նորասի կինը — մի-  
թէ իմ կորուստս կ'ուզես :

— Կ'նայիս որ տակալին վատանդ կայ քեզի համար, քանի որ  
բառ մ'անդամ սիրտդ թունդ կ'հանէ, և կ'խոստովանիս որ եթէ-  
այն բառը լսող գանձո՞ր գործք զէշ է : ԱՇ, միտ զիր, տի-  
կին — զոչեց տ'Արդանեան անոր ձեռքը բռնելով և հրացայտ  
ակնարկով մը ծածկելով զայն — միտ զիր, առելի վեհանձն ե-  
ղիր, ինքինքդ ինձ վատահէ . միթէ իմ աշացս մէջ շտեսար  
որ սիրտս անձնորիրութեամբ և համակրութեամբ լի է քեզի հա-  
մար :

— Քաջ դիտեցի — պատասխանեց տիկին Պօճասիկօ . — ուս-  
տի հարցուր իմ զաղանիքս, պատրաստ եմ ըսելու, բայց ու-  
րիշներու զաղանիքը չեմ կրնար յայտնել :

— Ըստ լսու — ըստ տ'Արդանեան — ես զանոնք երեան պի-  
տի հանեմ, քանի որ այն զաղանիքը կրնան կենացդ վրայ ազ-  
դեցութիւն մ'ունենալ, պէտք է որ անոնք իմն լինին :

— Զդուշացիր այդ բանէն — զոչեց նորատի կինը ծանրու-  
թեամբ մ'որ տ'Արդանեանի սարսուռ տուառ ակամայ : — ԱՇ,  
ինձ վերաբերող ո՞ր և է բանի մի խանութիր, և իմ կատարած  
պաշտօնիս մէջ ինձ աջակից զանուելու մ'աշխատիր, և այս խըն-  
զիրս կ'առաջարկեմ յանուն այն համակրութեան զոր քեզի կը  
ներշնչեմ, յանուն այն ծառ այս թեան զոր ինձ մատոցիր և զոր  
քնառ չսփիտի մոռնամ մինչ ՚ի մահ : Հաճէ հաւատալու ըսածիս :  
Եյլ ևս իմ վրայ մի մտածէր, այլ ևս քեզի համար չկամ, սեռ  
պէ թէ բնառ տեսած չես զիս :

— Արգեօք Արամիս ինձի՞ պէս պիտի ընէ, տիկին — ըստ  
տ'Արդանեան զարած :

— Ահա երկու երեք անգամ է որ այդ անունը կ'արտասանես,  
պարուն, և սակայն ըսի քեզի որ զանի չեմ ճանչեր :

— Միթէ չե՞ս ճանչեր այն մարդն որուն փեղկը զայիր զար-  
նելու : Երեսոդ խաչ հանէ, տիկին, դու ալ չսփազանց դիւ-  
րահան կ'կարծես զիս :

— Խոստովանէ որ խօսել տալու համար կ'հնարես այդ պատ-  
ժիննը և կ'ստեղծես այն անձը :

— Բան մը չեմ հնարեր, աիկին, բան մը չեմ ստեղծեր. իրօք ձշմարտոթիւն մ'է ըստած :

— Աւրեմն կ'ըսես թէ բարեկամով մէկն այն առան մէջ կ'բնակի:

— Կ'ըսեմ և կ'կրկնեմ երրորդ անգամ. այն առանն է որ կ'բնակի իմ բարեկամն, և այս բարեկամն Արամիսն է :

— Այս ամենը վերջն պիտի պարզուի — մրմնաց նորատի կինը. — այժմ, լու, պարոն :

— Եթէ սիրոս բացէ՝ ի բաց տեսնէիր — ըստ ա՛Արդանեան անոր մէջ այնքան հետաքրքրոթիւն պիտի զանէիր որ իմ վրայ պիտի զնայիր, և այնքան ուր իսկոյն հետաքրքրութիւն զսչ պիտի ընէիր : Պէտք չէ որ քեզ սիրոդներէն վախճառ:

— Ըստ շուտ սիրոյ վրայ կ'իսօսիս, պարոն — ըստ նորատի կինն իր դլու խն օրելով :

— Վասն զի ուրը շուտ և առաջին անգամ բռնեց զիս, և ես զեռ հազիւ քուն տարեկան եմ :

«Տարատի կինը գաղտ անոր երեսը նայեցաւ :

— Մափէ ըրեւ, արդէն զարծին ծայրը գտած եմ — ըստ ա՛Արդանեան . — երեք ամիս առաջ քիչ մնաց Արամիսի հետ մնամարտոթիւն մը պիտի ունենայի թաշկինակի մը համար որ իր տունը զանուող կնկան ցոց տուած թաշկինակիդ կ'նմանէր, այն պիտի թաշկինակի մը համար որ նոյն նշանն ունէր անտարակոյաւ :

— Պարոն — ըստ նորատի կինը — կ'երդնում որ դլուիս կը ցացինես այդ քու հարցումներովգդ :

— Բայց դու ևս, զու որ այդշափ խոհեմ ես, աիկին, մնամձէ անգամ մ'որ՝ եթէ այդ թաշկինակովդ բռնուիս, և այդ թաշկինակը ձեռքէդ առնուն, արդեօք վտանգի մէջ չես ընկնիր:

— Ինչո՞ւ համար, միթէ անոր սկզբնատառերն իմն չեն, ք. զ. , Քօնսդանս Պօնտասիէօ :

— Կամ Քամիլլ ար Պուա-Դրասի :

— Լութիւն, պարոն, նորէն կ'ըսեմ, լութիւն : Ա՛հ, քանի որ անկարեկիր ես ինձ հասնելիք վտանգներուն, դէթ մնամձէ այն վտանգներուն որ կրնան քեզի պատահիլ :

— Ա՞նձ :

— Այս , քեզ : Բանափի վասանց կոյց . զիս հանչելուդ համար մահ կոյց :

— Արեմն քեզ պիտի լողալում :

— Պարտն — ըստու նորաստի կինն աղերսազին և ձեռներն իրարու կցելով — պարոն , յանուն Աստուծոյ , յանուն զինուրականիդ պատույն , յանուն աղջուականիդ մարգավարութեան , Հեռացիր անկից , ահա , արդէն կէս զիշեր կ'զարնէ , ճիշտ այս ժամանու կ'սպասեն ի՞նձ :

— Տիկին — ըստու պատանին ձռելով — այդ կերպով զիս ազատվեմ չեմ կարող բան մը մերժել . զոհ եղիր , ահա կ'հեռանամ :

— Բայց ետեւս չպիտի զատ , լրտեսութիւնն չպիտի ընես , այնպէս չէ :

— Անմիջապէս տունս պիտի գաւանամ :

— Ահ , քաջ զիսէի որ բարեմբառ պատանի մ'ես — զոչեց տիկին Պօնասիէօ մէկ ձեռքը կարկառելով և միւս ձեռքը զրեթէ պատին մէջ զանուած փարբիկ զրան մ'ուռին վրայ զնելով :

Տ'Արդանին երկնցած ձեռքը բռնեց և եռանդազին համբուրեց :

— Ահ , առելի լսու ոնէի քեզ բնառ շանոնել — զոչեց ա'Արդանին անեմեղ կոշտութեամբ մը զոր կանայք նախաղաւ կ'համարեն քան քաղաքավարութեան հասպանքը , վասն զի անով մաքի խորն երևան կելնէ , և կ'հասկցուի որ զդացու մը բանականութեան վրայ յաղթանակը կ'տանի :

— Լաւ ուրեմն — վրայ բերաւ տիկին Պօնասիէօ զրեթէ զըդուելի մայնով մ'ու ա'Արդանինենի ձեռքը սեղմելով , որ անորը չէր ձգած — լաւ ուրեմն , ես քեզի չափ սիրոս չպիտի բանամ , այսօրուան կորուստն ապագային համար կորուստ չէ : Ով զիտէ , եթէ օր մ'ազատ զանուիմ , հետաքրքրութիւնդ զոհ չպիտի ընեմ :

— Եւ միթէ պիրայ նոյն խոստումը կ'ընեն — զոչեց ա'Արդանին յետին ծայր ուրախութեամբ :

— Ահ , այդ մասին չեմ ուզեր բնառ խօսք տալ , այդ բանինձ ներշնչելիք զդացումներէդ կոխում պիտի ունենայ :

- Աւրեմն , առ այժմ , տիկին . . . .
- Առ այժմ , պարսն , մի միայն երախտադիտութիւն ունիմ քեզ :
- Ա՛հ , շատ չքնաղ ես — ըստ ա'Արդանեան տրտմութեամբ — և իմ սէրս չարաչար կ'զործածես :
- Ա՛հ , քու վեհանձնութիւնդ կ'զործածեմ միայն : Բայց բաջ դիտցիր որ կան անձեր որ վաղ կամ անազան կորուստ մը ձեռք կ'ձգեն :
- Ա՛հ , չափազանց երջանիկ կ'ընես զիս : Այս զիշերը մի մասնար , ոյդ խոստումդ մի մոռնար :
- Հանդարս եղիք . երբ ժամանակն ու տեղը զայ ամեն բան պիտի յիշեմ : Լաւ , հիմակ մեկնէ զնա , յանուն Աստուծոյ : Ճիշտ կէս զիշերին կ'սպասէին զիս և ոչ մացած եմ :
- Լոկ հինգ վայրիկեան :
- Այս , բայց կան պարագաներ որ հինգ վայրիկեան՝ հինգ դար են :
- Սիրութներու համար :
- Լաւ , ուր զիտես որ զործս սիրովի մը հետ չէ :
- Աւրեմն մարդ մը կ'սպասէ քեզ — դոչեց ա'Արդանեան — մարդ մը :
- Օ՞ն , ահա նորէն վիճաբանութիւնը պիտի սկսիս — ըստ տիկին Պօնասիէօ կէս ժապտով մ'որ անհամբերութեան նշոյլ մը տնէր :
- Ա՛հ , ո՞չ , ահա կ'երթամ , կ'հեռանամ : Քեզի կ'հաւտամ , իմ անձնութերութեանս արժանիքը վայելել կ'ուզեմ ! եթէ այս անձնութերութիւնս անմասութիւն մ'անդամ լինի : Մ'նաս բարե , տիկին , մասս բարե :
- Եւ ա'Արդանեան ցնցում մը տալով միայն բռնած ձեռքը թողւ կարող եղաւ՝ և վաղ ՚ի վաղ հեռացաւ , մինչդեռ տիկին Պօնասիէօ՝ ինչպէս փեղկին , նոյնպէս դրան կ'զարնէր երեք ծանր ու կանոնառ հարուած , յետոյ փողցին անկիւնը հասնելով՝ դարձաւ . դուռը բացուեր ու դոցուեր էր , սիրուն փերեզակուշին աներեցյթ եղեց էր :

Տ' Արդանեան իր համբան շարունակեց . խօսք տուեր էր այս  
կին Պօնասիկ օն չլրտեսելու , և եթէ կեանքն անգամ նոյն տիկ-  
նոջ զացած տեղէն , կամ անոր ուղեկից զտնուելու անձէն կա-  
խում ունենար իսկ , դարձեալ ա՛Արդանեան իր տունը պիտի  
դառնար , քանի որ ըսեր էր թէ իր տունը կ'զառնար : Հինգ  
վայրինեն նեն Քօսուայէօր փողոցը մասեր էր :

— Խեղջ Աթոս — կ'ըսեր նա — չպիտի հասկնայ թէ ինչ  
կ'նշանակէ այս բան : Անշոշտ ինձ սպասելու ատեն քունը տա-  
րած կամ տուն գարձած է , և նոյն ատեն կնկան մը դալուսան  
իմացած է : Կին մ՛Աթոսին սենեակը : Այլ սակայն — շարու-  
նակեց ա՛Արդանեան — միթէ Արամիսին տունն ալ կին մը չկա՞ր :  
Այս ամէնը տարօրինակ կ'թուի ինձ , և շատ հետաքրքիր եմ ի-  
մանալու թէ ինչ վերջ պիտի առնու :

— Ծատ զէշ , պարոն , շատ զէշ — պատասխանեց ձայն մը .  
պատանին հանչեց որ Բլանչէին ձայնն է այն , վասն զի բաղ-  
մազրազ մարդոց պէս՝ բարձր մնախօսելու ատեն՝ մտեր էր այն  
անցքն որուն խորը խոցը տանող սանզողը կ'զանուէր :

— Ի՞նչպէս զէշ , ի՞նչ ըսել կ'ուզես , ապուշ — հարցոց  
ա՛Արդանեան — ի՞նչ նոր բան պատահեցաւ :

— Ամէն ատեսակ զէշութիւն :

— Ի՞նչ :

— Նախ Պ . Աթոսը ձերբակալ ըրին :

— Ձերբակալ ըրին , ձերբակալ , և ինչո՞ւ :

— Զինը տունդ զտան , կարծեցին թէ դուն ես :

— Եւ ով ձերբակալ ըրաւ զանի :

— Այս պահակները՝ զոր տունէդ վրնտած սկազէմ մարդիկը  
միասին բերեր էին :

— Ինչո՞ւ համար ինքզինը շյայտնեց . ինչո՞ւ համար չըստ  
որ այս զործին մէջ մատ շտնէր :

— Զդուշացաւ այդ բանն ընելու : պարոն . ընդ հակառակն  
ինձ մօտեցաւ և բառ , և Քու տէրդ այս միջոցին ազատ լինելու  
պէտք ունի , և չէ թէ ես . որովհետեւ ամէն բան դիտէ , իսկ

եւ ոչ ինչ չգիտեմ։ Պիտի կարծուի թէ ձերբակալ եղած է և ասով ժամանակ պիտի ունենայ զործելու։ Երեք օրէն պիտի ըստ թէ ովլ եմ, և այն առն հարկան դիու կ'արձակեն»։

— Կեցցէ Աթոս, ազնիւ սիրու — մրմուց ա՛Արդանեան այս խօսքէն զինքը կ'անհչեմ։ Եւ ի՞նչ ըրին փառուորները։

— Չորս հոգի առին և չգիտեմ ուր տարին զինքը։ Պատղիյ կամ Գօր լ'Էվլէք։ Երկու հոգի ու մարդոց հետ մնացին, որ ամէն կողմ՝ պրապեցին և ամէն թղթերն առին։ Վերջապէս յետին Երկուըն ալ՝ այս արշակն առն զրան առջեւ պահպանութիւն կ'ընէին։ յետոյ ամէն բան վերջանալուն՝ մեկնեցան, տռունք պարուալ և բաց թռողլով։

— Հասկա Բորթոս և Արտիմ։

— Զանոսնք չէի դտած, չէկան։

— Բայց կրնան ժամէ ժամ՝ զալ, վասն զի խմաց չսունիր որ իրենց կ'սպասեմ։

— Այս, պարոն։

— Լաւ, այս տեղէն մի՛ շարժիր, եթէ զան։ խմացուր անոնց զլիսիս եկածը։ Թող զիս Բօմ-աը-բէն զինետունը սպասեն։ այս տեղ վտանգ կայ։ կարելի է տան չորս զին լրտեսներ զրած են։ ու աը Գրեվիլի տունը պիտի զնամ այս ամէնն խմաց տալու, և վերջէն անոնց պիտի միանամ։

— Ըստ լսու, պարոն — ըստ Բլանշէ։

— Բայց դու պիտի մնաս։ յաւասի որ չես վախճառ — ըստ ա՛Արդանեան եւ դառնալով՝ որպէս զի իր սպասաւորին սիրու տայ։

— Անհող եղիր, պարոն — ըստ Բլանշէ — զեռ զիս չես հանչէր, իրու որ քաջ եմ երբ կամիմ, բաւական է որ կամիմ։ ասկէ զատ Բիգարտացի մ'եմ։

— Ուրեմն մեր որոշումն այսպէս է — ըստ ա՛Արդանեան — մահն աչքի պիտի առնուս քան թէ անդէղ շարժիլը։

— Այս, պարոն, և ձեզի որշափ կապուած լինելու յայտնելու համար պատրաստ եմ ամէն բան ընելու։

— Լաւ — ըստ ինքնիրեն ա՛Արդանեան — կ'երեի թէ այս

մանչուն նկատմամբ զործածած միջցոս իրօք ընտիր է . ՚ի հարակն նոյնը պիտի ՚ի զործ գնեմ :

Եւ ա՛Արդանեան՝ թէ և արդէն օրուան պառայաներէն փոքր ինչ յուղնած էր , արադ արադ քալելով Գոլոնպիէ փողոցին կողմը դիմեց :

Պ . ար Դրէ վիլ իր ապարանը չէր . իր զունդը Լովրի պահանութիւնը կ'ընէր և ինքն ալ իր զնզին հետ էր :

Պէտք էր մինչև Պ . ար Դրէ վիլի մօտիլ . կարեոր էր որ անցած զարձածն իմանայ : Տ՛Արդանեան փոքր փորձեց Լովր մըտնելու : Տէզէսարի զնիին մէջ ունեցած զգեստը կրնար իրեն իրեւ անցազիր ծառայել :

Աւատի Բըդի-Օկիւադէնի փողոցն իջու , և քարափն ՚ի վեր ելու Բօն-Կէօֆ համելու : Պետք մը լաստափայտէն անցնելու մտադրեց , բայց ջրափը զալուն՝ մէքենապէս ձեռքը զրպանը տարեր էր և անսեր էր որ լաստափարին վճարելու ստակ շոնէր :

Կէնէկօ փողոցին վերի կողմը համելու առեն՝ որ Տօֆին փողոցէն երկու հոգիէ խմբուի մը կ'ելնէր որոց քալուածքը զինքը զարմացուց :

Այս խմբակին երկու անձնեն էին , մին այր մը , միւսը կին մը : Կինը Պօնասիէօ տիկնոջ ձեն ունէր , իսկ մարդը խարուելու շափ կ'նմանէր Արամիսի :

Ասկէ զամ՝ կինը հացեր էր այն սև լողիկն՝ որուն նկարը տակաւին կ'առնենէր ա՛Արդանեան Աօժիբար փողոցի փեղկին և լա Հարր փողոցին դրան վրայ :

Խոկ մարդը հրացանակիրի համազդեստը կ'կրէր :

Անկան կիզուզը զլուխն էր , մարդն իր թաշկինակն երեսին բաներ էր , ինչպէս որ այս կրկնակի զգուշութենէն կ'իմացուէր : Երկուքնին ալ ու բեմն հոգ կ'ընէին որ չճանչուին :

Կամուրջը հասան , այս էր նաև ա՛Արդանեանի ճամբան , և որովհետեւ ա՛Արդանեան Լովր կ'երթար , անոնց հետեւցաւ :

Հազիւ ա՛Արդանեան քսան քայլ առեր էր որ համազուցաւթէ այն կինը Պօնասիէօ տիկնին էր , և այն մարդն Արամին էր :

Նայն պահուն իսկ զգաց նախանձու բոլոր կամկածներն որ իր նիրար կ'ըրդովէին :

Արկնապէս մատնուած կ'երեէր թէ իր բարեկամէն և թէ այն անձէն զոր իրեն իր սիրուհին կ'սիրէր : Տիկին Պօնասիէս մնձ մնձ երդումներով հաստատեր էր թէ ինքն Արամիսը չճանչէր, և քառորդ մ'եաբը՝ Արամիսին թեր կ'տեսնէր զանի :

Տ'Արդանեան և ոչ իսկ մատնեց որ երեք ժամէ ՚ի վեր միւ այն կ'ճանչէր սիրուն փերեղակուհին, որ քիչ մ'երախտաւ իսութիւն միայն պարտառոր էր իրեն զինքն առեանզել ուզող սև մարդերէ ազատնելուն համար, և թէ իրեն ոչ ինչ չէր խռոսացած, այլ իրը նախատեալ, մատնեալ սիրող մը նկատեց ինք զինքը, արինն ու զայրայթն երեսին զարկին, միուքը դրաւ ամէն կասկած փարատել :

Նորասափ կինն ու երիտասարդը դիտեր էին արդէն որ իրենց հետեղով կայ և առելի արագ քալել սկսեր էին : Տ'Արդանեան իր ընթացքը շարունակեց, յառաջ անցու, յետոյ անոնց վրայ քալեց Ռիշտ այն միջոցին որ Սամարացին առ զի կ'զանու էին, որ լուսուորուեր էր կամրջին այն կողմն իր լոյսը սփոռող լամ պարով մը :

Տ'Արդանեան անձնց առջեւ կանկ առու. և անոնք ալ անոր առջեւ կանկ առին :

— Ի՞նչ կ'ուզես, պարոն — հարցոց հրայտանակիրը, քայլ մ'ետ երթալով և օտարականի շեշտառ մ'որմէ տ'Արդանեան ըսկաւ հասկնալ որ իր ենթադրութեանց մէկ մասը սխալ պիտի ելնէ :

— Արամիս շեմ զու — զուեց նա :

— Ո՞ւ, պարոն, Արամիս շեմ, և քու բացաղանչութենէդ դուշակեցի որ զիս ուրիշի տեղ առեր ես, ուստի քեզի կ'ներեմ :

— Ինձ կ'ներեն մի — զուեց տ'Արդանեան :

— Այս — պատասխանեց անձանօթը : — Աւստի թօյլ տուր նր անցնիմ, քանի որ զործդ ինձի հետ չէ :

— Երաւունք ունիս, պարոն — պատասխանեց տ'Արդանեան զործս քեզի հետ չէ, այլ այս աիկնոջ հետ է :

— ԱՇԽԱ ամիկնո՞յ հետ . դու չես ճանչեր զանի — ըստ . օտարականը :

— Կ'օխալիս , պարոն , զանի կ'ճանչեմ:

— ԱՇԽԱ — ըրաւ տիկին Պօնասիէօ յանդիմանութեան ձայնով մը  
ա՛չ , պարոն , ես քու զինորականի խօսք , ու աղասորդին  
խօստումգ ունէի , և կ'յուսայի անոնց վստահիլ :

— Եւ ես , տիկին — ըստ . տ'Արդանեան շփոթած — ես ալ  
քեզնէ խօսք առեր էի . . . .

— Թեև մտիր + տիկին — ըստ . օտարականը — ու մեր Ճամբան  
շարունակենք :

Սակայն տ'Արդանեան՝ այս հասած բաներուն վրայ ինովին շր-  
փոթած , վհատ և ամօթահար՝ և թեւերը խաշաձե կ'կենար կան-  
դոն հրացանակրին և տիկին Պօնասիէօի առջեւ :

Հրացանակիրը երկու քայլ առաւ և ձեռոքը տ'Արդանեանը հե-  
ռացուց :

Տ'Արդանեան դէպ ետին ոստում՝ մ'ըրաւ և սուրը քաշեց :

Նոյն պահուն և փայլակի շուտութեամբ անձանօթն իրը հանեց :

— Յանուն Նատուծոյ , միլօր — գոչեց տիկին Պօնասիէօ եր-  
կու մարտիկներուն մէջ նետուելով և լիարուն սրերը բռնելով :

— Միլօ՛ր — գոչեց տ'Արդանեան յեղակարծ դաղափարով մը  
լուսուորուած — միլօ՛ր , ներէ , պարոն , բայց միթէ դու ես . . . .

— Միլօր Պլքինկէմի դուբը — ըստ տիկին Պօնասիէօ կի-  
սաձայն — և հիմակ իրնաս եթէ կամիս ամենքնիս ալ ՚ի կորուստ  
մատնել :

— Միլօր , տիկին , ներում , հագար անդամ ներում կ'ինդ-  
րեմ . բայց զանի կ'սիրէի , միլօր , և կ'նախանձէի . զիտես թէ  
ինչ ըսել է սիրել , միլօր . ներէ ինձ , և ըսէ թէ Քու շնոր-  
հափայլութեան սիրոյն սպաննուելու համար ի՞նչ պէտք է որ ը-  
նեմ :

— Դու քաջասիրտ սրատանի մ'ես — ըստ . Պլքինկէմ տ'Ար-  
դանեանի երկարելով ձեռքը զոր այս վերջինը յարդանօք սեղ-  
մաց — դու ծառայութիւններդ կ'ընծայես ինձ , կ'ընդունիմ զար-

նոնք . քսան քայլ հեռուէն մեզ հետեւ մինչև Լուվը , և եթէ  
մեզ լրտեսող գտնուի , զանի սպաննէ :

Տ'Արդանեան իր մերկ սուրբ թեփն տակը դրաւ , թողոց որ  
արկին Պօնասիէօ և գուքար քսան քայլ հեռուանան , և ապա ա-  
նոնց ետևէն գնաց՝ Շարլ Ա.ին աղնիւ և վայելլացեղ պաշտօ-  
նէին հրահանգը կէտ առ կէտ 'ի գործ դնելու սպարաստուելով :

Քայլ երջանկարար նորատի սէյիտն իր անձնուիրութեան այս  
նշանը տալու բնաւ առիթ մը չունեցաւ , և նորատի կինն ու  
դեղանի հրացանակիրը Լուվը մտան Եշէլի դրնակէն առանց որ և  
է արգելքի :

Խոկ ո՞նրոշանեանի գալով՝ խսկոյն Բօմ - աը - Բէնի զինեառնը  
գնաց , ուր Բորթոս ու Ռասմիս իրեն կ'սպասէին :

Քայլ անոնց պատճառած ծանրութեան համար ուրիշ բացա-  
տրութին մը տպատ մտօք՝ ըստ միայն որ առանձին լմնցոցեր  
էր այն գործն որուն համար պահ մը կարծեր էր թէ անոնց ա-  
ջակցութեան կարօս էր :

Եւ հիմակ որ մեր պատմութենէ մըշտած ենք , թողոնք որ այն  
երեք բարեկամներն իրենց տունը գտանան , և մենք Լուվրի պատ  
'ի պատ անցըերէն՝ ոլքինկհէմի դքսին և անոր առաջնորդին հե-  
տևինք :

## ՃԲ

### ԺՈՐԺ ՎԻԼԻԷ . ԴԱՒ-ԷՍ ՊԵ-ՔԻՆԿՀԵՄԻ

Տիկին Պօնասիէօ և գուքան առանց գժուարութեան Լուվը մը-  
տան . տիկին Պօնասիէօ իրր թագուհւոյն տպասուհին ծանօթ էր .  
Դուքար ու . աը Դրէվիլի հրացանակրաց համազգեստը հազեր էր ,  
և ինչպէս որ արգեն ըստնք , ու . աը Դրէվիլ այն իրիկուն պահ-

պահութիւն կ'ընէր : Ասկէ զատ՝ ժէրմէն թագուհոյն գաղտնեաց հաղորդ էր , և եթէ բան մը պատահէր , տիկին Պօնասիէօ պիտի ամրաստանուէր որպէս թէ անոր սիրահարը Լուվը մոցուցեր է , բոլոր ինդիրն այս էր . այս կինն իր վրայ կ'առնուր յանցանքը , իր անունը պիտի կորուսէր իրաւ , բայց աննշան փերեզակուհիի մը պատիւն ի՞նչ արժէք կրնար ունենալ աշխարհիս մէջ :

Երբ մի անգամ գուքսն ու նորասի կինը գաւթին ներսի կողմը մտան , իրը քսան հինգ քայլ միջոց մը պատին ստորոտը քերեցին անցան . սոյն միջոցն անցնելէն ետե՛ տիկին Պօնասիէօ սպասատան մէկ փոքրիկ գուռը հրեց , դուռ մ'որ ցերեկը բաց , բայց սովորաբար զիշերը դոց էր՝ և ինքնին բացուեցաւ . երկոքնին ալ ներս մտան և ինքզինքնին մութը գտան . բայց տիկին Պօնասիէօ Լուվի այն մասին ծակ ու ծուկը զիտէր և սպասաւրաց յատկացած էր : Իր ետևէն գռները դոցեց , դբխն ձեռքը բռնեց , առ թարթափ քանի մը քայլ առաւ , բազրիք մը գտաւ , ոտքովն աստիճանի մը գտաւ , և սկսաւ սանդղէ մը վեր ելնել դուքսն երկու դատիկոն համբեց : Յետոյ աջ կողմը զարկաւ , երկար նրբազաւթէ մ'անցաւ , նորէն ուրիշ դատիկոնէ մը վար իջաւ , զեռ ևս քանի մը քայլ քալեց , կղպակէ մը բանալի մ'անցոց , դուռ մը բացաւ և դուքսը հրեց զէպ 'ի սենեակ մ'որ միայն զիշերուան կանթեղով մը լուսառորուած էր , բսելով . «Այս տեղ կեցիր , միլօր , հիմակ պիտի զան քեզ առնլու» : Յետոյ տիկինը նոյն գռնէն դուրս ելաւ , զոր բանալիով դոցեց , այնպէս որ գուքսը լիովին բանստարիկեալ մնաց :

Սակայն որչափ որ լիովին միայնակ էր , պէտք է խստովանիլ որ Պըրբնկէմի գուքսը պահ մ'անգամ երկիւղ յզգաց . իր ընառորոթեան նշանաւոր մէկ կողմն էր բաղդախնդրութիւնն ու ասպետականութեան սէրը : Արի , Ժպիրհ և ձեռներէց լինելով՝ դուքսն առաջին անգամ չէր որ կեանքը վտանգի մէջ կ'զնէր այսպիսի արկածներով . իմացեր էր որ Աննա թագուհոյն շինծու պատգամաւորութիւնը՝ որու հաւտալով Քարիզ եկեր էր . ձուղակ մ'է . և փոխանակ Անկիլս վերադառնալու՝ այն իր ա-

կամոց գիրքէն օգուտ քաղելու յուսով՝ թաղուհոյն խմաց տուեր էր որ առանց զինքը տեսնելու չպիտի մեկնի : Նախ թագուհին բացէ ՚ի բաց մերժեր էր անոր ինդիրը , բայց վերջո վախցեր էր որ գուբար զայրանալով խենդրութիւն մը չընէ : Արդէն որոշեր էր զանի ընդունելու և աղաչելու որ իսկոյն ձամբաց ելնէ , երբ այս որոշումն ըրած իրիկունն իսկ՝ տիկին Պօնասիէօ՝ որ գոտքն երթալ դանել և լուվո բերելու պաշտօն ունէր , յափշտակուեր էր : Երկու օր շարունակ չղիտէին թէ գլխին ինչ փորձանք եկեր էր և ամեն բան կախ մնայ : Բայց երբ մի անդամ ազատութիւնը դառաւ և լա հօրդին հետ յարաբերութիւն հաստատեց , գործերն իրենց սովորական ընթացքն առեր էին , և հետեւապէս այն վրտանքալի գործին ձեռնարկեր էր՝ զօր երեք օր առաջ պիտի կատարէր եթէ Ֆերբակալ չինէր :

Պլքինկհէմ մինակ մնալով՝ հայլիի մը մօտեցաւ : Հրացանակրի հագուստը շատ կը վայլէր իրեն :

Այն միջոցին օր երսուն տարեկան էր՝ իրաւամբ Ֆրանսայի և Անկից ամենէն զեղանի , ազնուական և վայելուչ ասպետը կը սեպուէր :

Ժօրժ Ա.իլիէ , Պլքինկհէմի գոտքօր՝ երկու թագաւորներու մտերիմը , միլիոններու տէր , գերազօր այն թագաւորութեան մէջ զոր ըստ հաճոյս կ'վրդովէր և կ'անդորրէր՝ այնպիսի առասպելական կեանք մը վարելու սկսեր էր՝ որ գարերու ընթացքին մէջ՝ ազագայ սերնդին իրբե հիմանալի մէկ երեսյթը կ'մնայ :

Ուստի՝ ինըն իրմէ վստահ , իր զօրութեան վրայ աներկեան և աներկմատ լինելով որ ուրիշ մարդիկը վարող օրէնքն իր վերայ ոյժ չտնին , իր որոշած նպատակին շխտակ կը քալէր , թէ և այս նպատակին այնքան բարձր և շողշողուն լինէր որ ուրիշն համար անոր ակնարկել իսկ յիմարութիւն կրնար համարուիլ : Ահա այսպէս շատ անդամ Ըւստրից տան զեղանի և հպարտ Աննա թագուհոյն մօտենալու և ննդզինքը սիրել տալու յաջողեր էր՝ իր անչափս հմայելի ձրիւքը :

Արդ՝ ժօրժ Ա.իլիէ հայլիի մը դիմացն անցաւ , ինչպէս որ ը-

սինք , իր գեղեցիկ դեղձան զիսարկը՝ որ իր դլիսարկին ծանրութենէն աւրուեր էր՝ գեղածուափ յարդարեց , պեխերը վեր վերաց , և սիրոն ուրախութեամբ փքացած՝ երկար ասենէ վեր անձկացած ժամուն մօտենալուն վրայ ինքզնքը բարեբաստիկ համարելով և պանծարով՝ ինքնիրեն ժառեցաւ . գոռողութեամբ և յուսագրութեամբ : Կոյն պահուն օթոցին ետին ծածկուած դուռ մը բացուեցաւ և կին մ'երեւան ելաւ : Պըթինկէմ այս երեսյթը հայլին մէջ նշմարեց , ազարակ մ'արձակեց նոյն ինքն թագուհին էր :

Այն ատեն Աւատրիոյ տան Աննա դշնոյն քսան վեց քսան եօթտարու . էր , այսինքն իր գեղեցկութեան ամենէն փայլուն ժամանակին մէջ կ'զանուէր :

Թագուհոյ կամ գիցուհոյ մը քալուածն ունէր . իր աշերը՝ որ զմրուխտի նշոյնքն էր կատարելապէս գեղեցիկ էին , և միանգանցոյն անուշութեամբ և վեհափառութեամբ լի :

Իր բերանը փոքր ու կարմրուն էր , և թէն ստորին շուրթը՝ Աւատրիոյ տան իշխանացը պէտ՝ միւսը կ'ծածկէր թեթևակի , դարձեալ յետին ծայր շնորհալի էր 'ի մպիտ , բայց նաև մէծապէս արհամարհու ՚ի քամահան :

Իր մորթին իրը քնրուշ և թաշանման կ'յիշուէր , իր մեռներն ու թերը հիանալի գեղութիւն ունէին , և ժամանակին բոլոր բանահիւներն իրքեւ անհամեմատ զանոնք կ'երգէին :

Աերջապէս իր մաղերը՝ որ մանկութեան ժամանակ գեղձան խարսէշ դարձեր և ցանցաւ ու փոշելից զանգուրներով էին՝ պանչելապէս կ'բրուրէին իր գէմքը , ամենէն անաշառ դատարձնիչը թերեւ փափաքէր որ նուազ կարմիր լինէր գէմքը , և ամենէն պահանջող անդրիագործը՝ որ աւելի նուրբ լինէր քիթը :

Պըթինկէմ պահ մը շացած մնայ . Երբէք Աննա թագուհին այնքան գեղանի չէր երեւած իր աշքին պարահանդէմներու , տօներու մէջ՝ որչափ երեցաւ նոյն միջոցին , մինչդեռ սպիտակ ըշնդուսէ պարզ շրջազգեստ մը հագեր և Տօնա Էստէ ֆանիաի ընկերակցութեամբ եկեր էր , այս Տօնա Էստէ ֆանիան որ՝ իր սպառ

Նիսցի կանանց մէջ միայն՝ չէր վաճառուած թագաւորին նախանձեն և Ռիշլիէօի հալածանքէն :

Աննա երկու քայլ առաւ ընդ առաջ. Պլբինկչէմ անոր ծանկն ընկաւ, և թագուհին այս բանա արդիլելու չատիկած՝ զուքն անոր շրջապղեստին ծայրը համբուրեց :

— Դուքս, դիտես արդէն որ քեզի հասած զիրն իմ կողմէ չէր :

— Ո՞չ, այո՛, տիկին, այո՛, վեհափառ թագուհի — զուց գուքսը — զիտեմ որ յիմար, ապուշէի կարծելու որ ձիւնը կըրհայ վառիլ, որ մարմարը կրնայ տաքնալ. բայց Բնչ օգուտ, երբ մարդ կը սիրէ՛, զիւրաւ կ'հաւասայ սիրոյ. դարձեալ այս ուղեւորութեամբ ամէն բան մեջ անցոց չելայ, քանի որ քեզ կ'առնեմ:

— Այո՛, — պատասխանեց Աննա — բայց դիտես թէ ի՞նչ սպառնառաւ և ի՞նչպէս քեզ կ'առնեմ. վասն զի իմ գշտացու անկարեկիր՝ յանառելով մնացիր քաղաք մ'ուր մնալով՝ կ'անդդ վասնզի մէջ կ'ձգես նոյնպէս և իմ պատիւո, քեզ կ'առնեմ ըստլու համար որ ամէն բան մեզ իրարմէ կ'զատէ՛, այս է ծովաւ ան դունդները, տէրութեանց թշնամութիւնը, երգումներու արրութիւնը : Սրբապղծութիւնն է այսչափ խոշընդուներու դէմ ոգորիլ, միլօր : Վերջապէս քեզ այժմ՝ կը տեմնեմ ըսելու համար որ այս հետեւ պէտք չէ որ տեմնուինք :

— Խօսէ՛, ափիկին, խօսէ՛, թագուհի — բայս Պլբինկչէմ. — ձայնիդ անուշութիւնը խօսրիդ խօսութիւնը կ'մեղմէ : Սրբապղծութեան խօսք կ'ընես, բայց սրբապղծութիւնն այն է որ Աստուծոյ իրարու համար ոտեղծած սիրտերը զատելու կ'ջանան :

— Միլօր — զուց թագուհին — կ'մոռնաս որ երբէք չօսի քեզի թէ քեզ կ'սիրեմ :

— Բայց նաև երբէք ըսած չունիս որ զիս չես սիրեր, և արդարեայսպիսի խօսքեր ըսել. Չեր վեհափառութեան կողմէ մեծ ապերախտութիւն մ'է : Աւան զի, ըսէ՛, ուր կ'զանուի իմ սիրոյս նման սէր մը, սէր մը զոր ո՛չ ժամանակը, ո՛չ տարակայութիւնը, ո՛չ յուասհատութիւնը չեն կարող մարել, սէր մ'որ

կ շատանայ լրկ մողոր ժամառէն մը , անհրոշ ակնարկ մը , վա-  
խսանայ խօսք մ' ընդօւնելով :

«Երեք տարիի կայ , տիկին , որ քեզ առաջին անգամ տեսայ և  
երեք տարիիշ վեր այսպէս կ'սիրեմ քեզ :

«Առաջե՞ն որ ըսեմ քեզ թէ ինչպէս հաղուեր էիր երբ առա-  
ջին անգամ տեսայ քեզ . կուզես որ հաղուսիդ մանր զարդերը մը  
առ մի յիշեմ : Ահա , գեռ ես կը տեմնեմ քեզ : Ըստ սպանիա-  
կան սովորութեան՝ բարձերու վրայ նատեր էիր . ոսկի և ար-  
ծաթ բանուած կանաչ մոգուսէ շրջապղեսա մը հաղեր էիր , կախ  
թեզաններ՝ որ զեղցիկ թևերուդ , այդ գրանչելի թևերուդ վրայ  
կապէր էիր խոշոր ագամանդներով , զոյց փողպատ մը , զիսիդ  
վրայ շրջազգեստիդ գոյնովս փոքրիկ զգակ մ'ունէիր , և որյն զդա-  
կին վրայ արագիլի փետոր մը :

«Ոհ , ահա , ահա աշերս կ'դոցեմ , և քեզ ինչպէս որ էիր այն  
ատեն՝ կ'տեսնեմ . կ'բանամ զանոնք , և քեզ ինչպէս որ ես այսմ՝  
կ'տեսնեմ , այսինքն հարիւր անգամ աւելի զեղանի :

—Ի՞նչ յիմարութիւն — մրմուց Աննա թագուհին որ արիու-  
թիւն չունէր դուքսը մեղադրել սրտին մէջ այնպէս լաւ պահէլուն  
իր նկարը — ի՞նչ յիմարութիւն է այդպիսի յիշատակներով անօ-  
դուա սէր մը տածել :

—Ուրեմն ի՞նչ բանով կուզես որ ապրիմ . եռ միայն յիշատակ-  
ներ ունիմ : Այս է իմ երջանկութիւնս , իմ զանձս , իմ յոյս ,  
Ամէն անգամ որ քեզ տեմնեմ նոր ագամանդ մը սրտիս դզրոցին  
մէջ կ'փափեմ : Այս չորրորդ ագամանդն է զոր ակամայ կ'նե-  
տես և ես զայն կը ժողմեմ . վասն զի երեք տարուան մէջ , տի-  
կին , չորս անգամ միայն տեսայ քեզ . առաջինն է այն որուն վը-  
րայ արդէն խօսեցայ , երկրորդը՝ տիկին Շէվուօզի առնը , եր-  
րորդը՝ Նամինի պարտիզնն մէջ :

—Դուքս — ըստ թագուհին շիկնելով — մի խօսիր ինձ այն  
երեկոյեան տեսութեան վրայ :

—Ոհ , ընդ հակառակն խօսինք , տիկին , խօսինք այն երե-  
կոյին վրայ , իմ կենացս երջանիկ և շողուն երեկոյն էր : Այի-

շնչարդեաք թէ ի՞նչ գեղեցիկ դիշեր մ'էր . ի՞նչպէս օդն անոյշ և հոտաւէտ , ի՞նչպէս երիբն կապցաւ էր և աստեղազարդ :

«ԱՇԿ , այն անգամեռն , տիկին , կարող էի պահ մը քեզի հետ միայնակ մնալ , այն անգամ պատրաստ էիր ամէն բան ինձ ըսելու , կենացդ միայնութիւնը , սրտիդ վիշտերը : Թեևիս կրթներ էիր , ահա այս թերիս : Գլուխու քու կողմդ ծռելու կզգայի գեղափայլ մաղերդ որ գէմիս կը շցյէին , և ամէն անգամեռն որ շոյէին ոտքէս ցգլուխ սարսուռ մը կ'զգայի : ԱՇ , թագուհիք , թագուհիք , ո՛հ , զգիսես թէ ի՞նչ երկնային երանութիւններ , ի՞նչ եղեմական բերկրանք կ'պարունակէ այնպիսի վայրկեան մը : ԱՀա իմ գոյըս , իմ հարստութիւնս , իմ փառքս , իմ կինացս մնացած օրերը կ'զոյէի արդարն այնպիսի ժաման մը համար , այնպիսի դիշերուան մը համար . վասն զի այն դիշեր , տիկին , այն դիշեր՝ կ'երդնում որ՝ զիս կ'սիրէիր :

—Միլօ՛ր , այո՛ , կարելի է որ տեղւոյն ազգեցութիւնը , նոյն աղւոր երեկոյեան հրապարյը , քու ակնարկիդ հմայութիւնը , վերջապէս այն բիւրաւոր պարագաներն որ կին մ'ի կորուստ մասնելու համար կ'գաւակցին՝ այն աղետաբեր երեկոյն ալ միացած է-ին իմ չորս կողմօ . բայց տեսար անշտշտ : միլօր , թագուհին տկարացող կնկան օգնութեան եկաւ . այն ինչ առաջին խօսք մը ըսելու իշխեցիր , այն ինչ քու ժպրհութեանդ պատասխանելու հարկ տեսայ , մայրս քովս կանչեցի :

—ԱՇ , այո՛ , այո՛ , ըսածդ ստոյզ է , և իմ սէրէս տարրեր սէր մ'այս փորձով պիտի ընձնէլը անշտշտ . բայց իմ , իմ սէրս նոյն փորձին վրայ աւելի հրատապ և յաւիտենական դարձաւ : Կարծեցիր թէ Բարիկ գալով կդնէ կ'հեռանաս , կարծեցիր թէ չպիտի իշխէի տիրոջս հմկելու համար ինձ յանձնած գանձը թողուլ : ԱՇ , ինչ փոյթս է աշխարհիս բոլոր գանձերն և երկրիս բոլոր թաղաւորները : Աւթ օրէն ետքը՝ դարձայ , տիկին : Այն անգամ , ինձի դէմ բան մը չտնեցար ըսելու . իմ վայելած շնորհս իմ կեանքս առ ոչինչ զբեր էի՝ երկրորդ անգամ մ'ալ քեզ տեսնելու համար . ձեռքիդ անգամ չդպոյ , և զիս այնպան հլու և զող ջացած տեսնելով՝ ներողամիտ եղար :

— Այսից զբարտափիներն այս ամեն յիմարութիւններն որպէս անմասն էի, իրենց մատը փաթթվեցին, ինչպէս որ քաջ դիտես, միլօր: Թագաւորը Պ. կարտինալին գրգռութեամբը փոթորիկ մը հանեց. ափկին Վէրնէօն վռնառուեցաւ, բին տանմայ յաբսոր զնաց, ափկին Շէվրէօնն երեսէ ընկատ, և երբ իրը դեսպան Գրանսա վերադառնազ ուզեցիր, նոյն ինքը, թագաւորը, քաջ յիշէ, միլօր, թագաւորն իսկ այդ բանին զէմ կեցաւ:

— Այսից բայց Գրանսա պատերազմով պիտի առժէ իր թշուղորին մերժումը: Այսուհետեւ չպիտի կարենամ ահանել քեզ, տիկին, լաւ, կ'ուզեմ որ ամեն օր իմ զործոցս համբան ականչից հասնի:

«Գիտե՞ս արդեօք ինչ նպաստակ ունի Ռէի արշաւանքին և Առօչէլի բողոքականաց հետ մատղրած նիզակակցութեան խորհուրդն, մի միայն քեզ տեսնելու հաճոցք մը:»

«Յօյս չունիմ զօրքով Բարիղ մանել, քաջ դիտեմ, բայց այս պատերազմը կրնայ խաղաղութիւն բերել, այս խաղաղութեան դաշնաքը դնելու համար բանակցի մը ուէ առ պիտի լինի, և այս բանակցցն ես ինքս պիտի լինիմ: Այս առեն թաղաւորը չպիտի իշխել զիս մերժելու, այն տեսն Բարիղ պիտի վերադառնամ, քեզ պիտի տեսնեմ», և պահ մ'երջանիկ պիտի լինիմ: Կրաք է որ բիւրաւոր մարդիկ իմ այս երջանիկութիւնն իրենց մահուամբը պիտի զնեն: Բայց ինչ փոյթու է մարդկան կեանքը, բաւական է որ քեզ տեսնեմ: Քերես այս ըստանեց յիմարական բաներ են, թերեւ ցնորք են, բայց ըսէ ինձի թէ որ կինն աւելի սիրահար մ'ունի, որ թագուհին իզնէ աւելի հբատակ սպասաւոր մ'ունի:

— Միլօր, միլօր, ինքը նքդ արդարելու համար այնպիսի բաներ կ'յիշես որով աւելի մեղապարա կ'գտանաս. միլօր, սիրոյ բոլոր այս նշաններդ դրեթէ յանցանք են:

— Որովհետեւ չես սիրեր զիս, ափկին, եթէ զիս սիրէիր, այս ամենը տարբեր աշխով պիտի քննէիր. թէ որ զիս սիրէիր, ոչ, թէ ոք սիրէիր, անչափ պիտի լինէր երջանիկութիւնս, և իմ

ինեւքս պիտի թուէր : ԱՇ, ափկին Շէվրէօղ՝ որուն վրայ պահմառաջ կ'ինօսէիր, ափկին Շէվրէօղ՝ քեզի շափ անգութ չեղաւ, Հոլանատ սիրեց զանի և նա անոր սիրոյն պատասխանեց :

— Տիկին Շէվրէօղ թագուհի չէր — մըմնաց Աննա, ակամայ ընկճելով այսպիսի խորոնկ սիրոյ մը յայտաբարութենէն :

— Աւրեմն զիս պիտի սիրէիր եթէ թադուհի չլինէիր, ափկին . ըսէ, ուրեմն այն ասեն պիտի սիրէիր զիս : Աւրեմն պէտք է հաւտամ որ աստիճաննիդ արժանապատութիւնն է որ քեզիմ մասիս անգութ կ'ընէ, ուրեմն կրնամ մասածել որ եթէ ափկին Շէվրէօղ լինէիր, իսդք Պլքինկչէմն յոյս պիտի ունենար Շնորհապարտ եմ այս անուշ խօսքերուդ, ու իմ գեղապանծ թառգուհիս, հաջար անդամ շնորհապարտ եմ քեզ :

— ԱՇ, միլօր, սխալ իմացար, սխալ մեկնեցիր խօսքս, ըսել չողեցի թէ . . . :

— Լոռոթիւն, լոռոթիւն — ըստու դոքսը — եթէ սխալմամբ երջանիկ եմ, այդ սխալն ուղղելով մի զրկեր զիս անդթօրէն : Դու ինքնին ըսիր, ինձ որոշայթ մը լարեցին, թերեւս անոր մէջ ընկնիմ կորիմ, վասն զի, Ճշմարիտը կ'ուզե՞ս, այլանդակ բան մ'է, բայց քանի մ'ատենէ վեր նախաղղացումներ ունիմ թէ պիտի մեռնիմ : — Եւ դոքսը տիսուր և միանգամայն սիրալիր ժպտեցաւ :

— ԱՇ, Աստուած իմ — զուեց Աննա թագուհին ահարեկ ձայնով մ'որմէ կ'իմացուեր թէ ինչ մնձ հոգ կ'տանէր առ դոքսն, թէև բերնով չէր ուղեր ըսել :

— Այս խօսքս քեզ ահ ազդելու համար չըսի, տիկին, ոիխտեմ որ ծաղրելի իսկ է ըսածս, և հաւտա որ այսպիսի երազներ ընաւ միաքս չեն վրալովեր : Բայց քիչ մ'առաջ ըսած խօսդ, դրեթէ ինձ տուած յոյսդ ամէն բան կ'վճարէ, և 'ի հարկին կ'եանքս անգամ :

— Լաւ ուրեմն — ըստու թագուհին — ես ալ, դոքս, ես ինքս նախազգացումներ ունիմ, ես ալ երազներ կ'տեսնեմ : Երազեցի որ վիրաւոր և արինլուայ տապաստ դետինը կ'տեսնի ի քեզ :

— Զամի կողմէն վիրաւոր, այնազէս չէ, և զաշցնով մը — ընդմիջեց ոլքինեհէմ:

— Այս, այդպէս է, միլօր, ճիշտ է, զաշցնով և ձախ կողմէն: Ով կրցաւ ըսել քեզ որ այսպիսի երազ մը տեսեր եմ: Աստոծոյ միայն հաղորդեցի և այս ալ իմ աղօթիցս մէջ:

— Եւելի խօսք չեմ պահանջեր, ափկին, և կ'նայիմ որ զիս կ'սիրես, շնառ լաւ:

— Ե՞ս քեզ կ'սիրեմ, ես:

— Այս, դու: Միթէ Աստուած ինձ դրկած երազնեբբը քեզ ալ կ'զբիէր եթէ զիս չսիրէիր: Միթէ մի և նոյն նախազգացումները կ'ունենայինք եթէ մնը երկուսին էութիւնը սբառվ հաղորդ չլինէին: զու կ'սիրես զիս, ո՛ թաղուհի, և իմ վրայ պիտի ողբաս:

— Ո՛չ, Աստուած իմ, Աստուած իմ — զոչեց Աննա թագուհին — այս վիճակին իմ կարողութենէս վեր է և անտանելի: Դուքս, բան մ'ըսեմ, յանոն Աստուծոյ, մէկնէ քաշուէ զնա, չդիմեմ եթէ քեզ կ'սիրեմ թէ ոչ, բայց սա իտեմ որ երբէք ուխտադրուժ չպիտի լինիմ: Աւստի հմաս իմ վրայ և զնա: Ո՛չ, եթէ ֆրանսայի մէջ զարնուիս, եթէ Փըանսայի մէջ մեռնիս, եթէ երբէք ենթադրեմ որ մահուանդ պատճառն առ իս ունեցած սէրդ պիտի լինի, այն առեն բնառ չպիտի կարենամ մսիթարատիլ, ինելքս պիտի թուցնեմ: Աւստի մէկնէ զնա, կ'աղերսեմ քեզ:

— Ո՛չ, այդպէս քանի զեղանի ես, ո՛չ, քանիօն կ'սիրեմ քեզ — ըսաւ ոլքինեհէմ:

— Արի զնա, զնա, կ'պաղատիմ քեզ, և վերջէն զարձիր, իբր դեսպան դարձիր, իբր պաշտօնեայ դարձիր, քեզ պաշտպանող պահակակներով դարձիր, քու վրադ հակող սպասաւորներով դարձիր, և այն առեն քեզ առանելով պիտի ուրախանամ:

— Ո՛չ, միթէ ճշմարիտ են ինձ ըսածներդ:

— Այս . . . :

— Լաւ ուրեմն, այդ ներողամտութեանդ մէկ դրաւականը, առարկայ մը տուր որ յիշեցնէ ինձ թէ լսածս երազ մը չէ. այն

ողիսի բան մ'որ կըած լինիս և ես ալ կըելու կարող լինիս, մասնի մը, մանեակ մը, օղակ մը :

— Եւ միթէ պիտի մեկնիս, պիտի մեկնիս, եթէ խնդրած գքեզի տառ:

— Այս :

— Անմիջապես :

— Այս :

— Գրանայէն պիտի ելնեմ, Անկլիա պիտի դառնան :

— Այս երգմամբ կ'խոստանամ:

— Ուրեմն ապասէ, քիչ մը ապասէ :

Եւ Անհա թագուհին իր սենեակը մտաւ և խեղյն դորս եւշաւ՝ փոքրիկ վարզի փայտէ արկղիկ մը ձեռքը բռնած, որուն վրայ իր անուանազիրն սուեղինիկ դրոշմուած էր:

— Ահա առ, դոքա, առ — ըստ նա — և 'ի յիշատակ իմ պահէ :

Պըքինկհէմ արկղիկն առաւ և երկրորդ անգամ ծռնը դրաւ:

— Խօսք տուիր ինձ մեկնելու — ըստ թագուհին :

— Եւ ահա խօսքս կ'բռնեմ: Տուր ձեռքդ, ամիկն, ձեռքդ, և ահա կ'մեկնիմ:

Անհա թագուհին ձեռքն երկարեց աւերը զոցելով և միւս ձեռնով էստէ Փանիսյի վրայ յենլով՝ վասն զի կ'զդար որ կանադուն կենալու ոյժը չպիտի բառէր :

Պըքինկհէմ իր շրմերը խանդազին դրոշմեց այս զեղեցիկ ձեռնին վրայ, յետոյ ոտք ենելով,

— Եթէ չմռոնիմ, վեց ամփս առաջ քեզ պիտի տեսնեմ, տիկին — ըստ նա — եթէ աշխարհս անգամ հիմն 'ի վեր ընել հարկ լինի այս նպատակիս համար:

Եւ իր խոստան հաւատարիմ, սենեկէն դուրս սրացաւ:

Նրբագսթին մէջ Պօնասիէօ տիկնոջ հանդիսպեցաւ որ անոր կ'սպասէր, և որ մի և նոյն զզոշութեամբ և յաջողութեամբ Լուս վրէն դորս առաջնորդեց զանի:

## ԺԳ

ՊԵՐԱՆ ՊՕՆԱԾՈՒՅԻՕ

Խնչպէս որ ընթերցազը կարող եղած է դիտելու, այս ամեն գեղքերու մէջ անձ մը կար որ՝ թէե հեք վիճակի մէջ՝ կարծես թէ ուրիշներու հազիւ թէ հողը կ'որդուէր. այս անձը ու Պօնասիէօն էր, յարդելի նահատակ քաղաքական և սիրային դաւերու, որ իրարու հետ կ'շաղուէին այն ասպետական և միանգամյա կնասիրական ժամանակը:

Եւ բարեբաղդօրէն՝ ընթերցազը կ'յիշէ կամ շյիշեր, թէ խօսք տուինք յիշեալ անձն աչքէ չհեռացնելու:

Զինքը ձերբակալ ընտղ սպասեակները րուներ շիտակ Պասդիլլ տարեր էին, ուր զինուորներու վաշտկանի մ'առ ջեւն անցուցին զանի գողզոցին, որոնք իրենց հրաժանները կ'լեցնէին:

Անկից զրեթէ ստորերկրեայ բակ մ'ինցացին զանի և այն տեղ տանողներուն կողմէն կոշտ թշնամանաց և վայրագ կատահաց ենթակայ եղաւ: Փառուորները տեսնելով որ իրենց զորձն ազնուականի մը հետ չէ, անխողօրէն զանի տանջեցին իրը ողըրմլի էակ մը:

Գրեթէ կ'ս ժամէ դիւանադպիրն եկաւ, չէ թէ անոր անձիութեան այլ տանջանաց վերջ տալու, հրամայելով որ ու Պօնասիէօն հարցաքննութեան սենեակն առաջնորդեն: Առ հասարակ հարց ու փորձը կալանաւորաց դանուած տեղը կ'կատարուէր, բայց ու Պօնասիէօին նկատմամբ այս ձեւը զանց կ'ընէին:

Երկու պահակ փերեզակն առնլով բակ մը մտան, անկից նըրբաղտիթ մը, ուր երեք պահնորդ կային, յետոյ գուռ մը բացին և ստորին խոց մը քշեցին զանի, որոն բոլոր կարսին

սեղան մը , աթոռ մ'ու զործակալ մ'էր . զործակալն աթոռին վրայ հստած՝ սեղանին առջև զիր կ'ყը՞ր :

Երկու պահակները կալանառը սեղանին առջև տարին , և զործակալին մ. կ նշմայրին վրայ անոց ձայնը չլսելու շափ հեռացան :

Գործակալն որ մինչ ցայն կէտ զլու խը թղթերուն վրայ ծոեր էր , զայն վերոց նայելու համար թէտ որու հետ է զործը : Այս զործակալը գաման դէմքով անձ մ'էր , սրածայր քիթ , դեղնակ և ցից ուռիկներ , մանր բայց հետազնին և վառվուն աշեր ուներ , և իր կերպարանը կէս մ'արիսի կէս մ'աղուէսի կը նմանէր : Իր զլուին՝ որ երկար ու շարժուն վղի մը վրայ կեցեր էր , իր լայն ու սե պարեզօտէն գորս ելնելով՝ կօբորէր այնպիսի շարժումնիւ մ'որ դրեթէ կրիպոյի շարժման կ'նմանէր երբ սա իր զլուին իր խնդիրէն (սարապ) գորս ձգէր :

Նախ հարցոց Պ. Պօնասիրօին իր անուններն ու մականունները , իր առաջիքը , իր վիճակն ու բնակարանը :

Ամրաստանեալը պատասխանեց թէ՝ իր անունն է Ժաք-Միշլ Պօնասիրօ , թէ յիսուն մէկ տարու է , զործէ քաշուած վերդակ մ'է , և թէ Քօսուայէ օր փողըցը թիւ 11 կ'ընտիրի :

Այս առևն դործակալը փոխանակ հարցաքննութիւնը շարունակելու , երկար ձառ մ'ըսաւ . հասկցնելու համար թէ քանի վտանգուոր է աննշան սոսանկի մը քաղաքական խնդիրներու միջամտութիւնը :

Այս յորդուակն առելի ձապաղեց յայտաբարութիւն մ'ընկլով որուն մէջ Պ. կարախնալին զօրութիւնն ու զործեցը պատմեց , այս որ աննման պաշտօնեայ մ'էր իր կարծեօքը , նախորդ պաշտօնէից յաղթողն : և յաջորդ պաշտօնէից տիպարը . և այս զործոց ու զօրութեան գէմ ոչ ոք կարող էր ելնել առանց պատիժ կրելու :

Իր ձառին այս երկրորդ մասն առարտելէն ետե՛ իր շահէնի ակունքը հէք Պօնասիրօի վրայ յառելով՝ հրաւիրեց զինքն որ իր ծանր կացութեան վրայ անդամ մը խորհի :

Փերեղակն արդէն իր խորհրդածութիւնները պատրաստեր էր +  
Կրողը առնի՛ կ'ըսէ՛ր՝ այն ժամն որ Պ. աը լա Բօրդ իր սանին  
հետ զիս կարդելու խորհրդը յշացաւ, և մանաւանդ այն ժամն  
որ այս իր սանն իրը թագուհին կտաւաղործն ընդունուեր էր  
պալուուր :

Արարիտ Պօնասիկօ ՚ի բնէ եսասէր էր և միանդամայն ընչա-  
սէր ժլատ, և այս ձրից հետ յետին ծայր վատասրտութիւն մը  
ունէր: Իր նորասի կնոջ ազգած սէրը լիովին երկրորդական  
զգացում մը լինելով մեր արդէն նկարագրած բնածին զգացում-  
ները չէր կարող ընկճնլ:

Եւ արդարի Պօնասիկօ մասնեց դատասորին բոլոր ըստանե-  
րուն վրայ :

— Բայց, պարո՞ն դատաւոր — ըստ նա պաղութեամբ — քաջ  
հաւատացէք որ կ'ձանչեմ և առնե՞ն առելի Նորին անհամեմատ  
բարձրութեան արժեքը դիտեմ, և որուն շնորհիւը կառավար-  
ուելու պատիւ ո նինիք :

— Իրա՞ ըսիր — հարցուց զործակալը վարանման երեսով մը  
— բայց եթէ իրոք այդպէս լինէր, բնէ պատճառաւ Պասդիլ  
պիտի դանուէիր :

— Ինչպէս, կամ լաւ ևս ինչո՞ւ համար պասդիլ ընկայ, ա-  
հա բանն ինձ բոլորվին անհնար է ըսել, վասն զի ես ինքս  
չդիտեմ. բայց սա իրաւ է որ Պ. կարտինալը՝ դէմ զիտու-  
թեամբ վիրառութած լինելուս համար չէ :

— Սակայն յանցանք մը զործած պիտի լինիս, քանի որ դա-  
տանութեան յանցանքով ամբաստանեալ ես :

— Դաւաճանութեան — զուցց Պօնասիկօ ահարեկ — դաւա-  
ճանութեան, և ինչպէս կ'ուզես որ ողորմը վերեղակ մ'որ բո-  
զոքականները կ'ատէ, և սպանիացիներէն կ'գարշի՝ դաւաճանու-  
թեամբ արատուանորի: Մասածէ, պարո՞ն, այս բանը նիւթապէ-  
անկարելի է :

— Պ. Պօնասիկօ — ըստ զործակալն ամբաստանեալը զիտե-  
լով որպէս թէ իր փափրիկ աչերը սրտերու խօրը կարդալու կա-  
րողութիւնն ունէին — Պ. Պօնասիկօ, միթէ կին ունին :

— Այս, սպարոն — պատասխանեց փերեզակը դողդուալով, և դդաց որ այս հարցմամբ գործերը պիտի շփոթէին . — այսինքն կին մ'ունէի :

— Կ'ուղեւ կին մ'ունէիը . Բնչ ըրիը կինդ, եթէ հիմակ չունի՞ւ :

— Զանի առեանգեցին, սպարոն :

— Զանի առեանգեցին — ըստ գործակալը . — Ա՛ :

Պօնասիէօ այս ահեն զզաց որ հետդշեալ գործը կ'ծանրանալ :

— Առեանգեցին կինդ — վրայ բերու գործակալը — և միթէ զիտին թէ ավ է այս առեանդն ընող մարդը :

— Կարծեմ զանի ճանչել :

— Ո՞վ է :

— Դիսէ անդամ՝ մ'որ բան մը չեմ հաստատեր, սպարոն գործակալ, և մինակ կ'կատածիմ :

— Զավ կ'կատակածիս : Կայինք, բայէ ՚ի բաց պատասխան տուր : Պ. Պօնասիէօ մեծ անձկութեան մէջ կ'զանուէր . սրէ ուր էր ամէն բան ուրանալ կամ ամէն բան ըսել : Եթէ ամէն ինչ ուրանար, թերևս կարծէին թէ շատ բան զիտէ և չուզեր խոստավանիլ . ամէն բան ըսելով՝ իր բարեկօժարութեան նշանը պիտի ցոյց տար : Աւստի որոշեց ամէն բան յայտնել :

— Կատակածս — ըստ — թխերես, բարձրահասակ մարդու մը վրայ է, որ մեծ իշխանի մը կերպարանն ունէր . շատ անդամ՝ մնզի հետեւցաւ, ինչպէս որ զիտեցի, երբ Լովրի դռնակին առջեւ կնկանս կ'սպասէի որպէս զի տունը տանին :

Գործակալը կարծես թէ անհանգստութիւն մը կ'զգար :

— Հասրա անոնն ի՞նչ է — հարցոց :

— Ա՛, անոնը չդիսեմ, բայց եթէ երբէք անոր հանդիպիմ և անմիջապէս կրնամ զանի ճանչել, վստահ եղիր, եթէ հազար հոգիի մէջ անդամ տեսմեմ :

Գործակալը ճակտին վրայ մնայլ մ'ի ջառ :

— Կ'ըսես թէ հազար հոգիի մէջ անդամ տեսմես զանի կը ճանչես, այնպէս չէ — շարտնակեց նա . . . :

— Այսինքն — վրայ բերաւ Պօնասիէօ , որ տեսաւ ծուռ Նամ-  
րայ մը բռնելը — այսինքն . . .

— Պատասխան տափիր թէ կընաւ ձանչել — ըստ դործակա-  
լը — շատ լաւ , այսամի բառ է այսօրուան համար . պէտք է ,  
առելի յառաջ չդադած՝ որ անձի մը յայտնեմ թէ կնկանդ ա-  
ռևանդիչը կ'ձանչեն :

— Բայց չըսի քեզ թէ կ'ձանչեմ — դոչեց Պօնասիէօ յուսա-  
հաս : — Ընդ հակառակն ըսի քեզ . . .

— Տարեք կալանառորը — ըստ դործակալը պահապաններուն :

— Եւ ո՞ր պէտք է տանիիլ զանի — հարցոց դիւանագովիրը :

— Զնդանը :

— Ա՞՛ զնդանը :

— Ա՛՛ , տէր Աստուած , ո՞րն որ լինի , բառական է որ լաւ  
դոցոի — պատասխանեց դործակալն այսպիսի անտարբերութեամբ  
մ'որ խեղճ Պօնասիէօին սոսկում պատճառեց :

— Ափսոս , ափսոս — ըստ խրովի — պլախ վրայ է աղետը .  
կ'երեք թէ կինու ահուելի ոձիր մը գործած պիտի լինի . կար-  
ծեն թէ իր դառակիցն եմ , և զիս այլ անոր հետ պիտի պատ-  
ճեն . թերես ամէն բան ըստ , թերես խոստովան եղաւ որ ա-  
մէն ինչ ըստծ է ինձ . կին մը , ո՞րչափ տկար բան է : Զնդան  
մը , ո՞րն որ լինի , կատկած աշխատ է . զիշեր մը շուտով կ'անց-  
նի , և վազն անշոշտ անիւին ներքեւ կամ կախաղանն եմք : Ա՛՛ ,  
Աստուած իմ , Աստուած իմ , զոթ ո՞նեցիր իմ վրայ :

Երկու պահապաններն՝ վարպետ Պօնասիէօի ողբերուն բնա-  
ւիան չ կախելով՝ ողբեր որոց հարկաւ արդէն վարժեր էին , կա-  
լանառորը թեւեն բռնեցին տարին , մինչդեռ դործակալը շտապտ-  
նամակ մը կ'զրեր , և դիւանագովիրը կ'սպասէր որ զայն առնու :

Պօնասիէօ աշքը չգոցեց , չէ թէ իր զնդանը խիստ անախորժ  
լինելուն , այլ վասն զի իր թափիծներն անտանելի էին : Բոլոր  
զիշերն իր աթոռակին վրայ մնաց , թեթեազոյն շտուիէ սարու-  
լով , և երբ առաօտեան շղթերը սկսան իր սենեկին մէջ սպըր-  
դիլ , կարծեց թէ արշալոյսը սդալի զայներ առեր է ,

Յանկարծ լուց որ պարզունակը կ'քաշեն, և սոսկալի ստումը՝ մ'ըրաւ։ Կարծէր թէ զինքը զլխատութեան բեմը տանելու համար եկեր են դուռը բանալու, սակայն երբ՝ սարասած դահճին տեղ՝ պարզապէս իր առ ջի օրուան զործակալն ու դիւանադպիրը տեսաւ, քիչ մնաց անոնց վիզը պիտի պլուելը։

— Երէկ երեկոյէն վեր քու զործգ առելի խառն ու շփոթ եղաւ, բարեմիտ մարդ — ըստ անոր զործակալը — և կ'յորդորեմ քեզ ամէն բան ձշմարտապէս յայտնել. վասն զի կարտինալին ցասումը միայն զդջումովդ կրնաց զադրիլ։

— Բայց պատրաստ եմ ամէն բան ըսելու — զուեց Պօնասիէօ զէթ ինչ որ զիտեմ։ Կ'աղաւեմ, հարց ու փորձ ըրէ։

— Նախո՞ ո՞ւր է քու կինդ։

— Բայց արդէն չըսի՞ որ զանի յափշտակեցին։

— Այո՞, բայց երէկ իւս օրէն ետքը՝ ժամը հինգէն վեր՝ քու շնորհիւդ խոյս տուաւ։

— Կինս խոյս տուաւ — զուեց Պօնասիէօ։ — Ո՛չ, ողորմելին. Պարոն, եթէ փախառ նա, կ'երդնում որ յանցանքն իմս չէ։

— Ուրեմն Պ. ա՛Ռդանեանի քու զրացոյդ տունն ինչ զործ ունէիր. անոր հետ երկար բանակցութիւն մ'ունեցար այն օրը։

— Ո՛չ, այո՞, պարոն զործակալ, այո՞ այդ տույզ է, և կը խոստովանիմ թէ այդ մասին մնջապարտ եմ։ Իրօք ա՛Ռդանեանի տունը զացի։

— Այդ այցելութեան նպաստակն ինչ էր։

— Կապատակու էր անոր աջակցութիւնը խնդրել կինս դանելու համար։ Կարծէի թէ իրաւոնք ունիմ կինս պահանջնելու. կ'երեկի թէ սխալեր եմ, և քեզնէ ներում կ'ինդը եմ։

— Եւ ինչ պատասխան տուաւ Պ. ա՛Ռդանեան։

— Պ. ա՛Ռդանեան ձեռնտու զանուելու խօսք տուաւ, բայց քիչ ատենէն հասկցայ որ զիս կ'մասնէ թ։

— Դու օրինաց գէմ կ'մնջանչես։ Պ. ա՛Ռդանեան քեզի հետ զաշն կռեց, և այս զաշնին ուժովը կինդ ձերբակալ ընող ուստիկանութեան մարդիկը վանեց, փախոց և մըր խուզարկութենէն աղաստ պահեց։

— Պ. ա'Արդանեան իմ կի՞նս առևանցեց : ԱՇ, իրան, միթէ ստոյդ է ըսածդ :

— Բարեբաղդորէն Պ. ա'Արդանեան մեր ձեռքին տակն է, և հիմակ ձեղ իրարու առջև պիտի բերենք :

— ԱՇ, խաչ վկայ, ես ալ այդ կ'ողեմ — զոչեց Պօնասիւէօ — փափաքելի է ինձ ծանօթ երես մը տեմանել :

— Պ. ա'Արդանեանը ներս բերեք — ըսաւ գործակալն երկու պահապաններուն :

Երկու պահապաններն Աթոսը ներս մացացին :

— Պ. ա'Արդանեան — ըսաւ գործակալն Աթոսին դառնալով — քու և այս պարսին մէջ անցած դարձածը մեզի պատմէ :

— Բայց — զոչեց Պօնասիւէօ — այս տեսած մարդո Պ. ա'Արդանեանը չէ :

— Ինչպէս, Պ. ա'Արդանեանը չէ մի — զոչեց գործակալը :

— Ամենելին անի չէ — պատասխանեց Պօնասիւէօ :

— Ի՞նչ է այս պարոնին անունը — հարցուց գործակալը :

— Զեմ կարող ըսել, զանի չեմ ճանչեր :

— Ինչպէս, չես ճանչեր :

— Ո՛չ :

— Երբէք տեսած չես զանի :

— Այս, տեսած եմ, բայց անունը չգիտեմ :

— Անոնդ ի՞նչ է — հարցուց գործակալը :

— Աթոս — պատասխանեց հրացանակիրը :

— Բայց այդ մարդու անուն չէ, լեռի անուն է — զոչեց իսկ հարցաքննիչն որ մկներ էր շփոթելու . . . :

— Այս է իմ անունս — ըսաւ Աթոս հանդարտորէն :

— Բայց ըսիր որ անոնդ ա'Արդանեան է :

— Ե՞ս :

— Այս, դժւն :

— Այսինքն ինձ ըսին . «Դու Պ. ա'Արդանեանն ես» : Ես ալ պատասխան տուի . «Այդպէս կարծէք» : Պահակները միաբան պոռացին որ ասոր վրայ ստոյդ են . չուզեցի անոնց դիմադրել : Ո զիտէ, կարելի է որ ես ալ սխալէի :

- Պարոն, արդարութեան վեհափառութիւնը կ'անարդէս :
- Ամենելին — ըստ Աթաս հանդարատ :
- Ահա տես կ'կրկնես անարդանքը :
- Բայց — զուեց իր կողմէն ու. Պօնասիէօ — Ես կ'ըսեմ քեզի, պարոն զործակալ, որ բնաւ կասկածի տեղի չկայ : Ու . ա՛Արդանեան իմ վարձկալս է, և հետեւապէս, որչափ որ ասն վարձքը չվճարեր, և Ճիշտ այս պատճառաւ, ՚ի հարկէ զինքը կը ճանչեմ : Ու . ա՛Արդանեան հազիւ տանն ինն, քան տարեկան է, մինչդեռ այս պարոնն քիչէն երառն տարու պիտի լինի : Ու . ա՛Արդանեան Ու . Տէզէսարի պահապան զօրաց մէջ է, մինչդեռ այս պարոնը Ու . ար Դրէվիլի հրացանակրաց զնոպին մէջ է . դիտէ համազգեստը, պարոն զործակալ, համազզեստը նայէ :
- Իրաւ է — մրմռայ զործակալը . — կրո՞ղ, շատ իրաւ է :
- Կայն պահուն դուռը բացին աշխատժով, և բանքեր մը, Պատ-դիլի մէկ գրնապանին առաջնորդութեամբ ներս մանելով՝ զոր-ծակալին նամակ մը յանձնեց :
- Ո՛հ, թշուառ կին — զուեց զործակալը :
- Ի՞նչպէս, բնէ կ'ըսես, որու վրայ է խօսքդ : Յուսամ որ խօսքդ կնկանս չվերաբերիր :
- Ընդ հակառակն, նոյն ինքն է : Հաւասա, զործդ կարգին է :
- Այս բնէ է — զուեց փերեզակը զայրազին . — Պարոն, Հորհը ըրէ ըսելու ինձ թէ բնէ առթիւ իմ, իմ զործս կրնայ վատթարիլ կնոջս բնմթացքին համար, մինչդեռ ես բանան եմ :
- Որովհետեւ անոր ըրածը ձեր մէջ կանխառ պատրաստուած յատակագիծի մը հետեւթիւնն է . զժոխային յատակագիծ մը :
- Կ'երգնում, պարոն զործակալ, որ շափազանց կ'իսալիս, թէ բնաւ տեղեկութիւն չունիմ իմ կնոջս ընելիքին վրայ, թէ բոլորովին անհաղորդ եմ ըրածին, և եթէ յիմարութիւններ զոր-ծեց, զանի կ'ուրանամ, կ'մերժեմ, կ'անիծեմ :
- Ինձ նայէ — ըստ Աթաս զործակալին — եթէ իզնէ ովէ որ չունիս այս տեղը, ուրիշ վայր մը դրիկ զիս . ըստ Ու . Պօնասի-էօդ շատ տաղակալի է :

— Այս կուլտուրալորներն իրենց զնդանը տարեք — ըստ գործակալը՝ մի և նոյն շարժումն Աթուան ու Պօնասիէօն ցոյց տալով — և այսուհետեւ նայեցէք որ առաջուանէ խատիւ պահպանէք զանոնք :

— Սակայն — ըստ Աթուանի սովորական հանդարատութեամբ — եթէ քու գործդդ Պ. ա' Արդանեանի հետ է, չեմ կրնար ըմբանել թէ ինչ պատճառաւ անոր տեղը կ' բռնեմ այս տեղ :

— Դոք ըստած կատարեցէք — դոչեց գործակալը — և կատարեալ լութիւն պահեցէք : Ա' հասկնաք :

Աթուան պահապահներուն ետեւէն գնաց ու սերը վեր վերցնելով : իսկ Պ. Պօնասիէօ այնպէս ողբեր կ' արձակէք որ վաղը մ' անգամ ՚ի դութ կրնար շարժիւ :

Փերեզակն առին առջի զիշերն անցուցած զնդանը տարին և բոլոր օրն այն տեղ թողոցին : Պօնասիէօ բոլոր օրը լսցաւ չշմարիտ փերեզակն մը պէս, քանի որ ինքը զօրական չէր, ինչպէս որ մեզի ըստ :

Իրկունք՝ ժամն իննին դէմ, Ճիշտ այն պահուն որ անկողին մասնելու կ' պատրաստէք, դրսի զամին մէջ ուրիշ ձայներ լսեց : Այս ձայներն իր զնդանին մօտեցան, իր դուռը բացուեցաւ, պահակներ երեցան :

— Իմ ետեւէս եկուր — ըստ փառոր մ' որ պահապահներուն կ' հետեւէք :

— Ետեւէդ զամ — զոչեց Պօնասիէօ — այս ժամուս քեզի՛ հետեւիմ, և ուր, Աստուած իմ :

— Ուր որ հրաման ունինք քեզ առաջնորդելու :

— Բայց այդ պատասխան մը չէ :

— Բայց այս պատասխանը միայն կրնանք տալ քեզի :

— Ահ, Աստուած իմ, Աստուած իմ — մըմնաց փերեզակը — ալ այս անդամ ազատում չունիմ :

Եւ մեքենապէս ու անդիմազիր զինքը խնդրով պահակներուն ետեւէն գնաց :

Անկէ առաջ հետեւած նրբագաւիթն ելու, առաջին բակէ մը :

յեաց շէնքին մէկ ուրիշ մասէն անցաւ . վերջապէ ս մեծ զբան առ ջև կառք մը դատու որո՞ն չորս դին չորս պահապան ձիառ որ ներ կային : Փերեգակն այն կառքը մոցոցին , փառորն անոր մօտ նստու : բանալիով դռնակը դոցեցին , և երկոքնին ալ զլու . բուն բանտի մը մէջ դանուեցան :

Կառքն սկսաւ շարժիլ ծանր ծանր դամբանական կառքի մը պէս : Կղղամնքով գոցուած վանդակէն կալանառորը կ'տեսնէր տուներն ու քարայատակը միայն . բայց Պօնասիէ օ' իբր Ճշմարիտ բարիզցի + ամէն մէկ փողոց կ'ճանչէր սահմաններէն , նշաններէն , և լամպարներէն : Աէն-Բօլ հասնելու միջոցին , վայր մ'ուր Պասդիյի գատապարտեալները կ'սպաննէին , քիշ մնաց պիտի մարէր և երկու անգամ խաչ հանեց : Կարծեր էր թէ կառքն այն տեղ պիտի կանկ առնուր , այլ սակայն կառքն անցաւ դնաց :

Քիշ մը հեռու ուրիշ մեծ սարսափ մը զզաց՝ երբ Աէն-Ժանի զերեզմաննոցը քերելով անցան , ուր քաղաքական յանցաւորները կ'թաղէին : Բան մը միայն քիշ մը զինքը հանդարտեց , այս է թէ զանոնք թաղելէն առաջ սովորաբար զլուխնին կը կտրէին , և թէ իբ զլուխը տակաւին ուսին վրայ էր : Բայց երբ կառքը կրէվի Ճամբան կ'բռնէր , երբ քաղաքակետական պաշտօնատան սրածայր յարկերը տեսաւ , և կառքը կամարին ներքե մտաւ , կարծեց թէ ամէն բան իբրն համար լմնցած է , ուստի փառորին խոստովանիլ ուզեց , և երբ սա մերժեց , այն պիսի աղեռղորմ աղաղակներ արձակեց որ փառորն իմացուց թէ բերանը զայլ մը պիտի դնէ եթէ այսպէս պոռայ շարտնակ և իր ականջները խցնէ :

Այս սպառնալիքը փոքր ինչ հանդարտեց Պօնասիէ օն . եթէ զինքը կրէվի մէջ պիտի զլսատէին , հարկ չկար բերանը դայլ գնելու , քանի որ զլսատման վայրը հասեր էին : Եւ արդարեւ կառքը նոյն աղէտալի վայրէն անցաւ առանց կենալու . եթէ ուրիշ վախճակի տեղ մը կար այն ալ Քըուա-տիւ-Գրահուարն էր . իբոք կառքն անոր Ճամբան բռնեց :

Այս անգամ ալ կասկած չկար , երկրորդական յանցաւորներն

Քրուա - տիւ - Դրահուար կ'զլիսատէին : Պօնասիէօ յուսացեր էր  
որ Սէն - Բօլի և Արէվ հրապարակին արժանի կ'լինի . ուրեմն  
Քրուա - տիւ - Դրահուարի վրայ պիտի վերջանար իր ուղեռու-  
թինն ու Տակաստագիրը : Տակասին չէր տեսներ այն դժբաղդ խա-  
չը (քրուա) , բայց կ'զգար կերպով մ'որ իր առջեր պիտի ելնէ :  
Երբ քսան քայլի շափ մնայ անոր հասնելու , շշուկ մը լսեց և  
կառքը կեցաւ : Այս բանս խեղճ Պօնասիէօի կարողութենէն վեր  
էր կրելու , քանի որ արդէն հետզէտէ զգացած այլայլութիւն-  
ներէն ընկնած էր . թեթև մնջիւն մը հանեց , որ կարծես թէ-  
հոգեվարի մը յետին հառաջն էր , և նուաղեցաւ :

## ԺԴ

### ՄԵՇՈՒԻ ՄԵՐՄԻՆ

Այս տեղ մարդիկ դումարուեր էին չէ թէ կախուելիք մարդ  
մը տեսնելու յուսով , այլ որովհետեւ կախուած մարդ մը կ'դի-  
տէին :

Աւստի կառքը՝ որ պահ մը կանկ առաւ , նորէն քալել սկսաւ ,  
ամրոխէն անցաւ , Խամբան շարունակեց , Սէնդ - Օնօրէ փողոցը  
մտաւ , Պօն - զանֆան փողոցէն դարձաւ և ցած դրան մ'առջեւ  
կեցաւ :

Դուռը բացուեցաւ , փառորին օդնութեամբն երկու պահակ-  
ներ Պօնասիէօն իրենց զիրկն առին , գէալ ՚ի անցք մը քշեցին ,  
և նախասենեկի մը մէջ զրին :

Այս ամէն շարժումները մնքենապէս կատարեր էր Պօնասիէօ :  
Քալեր էր ինչպէս մարդ երազի մէջ կ'քալէ , առարկաները  
մշուշի մէջէն նայեր էր , առանց համինալու ականջին ձայներ  
զարկեր էին . եթէ զանի կախէին նոյն պահուն , շարժում մը

անդամ՝ չպիտի ըներ ինքզինքը պահպանելու համար . ազաղակ  
մ'անդամ՝ չպիտի հաներ դութ հայցելու համար :

Այսպէս բազմոցին վրայ մնաց, կոնակը պատին տուած և  
թները կախ, ճիշտ այն տեղն ուր պահպաները ձգեր էին դինքը:

Ասկայն, որովհետեւ չորս կողմը նայելով՝ սպառնալից բան մը  
չէր տեսներ, որովհետեւ բազմոցն ըստ բաւականին խծծով լե-  
ցուն էր, որովհետեւ պատը Գօրտոնի աղոռը կաշիով մը ծած-  
կուած էր, որովհետեւ պատը հանին առջև կարմիր դամասկէ մնձ  
վարագործներ կ'ծածանէին, որոնք սոկի ակիշով բռնուած էին,  
քիչ քիչ հասկցաւ որ իր երկիւող ծայբայեղ է, և սկսաւ իր  
դլուին աջ ու ահեակ վեր վար շարժել :

Այս շարժման վրայ, որուն արգելք մ'ընող չկար, քիչ մը  
սիրու տուաւ և որոշեց ոտքին մէկն ապա միւսը տատանել. վեր-  
ջապէս իր երկու ձեռները զարծածելով՝ իր բազմոցին վրայ թշն-  
դաց և ոտքի վրայ կանգուն կեցաւ :

Նոյն պահուն՝ բարեգէմ սպայ մը գռնակ մը բացաւ, մօսա-  
կայ խոցը դանուողի մը հետ քանի մը խօսք ըրաւ, և բանուորին  
կողմը դառնալով,

— Միթէ դու ես Պօնասոիէօ անուն մարդը — ըստ :

— Այո, պարծն սպայ — Թոթովեց փերեղակը՝ մնուած քան  
կենդանի — պատրաստ եմ հրամանիդ :

— Ենքս մաիր — ըստ. սպայն :

Եւ մէկդի քաշուեցաւ որպէս զի փերեղակն անցնի : Ասի լոիկ  
մնջեկ հնազանեցաւ, և մնու այն խոցն ուր կարծես թէ մէկն  
իրեն կ'սպասէ ը :

Մեծ գահլիճ մ'էր այն, որուն պատերուն վրայ վնասիչ և  
պաշտպանող զէնքեր կային. զոյ և սաստիկ առօք էր, և ներսը  
կրակ կար, թէ և հազիւ թէ սեպտեմբերի վերջին օրերն էին :  
Սենեկին մէջ տեղը քառակուսի սեղան մը կար դիբքերով ու  
թղթերով ծածկուած, իսկ սասնց վրայ բաց կ'ահսնուեր թոշէլ  
քաղքին մէկ ահազին յատակապիծը :

Արակարանին առ ջեւ կանգուն կ'երեւեր մի ջահատակ մարդ մ'որ

վէս և հպարտ կերպարան մը , սուր աչքեր , լոյժն համեստ , նիշար երես մ'ունէր , որ աւելի ևս երկար կ'երեւէր ուրացչի (royale) մօրուսավ մը , որուն վրայ զոյզ մը պեխեր կային : Թէ և այս մարդը հազիւ երսուն վեց երսուն հօթ տարեկան էր , թէ մաղերը , թէ պեխը և թէ արքայիկը ձերմակ ընկեր էր : Այս մարդը՝ սուրն 'ի բաց թողում իսկ , պատերազմական մարդու կերպարանն ունէր . և իր գոտիչի մարմէ կօշիկներն որ գեռ ևս թեթև փոշիսավ ծածկուած էին՝ կ'յայտնէին որ նոյն օրը ձի հեծեր էր :

Այս մարդը՝ Արման Ժիրլէսի , Արիշիկ օֆ կարտինալն էր . չէ թէ սյնորէս ինչպէս որ մեզի կ'ներկային , ակար՝ իրը ծերոնի , վշտակիր՝ իրը մարտիրոս մը , մարմնաբեկ , ձայնը մարսած՝ մեծ թիկնաթոսի մը , իրը կանխարաց զերեզմանի մը մէջ մաղուած , լոկ իր հանճարին զօրութեամբն ապրող , և Եւրապայի գէմ բացած սրայքարը մի միայն իր խորհրդոց մշամազործ կիրառութեամբը շարունակուլ , այլ իրօք ինչպէս որ էր այն ժամանակ , այսինքն հնարացէտ և փառառոր ասպետ , արգէն մարմնով տկար , այլ աննկուն բարոյական զօրութեամբ մ'որով աշխարհիս մէկ տարօրինակ մարդը դարձաւ . վերջապէս կազմ՝ ու պատրաստ՝ Կըմէրի գոտիմն իր Ամանդուայի դքսութեան մէջ պահէլէն , Նիմ , Գաստոր և Խողէս առնելն ետեւ Թէ կղզին անկլիացիները վանելու և թօշէլի պաշտրումն սկսելու :

Աւստի առաջին նայուածով կարտինալը յայտնող նշան մը չունէր և անոր գէմիքը չհանչող մարդոց կարելի չ'ը զոշակել թէ որուն առջեւ կ'զանուին :

Խեղչ վերեզգակը դրան վրայ կեցաւ կանոնուն , մինչդեռ մեր արդէն նկարադրած մօրդուն աչերն անոր վրայ կ'սենուին և կարծես մինչեւ անցելոյն խորը թափանցել կ'ուզէին :

— Այս է Պօնասիէօ ըսածնիդ — հարցոց նա պահ մը լուս կենալէն ետեւ :

— Այս , աէր իմ — վրայ բերաւ սպայն :

— Շատ լսու , առուր ինձ սա թղթերն և մեզ մինակ թազ :

Պաշտօնատարը ցոյց տաւած թղթերը սեղանին վրայէն սունդով

տուաւ, և մինչև դետին խոնարհելով գուրս ելաւ :

Պօնասիկ զիտեց որ այն թղթերը Պատղիլի հարցաքննութիւններն են : Ատեն ատեն՝ կրակարանին առջեի մարդը թղթերուն վրայէն աչերը կ'վերցնէր և երկու դաշտնի պէս խեղչ փերեղակին սրտին խորը կ'մղէր :

Տաս վայրկեան կարդալէն և տաս բոպէ քննութիւն ընելէն եաւ, կարտինալն իր որոշումն ըրաւ :

— Այս զլուխն երբէք չդաւագրեց — մրմրաց նա — բայց փոյթ չէ, փորձենք միշտ :

— Մասնութեան յանցանքով ամբաստանուած ես — ըստ կարտինալը ծանրութեամբ :

— Այդ բանն արդէն իմացոցին ինձ, տէր իմ — զոչեց Պօնասիկ օր հարցաքննիչին՝ սպայէն լսած տիտղոսը տալով, բայց կ'երդնում որ այս մասին բան մը չզիտէի :

Կարտինալը ժպիտ մը զսպեց :

— Դու գաւ դրեր ես կնոջը, Շէվրէօզ տիկնոջ և պրքինկէմ գքսին հետ :

— Արդարե, տէր իմ — սպասախանեց փերեղակը — այդ բռնունեները կնկանս բերնէն լսեցի :

— Եւ Բնչ առթիւ :

— Կ'ըսէր նա որ Արիշլիկ օր կարտինալը Պլքինկէմի զոքսը Քարիզ քաշչը է՝ որպէս զի զանի ՚ի կորուստ մատնէ, և թագուհին ալ անոր հետ :

— Այդպէս կ'խօսէր — զոչեց կարտինալը վայրազին :

— Այս, տէր իմ, բայց ես անոր ըսի որ անանկ խօսքեր ըսելու իրաւունք չունի, և եթէ Նորին վսեմութիւնն անկարող էր . . . :

— Լոէ, դու ապուշ մ'ես — վրայ բերաւ կարտինալը :

— Կինս ալ Ճիշտ արդարէս սպասախան տուաւ ինձ, տէր իմ:

— Միթէ զիտեն թէ ով է կինդ յափշտակողը :

— Ոչ, տէր իմ:

— Սակայն կասկածներ ունիս :

- Այսի, տէր իմ, բայց այն կասկածներս պարոն դործակաւին բանին չեկան, և հիմակ կասկած չունիմ ալ:
- Վինդ փախաւ, միթէ այս բանս զիտէ ի՞ր:
- Ո՛չ, տէր իմ, այդ բանը բանաւ զանուելէս վեր իմացայ, և միշտ պարոն դործակալին միջոցաւ, որ շատ սիրալիք մարդ մէտք:
- Ուրեմն չզիտեն թէ կինդ փախուառէն վեր ի՞նչ եղաւ:
- Ամենեին, տէր իմ, բայց Լուգը զարձած պիտի լինի:
- Առաւոտեան ժամը մէ կին զեռ զարձած չէր:
- Ա՛չ, Աստուած իմ, որեմն կինս ի՞նչ եղաւ:
- Անշուշտ պիտի իմանանք, անհազ եղիր. կարտինալին ոչ ի՞նչ չեն պահեր. կարտինալն ամէն բան զիտէ:
- Ուրեմն, տէր իմ, միթէ կ'կարծես թէ կարտինալն հաւանի ինձ ըսելու կնկանս զլիին եկածը:
- Կարելի է. բայց նախ պէտք է կնկանդ և տիկին Շէվրէ օդի յարաքերու մեռանց վրայ զիտցածդ խոստովանիս:
- Բայց, տէր իմ, ոչ ի՞նչ չզիտեմ. երբէք զանի չտեսը եմ:
- Երբ կինդ Լուգըն առնլու համար երթայիր, միթէ շիտակ տունդ կ'գտանա՞ր:
- Գրեթէ երբէք. կտակի վաճառականներու հետ զործ տնէր, և ես ալ զինքն անոնց տունը կ'տանէի:
- Եւ քանի՞ կտաւավաճառ կոյին:
- Երկու հասաւ, տէր իմ:
- Ո՛չ, կ'ընալին:
- Մէկը, Աօժիբար փաղցը. միւսը, Լու Հարբ փաղցը:
- Միթէ անոնց տունը կնոջդ հետ կ'մանէիր:
- Երբէք, տէր իմ, ես դուռը կ'սպասէի անոր:
- Եւ այսպէս մինակ ներս մանելու համար ի՞նչ պատրաստ մէջ կ'բերէր:
- Պատրուակ մը չէր յայտներ. կ'ըսէր ինձ որ սպառեմ և կ'սպասէի:

— Կամարար է բիկ մ'ես, իմ սիրելի ոլ, ուսնասիէօ — ըստ  
կարտինալը :

— Զիս, իմ սիրելի ոլ, ուսնասիէօ կ'անուանէ — ըստ փե-  
րեղակն խռովի . — կըուզ, դործերը լսու կ'երթան :

— Միթէ այն տոները կ'ձանչես :

— Ա,յու :

— Թուանշաները դիտե՞ս :

— Ա,յու :

— Ե՞նչ ե՞ն :

— Վայիրար փողցը, թիւ 25, և աւարք փողցը, թիւ 75:

— Շատ լսու — ըստ կարտինալը :

Այս ըսելով՝ արծաթ հնչակ մ'առաւ ե հնչեց, սպայն ներս  
մոռաւ :

— Գնու — ըստ կիսաձայն — Բոշֆորը դանելու, և եթէ  
տուն զարձած է, ըսէ անոր որ խսկցն զայ :

— Կոմուր հոս է — ըստ սպայն — թախանձաղին կ'ինդրէ  
Զեր Բարձրութեան հետ խօսիլ :

— Աւրեմն թող ներս զայ, թող զայ — ըստ Արիշլիէօ աշ-  
խուժիւ :

Սպան սենեկին դուրս սրացաւ արագօրէն, ինչպէս որ բոլոր  
սպասառները սովորաբար կ'շտապէին կարտինալին հնազանգե-  
լու համար :

— Զեր բարձրութեան — մրմռաց Պօնասիէօ աշերը մօլորա-  
ղին դարձնելով :

Այն ինչ հինգ բռպէ անցեր էր սպային մեկնելէն վեր որ դու-  
ռը բացուեցաւ և նոր անձ մը ներս մասու :

— Նոյն ինքն է — զոչեց Պօնասիէօ :

— Ո՞վ — Հարցոց կարտինալը :

— Կինս առեանզողը :

Կարտինալն երկրորդ անգամ հնչակը դարկու : Սպայն երե-  
ցաւ :

— Այս մարդն իր երկու պահանջներուն ձեռքը յանձնէ, և  
մինչեւ իմ առջեւ կանչելս թող այն տեղ սպասէ :

— Ա՛Հ, աէր իմ, ո՛Հ, այն չէ — զաշեց Պօնասիէօ — ո՛Հ,  
սխալեր եմ, այս ուրիշ անձ մ'է որ ահոր բնաւ չնմանիր : Այս  
պարսնը պարկեշտ մարդ մ'է :

— Սա ապուշը տարեք — ըստ կարտինալը :

Սպայն Պօնասիէօին թեևն բռնեց և նախասենեակը տարաւ . այն  
տեղ դտաւ իր երկու պահակները :

Նոր ներս մտնող անձն անհամբեր Պօնասիէօին ետեւն նա-  
յեցաւ մինչև որ դուրս ելնէ , և այն ինչ դուռն անոր վրայ գո-  
ցեցին ,

— Զիրար տեսան — ըստ աշխաղժով կարտինալին մօտենալով :

— Ո՞վ — հարցուց Կորին բարձրութիւնը :

— Կ'է և նո՞ւ :

— Թաղուհին և դուքսը — զաշեց Ռիշլիէօ :

— Այո՞ւ :

— Եւ ո՛ւր տեղ :

— Լուսիլը :

— Միթէ ստոյդ ես :

— Լիովին ստոյդ :

— Ո՞վ ըստ քեզ :

— Տիկին Լանջ , օր՝ ինչպէս զիտես՝ բոլորովին Զեր բար-  
ձրութեան յարած է :

— Եւ ինչո՞ւ համար առելի կանուխ շարպանեց այդ բանը :

— Գիպուած ըսէ կամ կասկած , թագուհին իր խոցը պատ-  
կեցուց տիկին Սիւրմիսն և բոլոր օրը պահեց :

— Լաւ , բայց յաղթուեցանք : Փոխարէնը հանելու ջանանք :

— Իմ բոլոր հոգւովս պիտի օգնեմ քեզ , աէր իմ , վստահ  
եղիր :

— Գործն ինչպէս անցաւ :

— Աէս զիշեր կէս ճամ անցած թաղուհին իր նամիշտներուն  
շեան էք . . . .

— Ո՞ւր տեղ :

— Եր նեֆարանը . . . .

— Ա. ամ. :

— Երբ եկան անոր թաշկինակ մը տոքն իր կտառուհին կողմէ . . . :

— Ապա :

— Խակոյն թագուհին մժ այլայլութիւն մը յայտնեց , և թէ երեսը կարմիր ներկ զրած էր , դարձեալ զեղնեցաւ :

— Ապա , ապա :

— Սակայն ոտք ելաւ և այլայլուն ձայնով մը . օ Տիկիններ , ըստ նա , տաս վայրկեան ուզասեցէք ինձ , և ապա պիտի զամ՞ :

Եւ իր նիբհեկին դուռը բայցաւ , և յետոյ դուրս ելաւ :

— Ինչո՞ւ համար տիկին Լանոյ խսկոյն շեկաւ դործը քեզի հաղորդելու :

— Տականին ամէն բան որոշ չէր . ասկէ զատ՝ թագուհին ըստք էր . օ Տիկիններ , ինձ ուզասեցէք ։ և անոնք ալ չէին կըրնար թագուհոյն անաստել :

— Եւ որչափ ատեն թագուհին սենեկէն դուրս մնաց :

— Երեք քառորդ :

— Միթէ նամիշտ մ'անգամ իրեն չէր ընկերանար :

— Մինակ Տօնա կտու ֆանիա :

— Եւ միթէ վերջը սենեակը դարձան :

— Այս , բայց իր նշանը կրող վարդափայտէ պղտիկ արկղիկ մ'առնլու և խսկոյն դուրս ելնելու համար :

— Եւ երբ ետքէն ներս մօտաւ արդեօք արկղիկը հետն ստան :

— Ո՛չ :

— Տիկին Լանոյ զիտէր արդեօք թէ այն արկղիկն մէջ ինչ կար :

— Այս , վեհափառ թագառորին թագուհոյն ստամած ականակու ասեղները :

— Միթէ առանց այն արկղիկին ներս մօտաւ :

— Այս :

— Տիկին Լանոյ կարծիք կը ընէ արդեօք որ այն արկղիկը ոլք քինուհի մի ստամաւ :

- Ատոյդ է :
- Ի՞նչպէս :
- Տերեկը՝ արիկին Լանօյ՝ իբր թագուհւոյն զարդարար նա-  
յիշտը՝ արկղիկը փնտուց, հող ըրատ չգտնելուն, և 'ի վերջը  
զնաց թագուհին հարց ու փորձ ընելու այս մասին :
- Հասկա թագուհին այն առեն . . . .
- Թագուհին շատ կարմրեցու, և պատասխանեց թէ ասեղ-  
ներէն մէկն առջի օրը կտրեր է և սոկերչին դրկեր է շակելու :
- Պէտք է սովերչէն անցնիլ և հասկնալ թէ դործն իրան է  
թէ ոչ :
- Արդէն գացի :
- Լաւ, ի՞նչ ըստու ոսկերիչը . . . .
- Ոսկերիչն այս մասին բան մը չգիտէ :
- Լաւ, լաւ, Ռոշֆոր, ամէն ինչ յուսահատ չէ, և թե-  
րես . . . թերես դործը լաւ կերպարան մ'առնու :
- Այս ստոյդ է որ Զեր բարձրութեան հանձարը . . . .
- Պիտի յաջողի իր դործակալին ազիկարութիւնը գարմանել,  
այնպէս չէ :
- Ես ալ ձիշտ այդ բանը պիտի ըսէի եթէ Զեր բարձրու-  
թիւնը թողուր որ խօսքս առարտէի :
- Ես հիմակ զիտեն արդեօք թէ ուր կ'թագչէին Շէվրէօզ  
դժուուհին և Պլքինկէմի զուգըր :
- Ոչ, տէր իմ, իմ մարդիկս շիրցան այս մասին Աշղրիտ  
մեղեկութիւն մը տալ :
- Բայց ես, ես զիտեմ:
- Դա՞ք, տէր իմ:
- Այսի, կամ գոնէ կ'կասկածիմ: Մին Վաօժիրար փողոցը թիւ  
25 կ'ընակէր, և միւսը Լա Հարբ փողոցը թիւ 75:
- Վաեմապատիւ տէր, հրաման կ'տաք որ երկուքնին ալ ձեր-  
բակալ ընել տամ:
- Շատ ուշ է, արդէն մինած պիտի լինին :
- Փոյթ չէ, կընանք ստուդել :

— Եմ պահակներէս տառ մարդ ո՛ւ. և երկու տառները դնաւ վնասուէ :

— Կ'երթամ, տէք իմ:

Եւ Ռոշֆօր սինեկի ն դուրս ելաւ կարտորնօք :

Երբ կարտինալը մինակ մնաց, պահ մը մնածեց և երբորդ անդամ մ'ալ հնչակը դարձաւ :

Կոյն սպայն երեցաւ :

— Ներս զրկէ կալանառը — ըստ կարտինալը :

Վարսկետ Պօնասիէօ նորէ ներս մտաւ, և կարտինալը նշմայր մ'ընկլուն՝ սպայն դուրս ելաւ :

— Զիս խարեցիր — ըստ խստիւ կարտինալը :

— Ե՛ս — զոշեց Պօնասիէօ — ե՛ս խարեմ Զեր բարձրութիւնը :

— Քու կինդ Աօժիրար փողոցն ու Լա Հարբ փողոցն երթաւլով՝ կտաւավաճառի տուն չէր երթար :

— Հապս մ'ը կ'երթար, Աստուած Տշմարիս :

— Աա Շէվրէօլ դքսուհին և Պըքինկէ մի դքսին տունը կ'երթար :

— Այն — ըստ Պօնասիէօ իր յիշատակներն յուշ բերելով — այս, Տիշտ է, իրատնք տնիք, վսե մնապատիւ տէք: Ստէպ իմ կնիւանս ըսի թէ զարմանք են որ կտաւավաճառներ այնպիսի տուներ ընտակին: տուներ որ նշանադիր շտնէին, և տմէն անդամուն կինս կ'ակտէր իննդալ: Ա՛ս, տէք իմ — շաբանակեց Պօնասիէօ Կորին բարձրութեան սաքն ընկնելով — ա՛ս, բնչպէս իրօք կարտինալն ես, մնծ կարտինալը, այն հանճարի տէք մարդը զոր տմէն աշխատրէ կ'մնծարէ :

Կարտինալը, որչափ որ Պօնասիէօի պէս ռասմիկ մարդու մը վրայ տարած յաղթանակը թեթէ էր, զարձեալ հաճոյք զդաց. յետոյ, դքեթէ անմիջապէս, որպէս թէ նոր զաղափար մը մաքին կ'ներկայէր, ժպիտ մ'իր շըթերը փոթեց, և ձեռքը փերեզակին երկնցնելով,

— Ատք ելիք, բարեկամդ իմ — ըստ անոր — դու լաւ մարդ մ'ես :

— Կարտինայը ձե՛ռքս բռնեց, մեծ մարդուն ձե՛ռքը բռնեցի  
— զուեց Պօնասիէօ — մեծ մարդը զիս իր բարեկամն անուանեց:

— Այս, բարեկամդ իմ, այս — ըստ կարտինալն այնպիսի  
հայրական ձայնով մ՛որ երբեմն դիտէր զործածել, բայց որով  
միայն զինքը շնանչող մարդիկը կ'խարէր — և որովհետեւ յանի-  
րոտի կատկածեցան քու վրադ, լաւ, պէտք է փոխարինութիւն  
մ՛ընել քեզ. ահաւասիկ, առ ոս հարիւր ոսկի զահեկանի պար-  
կը, և ինձ ներէ:

— Ես ձեզի ներեմ, տէր իմ — ըստ Պօնասիէօ պարկն առ-  
նլու վարանելով, և անշոշտ առ ահի որ այն կարծեցեալ պար-  
զել կատակ մը չլինի: — Բայց ազատ էք զիս լիովին ձերբա-  
կալ ընել տալու, լիովին ազատ էք զիս տանջելու, լիովին ա-  
զատ էք զիս կախել տալու. դոք ինքնիշխան տէր էք, և ես  
այ միտոնչ մ՛անգամ շպիտի իշխալի հանելու: Ես ձեզի ներեմ,  
տէր իմ: Յիրասի կատակ կ'ընէք:

— Ահ, սիրելիք իմ Պօնասիէօ, վեհանձնութիւն կ'ցոցնես,  
քաջ կ'դիտեմ և քեզի շնորհակալ եմ: Այսպէս ուրեմն առ պար-  
կը կ'առնուս և առանց շատ դժո՞հ լինելու կ'մեկնիս:

— Տէր իմ, լիովին սքանչացած պիտի մեկնիմ:

— Աւրեմն երթաս բարեառ, կամ ՚ի կրկին տեսութիւն: վասն  
զի յուսամ որ նորէն պիտի տեսնութիւք:

— Ինչ առեն որ հաճութիւն յայտնէք, տէրդ իմ, և Զեր  
բարձրութեան հրամանին պատրաստ եմ:

— Սաէպ տեսնուիլ հարկ պիտի լինի, վասահ եղիր, վասն  
զի խօսակցութենէդ մեծ ախորդ զդացի:

— Ո՛չ, տէր իմ:

— Ի կրկին տեսութիւն, Պ. Պօնասիէօ, ՚ի կրկին տեսութիւն:  
Եւ կարտինալը ձեռքով նշան ըրառ. Պօնասիէօ այս նշանին  
պատասխանեց մինչեւ երկիր խօսարհելով. յետոյ եւս ես քալե-  
լով գուրս ելաւ, և երբ նախասենեակը մտաւ, կարտինալն ա-  
նոր ձայնը լսեց որ իր սաստիկ առինին մէջ՝ բոլոր ուժովը կ'պո-  
ռար. և Կեցցէ տէրն իմ, կեցցէ Նորին բարձրութիւնը, կեցցէ

մեծ կարտինալը ու Կարտինալը վարսեպ ու Պօնասիէ օփ խանդագին զգացմանց այս փառառոր ցոյցը մտիկ ըրաւ ժպտելով, յետոյ երբ Պօնասիէ օփ աղաղակները հեռանալովը նոր աղեցան,

— Ամաւ — ըստ նա — ահաւասիկ մարդ մ'որ ինքզինքն ինձի համար սպաննելու պատրաստ է :

Եւ կարտինալը սկսու մեծ ուշադրութեամբ քննել Թօշէլի աշխարհացոյցը, որ, ինչպէս ըստիք, իր դրասեղանին վրայ տարածուած էր, և 'ի մատիտ կ'զծէր այն զիծն ուսկէ պիտի անցնէր՝ առան ութ ամիսէն պաշարեալ քաղքին նաւահանդիսար զուցող թումբը :

Մինչդեռ իր ռազմագիտական խորհրդոցը խորը կ'զտնուէր, զուոը բացուեցաւ և Թօշիօր ներս մասու :

— Ամաւ ուրիմն — ըստ աշխուժիւ կարտինալն այնպէս արագ ուրք ելնելով՝ որմէ կ'իմացուէր թէ կոմնին ըրած յանձնարարութեան ինչ մեծ կարևորութիւն կ'սար :

— Արդարեւ — ըստ Թօշիօր — քսան վեցէն ցքսան ութ տարեկան նորատի կին մը, և երսուն հինգէն ցքսուուն տարու մարդ մ'իրօք մին չորս և միւսը հինգ օր քնակեր են Զեր բարձրութեան նշանակած տուները. բայց կինն այս զիշեր մեկներ է և մարդն այս առտու :

— Երկու հոգի էին — զոչեց կարտինալն որ մեծ ժամացոյցին կ'նայէր, — այլ հիմակ շատ ուշ է և անոնց ետեւէն մարդ հանել զժուարին. գքսուհին Դուր քաղաքն է և զոքսը Պուլօնցը: Պէտք է Լոնտօն երթալ անոնց միանալ :

— Ի՞նչ են Զեր բարձրութեան հրամանները :

— Անցած գարձածին վրայ դուրսը խօսք մը հանել պէտք չէ, թող թագուհին կատարեալ ապահովութեան մէջ կարծէ ինքզինքը, թող կարծէ թէ իր զաղանիքը չդիտենք, թող կարծէ թէ քաղաքական դաւադրութեան մը հետքը կ'փնտռենք: Գնահան դրկէ ինքաքահա՛ Սէկիէն :

— Հասուա այն մարդն ինչ ըրաւ Զեր բարձրութիւնը :

— Ո՞ր մարդը — հարցուց կարտինալը :

— Աա Պօնապիկօն :

— Ինչ որ պէտք էր ըրի գանի . իր կնոջը լրակոն ըրի :

Ուշվօր կոմոր ծռեցաւ . իբր մարդ մ'որ իր վարպետին մեծ զերազանցութիւնը կ'ձանչէ , և թողար գնաց :

Կարտինալը մինակ մնալուն՝ նորէն նստաւ , նամակ մը դրեց ; իր յատուկ զմուռովու կնքեց , և ապա հնչակը դարկաւ : Սպայն չորրորդ անդամ ներս մնաւ :

— Գնաւ Վիդրէյն ինձի կանչէ — ըստ նա — և իմացուր անոր որ Տամբորդութեան մը համար պատրաստուի :

Պահէ մ'ետքը՝ իր խնդրած մարդն առջեն էր կանգուն , կօշիկ յատն և կարճ :

— Վիդրէյ — ըստ նա — շտագաւ Լոնտօն պիտի երթաս : Պահէ մը Տամբոր շպիտի կենաս : Եւյս գիբու Միլէտիին պիտի յանձնես : Ահա քեզի երկու հարիւր ոսկի դահնեկան , զանձապետիս գնաւ և այս ստակը ստացիր : Նոյնչափ դումար մ'ես պիտի ստանաս եթէ վեց առուր մէջ վերադառնաս և յանձնաբարութիւնս լաւ կատարես :

Պատղամառն՝ առանց քառ մ'իսկ ըսելու՝ խոնարհեցաւ , նամակն առաւ , ։ Նոյնպէս երկու հարիւր ոսկի դահնեկանի վՀարագիրն և գուրս ելաւ :

Եհատասիկ այն նամակին պարունակութիւնը .

« Միլէտի ,

« Պրքինկէմի դքսին երթալիք առաջին պարահանդէսը զնաւ : Իր բանկոնակին վրայ անդամանդէ տասն երկու ասեղիկ պիտի ունենայ , անոր մօսեցիր և երկու հատ կարէ :

« Երբ այն ասեղիկները ձեռք ձգես : ինձի իմաց տուր » :

## ԺԵ

ԴԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶՈՐԱԿԱՆԿ

ԵՐԲ ԱԺԹԱՌ՝ այն դէպքերը հասած օրուան հետեւալ օրը չերեցաւ, ա՛Արդանեան և Բորթոս իմաց տուեր էին Պ. առ Դրէվիլին անոր աներեւութեանալը :

Իւկ Արամիս՝ հինգ օրուան արձակուրդ տղեր էր, և Ռուէն գացեր էր + կ'ըսէ ին, ընտանի գործերու համար :

Պ. առ Դրէվիլ իր զինւորթերուն հայրն էր : Անոնցմէ ամենէն աննշանն ու անծանօթը, էրը անզամ մը դնդին համազգեստը հազնէր, այնչափ վստահ էր անոր աջակցութեան և օդանութեան վրայ որչափ կրնար լինիլ նոյն իսկ իր եղբայրը :

Հետեւապէս խոկոյն արդարութեան պաշտօնէին տեղակալին զընաց : Քրուա-Ռուէ կայանը հրամայող պաշտօնատարը կանչեց և հետզհետէ ստացած տեղեկութիւններէն իմացաւ որ Աթոս առ ժամանակ մը Ֆօր-Լ'Էվլէք կ'ընակէր :

Ինչ հարց ու փորձ որ կրեց Պօնասիէօ, նոյնը կրեց և Աթոս :

Արդէն հանգիստես եղանք այն տեսարանին ուր երկու կալանաւորներն իրարու առջեւ հանեցին : Աթոս որ մինչև այն ժամանակ ոչ ինչ չէր ըսած վախճախով որ ա՛Արդանեան նեղի մը անելով իրեն պէտք եղած առենէն չզրկուի, Աթոս յայանեց՝ նոյն վայրկենէն ակսեալ, որ իր անոնն էր Աթոս և չէ թէ ա՛Արդանեան :

Նոյնպէս յարեց թէ ոչ պարոն և ոչ ամիկին Պօնասիէօն կը հանչէր, թէ ոչ միոյն և ոչ միստին խօսեր էր, թէ երեկոյեան ժամը տասին մօտ իր բարեկամ, Պ. ա՛Արդանեանի այցի գացեր

էր, բայց թէ մինչև այն ժամը Պ. առ Դրէ վիլի տունը դանուեր, այն տեղ ճաշ ըրեց էր, և այս առ թիւ շատ մը նշանաւոր ազատորդիներ յիշեց, որոց մէջ կ'զանուէր նաև լա Դրէ մույ դոքաը:

Երկրորդ գործակալն սուս ջնոյն շափ շլմորեցաւ հրացանակըին պարզ և ազդու յայտարարութեան վրայ, և այս պատճառաւ իր վրէմն առնուլ կ'ուղէր, ինչպէս որ ամէն դատաւոր փափաք կ'տածէ զօրականէ վրէժ առնուլ, բայց Պ. առ Դրէ վիլի և լա Դրէ մույ դքսին անոնքը կշիռ ունէին:

Ամուս կարտինալին աղ զրկուեցաւ, բայց գժբաղդօրէն կարտինալը Լուվը թագաւորին մօս կ'զանուէր:

Ճիշտ այն միջոցին էր որ Պ. առ Դրէ վիլ՝ արզարութեան տեղակալին և Ֆօր լէվէքի կառավարչին քովէն ելնելով առանց Աւթուր զանելու, արքունիքը հասաւ:

Իր հրացանակիբներու հրամանաւար՝ Պ. առ Դրէ վիլ ազատ էր ամէն ժամուն թագաւորին մօս երթալու:

Արդէն զիտենք թէ թագաւորն ինչ կասկածներ կ'տածէր թագույն դէմ, այս կասկածներուն վարպետութեամբ մը ճարակ կ'տար կարտինալը՝ որ դաւերու մասին՝ կիներէ շատ առելի կը վախճար քան մարդիկներէ: Այս կասկածանաց մէջ զլիաւար պատճառն էր Աննա թագույնոյն առ տիկին Շէվրէօզ բարեկամութիւնը: Այս երկու կիներն իրեն առելի անձկութիւն կ'պատճառէին քան թէ Սպանիոյ հետ պատերազմները, Անկլիայ հետ կախներն և զանձային դժուարութիւնները: Կնքն այնպէս կարծէր և համոզուած էր որ տիկին Շէվրէօզ թագույնոյն կ'օգնէր ոչ միայն քաղաքական, այլ և սիրային դաւերու մէջ՝ որմէ առելի նեղութիւն կ'զգար:

Այս ինչ քանի մը խօսք ըսեր էր կարտինալն թէ՝ տիկին Շէվրէօզ՝ Դրէրէն աքսորուելով թէն կ'կարծուէր թէ այն քաղաքն է, Բարիզ եկեր էր, և թէ հոն մնացած հինգ օրուան մէջ ոստիկանութեան խողարկութիւններն ՚ի թերեւ հաներ էր, թագաւորը զսյրազին կատղութեամբ մը վառուեր էր: Թէ և կամշուն անհաւատարիմ դարձեալ թագաւորը կ'ուղէր որ Արդարն Լուի

և Ժումկալն Լուի կոչուի : Յաջորդ սերունդը դժուարան պիտի ըմբռնէ այս մարդուն բնաւորութիւնը , մինչդեռ ազատմութիւնն ոչ երբէք բանադաստթեամբ այլ իրազութիւններով կ'բացատրէ զայն :

Բայց երբ որ կարտինալը յարեց թէ՝ ոչ միայն ափկին Շէվիտօղ Բարիդ եկեր էր , այլ և թագուհին անոր հետ յարաբերութիւն հասաւատեր էր այնպիսի զադանի թղթակցութեան մը միջնցաւ զոր այն ատեն դառաճանութիւն կ'անուանէին , երբ որ ինքը՝ կարտինալը հասաւեց թէ՝ այս նենդութեան ծածռել թեւլերը պիտի երեւան հանէ , երբ որ՝ ամէն փաստերով զինուած՝ աքսորեալ . կնոջ և թագուհոյն մէջ միջնորդ բանբերը Շիշտ յանցանք զօրծելու ժամուն պիտի ձերբակալ ընէին , հրացանակիր մը համարձակեր էր գաստատանի ընմացքը բռնապէս ընդմիջել յանկարծ սուր ՚ի ձեռին բարեկիր գատաւորներու վրայ ընկնելով՝ որոնք անկողմնապահութեամբ բալոր զորդը պիտի քըննէին թագաւորին առջև ներկայելու համար , Լուի ԺՊ . չեցաւ ինքզինքը զսպել , զէպ ՚ի թագուհոյն սենեակը քայլ մ'առաւ , տժզոյն և անխօս սրտմոտթեամբ մ'որ երբ պայթէր սոյն իշխանն անհնարին անդմութեան կ'մզէր :

Եւ տակայն այս ամեն բաներու մէջ կարտինալը տակաւին բառ մ'անդամ՝ չէր արտասանած զլքինկհէմի դքսին վրայ :

Ահա այն ատեն Պ. աը Դրէվիլ ներս մնան , պազ , մարդակար և անստգտանելի կերպով հագուած :

Կարտինալին ներկայութենէն և թագաւորին կերպարանին այլ լոյլութենէ Պ. աը Դրէվիլ անցած զարձածին վրայ հով առնելով Սամսոնի պէս Փղշտացւոց առջե՝ ինքզինքը շատ ուժեղ զզայ :

Երդէն Լուի ԺՊ . ձեռքը դրան հարմանդին վրայ կ'զնէր՝ երբ ներս գալու ատեն Պ. աը Դրէվիլի հանած ազմուկը լսելով զլուխը դարձոց :

— Պատեհ ժամուն եկար , պարոն — ըստ թագաւորը , որ երբ աստիճան մը կրի ք յուղուէր , չդիտէր կեղծել — և աղուոր

լուրեր կ'առնում քու հրացանակիբներուդ ընթացքին վրայ :

— Ես ես, Աւհափառ տէր — ըստու պազտ թեամբ Պ. առ Դրէվիլ — ես ալ աղուր լուրեր ունիմ տալու ձեր գատառուներու վրայ :

— Ի՞նչ հրամեցիր — ըստու թագաւորը վէ աօրէ ն :

— Պատիւ ունիմ Զեր վեհափառութեան իմացնելու — յարեց Պ. առ Դրէվիլ նշյն ձայնով — որ գատառուներու, իրաւաբաններու և ոստիկաններու խումբ մը, յարդելի մարդիկ իրաւ, բայց ըստ երեսյթին՝ սաստիկ կատղած համազգ եստի մը դէմ, համարձակեցաւ տան մը մէջ ձերբակալ ընելու, փաղացներէն քաշքշելու և Փօր-Լէվիլ նետելու, իմ հրացանակիբներէս մին, կամ լու ևս ձերիններէն մին, Աւհափառ տէր, այնպիսի հրամանի մը վրայ զոր ինձ ցոց տալու մերժեցին, և այն հրացանակիբն անսաղիւտ վարք, դրեթէ հոշակաւոր համբաւ ունի, և Զեր վեհափառութիւնը նպաստաւոր աշօք կ'նայի անոր, այն է Աթոս :

— Աթօս — ըստու թագաւորը մեքենապէս — այս, իրօք այդ անունը զիտեմ :

— Աւհափառ տէր, շնորհ ըրէք յիշելու — ըստու Պ. առ Դրէվիլ — որ Պ. Աթոս այն հրացանակիբն է, որ այն ձեր զիտեցած աղէտալի մնամարտութեան մէջ, դժբաղդօրէն Պ. Գահիւսակը կարեվիլ վիրաւորեց : Աղէկ միտքս եկաւ, տէր իմ — յարեց Դրէվիլ կարտինակին ուղղելով խոսքը — յուսամ որ Պ. Գահիւսակ լիովին աղէկցաւ, այնպէս և չէ :

— Ծնորհակալ եմ — ըստու կարտինալը բարկութենէն շրթերը պնդելով :

— Ուստի Պ. Աթոս իր մէկ բացակայ բարեկամին այցի զացեր էր — շարունակեց Պ. առ Դրէվիլ — այս է Պէտանեցի մը, Զեր վեհափառութեան պահապան զօրաց մէկ նորեկ զինուոր մը, այս է Տէղէսարի գնդին մէջ. բայց այն ինչ իր բարեկամին տռնը զացեր նստեր էր և անոր սպասելով կարդալու համար զիրք մ'առեր, որ թելակալներու և զինուորներու դրոհ մը միտքին կը

դան տունը կ'պաշարեն, շատ մը դռներ բռնի կ'կոտրեն . . . :

Կարստինալը թագաւորին նշմայր մը ըրաւ որ կ'նշանակէր . և Այն ձեզի արդէն ըստ զործիս համար էր ։

— Այդ ամէնը դիտենք — սրատասխանեց թագաւորը — վասն զի այս ամէնը մէր ծառայութեան համար ՚ի զործ դրուեցաւ :

— Ուրեմն — ըստ Դրէ վիլ — Զեր վեհափառութեան ծառայութեան համար էր որ իմ մէկ անպարտ հրացանակիրս բռնեցին, չարագործի մը պէս երկու պահակներու յանձնեցին, և այն քաջասիրտ մարդը լիրը խոժանի մը մէջէն պորտցոցին, այն որ Զեր վեհափառութեան սիրոյն համար տաս անզամ՝ իր արինը թափեց և որ նորէն թափելու պատրաստ է :

— Վայ — ըստ թագաւորը — միթէ պատմածին պէս պատհեցան այս բաները :

— Պ. ար Դրէ վիլ չըսեր — պատասխանեց կարստինալը ստունաղին պաղտ թեամբ մը — որ այն անպարտ հրացանակիրը, այն քաջասիրտ մարդը՝ ժամ մ'առաջ՝ ամենակորեւոր զործի մը քըննութեան համար՝ իմ կողմէ զրկուած չորս քննիչ զործակալներ սրովը զարկեր էր :

— Ահա յասպարէդ կ'կոչեմ Զեր բարձրութիւնն ըստ նիդ տարացուցանելու — Կոչեց Պ. ար Դրէ վիլ իր կափօնեան ազատախօսութեամբ և զինուորական խստութեամբը . — Վասն զի ժամ մ'առաջ՝ Պ. Աթոս, որ, կրնամ հատաել Զեր վեհափառութեան, բարձր յատկութեան տէր մարդ մ'է, ինձի հետ ճաշելին ենեւ՝ Պ. ար Լա Դրէմայ դքսին և Շալիւս կոմին հետ ապարանիս սրահը խօսակցելով մեր ընկերութիւնը կ'պատուէր :

Թագաւորը կարստինալին երեալ նայեցաւ :

— Ատենաղբութիւն մը միշտ Նշմարիս վկայութիւն մ'է — ըստ կարստինալը նորին վեհափառութեան անխօսուն հարցման բարձր պատասխանելով — և թշնամանեալ մարդիկ հետեւեալ արձանադրութիւնն ըրին զոր Զեր վեհափառութեան ներկայելու պատիւն ունիմ .

— Միթէ զատաւորներու ատենաղբութիւնը դօրսկանաց պա-

Խօսքէն աւելի՝ արժէք ունի — պատասխանեց Դրէվիլ զռռ-  
զարար :

— Աղէ, աղէ, Դրէվիլ, լուր կեցիր — ըստ թագաւորը :

— Եթէ Կորին բարձրութիւնն իմ հրացանակիրներուս մէկուն  
դէմ կասկած մ'ունի — ըստ Դրէվիլ — Պ. կարտինալին դա-  
տաստանն այնքան յայտնի է որ եթէ ես այ նոր քննութիւն մը  
ինդրեմ, զարմանք չեն :

— Կարծեմ թէ Պէտք այսանեցի մը, հրացանակիրին մէկ բարեկա-  
մը կընակի այն տունն ուր արդարութեան զործակալներն իջան  
— շարունակեց կարտինալին անվրուլ :

— Զեր բարձրութեան խօսքը Պ. ա'Արդանեանի կ'նայի :

— Կ'ակնարկեմ այն պատանին՝ զոր դուք կ'պաշտպանէք, Պ. տը Դրէվիլ :

— Այս, բարձրապատիւ տէք, Ճիշդ է :

— Միթէ կասկած մը չտնիս որ այն պատանին դէշ խորհուրդ-  
ներ տուած լինի . . . :

— Պ. Ամռափն, մարդու մ'որ անոր կրկին տարիքն ունի —  
ընդմիջեց Պ. ար Դրէվիլ. — ոչ, տէք իմ: Միւս կողմէ Պ. ա'Արդանեան  
նոյն իրկունն իմ տունս անցուց :

— Զարմանալի՛ բան — ըստ կարտինալը — ուրեմն ամէն  
մարդ իրկունը քու տունդ անցուց :

— Միթէ Զեր բարձրութիւնն իմ խօսքիս վրայ կ'տարակուսէ  
— ըստ Դրէվիլ բարկութենէն ճակատը կարմրելով :

— Ո՛չ, Աստուած չընէ — ըստ կարտինալը — մինակ կ'ուզէի  
դիսնալ թէ ժամը քանիին տունդ էք :

— Ո՛չ, այդ բանը զիտակցութեամբ կրնամ յայտնել Զեր  
բարձրութեան. վասն զի ներս մանելու միջոցին զիտեցի որ մեծ  
ժամացոյցը ժամն ինն կէս կ'նշանակէք, թէև կարծեք էի թէ ա-  
մելի ուշ էք :

— Եւ ժամը քանիին ասկարանէդ դուրս ելաւ :

— Ժամը տաս ու կէսին. զալէն ժամ մ'ետքը :

— Բայց վերջապէս — պատասխանեց կարտինալն որ Պ. ար

Դրէ վիլի անկեղծութեան վրայ բնաս կամ չունէ ը և կ'զգար որ յաղթանակը ձեռքէն կ'փախէ ը — բայց վերջապէս Աթոս Ֆօսուայէ օր փողոցի տան մէջ բռնուեցաւ :

— Արդիլեալ է արգեօք բարեկամի մ'որիշ բարեկամի այցելութեան գնալու . արդիլեալ է որ իմ գնդիս մէկ հրացանակիրը Տէղէսարի գնդին մէկ զինուորին հետ եղասյրօրէն տեսնուի :

— Այս, երբ այս բարեկամին հետ եղասյրօրէն տեսակցութիւնը բրած տունը կասկածելի է :

— Դրէ վիլ, այս տունն իրօք կասկածելի է — ըստ թագաւորը — կ'երեի թէ չդիտէի իր :

— Արդարեւ, Աւհամիան աէր, տեղեկութիւն չունէի : Բայց դարձեալ կրնայ ամէն կողմը կասկածելի լինիլ, բայց չեմ կը բնար հաւատալ որ Պ. ա'Արդանեանի բնակած մասը կասկածելի լինի . վասն զի համարձակ կ'պնդեմ, Աւհամիան աէր իմ, որ եթէ ըստածն հաւատալի է, իրեն պէս Զեր վեհափառութեան աւելի անձնուելը և Պ. կարտինալին աւելի ջերմ զարմացող մէկը չկայ :

— Միթէ այն ա'Արդանեանը չէ՞ որ օրին մէկը Ժիւսաղը վերառեց՝ Գարմ-Տէշուէ վանքին մօտ եղած աղէտալի կուռին մէջ — հարցուց թագաւորը կարտինալին երեսը նայելով, որ բարկութիւնն կարմրեցաւ :

— Եւ հետեւալ օրն ալ, Պէտաժուն : Այս, վեհափառ աէր, այս, ճիշտ նոյն ինքն է, և Զեր վեհափառութիւնն ընտիր յիշողութիւն տնի :

— Ուրեմն, ինչ պիտի որոշենք — ըստ թագաւորը :

— Այդ կէտն աւելի Զեր վեհափառութեան կ'պատկանի քան թէ ինձ — ըստ կարտինալը : — Միայն յանցաւորութիւնը կը հաստատեմ :

— Եւ ես ալ կ'ուրանամ — ըստ Դրէ վիլ : — Բայց Նորին վեհափառութիւնը զատաւորներ ունի, և իր դատաւորները վճիռ պիտի տան :

— Իրաւացի է ըստածը — յարեց թագաւորը — այս դատը դաւ-

տառորներուն քննութեան յանձնենք : Անոնց դործն է դատել և պիտի դատեն :

— Միայն սա կէտն է ցաւալին — վրայ բերաւ Դրէզիլ — որ այս մեր գժբաղդ ժամանակին մէջ, ամենէն անարատ կեանքը, ամենէն անսուզտանելի առաքինութիւնը զերծ չեն պահեր մարդ մը վաստահամբաւութենէ և հալածանքէ : Հետևապէս բանակը շատ գժգոհ պիտի լինի, աներկիմս եմ այս մասին, որ սատիկանութեան դործերու պատճառուն այսպէս խատութիւններու ենթակայ կ'զանուի :

Այս բառն անխոհեմ էր, բայց ո՛յ . աը Դրէզիլ զիտակցութեամբ արձակեց զայն : Պայթում մը կ'ողէր, վասն զի այս մասին ականը կրակ կ'առնու . և կրակը կ'լուսառը:

— Աստիկանութեան դործեր — զոչեց թազառը ո՛յ . աը Դրէզիլի խօսքերը կրկնելով — ստիկեանութեան դործեր, և ինչ զիտես այս մասին, պարոն : Դու քու հրացանակիրներուդ խառնուէ և իմ զլուխս մի ցաւցներ : Կարծեօքդ այնպէս կ'երեկ որ եթէ գժբաղդօքէն հրացանակիր մը ձերբակալ ընեն, Ֆրանսա վտանգի մէջ կ'ընկնի : Է՛հ, ինչչափ աղմուկ կ'հանես հրացանակիր մը համար : Եթէ պէտք լինի, տաս, հարիւր, նոյն խեկ բոլոր գունդը ձերբակալ ընել կ'տամ, և չեմ ողեր որ տըրատունջ մը լսեմ :

— Քանի որ հրացանակիրները կասկածելի են Ձեր վեհափառութեան — ըստու Դրէզիլ — յանցան որ են . տատի, ահա պատրաստ եմ, Վեհափառ տէր, իմ սուրս ձեզի յանձնելու . վասն զի ո՛յ . կարտինալն իմ զինուրներս ամբատանելէն ետև՝ վերջապէս զիս ալ պիտի ամբատանէ . հետեւապէս աւելի աղելկ ունիմ ո՛յ . Աթոսին հետ, որ արդէն ձերբակալ եղած է, և ո՛յ . ա՛նբդանեանի հետ, զոր անտարակցոյ բռնելու վրայ են, ևս ալ ինքնայսորդոր ձեր կալանաւորը լինիլ :

— Կասքօնեան զլուխ, պիտի վերջը բերե՞ս — ըստ թազառը :

— Վեհափառ տէր — պատուիսան տուստ Դրէզիլ սուսնց

Հայնը մեղմէլու — հրաման տուէք որ հրացանակիրս ինձ յանձնեն և կամ դատեն :

— Պիտի դատեն — ըստ կարտինալը :

— Լաւ ուժեմն , իմ փափաքս ալ այդ է . վասն զի՞ այս պարագայիս մէջ պիտի Զեր վեհափառութենէ խնդրեմ որ անոր դատն ես վարեմ :

Թագաւորը վախցաւ որ կրիւ մը չփրթի :

— Եթէ Նորին բարձրութիւնն անձնական պատճառներ չունենար , խնդրեր կարելի էր :

Կարտինալը թագաւորին յառաջ դալը տեսաւ և զանի դիմաւորեց :

— Կերում կ'ինդրեմ — ըստ նա — սակայն եթէ Զեր վեհափառութիւնը կարծէ թէ ես կանխակալ դատաւոր կ'ուղեմ կանգնիլ , ահա ես կ'մեկնիմ :

— Լաւ , նայինք — ըստ թագաւորը — երգում կ'ընե՞ն , իմ հօրս վրայ , որ Աթոս պատահած դէպքին ժամանակ քու տունդ էր և բնառ անոր մասնակից չեղաւ :

— Զեր պանծալի հօր և Զեր անձին վրայ , Զեր անձը զոր աշխարհիս մէջ ամենէն շատ կ'սիրեմ և կ'մնջարեմ , կ'երգնում :

— Շնորհ ըրէք խորհելու , Վեհափառ տէք իմ — ըստ կարտինալը : — Եթէ այսպէս կալանառորն արձակենք , Տշմարատաթիւնն երևան չպիտի կրնանք հանել :

— Ո! Աթոս միշտ այս տեղ պատրաստ պիտի դտնուի — վրայ բերան Ո! . ար Դրէվիլ — պատասխան տալու դատաւորներուն երբ հարց ու փորձ ընելու պէտքը զդան : Զպիտի խօյս տայ , Ո! . կարտինալ , հանդարա եղիք , ես անոր համար երաշխառոր կ'մնամ :

— Երօք , խօյս չպիտի տայ — ըստ թագաւորը — միշտ կըրնանք զանի դանել , ինչպէս կ'ըսէ Ո! . ար Դրէվիլ . Ասկէ զատ — յարեց նա ձայնը մեղմելով և աղերսագին երեսով մը Նորին բարձրութեան նայելով — պէտք է ապահովութիւն տալ անոնց . քաղաքականութիւնն այս կ'պահանջէ :

Եակի ժկ. ի այս ուշադրութեան բառը Արշլիեօի քմծիծաղը շարժեց :

— Հրաման տուեք, վեհափառ տէր իմ — ըստ նա — միշտ ներում շնորհելու իրաւոնք ունիք :

— Ներելու իրաւոնքը միայն յանցաւորներու համար կ'զործածուի — ըստ Պրէվիլ, որ խօսքէ եւ չէր մնար — և իմ հրացանակիրս անմեղ է : Հետեւապէս ընելիքդ շնորհ մը չէ, Աւհափառ տէր, այլ արդարութիւն :

— Կրո՞ղ, կրո՞ղ — մրմուաց թագաւորը — ի՞նչ ընել պէտք է :

— Հրացանակիրին ազատութեան հրամանազիրը ստորագրել — վրայ թերաւ կարաինալը — և ամէն բան ասով կ'վերջանայ . ես ալ Զեր վեհափառութեան պէս կ'մոտածեմ որ Պ. աը Պրէվիլի երաշխառութիւնը բաւականէն աւելի է :

Պրէվիլ յարդանօր խօնարհութիւն ըրաւ այնպէս ուրախութեամբ որ երկիրու լիովին անխառն չէր . լաւագոյն պիտի համարէր որ կարտինալը յամառութեամբ զիմաղրէ քան թէ այնպէս զիւրաւ զի ջամին :

Թագաւորն ազատութեան հրամանը ստորագրեց և Պրէվիլ անյապաղ առաւ տարաւ :

Պրէվիլ դուրս ելնելու միջոցին՝ մտերմական ժպիտ մը ցուցոց անոր կարտինալն ու թագաւորին ըստ .

— Աղոր ներդաշնակութիւն մը կ'տիրէ Զեր հրացանակիրաց պիտերուն և զինուորներու մէջ, Վեհափառ տէր . ահա այս բանս զինուորական ծառայութեան օդտաւէտ և ամենուն համար պատւառոր է :

